ԺՅՈՒԼ ՎԵՌՆ

# ՆԱՎԱՊԵՏ ԳՐԱՆՏԻ ՎՈՐԴԻՆԵՐԸ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1936

Ռուս. թարգմ. Նիկ. Թումանյան

Պատ. խմբ. Ե. Զոփուրյան
Տեխ. խմբ. Ն. Խաչվանքյան
Սրբագրիչ Վ. Մանուկյան



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ՆԱՎԱԿԸ

Առաջին րոպեներին բոլորն էլ տարվել էին [illegible] ուրախությամբ։ Գլենարվանը չէր ուզում, վորպեսզի արշավախմբի անհաջող ելքը մթագնի այս ուրախությունը։ Նրա առաջին խոսքերը յեղան.

— Համբերություն, բարեկամներս, համբերություն։ Նավապետ Գրանտը դեռ մեզ հետ չէ, բայց մենք հաստատ գիտենք, վոր կգտնենք նրան։

Յեվ այս խոսքերը բավական էին «Դունկանի» ուղևորներին հույս վերադարձնելու համար։ Չէ վոր այն ժամանակվա ընթացքում, յերբ նավակը դեպի ծովախորշն էր լողում, Հելենան և Մերին ապրեցին արդեն սպասելու բոլոր տանջանքները։ Տախտակամածի բարձունքից նրանք փորձում էին համրել նավակով վերադարձողներին։ Յերիտասարդ աղջիկը մերթ վերագտնում էր հույսը, մերթ նորից էր կորցնում այն։ Մերիին թվում էր, վոր նա յեկողների մեջ տեսնում է Հարրի Գրանտին։

Ելենան Մերիին իր գրկում էր պահում։ Ջոն Մանգլսը լուռ կանգնած էր նրա կողքին։ Նրա ծովագնացի հեռատես աչքերը յեկողների մեջ չնկատեցին նավապետ Գրանտին։

— Նա այնտեղ է, նա նրանց հետ է, իմ հայրը,— շշնջում էր յերիտասարդ աղջիկը։

Բայց նավակը շարունակ մոտենում էր և այդ ցնորքը ցրվում էր ինքն իրեն։ Նավակը դեռ հարյուր սաժեն էլ չէր մոտեցել, յերբ վոչ միայն Ելենան և Ջոն Մանգլսը, այլև Մերին ինքը, վորի աչքերն արցունքով լիքն էյին, հասկացան, վոր ամեն մի հույս կորած է։ Գլենարվանը ժամանակին արտասանեց իր մխիթարական խոսքերը։

Առաջին վողջույններից և գրկախառնություններից հետո— Ելենային, Մերիին և Ջոն Մանգլսին պատմեցին արշավանքի ամենագլխավոր դեպքերը, բայց ամենից առաջ նրանց համար հայտնի դարձավ փաստաթղթի նոր լուսաբանությունը, վոր տվեց իմաստուն Պագանելը։ Բազում գովասանքներ ասվեցին նաև Ռոբերտի հասցեյին։ Մերի Գրանտն իրավամբ կարող էր պարծենալ իր յեղբորով։ Նրա համարձակությունը, անձնվիրությունը, այն վտանգները, վորոնցից նա խուսափեց,— այդ բոլորը շատ գունեղ նկարագրեց Գլենարվանը, և տղան, հուզմունքից չիմանալով թե ինքն ուր փախչի, ապաստարան գտավ քրոջ գրկում։

— Մի կարմրիր, Ռոբերտ,— ասաց նրան Ջոն Մանգլսը,— դու նավապետ Գրանտի արժանավոր զավակն ես։

Նա ձեռքը մեկնեց Մերիի յեղբորը և քնքուշ համբուրեց քրոջ արցունքներից թրջված նրա այտը։

Կարիք կա՞, արդյոք, խոսել այստեղ մայորին և գիտնական աշխարհագրագետին ցույց տրված ընդունելության և բացակա Տալկավի գլխին թափվող որհնությունների մասին։ Ելենան ցավում էր, վոր չի կարող սեղմել քաջ հնդկի ձեռքը։

Մակ-Նաբսն առաջին զեղումներից հետո իջավ նավասենյակ, և ամենից առաջ խնամքով սափրվեց։ Ինչ վերաբերում է Պագանելին, նա մեղվի պես անդադար մեկից դեպի մյուսն էր թռչում, գովասանքների և ժպիտների մեղր հավաքելով։ Նա ուզում էր «Դունկանի» ամբողջ նավակազմը գրկել և պնդելով, վոր Ելենան ու Մերի Գրանտը նավակազմի մի մասն են հանդիսանում, սկսեց նրանցից և վերջացրեց Օլբինետով։



Ցեյնման և Մերին հետեւում եյին նավակի մոտենալուն։

Բուֆետապանն ավելի արժանավոր պատասխան չգտավ, քան այն, վոր հայտնեց, թե նախաճաշը պատրաստ ե։

— Նախաճա՞շ, — գոռաց Պագանելը։

— Այո՛, պարոն Պագանել, — պատասխանեց Օլբինեթը։

— Ինչպե՞ս նախաճաշ, ինչպե՞ս սեղանի առաջ, սպասքով և անձեռոցիկով։

— Հասկանալի յե, պարոն Պագանել։

— Եվ մեզ չե՞ն մատուցի վոչ չորացրած միս, վոչ էլ ջայլամի ձու։

— Ո՛չ, սըր, — վիրավորվեց բուֆետապանը։

— Ես չուզեցա ձեզ վշտացնել, բարեկամս, — ասաց գիտնականը ժպտալով, — բայց ամբողջ մի ամիս ընթացքում մենք ուտում եինք վոչ թե սեղանի առաջ, այլ գետնի վրա, լավագույն դեպքում ծառերի բներին՝ հենվելով սրա նստած վիճակում։ Այն նախաճաշը, վոր դուք մեզ եք խոստանում, ինձ ցնորք, խաբուսիկ, անհեթեթ ե թվում։

— Դե վոր այդպես ե, գնանք հավատացնելու, վոր դա իրականություն ե, — առաջարկեց Ելենան, ծիծաղը հազիվ զսպելով։

— Թույլ տվեք ձեզ ուղեկցել, — ասաց սիրալիր աշխարհագրագետը։

— Առաջուց դուք կարգադրություններ չե՞ք անի «Դունկանի» վերաբերյալ, — հարցրեց Գլենարվանին Ջոն Մանգլը։

— Նախաճաշից հետո, սիրելի Ջոն, — պատասխանեց Գլենարվանը, — մենք բոլորս միասին կքննարկենք մեր նոր արշավի ծրագիրը։

Զբոսանավի ուղևորներն ու յերիտասարդ նավապետն իջան նավի դահլիճը։ Գլխավոր մեքենավարին առաջարկվեց շոգու տակ պատրաստ պահել զբոսանավը։

Հենց նոր ածիլված մայորը և մյուս ճանապարհորդները, մի կերպ կարգի բերելով իրենց տուալետը, տեղ բռնեցին սեղանի շուրջը։

Օլբինեթի նախաճաշին արժանի հարգանք ավին։ Նա ճանաչվեց վորպես հրաշալի, և, ճանապարհորդների հայտարարությամբ, պամպասների նույնիսկ ամենափարթամ խնճույքները չեին կարող համեմատվել նրա հետ։ Պագանելը յուրաքանչյուր խորտիկից յերկու բաժին վերցրեց՝ «ցրվածությամբ» ինչպես ինքն եր ասում։

Այդ դժբախտ բառը գրելից Ցելենային հարցնել, թե, արդյոք, սիրելի Փրանսիացին հաճախ էր ընկնում իր սովորական մեղքի մեջ։ Մայորն ու Գլենարվանը ժպտալով իրար նայեցին։ Պագանելը ծիծաղով բռնկվեց և յերդվելով պատասխանեց, վոր ճանապարհորդության ամբողջ ժամանակ նա մի անգամ միայն զոհ գնաց իր ցրվածության։ Հետո նա շատ ծիծաղաշարժ պատմեց իր հիաթափության մասին Կամոենսի մեծ ստեղծագործության նկատմամբ։

— Բայց բոլորից հետո,—չկա չարիք առանց բարիքի—յես ամենևին չեմ ափսոսում իմ սխալի համար,—վերջացրեց նա իր պատմությունը։

— Իսկ ինչո՞ւ, իմ արժանավոր բարեկամս,—հարցրեց մայորը։

— Վորովհետև յես ուսումնասիրեցի վոչ միայն իսպանական, այլև պորտուգալական լեզուները։ Ցես հիմա մեկի փոխարեն յերկու նոր լեզուներով եմ խոսում։

— Ազնիվ խոսք, յես այդ մասին չէի մտածել,—պատասխանեց Մակ-Նաբսը,—ընդունեցեք իմ շնորհավորանքները։ Պագանել, իմ ամենաանկեղծ շնորհավորանքները։

Բոլորը ծափահարեցին Պագանելին, վոր մի վայրկյան չէր դադարում ուտելուց։ Նա միաժամանակ և՛ ուտում և՛ շատախոսում էր։ Բայց չէր նկատում մի առանձնահատկություն, վոր չէր կարող խուսափել Գլենարվանի սրատես հայացքից, դա Ջոն Մանգլսի ուշադրությունն էր դեպի հարևանուհի Մերի Գրանտը։ Ցելենայի արած թեթև նշանը համոզեց Գլենարվանին, վոր նա չի սխալվում։ Գլենարվանը նայեց յերիտասարդ մարդկանց առանձին համակրությամբ, բայց ցույց չավեց, թե վորևէ բան է կասկածում։

— Ինչպե՞ս անցավ ձեր ճանապարհորդությունը, Ջոն,—հարցրեց նա։

— Ամենաբարեհաջող պայմաններում,—պատասխանեց նավապետը։—Բայց յես պետք է հաղորդեմ ձեզ, վոր մենք անցանք Մագելլանի նեղուցի մոտով։

— Ահա՛ թե ինչպես,—գոչեց Պագանելը։—Դուք շրջանցաք Հորն հրվանդանը և յես ձեզ հետ չէի։

— Ձեզ մնում է միայն կախվել,—ասաց մայորը։

— Ցեսասեր։ Դուք ինձ նրա համար եք այդ խորհուրդը տա-

լիս, վերադարձի յուրաքանչյուր այն թոկը, վորը, ասում են թե, բախտավորություն է բերում,—պատասխանեց աշխարհագրագետը։

— Սիրելի Պագանել,—մխիթարեց նրան Գլենարվանը,—յեթե մարդ ամենուրեքության շնորհք չունենա, անհնարին է միաժամանակ ներկա գտնվել մի քանի տեղերում։ Բանի վոր դուք ճանապարհորդում եյիք պամպասներով, չեյիք կարող հենց այդ նույն ժամանակում շրջանցել Հորն հրվանդանը։

— Դուք իրավացի յեք, բայց դա չի խանգարում ինձ ափսոսալ նրա մասին, վոր յես չտեսա Հորն հրվանդանը,—պատասխանեց գիտնականը։

Այլևս նրան չեղայնացրին, բավարարվելով այդ պատասխանով։

Ջոն Մանգլը խոսք խնդրեց և պատմեց իր նավարկության պատմությունը։

Գնալով ամերիկական ափի յերկարությամբ, նա հետազոտեց արևմտյան արշիպելագի բոլոր կղզիները, բայց այնտեղ «Բրիտանիայից» վոչ մի հետք չգտավ։ Գիլար հրվանդանի մոտ, Մագելլանի նեղուցի մուտքի առաջ, նրանց հակառակ քամի պատահեց։ Զրահանավը թեքվեց դեպի հարավ։ «Դունկանն» անցավ Հուսահատության Յերկրի մոտով, բարձրացավ մինչև վաթսունյոթերորդ զուգահեռը, շրջանցեց Հորն հրվանդանը, հետևում թողեց Հրո Յերկիրը, և, անցնելով Լեմերի նեղուցով, հասավ Պատագոնիայի ափերը։ Այնտեղ, Կորրիենտես հրվանդանի բարձուքում, նա կրեց հենց այն քամու ավերիչ ուժը, վոր այնպիսի կատաղությամբ ընկավ մեր ճանապարհորդների վրա, ամպրոպի ժամանակ։ Բայց զրահանավը հրաշալի կերպով հաղթահարեց այն։ Յերեք որվա ընթացքում Ջոն Մանգլը լողում եր ափերի յերկարությամբ, մինչև վոր լսեց կարաբինի կրակոցը, վոր ազդանշանում եր այնքան անհամբերությամբ սպասող ճանապարհորդների ժամանումը։ Ինչ վերաբերում է Յելենային և Մերիին, նավապետն անարդարացի կլիներ, յեթե մոռանար հիշատակել նրանց հաղվագյուտ աներկյուղության մասին։ Ամպրոպն ամենևին չեր վախեցնում նրանց, և յեթե նրանք հուզվում եյին, այդ ամբողջապես վերաբերում եր Արգենտինայի հարթավայրերով ճանապարհորդող իրենց բարեկամներին։

Ջոն Մանգլը վերջացրեց իր պատմվածքը։ Գլենարվանը շնորհակալեց նրան և դարձավ դեպի Մերի Գրանտը։

— Թանկագին Մերի՛,— ասաց նա,— յես տեսնում եմ, վոր նավապետ Ջոնն ըստ արժանվույն աչք է տալիս ձեր քաջարի բարեմասնություններին։ Յես յերջանիկ եմ, վոր դուք ձեզ լավ եք զգում իմ նավակում։

— Կարո՞ղ եք, արդյոք, հակառակը լինել,— պատասխանեց Մերին, նայելով Յելենային և, հազիվ նշմարելի ժպտալով յերիտասարդ նավապետին։

— Ո՛, իմ քույրը ձեզ շատ է սիրում, նավապետ Ջոն, յես էլ նմանապես,— գոչեց Ռոբերտը։

— Հենց նույն բանով յես քեզ եմ հատուցում, փոքրիկ բարեկամ,— պատասխանեց Ջոն Մանգլսը, մի քիչ շփոթված Ռոբերտի խոսքերից։

Այդ խոսքերը Մերի Գրանտի դեմքի վրա ել մի թեթև կարմրություն առաջացրին։

Ջոն Մանգլսը շտապեց խոսակցությունն ավելի քիչ լպրծուն հողի վրա տեղափոխել։

— Յես վերջացրի «Դունկանի» նավարկության պատմությունը։ Գուցե, հիմա արդեն Գլենարվանը կկատարի իր խոստումը և մեզ կպատմի մեր պատանի հերոսի կատարած քաջագործությունների մասին։

Յելենայի և Մերիի համար դրանից ավելի հաճելի բան չեր կարող լինել։ Գլենարվանն շտապեց բավարարել նրանց հետաքրքրությունը։ Նա պատմեց իրենց ճանապարհորդության բոլոր միջադեպերը, մի ովկիանոսից մինչև մյուս ովկիանոսը. Կորդիլիերների վրայից անցնելը, յերկրաշարժը, Ռոբերտի անհայտանալը, կոնդորի թռիչքը, Տալկավի կրակոցը, կարմիր գայլերի արշավը, տղայի անձնվիրությունը, հեղեղումը, չանթը, հրդեհը, կայմանները, թայֆունը Ատլանտյան ովկիանոսի ափին։ Մերթ զվարճալի, մերթ սարսափելի այդ մանրամասնությունները մեկ ընդ մեջ առաջացնում եյին ունկնդիրների հիացմունքի և սարսափի բացականչությունները։

Յելենան և Մերին համբույրներով եյին ծածկում Ռոբերտին,

Գլենարվանն իր պատմությունը վերջացրեց հետևյալ խոսքերով.

— Այժմ, բարեկամներս, մենք պետք է ներկայի մասին մտածենք։ Ինչ վոր կար, գնաց, բայց ապագան մեզ է պատկանում։ Խոսենք նավապետ Գրանտի մասին։

Նախաճաշը վերջացավ։ Զրուցակիցները տեղափոխվեցին Ելենայի սալոնը։ Նրանք նստեցին բազկաթոռներով և դիվաններով ծածկապատված սեղանի շուրջը և խոսակցությունն իսկույն ևեթ նորոգվեց։

— Միսիս Ելենա,— ասաց Գլենարվանը,— հազիվ վոտք դնելով նավի վրա, յես ասացի, վոր թեև խորտակման յենթարկվող ծովագնացները մեզ հետ չեն վերադարձել, բայց մենք հաստատ հույս ունենք նրանց գտնելու։ Ամերիկայի վրայով մեր ճանապարհորդելու հետևանքով մենք համոզվեցինք, դեռ ավելին— հավաստիացանք նրանում, վոր աղետը տեղի չի ունեցել վոչ Խաղաղ ովկիանոսի ամերիկական և վոչ էլ Ատլանտյանի ափերին։ Սրանից հետևում է, վոր մենք փաստաթղթի ամբողջությամբ սխալ ենք մեկնաբանել, իբր վոր Պատագոնիային է վերաբերում։ Բարեբախտաբար մեր բարեկամ Պագանելը հանկարծակի ներշնչմամբ տարված, հասկացավ սխալը։ Նա բացեց, վոր մենք սխալ ճանապարհով ենք գնում և փաստաթղթի բովանդակությունն այնպես բացատրեց մեզ, վոր նոր լուսաբանությունը կասկածանքների ստվեր էլ չթողեց մեզ մոտ։ Խոսքը ֆրանսերեն գրած փաստաթղթի մասին է, և յես չատ եմ խնդրում Պագանելին մի անգամ էլ թարգմանել այն այստեղ, վորպեսզի ներկա գտնվողներից վոչ մեկն էլ անվստահության ստվեր անգամ չունենա իմ խոսքերի նկատմամբ։

Գիտնականը, հարկադրված բացատրություն տալու, խոսեց։ Նա ընդարձակ և համոզեցուցիչ գրում էր gonie և indi բառերի մասին։ Նա մեծագույն համոզվածությամբ ներշնչում էր ունկնդիրներին, վոր ֆրանսիական փաստաթղթի austral բառը պետք է հասկանալ վոչ թե «հարավային», այլ Australie — Ավստրալիա։ Նա ապացուցում էր, վոր Նավապետ Գրանտը, Պերույի ափերից Եվրոպայի ուղղությամբ լողալով և փոթորիկի մեջ ընկնելով, կարող էր հարավային հոսանքներին հանդիպել Խաղաղ ովկիանոսում, վորոնք և քշել են նրան դեպի Ավստրալիայի ափերը։

Գիտնական աշխարհագրագետի սրամիտ կռահումն ու յեզրակացությունները կատարյալ հավանության արժանացան, նույնիսկ Ջոն Մանգլսի կողմից, վորն առանձնապես զգույշ դատավոր էր, յերբ գործն այդքան կարևոր հարցերի յեր վերաբերում և



Մակ–Նաբբս հարցաքննում է Պագանելին:

վորն իբրև մարդ՝ ամենից քիչ էր հակված դեպի բարձրագույն դարձվածքների ու յերևակայության խաղերը։

Հենց վոր Պագանելն իր դատախոսությունը վերջացրեց, Գլենարվանը հայտարարեց, վոր «Դունկանն» անհապաղ Ավստրալիայի ուղին է բռնում։

Սակայն, նախքան դեպի արևելք թեքվելու հրաման տալը, մայորը թույլտվություն խնդրեց մի դիտողություն անելու։

— Ասացեք, Մակ-Նաբս,—համաձայնեց Գլենարվանը։

— Յես նպատակ չունեմ,—ասաց մայորը,—վոչ էլ ձգտում՝ թուլացնելու իմ բարեկամ Պագանելի ապացույցների տպավորությունը։ Յես ամենևին չեմ պատրաստվում մերժել այն։ Ընդհակառակը, յես գտնում եմ, վոր այդ ապացույցները լուրջ են, իմաստուն, միանգամայն արժանի մեր ուշադրությանը, և անկասկած նրանք մեր առաջիկա վորոնումների բազան պիտի դառնան։ Բայց յես կցանկանայի նորից հետազոտության յենթարկել այն, վորպեսզի նրանց նշանակությունը մեզ համար անվիճելի մնա։

Վոչ վոք չէր իմանում, թե դեպի վոր կողմն է թեքում զգույշ Մակ-Նաբսը, և բոլորը լսում էին լարված ուշադրությամբ։

— Շարունակեցե՛ք, մայոր,—ասաց Պագանելը,—յես պատրաստ եմ պատասխանել ձեր բոլոր հարցերին։

— Ավելի հասարակ բան չկա,—շարունակեց մայորը։—Յերբ սրանից հինգ ամիս առաջ, Կլայդի ծոցում մենք ուսումնասիրում էինք բոլոր յերեք փաստաթղթերը, այն լուսաբանությունը, վոր նրանց էինք տալիս, մեզ միակ ուղիղն էր թվում։ Մենք այդ առթիվ կասկածանքի նշույլ անգամ չունեինք։

— Այդ դատողությանն արդարացի յե,—ասաց Գլենարվանը։

— Ավելի ուշ, յերբ Պագանելն իր բախտավոր ցրվածության շնորհիվ մեր զբոսանավի նավախցում գտնվեց, փաստաթղթերը ցույց տրվեցին նրան, և նա վոչ մի բառ չառարկելով, հավանություն տվեց ամերիկական ափին վորոնումներ սկսելու մեր վորոշմանը։

— Յես դրա հետ համաձայն եմ,—հաստատեց աշխարհագրագետը։

— Բայց և այնպես մենք սխալվեցինք,— վերջացրեց մայրը։

— Մենք սխալվեցինք,— հաստատեց Պագանելը։— Սխալվելը հատուկ է մարդուն, բայց անմիտ պետք է լինել իր սխալը պնդելու համար։

— Սպասեցեք Պագանել,— պատասխանեց մայրը,— մի վրդովվեք։ Ցես ամենևին չեմ ուզում ասել, վոր մենք պետք է Ամերիկայում չարունակենք մեր վորոնումները։

— Այդ դեպքում ի՞նչ եք ուզում դուք,— հարցրեց Գլենարվանը։

— Խոստովանություն, վոր Ավստրալիան մեզ նույնպես միանգամայն թվում է այժմ «Բրիտանիայի» խորտակման միակ հնարավոր տեղը, ինչպես յերբեմն այդ տեղն Ամերիկան էր թվում։

— Մենք սիրով ընդունում ենք այդ,— պատասխանեց Պագանելը։

— Ցես նշում եմ այդ,— ասաց մայրը,— և պաշտպանում եմ առիթից, նախազգուշացնելու մեզ այդ առերևույթ հրապույրից։ Մենք արդեն վկա յենք յեղել, թե ինչպես «մի անվիճելի» լուսաբանություն, վոչ միայն վիճելի դարձավ, այլև սխալ։ Ով գիտի, գուցե Ավստրալիայից հետո մի ուրիշ յերկիր և մեզ նույնպիսի համոզվածություն ներշնչում, և յեթե, այդ նոր վորոնումները նույնպես անհաջող լինեն, արդյոք, մեզ չի՞ թվա, վոր նրանք նույնպես «պատահական» էին և անհրաժեշտ է ուրիշներն ընձեռել։

Գլենարվանն ու Պագանելն իրար նայեցին։ Մայրի դիտողությունն անկասկած տրամաբանական էր։

— Ցես կցանկանայի,— նորից սկսեց Մակ-Նաբսը,— վորպեսզի Ավստրալիա լողալուց առաջ վերջին քննարկությունը կատարվեր։ Ահա փաստաթղթերը ու քարտեզները։ Մի անգամ էլ ստուգենք յերևույթներով զուգահեռի անցման բոլոր կետերը և տեսնենք, չի՞ հանդիպի, արդյոք, մեզ մի ուրիշ յերկիր, վորին կարելի լինի վերագրել փաստաթղթի ցուցմունքները։

— Դրանից ավելի հեշտ բան չկա,— պատասխանեց Պագանելը,— վորովհետև այդ լայնության տակ քիչ յերկիրներ են ընկած։

— Տեսնենք,— ասաց մայրը, բանալով անգլիական քարտեզը, վոր գծագրված էր Մերկատորի նախագծով և մարդու ակնառու-

թյան առաջ քաշ էր անում ամբողջ չերկրայինի պատկերը հար-
թության վրա։ Քարտեզը փռված էր Ելենայի առաջ, և բոլորը պատրաստվեցին լսելու Պագանելի բացատրությունները։

— Ինչպես յես ձեզ արդեն ասացի,—ասաց գիտնականը,—Հարավային Ամերիկայից դեպի արևմուտք, յերեսունյոթերորդ զուգահեռի վրա ընկած են Տրիստան դ'Ակունիայի կղզիները։ Բայց պնդում եմ, վոր փաստաթղթերում վոչ մի բառ չկա այդ կղզիների մասին։

Բոլորը մի անգամ ել ամենամեծ խնամքով դիտեցին քարտեզները. Տրիստան դ'Ակունիա կղզիների մասին յենթադրությունը միաձայն մերժվեց։

— Շարունակենք մեր հետազոտությունները,—ասաց աշխարհագրագետը։—Ատլանտյան ովկիանոսից դուրս գալով, մենք կանցնենք Բարեհուսո հրվանդանից յերկու աստիճան ցած և դուրս կգանք Հնդկական ովկիանոս։ Մեր ճանապարհին միայն մի խումբ կղզիներ կհանդիպեն—Ամստերդամյան կղզիները։ Բայց միանգամայն համոզված եմ նրանում, վոր նրանց մասին փաստաթղթերում ավելի շատ բան չի ասված, քան Տրիստան դ'Ակունիա կղզիների մասին։

Ուշադիր ստուգումից հետո Ամստերդամյան կղզիներն ել մերժվեցին։

Հնդկական ովկիանոսի այդ արշիպելագոսի մասին վոչ մի բառ չէր ասված վոչ ֆրանսիական, վոչ անգլիական, վոչ ել գերմանական փաստաթղթերում։

— Այժմ մենք հասանք Ավստրալիային,—նորից սկսեց իր բացատրությունները Պագանելը։—Յերեսունյոթերորդ զուգահեռը մայր ցամաքի մեջ է մտնում Բերնուլիի հրվանդանի մոտ և թողնում է այն Տուֆոլդյա ծովախորշում։ Մինչև անգամ առանց ընտգիրն ստուգելու դուք խիստ հեշտ կնկատեք, վոր անգլիական stra և ֆրանսիական austra բառերը կարող են նշանակել Ավստրալիա։ Սա այնքան ակներև է, վոր այստեղ վիճելու բան չկա։

Բոլորը համաձայնեցին Պագանելի յեզրակացության հետ։

— Շարունակեցե՛ք,—առաջարկեց մայորը։

— Սիրով,—համաձայնեց աշխարհագրագետը,—չէ վոր այս ձևով ճանապարհորդելն ամենևին դժվար չէ։ Այսպես ուրեմն, թողնելով Տուֆոլդյա ծովախորշը, մենք կտրում ենք այն ջրանցքը, վորը ձգվում է Ավստրալիայի արևելքում, և մտնում ենք

Նոր Զելանդիայի»։ Ամենից առաջ յես պիտի հիշեցնեմ ձեզ, վոր ֆրանսիական փաստաթղթի contin բառը նշանակում է continent—մայր ցամաք։ Դա միանգամայն անհերքելի յե։ Նավապետ Գրանտը չեր կարող ապաստան գտնել Նոր Զելանդիայում, վորը, ինչպես հայտնի յե, վոչ այլ ինչ է, քան կղզի։ Իսկ յեթե այդ այդպես է, այն դեպքում ուսումնասիրեցեք, համեմատեցեք, դասավորեցեք բառերն ինչպես կամենում եք, և դուք կհամոզվեք, վոր նրանք նվազագույն առնչություն անգամ չունեն այդ յերկրի հետ։

— Վոչ մի դեպքում,—համաձայնեց Ջոն Մանգլսը, փաստաթղթերն ու քարտեզները խնամքով իրար հետ համեմատելուց հետո։

— Վո՛չ,—պնդեցին Պագանելի բոլոր ունկնդիրները և նույնիսկ ինքը—մայորը,—վո՛չ, Նավապետ Գրանտը չեր կարող Նոր Զելանդիայում գտնվել։

— Դուք տեսնում եք,—նորից սկսեց աշխարհագրագետը,—վոր այս կղզին ամերիկական ափից բաժանող ամբողջ ահագին տարածության վրա, յերեսունյոթերորդ զուգահեռը կտրում է միայն մի ամայի և աննշան փոքրիկ կղզի։

— Ինչպե՞ս է կոչվում այն,—հարցրեց մայորը։

— Նայեցեք քարտեզին։ Այդ Մարիա-Թերեզան է։ Յերեք փաստաթղթերից վոչ մեկի մեջ այդ անվան վերաբերյալ վոչ մի հետք չկա։

— Վոչ մի,—հաստատեց Գլենարվանը։

— Յեվ ուրեմն, այսպես, ձեզ եմ թողնում, բարեկամներս, վորոշել արդարացի՞ յե, արդյոք այն յենթադրությունը, վոր փաստաթղթում խոսքը Ավստրալիայի մասին է։

— Անկասկած է,—միաձայն պատասխանեցին «Դունկանի» ուղևորներն ու նավաստիները։

— Ջոն,—ասաց այն ժամանակ Գլենարվանը,—արդյո՞ք, դուք բավականաչափ պարեն և վառելանյութ ունե՞ք։

— Այո՛, սըր, յես բոլոր անհրաժեշտ բաներն առատ [illegible]ներ եմ պատրաստել Տալկահուանոյում։ Բայց յեթե կարիք [illegible] մենք հեշտությամբ կարող ենք լրացնել այն Կապշտադտում։

— Հրաշալի յե, այդ դեպքում ճանապարհ ընկնենք։

— Մի դիտողություն եւ,—ընդհատեց իր բարեկամին մայորը։

—Մենք լսում ենք ձեզ, Մակ-Նաբս։

— Ինչքան էլ վոր մենք համոզված լինենք, վոր լոկ և լոկ Ավստրալիան է այժմ նավապետ Գրանտի կենալու տեղը, արդյոք, խելացի չէ՞ր լինի մի յերկու օր անցկացնել Տրիստան դ'Ակունիա և Ամստերդամյան կղզիներում։ Նրանք գտնվում են՝ հենց մեր ճանապարհին և ամենևին չեն յերկարացնի այն։ Մենք կիմանանք, արդյոք, այնտեղ «Բրիտանիայի» խորտակման հետք չի մնացել։

— Ինչ անվստահն եք դուք,—բացականչեց Պագանելը։

— Ես գլխավորապես հոգում եմ այն մասին,—պատասխանեց մայորը,—վորպեսզի մենք սխալված չլինենք կրկին անգամ վերադառնալ մեր սկզբնական հետքերով, յեթե Ավստրալիան չարդարացնի իր վրա դրած հույսերը։

— Այդ նախազգուշությունն ավելորդ չի թվում ինձ,—պատասխանեց նրան Գլենարվանը։

— Յես ամենից քիչ յես եմ տրամադիր համոզել ձեզ հրաժարվել նրանից,—վրա բերեց Պագանելը,—միանգամայն հակառակը։

— Ուրեմն, Ջոն, դարձրեք նավը Տրիստան դ'Ակունիայի ուղղությամբ,—վճռեց Գլենարվանը։

— Լսում եմ, սըր,—պատասխանեց նավապետը և բարձրացավ իր կամրջակի վրա։

Մերի Գրանտն ու իր յեղբայրն սկսեցին ջերմ շնորհակալություն հայտնել Գլենարվանին։

Շուտով «Դունկանը» հեռացավ ամերիկական ափից, իր լանջով փրփրացնելով Ատլանտյան ովկիանոսի ալիքները։

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## Տ Ր Ի Ս Տ Ա Ն Դ' Ա Կ Ո Ւ Ն Ի Ա

Յեթե զբոսանավը գնար հասարակածով, այն զեղչում Ավստրալիան Ամերիկայից, կամ ավելի ճիշտ, Բերնուիլի հրվանդանը Կորրիենտես հրվանդանից բաժանող հարյուր իննսունվեց աստիճանը տասնմեկ հազար յոթհարյուր վաթսուն աշխարհագրական մղոն հեռավորությամբ անցում կկատարեր։ Բայց յերեսունյոթերորդ զուգահեռի յերկարությամբ գնալով, այդ հարյուր իննսուն-

վեց տարեկանը կարդում էր ընդամենը ինը հազար չորս հարյուր ութսուն մղոն ճանապարհ։ Ամերիկական ափից մինչև Տրիստան դ'Ակունիան յերկու հազար հարյուր մղոն է,—մի տարածություն, վորը Ջոն Մանդլըը հազվի յեր ստնում տասն որում անցնել, յեթե արևելյան քամիները չդանդաղեցնեին դրոսանավի ընթացքը։ Բայց այդ կողմից ամեն ինչ դեռևս ավելի քան լավ էր գնում։ Ցերեկոյան դեմ ծովային քամին զգալի կերպով հանդարտեց, հետո փոխեց ընթացքը, և «Դունկանը» հոյակապորեն ծովագնացության իր բարձր հատկությունները։

Ուղևորները հենց նույն որը վերադարձան իրենց առօրյական ժամանցին։ Կողինը չէր խոսում այն մասին, վոր նրանց մի մասը մի ամբողջ ամիս թողնել էր դրոսանավը։ Խաղաղ ովկիանոսի փոխարեն նրանց աչքերի առաջ ծփում եյին Ատլանտյան ովկիանոսի ջրերը, իսկ բացառությամբ յերանգավորման աննշան տարբերության, բոլոր ալիքները նման են իրար։

Մեր ճանապարհորդներին այնքան ծանր փորձություններ պատճառող տարերքները, թվում էր, թե այժմ միացրել են իրենց ջանքերը, վորպեսզի բարենպաստ պայմաններ ստեղծեն նրանց համար։

Ովկիանոսը բոլորովին հանդիստ էր։ Բարեհաջող քամի յեր փչում, և բարձրից մինչև ցածր յերկու կայմին հագցրած առագաստներն ողնում եյին կաթսաներում բանտարկված անհագ գոլորշուն։

Այդ արագ անցումը կվերջանար առանց վորևե պատահարների։ Բոլորը վստահությամբ սպասում եյին ավստրալիական ափերին։ Հույսին փոխարինեց համոզվածությունը։ Նավապետ Գրանտի մասին այնպես եյին խոսում, կարծես թե դրոսանավը գնում է նրա հետևից մի ստույգ ցույց տված նավահանգիստ։ Նրա և իր յերկու ընկերների համար առանձին նավասենյակներ պատրաստվեցին։ Մերի Գրանտն ինքն էր կահավորում և հավաքում այդ սենյակները։ Ոլբինեթն իր կայուտան զիջեց նավապետ Գրանտին և տեղափոխվեց տիկին Ոլբինեթի կայուտան, վորը կից էր Ժակ Պագանելի «Շոտլանդիայի» նավերում պատվիրած հայտնի համարին։

Գիտնական աշխարհագրագետը, համարյա ամբողջ ժամանակ, նստած էր իր կայուտում։ Նա առավոտից մինչև յերեկո աշխատում էր մի գիտական աշխատանքի վրա, վորի վերնա-

դերն էր «Աշխարհագրական արտասովոր ճանապարհորդությու-նը Արգենտինայի պամպասներում»:

Կարելի չէր լսել, թե ինչպես նա հուզված ձայնով կարդում էր հատընտիր պարբերություններ, նախքան նրանց թղթի վրա տեղափոխելը:

Մայրը վողջունում էր գիտնական բարեկամի այդ պարապ-մունքները, բայց ըստ սովորականի հանդարտ արտահայտված, հա-ճախ ասում էր նրան.

— Զգուշացեք միայն ձեր սովորական ցրվածությունից, Պա-գանել, և, յեթե ձեր գլխին ավստրալիական լեզուն տիրապե-տելու ցնորք փչի, այն դեպքում փորձեցեք ուսումնասիրել այն չինական քերականությամբ:

Յեվ այսպես, ամեն ինչ լավ էր գնում զբոսանավի [illegible]: Գլենարվանն ու իր կինը ուշադրությամբ հետևում էին Ջոն Մանգլսին և Մերի Գրանտին: Բայց վորովհետև Ջոնը և Մերին լռում էին, նրանք իրենց կողմից վորոշեցին նույնպես խոսակ-ցություն չսկսել այդ գործի մասին:

— Ի՞նչ կասեր նավապետ Գրանտը,— հարցրեց մի անգամ Գլենարվանը Յելենային:

— Նա կմտածեր, վոր Ջոնը միանգամայն արժանի յե Մե-րիին, թանկագին Եդվարդ: Յեվ նա չէր սխալվի,— պատասխա-նեց նրան Յելենան:

Այդ ժամանակամիջոցում զբոսանավը՝ արդեն մոտենում էր Տրիստան դ'Ակունյային:

Կորրիենտես հրվանդանի տեսողությունից կորչելուց հինգ օր հետո, փչեց արևմտյան բարեհաջող ծովային քամին:

«Դունկանի» առագաստները բաց արեց և առաջակողմի, կայ-մառագաստի և հողմառագաստների օժանդակությամբ առաջ սլացավ, թեքվելով ձախ ճոզանի վրա: Նրա պտուտակը հազիվ էր քավում լանջով ճեղքված ջրի հոսանքին: Կարելի չէր կարծել, վոր զբոսանավը Թեմզայի յախտ-ակումբի վերջին մրցանակի հետևից սլանում է:

Հետևյալ օրը զարթնելով, ճանապարհորդները տեսան, վոր ովկիանոսը ծածկված է հսկայական ջրաբույսերով: Նա նման էր խոտերով բուսած մի ահագին լճի:

«Դունկանը» կարծես թե սահում էր կանաչ խոտով ծածկված հարթավայրով, վորը Պագանելը համեմատում էր պամպաների

հետ։ Չրարուլսերը բամբակաշնորհին զանգահարելով իրենց պտտվում-վի վրայից։

Նույն մի օր հետո, վաղ առավոտյան, հանկարծ լսվեց հերթապահ նավաստու ձայնը։

— Ցամաք։

— Ո՞ր ուղղությամբ, — հարցրեց պահնորդ Թոմ Օստինը։

— Քամու, — պատասխանեց նավաստին։

Այդ հուզիչ լուրի հետ զբոսանավի տախտակամածն անհապաղ լցվեց մարդկանցով։ Սանդուղքից յերևաց հեռադիտակը, որա հետևից գնում էր Պագանելը։

Գիտնականը մեկնեց իր գործիքը ցույց տված ուղղությամբ և վոչինչ չտեսավ այնտեղ, ցամաք հիշեցնող թեկուզ փոքրիկ բան։

— Ամպերին նայեք, — խորհուրդ տվեց նրան Ջոն Մանգլսը։

— Իսկապես, այնտեղ ինչ վոր մի բան է պատկերվում ժայռի պես, բայց հազիվ նկատելի, — հայտարարեց Պագանելը։

— Այդ Տրիստան դ'Ակունյան է, — ասաց Ջոն Մանգլսը։

— Եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, — ավելաց գիտնականը, — մենք կղզուց ութսուն մղոն տարածության վրա յենք գտնվում, վորովհետև Տրիստանի ապառաժը յոթ հազար վոտնաչափ բարձրությամբ սկսում է յերևալ հենց այդ տարածությունից։

— Միանգամայն ճիշտ է, — հարեց նավապետ Ջոնը։

Մի քանի ժամ հետո արդեն բոլորովին պարզ կարելի յեր տարբերել շատ բարձր, ժայռոտ կղզիների արշիպելագը։ Տրիստանի կոնաձև գագաթը սև ուրվանկարով ջոկվում էր յերկնքի կապույտ ֆոնի վրա։ Նրան լուսավորում էին ծագող արևի կուրացուցիչ ճառագայթները։ Շուտով ընդհանուր ժայռոտ զանգվածի մեջ ջոկվեցին գլխավոր կղզու ուրվագծերը, վորը գտնվում էր գեղջի հյուսիս-արևելք թեքված յեռանկյունու գագաթին։

Տրիստան դ'Ակունյան ընկած է 37° 8' հարավային լայնության և 10° 44' արևմտյան յերկայնության տակ Գրինվիչից։ Նրանից տասնութ մղոն դեպի հարավ-արևմուտք գտնվում է Անմատչելի կղզին, իսկ տասը մղոն դեպի հարավ-արևելք — Սոխակի կղզին, վոր փակում է Ատլանտյան ովկիանոսում ձգված այդ փոքրիկ արշիպելագը։

Կեսօրին զբոսանավն անցավ ատեղջական յերկու գծերը ար-

ժանի քանդերի մասով, վորոնք ծովագնացների համար ծառայում են վորպես ճանաչողության կետեր, դրանք են՝ Անմատչելի կըղզու ժայռը, վոր զարմանալի նման է առագաստները բացած նավի, և Սոխակ կղզու հյուսիսային ծայրի յերկու փոքրիկ կղզին, վոր ամրոցի ավերակներ են հիշեցնում։

Ժամի յերկուքին «Դունկանը» մոտավ Տրիստան դ'Ակունիայի Ֆալմության ծովախորշը, վորը Հելմ հրվանդանով պաշտպանվում է հարավային քամիներից։

Այնտեղ կետ վորսացող մի քանի նավեր եյին կանգնած, վոր զբաղված եյին փոկերի և ծովային ուրիշ կենդանիների վորսով, վորոնք ահագին քանակությամբ գտնվում են այդ ափերի մոտ։

Ջոն Մանգլսն զբաղված եր կանգառի անվտանգ տեղ փնտրելով, վորովհետև կղզու բաց նավահանգիստը շատ վատ է պաշտպանված հյուսիս-արևմտյան և հյուսիսային քամիներից։ Հենց այդ տեղում անգլիական «Ջուլիա» յերկկայմը ընկղմվեց 1829 թվին։ «Դունկանը» կես մղոն տարածությամբ մոտեցավ ափին և կանգնեց խարիսխի վրա։ Ուղևորներն ու ուղևորուհիները իսկույն նեթ նստեցին իրենց համար իջեցրած մեծ նավակի մեջ և շուտով ափ իջան, վոր ծածկված եր մանրիկ, սև ավազով։

Տրիստան դ'Ակունիա արշիպելագոսի գլխավոր քաղաքը լայն, քրքջացող գետակին մոտիկ, ծովախորշի խորքին ամփոփված մի փոքրիկ գյուղ եր։ Գյուղը հիսուն շատ մաքուր տնակ ուներ և յերկրաչափական այն ճշտությամբ եր կառուցված, վորը հանդիսանում է անգլիական նորագույն քաղաքաշինարարության վերջին խոսքը։ Այդ փոքրիկ քաղաքի հետևում սառած լավայով յեզրափակված, հարյուր հիսուն հեկտար տարածությամբ մի հրապարակ եր տարածվում։ Այդ հրապարակի վրա յոթհազար վոտնաչափ դեպի վեր եր բարձրանում սարի կոնաձև գագաթը։

Գլենարվանն իսկույն նեթ ուղևորվեց անգլիական գաղութի նահանգապետի մոտ, այն հույսով, վորպեսզի վորևէ բան իմանա նրանից Հարրի Գրանտի և «Բրիտանիայի» մասին։ Բայց այդ անունները բոլորովին անհայտ եյին այստեղ։ Տրիստան դ'Ակունիա կղզիները նավերի սովորական ճանապարհից հեռու յեն գտնվում և հազվագյուտ են այցելվում։ «Բլենդոն-Գոլլի» հայտնի նավաբեկման ժամանակից, վոր տեղի յե ունեցել 1821 թվին՝ Անմատչելի կղզու ժայռերի մոտ, միայն յերկու նավ են կանգնել



Ճանապարհորդները թափառում էին ժայռոտ ափին։

գլխավոր կղզու ափին։ «Գրիմալդի»-ն 1845 թվին, և ամերիկական յերկաթ կայմանի «Ֆիլադելֆիա» նավը 1857 թվին։

Գլենարվանը հույս եր չուներ գտնել այստեղ «Բրիտանիայի» խորտակման հետքերը և նախազգուշական հարցերով դիմեց միայն խղճի հանգստության համար։ Բայց և այնպես նա նավի նավակները ուղարկեց կղզու շուրջը, վորը տասնյոթ մղոնից ավել շրջագիծ չուներ։ Նրա քանած մակերևույթի վրա, յեթե նույնիսկ յերեք անգամ մեծ լինեին այն, վոչ Լոնդոնը, վոչ էլ Փարիզը չէին կարող տեղավորվել։

Մինչդեռ հետախուզությունները եյին կատարվում, «Դունկանի» ուղևորները զբոսնում եյին քաղաքում և շրջակա բլուրների վրա։

Տրիստան դ'Ակունիայի բնակչությունը բաղկացած է հարյուր հիսուն մարդուց։ Դրանք անգլիացիներ և ամերիկացիներ են, Բարեհուսո հրվանդանի նեգրուհիների և հոտենտոտուհիների հետ ամուսնացած, վորոնք հռչակված են իրենց բացառիկ տգեղությամբ։ Այդ ամուսնությունների յերեխաներն իրենցից ինչ-վոր սաքսոնական չորության և աֆրիկական սևության տարօրինակ խառնուրդ են ներկայացնում։

Վերջապես վոտքի տակ ամուր հող զգալով, ճանապարհորդները այնքան եյին յերջանիկ, վոր շարունակեցին իրենց զբոսանքը մինչև ափի այն մասը, վորը լավայով յեզրափակված հարթավայրով սահմանակցում է արևելքի մեծ ճահճացած տարածքի հետ։ Սառած լավայով ծածկված մեծացած ամբողջ ափը ամայի յե և անապատ։ Այնտեղ ապրում են միայն ահագին մրրկահավերը, մեկ էլ հազարավոր տխմար թևանոտները։

Դիտելով հրաբխային ծագում ունեցող այդ ժայռերը, ճանապարհորդները նորից հետ իջան։ Այնտեղ արագ և բազմաթիվ գետակներ եյին խոխոջում, վորոնք սնվում եյին լեռնային գագաթների մշտական ձյուներով։

Պայծառ-կանաչ թփուտում բազմաթիվ թռչուններ եյին ճախրում։ Թվում եր, թե նրանք նույնքան են, վորքան և ծաղիկները։ Ցեղջերենու ծառը՝ քսան վոտնաչափ բարձրությամբ, հսկայական տուսակը, ծառանման ցողունով, ահագին լոմարիաներ միմյանց հետ հյուսված մագլցող ցողուններով, անանուխի պտղատու թփերը, վոր թմբլուկացած քաղցրամի բույր են արձակում, մամուռներ, վայրենի նեխուրներ և արծվածանկերը—այս ամբողջը

կորչում էր կյանքը միատոնակ, բայց առատ բուսականությունը։ Զգացվում էր, վոր հողի այդ փոքրիկ կտորի վրա մշտական պայքար է թեժանում։

Ճանապարհորդները զբոսանքից վերադարձան միայն մթնշաղին։

Փոքրիկ քաղաքի շրջակայքում արածում էին լամաների և վոչխարների հոտերը։ Հացահատիկային և յեգիպտացորենի դաշտերի ու բանջարանոցային բույսերի հետ, վոր քառասուն տարի առաջ էին բերվել այստեղ, նրանք կազմում էին բնակչության ամբողջ հարստությունը։

Իսկ և իսկ այն վայրկյանին, յերբ Գլենարվանը զբաղված էր վերադառնում, նրան մոտեցան նաև նավի մակույկները։ Նրանք մի քանի ժամում կարողացան շրջագայել ամբողջ կղզին և չհայտնաբերեցին «Բրիտանիայի» ամենաչնչին հետքերն անգամ։ Այդ «աշխարհահռչակ» ճանապարհորդությունը մի յեղակի հետևանք ունեցավ. Տրիստան դ'Ակունիայի կղզիների վերջնական ջնջումը վորոնումների ծրագրից։

«Դունկանն» իսկույն ևեթ կարող էր թողնել աֆրիկական կղզիների այդ խումբը և շարունակել իր ճանապարհը դեպի արևելք։ Նա նույն յերեկոյան խարիսխը չվերցրեց միայն նրա համար, վոր Գլենարվանը հրաման տվեց ամբողջ նավակազմին զբաղվել փոկերի վորսով, վորոնց անթիվ խմբերը հեղեղում էին Ֆալմուտյան ծովախորշի ափերը։ Մի ժամանակ այստեղ կետեր էլ են յեղել, բայց նրանց այնպիսի քանակությամբ են վոչնչացրել, վոր նրանք, համարյա, բոլորովին անհայտացան։

Վորոշվեց, վոր զբոսանավի անձնակազմը հետևյալ ամբողջ որը սպասի և վորս անի, վորպեսզի ճարպի պաշարը լրացնի։ Այդպիսով «Դունկանի» մեկնումը նշանակվեց վաղը չէ, միյուս որը, այսինքն նոյեմբերի 20-ին։

Ընթրիքի ժամանակ Պագանելն ուղևորներին հետաքրքրող մի քանի լրացուցիչ տեղեկություններ հաղորդեց Տրիստան դ'Ակունիա կղզիների մասին։ Նրանք իմացան, վոր այդ արշիպելագը գտել է պորտուգալացի Տրիստան դ'Ակունյան 1506 թվին և մնացել է առանց հետազոտության մի ամբողջ դարի ընթացքում։ Այդ կղզիները, անհիմն չէ, վոր համարվում էին «մրրիկների բույն» և նույնպիսի վատ համբավ ունեին, ինչպես և Բերմուդյան կղզիները։

Զգուշանում էյին մոտենալ նրանց, և վոչ մի նավ այդտեղ հոժարակամ խարիսխ չէր ձգում, յեթե նրան այդ բանն անելու չէր ստիպում հանկարծակի կատաղած փոթորիկը։

1697 թվին Հնդկական ընկերությանը պատկանող յերեք հոլանդական նավ մոտեցան արշիպելագոսի ափերին։ Նրանք վորոշեցին նրա կոորդինատները, հայտնի աստղագետ Գալլեյին թողնելով նրանց հաշվարկումների ստուգման հոգսը։ 1713 թվից մինչև 1767 թիվը ժամանակամիջոցում արշիպելագոսի հետ էլի մի քանի ֆրանսիական ծովագնացներ ծանոթացան, մասնավորապես Լապերուզը, վորին գիտական հետազոտությունները բերին այստեղ, նրա հայտնի նավապարհորդության ժամանակ, 1755 թվին։

Համարյա վոչ վոք չայցելող այդ կղզիները բոլորովին ամայի էյին, մինչև վոր վերջապես 1811 թվին ամերիկացի Ջոնաթան Լամբերտը մտածեց գաղութացնել այն։ Նա և իր յերկու ընկերները ափ դուրս յեկան այստեղ հանգրվանին, և անվեհերությամբ աշխատանքի կպան։ Բարեհուսո հրվանդանի անգլիական նահանգապետն իմանալով, վոր նրանք բարգավաճում են այնտեղ, առաջարկեց նրանց Անգլիայի հովանավորության տակ մտնել։

Ջոնաթանը համաձայնեց և իր խրճիթի գլխին անգլիական դրոշակ բարձրացրեց։ Թվում էր, թե նա խաղաղ կերպով պիտի կարողանար իշխել մի նեգր խոհարարից և մի պորտուգալացի խառնածիններից բաղկացած իր հպատակների վրա, յերբ հանկարծ մի անգամ իր կալվածների ափերը շրջապատելու ժամանակ, նա խեղդվեց թե խեղդեցին, ինչ վոր առայժմ հայտնի չէ։

Յեկավ 1816 թվականը։ Նապոլեոնը բանտարկված էր սուրբ Յեղենայի կղզում, և վորպեսզի ավելի լավ պահպանեն նրան, Անգլիան կայազորներ հիմնեց Համբարձման և Տրիստան դ'Ակունյայի կղզիների վրա։ Տրիստան դ'Ակունյայի կայազորը կազմված էր Բարեհուսո հրվանդանի հրետանային վաշտից և հոտենտոտների ջոկատից։ Այդ կայազորը մնում էր այստեղ մինչև 1821 թիվը, և Նապոլեոնի մահից հետո կրկին Բարեհուսո հրվանդանը վերադարձվեց։

— Այստեղ միայն մի յեվրոպացի մնաց,—շարունակեց իր պատմությունը Պագանելը,—շոտլանդացի յենթասպա։

— Հա՞, շոտլանդացի,—կրկնեց մայորը, վորին միշտ էլ առանձնապես էյին հետաքրքրում իր հայրենակիցները։—Ինչպե՞ս էր նրա անունը։



Ամբողջ գիշերը վազա էյին անում։

— Նրա անունը Վիլյամ Գլաս էր,—պատասխանեց Պագանելը,—նա բնակչություն էր հաստատել կղզում իր կնոջ և յերկու հոտենտոտների հետ։ Շուտով շոտլանդացուն միացան յերկու անգլիացիներ, մեկը նավաստի, մյուսն էլ ձկնորս՝ Թեմզայից և արգենտինյան բանակի նախկին զինվոր։ Վերջապես 1821 թվին «Բլենդեն-Գոլլեյի» խորտակված առագաստանավի տուժողներից մեկը իր յերիտասարդ կնոջ հետ միասին ապաստան գտավ կղզու վրա։ Այսպիսով, 1821 թվին կղզու բնակչությունը կազմված էր արդեն վեց տղամարդուց և յերկու կնոջից։ 1829 թվին այնտեղ արդեն կային յոթ տղամարդ, վեց կին և տասնչորս յերեխա։ 1835 թվականին այդ թիվը բարձրացավ մինչև քառասունի, բայց այժմ նա յեռապատկվել է։

— Այդպիսով ամբողջ ազգություններ են անում,—ասաց Գլենարվանը։

— Յես կավելացնեմ, վորպեսզի վերջացնեմ Տրիստան դ'Ակունիայի պատմությունը,—շարունակեց Պագանելը,—վոր այդ կղզին, իմ թվում է, միանգամայն արժանի յէ, Խուան-Ֆերնանդեզ կղզու նման կոչվել Ռոբինզոնի կղզի։ Յեվ իսկապես, յեթե Խուան-Ֆերնանդեզի վրա յեն ընկել մեկը մյուսի հետևից յերկու ծովահեն, այս գտնում նույնպիսի վիճակի յեն արժանացել յերկու գիտնականներ՝ Տրիստան դ'Ակունիայում։ 1793 թվականին իմ հայրենակիցներից մեկը, նատուրալիստ Օբեր Դյու-Պետի-Տուարը, հերբարիում հավաքելով տարված, ճանապարհը կորցրեց, և իր նավը գտավ այն վայրկյանին, յերբ նավապետն արդեն հրաման էր տալիս վերցնել խարիսխը։ 1824 թվականին ձեր հայրենակիցներից մեկը, թանկագին Գլենարվան, հմուտ նկարիչ Աուգուստ Էրլը, լքված էր այնտեղ ամբողջ ութ ամիս։ Նավապետը մոռանալով, վոր նա ափին է մնացել, առանց նրան հեռացավ գնաց Բարեհուսո հրվանդանը։

— Ահա այդ արդեն իսկապես ցրված նավապետ է,—ասաց մայորը։—Անշուշտ, դա ձեր ազգականներից մեկն է լինել, Պագանել։

— Յեթե նա իմ ազգականը չէր, մայոր, համենայն դեպս նա միանգամայն արժանի յեր լինել այդպիսին։ Աշխարհագրագետի պատասխանը վերջ տվեց այդ խոսակցությանը։

Ամբողջ գիշերը վորս էյին անում։ Հիսուն հատ մեծ փոկեր

սպանեցին։ Հետևյալ ամբողջ օրը նվիրեցին փոկերի ճարպը հալեցնելու և կաշիների մշակմանը։

Կանգառի այդ յերկրորդ օրը ուղևորները մի եքսկուրսիա եյ կատարեցին դեպի կղզու խորքը։ Գլենարվանն ու Մայորը հրացաններ վերցրին իրենց հետ, վորպեսզի վորս անեն։ Այդ զբոսանքի ժամանակ ճանապարհորդներն իջան մինչև լեռան ստորոտը, ուր ամբողջ հողը ծածկված եր սև բեկորներով, խարամով, սև լավայի ծակոտի կտորներով և հրաբխային այլ ժայթքումներով։ Սարի ստորոտը իրենից ներկայացնում եր խախուտ քարերի և ժայռերի բեկորների մի քաոս։

Անկարելի յեր սխալվել այդ ահագին կոնուսի ծագման մասին, և անգլիացի նավապետ Կարմայկելը, անկասկած, իրավացի յեր, յերբ ասում եր, թե դա հանգած հրաբուխ ե։

Վորսորդներն իրենց ճանապարհին հանդիպեցին մի քանի վայրենի վարազների։ Նրանցից մեկն սպանվեց Մայորի գնդակով։ Գլենարվանը մի քանի կաքավ խփեց, վորոնցից նավի խոհարարը հրաշալի տապակած ուտեստ պատրաստեց։ Բազմաթիվ այծեր եյին թռչկոտում լեռնային բարձր հրապարակներում։ Ինչ վերաբերում ե համարձակ, հպարտ և ուժեղ վայրենի կատուներին, վորոնցից նույնիսկ շունն ել ե վախենում, նրանք այստեղ մեծ քանակությամբ եյին գտնվում։

Ժամի ութին բոլորն եյ նավը վերադարձան, և գիշերը «Դունկանը» թողեց Տրիստան դ'Ակունյա կղզին, վորպեսզի այլևս այնտեղ չվերադառնա։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ԱՄՍՏԵՐԴԱՄՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ

Ջոն Մանգլսի գլխավոր հոգսն այժմ Բարեհուսո հրվանդանում ածուխի պաշար պատրաստելն եր։ Այդ պատճառով նա պիտի մի քիչ շեղվեր յերեսունյոթերորդ զուգահեռից և յերկու աստիճան դեպի հյուսիս բարձրանար։ «Դունկանը» պասսատ կոչվող քամիների գոտուց ցածր եր գտնվում և ընկավ արևմտյան ընթացակից քամիների շրջանը։ Ավելի պակաս քան վեց օրում նա հազար յերեքհարյուր մղոն կտրեց, վոր բաժանում ե Տրիստան դ'Ակունյան աֆրիկական ափից։

Նոյեմբերի 24-ին, առավոտյան ժամի յերեքին «Դունկանի» կամրջակից կարելի էր տեսնել Սեղանի սարը, իսկ մի քիչ ուշ զբոսանավը բարձրացավ մինչև ծովախորշի մուտքը ցույց տվող Ազդանշանային սարը։ «Դունկանը» ծովախորշ մտավ ժամի ութին և խարիսխ ձգեց Կապշտադտի նավահանգստում։

Աֆրիկայի ծայրամասը 1486 թվին առաջին անգամ տեսավ պորտուգալացի ծովակալ Բարդուղոմե Դիասը, և միայն 1497 թվին հռչակավոր Վասկո-դե-Գաման շրջանցեց հրվանդանը, վորը հետագայում կոչվեց Բարեհուսո հրվանդան։

Կարո՞ղ էր, արդյոք, Պագանելը, մոռանալ այդ, յերբ հենց Կամոենսն է գովերգել մեծ ծովագնացին իր «Լուզիադայում»։ Այդ առթիվ աշխարհագրագետը մի հետաքրքիր դիտողություն արեց. չէ՞ վոր յեթե Դիասը 1486 թվին, Կոլումբոսի առաջին ճանապարհորդությունից վեց տարի առաջ, շրջանցեր այդ հրվանդանը, Ամերիկան դեռ յերկար ժամանակ անհայտ մնար։ Յեվ իսկապես, Բարեհուսո հրվանդանի մասով Արևելյան Հնդկաստանի ճանապարհն ավելի կարճ և ուղիղ ճանապարհն էր։ Շարունակ առաջ ու՛ առաջ դեպի արևմուտք խորանալով, ի՞նչ էր փնտրում ճենովացի մեծ ճանապարհորդը, յեթե վոչ դեպի «Համեմունքների կղզիները» տանող ճանապարհի կրճատումը։ Յեվ այսպես, յեթե հրվանդանն արդեն շրջանցած էր, Կոլումբոսի արշավն ավելորդ կլիներ, և նա, անկասկած, չէր նախաձեռնի այն։

Կապի ծոցի խորքում տեղադրված Կապշտադտ քաղաքը հիմնել է հոլանդացի Վան-Ռիբբեկը 1852 թվին։

Դա այն բավական մեծ գաղութի մայրաքաղաքն էր, վոր վերջնականապես անգլիացիներին անցավ 1815 թվականի պայմանագրով։

«Դունկանի» ուղևորները օգտվեցին կանգառից, վորպեսզի այցելեն նրան։

Նրանք իրենց տրամադրության տակ միայն տասներկու ժամ ունեյին, վորովհետև նավապետ Ջոնին մի օր էր հարկավոր միայն, վորպեսզի լրացնի իր պաշարները, և 26-ի առավոտյան նա արդեն պատրաստվում էր ճանապարհը շարունակել։

Բայց այդ էլ միանգամայն հերիք էր Կապշտադտ կոչվող շախմատային տախտակի բոլոր վանդակներն անցնելու համար, վորի վրա յերեսուն հազար՝ սպիտակ և սև բնակիչները թագա-

վորների, թաղուհիների, աշտարակների, փողերի, տաճարների, հեռանկարների դեր էին խաղում։ Համենայն դեպս այդպես էր Պագանելի կարծիքը։

Տեսան նույնպես քաղաքի հարավ-արևելյան մասում բարձրացող դղյակը, նահանգապետի պալատը, բերդը, թանգարանը. Դիտեցին նաև քարե խաչն ի պատիվ հայտնաբերության, յերբ առաջին բերքահավաքի գինուց մի մի բաժակ խմեցին, և անելու բան չմնաց, քան ճանապարհ ընկնելը։ Այդ և արին հետևյալ օրը։

Աշխարհի առաջին ճանապարհորդների հետ «Դունկանը» վերցրեց խարիսխը, դրեց յեռանկյունի առագաստն ու կայմահարթուկի առագաստը, և մի քանի ժամից հետո արդեն անցավ նշանավոր Բուք հրվանդանը, վորին Պորտուգալիայի տպախմեռո—թագավոր Հովհան 2-րդն այնպես անհաջող Բարեհուսո հրվանդան անվանեց։

Բարեհուսո հրվանդանը Ամստերդամյան կղզիներից անջատող յերկու հազար ինը հարյուր մղոնը, ընթացակից քամով և հանդիստ ծովով, տասն օրում կտրեցին։

Ծովագնացներն ավելի բախտավոր էին, քան պամպասների ճանապարհորդները։ Նրանք վոչ մի հիմք չունեին բնության ուժերի դեմ բողոքելու համար։

— Ա՛խ, ծով, ծով,—անդադար կրկնում էր Պագանելը։—Դա մարդկային լավագույն ուժերի գործողության դաշտն է, իսկ նավը քաղաքակրթության իսկական մարդականոցն է։ Մտածեցեք, բարեկամնե՛րս, յեթե յերկրագունդը մի ահագին մայր ցամաք լիներ, այն դեպքում մինչև մեր ժամանակները մենք հազիվ կիմանայինք նրա մի հազարերորդական մասը։ Նայեցեք, թե ինչ է կատարվում մայր ցամաքների խորքում։ Մարդը հազիվ է համարձակվում մտնել սիբիրական տափաստան, կենտրոնական Ասիայի հարթությունները, Աֆրիկայի անապատները, Ամերիկայի մարգագետինները, Ավստրալիայի ընդարձակ տափաստանները, բևեռների սառույցե ամայությունները... Ամենահամարձակները վերադառնում են կես ճանապարհից, ամենաանվեհերները վոչընչանում են այնտեղ։ Տապը, հիվանդությունները, բնիկների վայրենությունը ճանապարհորդների համար անհաղթելի արգելքներ են հանդիսանում այնտեղ։ Անապատի քսան մղոնը մարդկանց ավելի

յի անջատում միմյանցից, քան թե ովկիանոսի հինգհարյուր մղոնը։ Հակառակ ափերի վրա ապրող մարդիկ հարևաններ են համարվում, և նրանք օտար են միմյանց համար, յերբ նրանց անջատում է մի փոքրիկ անտառ։ Այդպիսով սահմանակցում է Ավստրալիայի հետ, մինչդեռ Յեգիպտոսը, կարծես թե, միլիոն փարսախ հեռու յի գտնվում Աֆրիկայից, իսկ Պեկինը հանդիսանում է Պետերբուրգի հակոտնյան։ Ծովն ավելի անցանելի չէ, քան թե Սահարայի ամենաանշեն մասը և հենց ծովի շնորհիվ է— ինչպես վոր տեղին արտահայտվել է մի ամերիկացի գիտնական, վոր աշխարհի մասերի մեջ քաղաքակրթական հարաբերություններ են հաստատվել։

Պաղանելը շատ էր ասում-ասում խոսում, և նույնիսկ մայորը մի բառ էլ չէր գտնում առարկելու համար ովկիանոսի այդ գովքի դեմ։ Յեթե Հարրի Գրանտի վորոնումների համար հարկավոր էր և անցնել յերկրորդ զուգահեռի յերկարությամբ՝ մայր ցամաքի վրայով, չարժեր անգամ փորձել այս ճանապարհորդությունը, բայց բարեկամաբար, ծովը պատրաստ էր ծառայել անվեհեր ճանապարհորդներին։ Դեկտեմբերի վերջին արեգակի առաջին ճառագայթները, վոնց վոր ծովի ալիքներից դուրս յեկան, լուսավորեցին սարերը։

Դրանք 37° 47' հարավային լայնության վրա և 24° յերկայնության տակ ընկած Ամստերդամյան կղզիներն էյին։ Ամբի գլխավոր կղզու բարձր կոնուսը պարզ յեղանակին տեսնվում է, համարյա, տասը մղոն տարածության վրա։ Առավոտյան ժամի ութին նրա դեռ անորոշ գծագրությունները թեթևակի հիշեցնում էյին Տեներիֆի տեսքը։

— Նա շատ է նման նաև Տրիստան դ'Ակունյային,—ասաց Գլենարվանը։

—Միանգամայն արդարացի դիտողություն է,—ձայնակցեց Պաղանելը,—դա ամբողջապես յերկրաչափական թեորեմայից է բխում, յերրորդին նման յերկու կղզի, իրար էլ են նման։ Յես դեռ կավելացնեմ, վոր Ամստերդամյան կղզիները, ինչպես և Տրիստան դ'Ակունյան, հարուստ են փոկերով և Ռոբինզոններով։

— Մի՞թե ամեն տեղ էլ Ռոբինզոններ են յեղել,—հարցրեց Յելենան։

— Ճիշտն ասած, ես շատ քիչ կյանքեր գիտեմ, ուր այս կամ այն ձևով ողբերգություն չի եղել։ Ձեր բախտը՝ մեր հայտնի հայրենակից Դանիել Դեֆոյից շատ ավելի առաջ ապրել է նրա վեպը։

— Պարոն Պագանել,— ասաց Մերի Գրանտը,— թույլ տվեք ինձ ձեզ մի հարց տալ։

— Մի դյուժին, եթե կամենում եք, ես պատրաստ եմ պատասխանել ձեզ։

— Շնորհակալ եմ ձեզնից,— պատասխանեց երիտասարդ օրիորդը,— ես միայն ուզում էի հարցնել արդյոք, ձեզ չե՞ս կվախեցներ անմարդաբնակ կղզում ձգված լինելու միտքը։

— Ի՞նձ,— գոչեց Պագանելը։

— Սիրելի բարեկամ,— ասաց մայորը,— մի փորձեք համոզել մեզ, վոր այդ ձեր նվիրական երազանքն է։

— Ես չեմ ուզում վոչ մի բանում համոզել ձեզ, բայց նման արկածը շատ չի վախեցնում ինձ։ Ես նոր կյանք կսկսեի։ Ես կգնայի վորսի, ձկնորսությամբ կզբաղվեի, ես ինձ համար ձմեռվա բնակարան կշինեի, քարանձավում, իսկ ամառը—ծառի վրա, ես ինձ համար պաշարների պահեստներ կշինեի, մի խոսքով, ես կգաղութացնեի իմ կղզին։

— Կատարյա՞լ միայնակության մեջ։

— Այո՛, եթե այդպես պատահեր։ Բայց, մի՞թե երկրի վրա կատարյալ միայնակություն լինում է։ Մի՞թե չի կարելի բարեկամներ գտնել կենդանիների մեջ, ընտելացնել երիտասարդ այծին, վորևէ պերճախոս թութակի, սիրելի կապիկին։ Իսկ եթե բախտը Ուրբաթի պես մի բարեկամ ուղարկի ձեզ, էլ ցանկանալու բան չի մնում։ Միայնակ ժայռի վրա երկու բարեկամ— ահա ճշմարիտ երջանկությունը։ Երևակայեցեք, ես և մայորը…

— Շնորհակալ եմ ձեզնից,— պատասխանեց մայորը,— ես ամենատարրական ընդունակություններն էլ չունեմ Ռոբինզոնի դերի համար, և ես շատ վատ կխաղայի այն։

— Սիրելի Պագանել,— ասաց Հելենան,— ձեր երևակայությունը նորից է ձեզ երազանքի բնագավառը տանում։ Բայց ես կարծում եմ, վոր իրականությունը շատ է տարբերվում անուրջից։ Մտածեցեք այն մասին, վոր բոլոր այդ մոռացված Ռոբին-

զոններին բախտը կանխատեսությամբ շղթայում և հրաշալի կերպով ընտրած կղզու վրա և փարթամ բնությունը նրանց ինչ վոր յերևակայական յերեխաներ է դարձնում։ Դուք մեդալի միայն յերեսի կողմն եք տեսնում։

— Ինչպես։ Դուք չե՞ք հավատում, վոր անմարդաբնակ կղզում կարելի յե յերջանիկ լինել։

— Այո՛, չեմ հավատում։ Մարդը հասարակության համար է ստեղծված, և կատարյալ միայնակությունը նրա մեջ միմիայն հուսահատություն առաջացնելու յե ընդունակ։ Այդ միայն ժամանակի խնդիր է։ Սկզբում նա տարված է նյութական կյանքի հոգսերով, առօրյա կարիքներով, այդ բոլորը հեռու յե պահում ծովի ալիքներից հազիվ ազատված դժբախտին։ Ներկայի մասին ունեցած մտահոգությունը հեռացնում է նրանից ապագայի ապառնալիքը։ Բայց հետագայում, յերբ նա վերջապես գիտակցում է իր միայնակությունը, հեռու իր նմաններից, իր յերկիրն ու իրեն մոտիկ մարդկանց տեսնելու առանց վորևէ հույսերի, ինչ ապրումներ պիտի ունենա նա, վորպիսի տանջանքներ։ Նրա կղզյակը—այդ նրա համար ամբողջ աշխարհն է։ Ամբողջ մարդկությունը—այդ նա յե միայն, և յերբ մահը գա, նա իրեն կզգա ինչպես վերջին մարդը, աշխարհի գոյության վերջին օրը։ Հավատացեք ինձ, Պագանել, ավելի լավ է չլինել այդ մարդու տեղը։

Պագանելն ափսոսանքով համաձայնեց Թելենայի՝ պատճառաբանությունների հետ և միայնակության առավելությունների, պակասությունների մասին յեղած խոսակցությունը շարունակվեց մինչ այն ժամանակ, յերբ «Դունկանը» գտնվեց մի մղոն տարածության վրա, Ամստերդամյան կղզիներից։

Հնդկական ովկիանոսի այդ մենավոր արշիպելագը յերկու կղզուց է բաղկացած, վորոնք միմյանցից յերեսուներեք մղոն հեռավորության վրա յեն գտնվում, ճիշտ և ճիշտ Հնդկական թերակղզու միջօրեականի վրա։ Հյուսիսում ընկած է Ամստերդամ կամ ս. Պետրոսի կղզին, հարավում—ս. Պողոսի կղզին։ Բայց պետք է նշել, վոր հաճախ ծովագնացները և նույնիսկ աշխարհագրագետները շփոթում են նրանց անունները։

Այդ կղզիները 1796 թվին դեկտեմբերին հայտնաբերել է հոլանդացի Ֆլամինգը, հետո նրանց այցելեց անհայտ կորած հետախույզ Լապերուզին վորոնող արշավախմբի հրամանատար

դ'Անտրկաստոն։ Այդ ժամանակվանից էլ սկսվում է կղզիների շփոթումը։ Բարրոուն, Բոտան-Բոպրեն՝ դ'Անտրկաստոյի արշավում, հետո Գորսբուրգը, Պինկերտոնը և ուրիշ աշխարհագրագետներ, նկարագրելով ս. Պետրոսի կղզին, նրան անվանում են ս. Պողոսի կղզի և ընդհակառակը։ Բայց դրա փոխարեն ավստրիական ռազմանավի՝ «Նովարրայի» սպաները իրենց աշխարհաշրջիկ լողի ժամանակ 1859 թվին, յերբ այցելեցին այդ կղզին, չկրկնեցին այդ սխալը, վորը Պագանելն անպայման ուզում էր ուղղել։

Ս. Պողոսի կղզին—հարավային ծովերի մեջ—դա անմարդաբնակ հողի մի կտոր է, վոր կազմված է բարձր ափերից. ըստ յերևույթին նախկին հրաբուխ։

Ամստերդամ կամ ս. Պետրոսի կղզին, ուր «Դունկանի» մակույկը տարավ ուղևորներին, տասներկու մղոնից վոչ պակաս շրջագիծ ունի։ Նրա բնակիչները, որոնք իրենց ախուր կյանքին ընտելացած, մի քանի կամավոր աքսորականներ են։ Դրանք այն ձկնարդյունաբերության պաշտոնյաներն են, վոր պատկանում է ինչ-վոր Ոտովանի, Ռեյունիոն կղզուց։ Մեն պետությունների կողմից չճանաչված այդ տիրակալը, տարեկան յոթանասունհինգ-ութսուն հազար ֆրանկ է ստանում ձողաձուկի վորսից, աղելուց և պահածոնումից։

Ճիշտն ասած, Ամստերդամ կղզին պետք է Ֆրանսիային պատկանի։ Առաջին անգամ այնտեղ բնակություն է հաստատել ֆրանսիացի Կամրենը, Սեն-Դենիից։ Հետագայում նա այդ կղզին զիջեց մի լեհացու, վորն սկսեց մշակել այն մադագասկարցի ստրուկների աշխատանքի օգնությամբ։ Հետո կղզին նորից ընկավ ֆրանսիացի Ոտովանի ձեռքը։

«Դունկանի» գալու օրը, այսինքն 1864 թվի դեկտեմբերի 6-ին, նրա բնակիչները յերեք հոգի էյին. մի ֆրանսիացի և յերկու խառնածին, վորոնք ծառայում էյին Ոտովանին։ Պագանելն այսպիսով կարող էր սեղմել հայրենակցի, հարգելի պարոն Վիոյի ձեռքը։ Այդ զառամյալ ծերունին չափազանց հյուրասեր դուրս յեկավ։ Նա անսահման ուրախ էր յեվրոպացիների և կրթված մարդկանց այցելության պատճառով, վորովհետև Ամստերդամ կղզին սովորաբար փոկ վորսացող վորսորդներն են գալիս և, ավելի քիչ, կետ բռնողները, վորոնք բոլորը կոպիտ և անկիրթ մարդիկ են։

Վինը ճանապարհորդներին ներկայացրեց իր հպատակնե-րին—զույգ խառնածիններին: Եթե չհաշվենք անտառում դանդ-վող մի քանի վարազներ և բազմահազար թռչուններ ծովափին, այդ էր կղզու ամբողջ բնակչությունը:

Այն տունը, վորտեղ ապրում էին յերեք ճգնավորները, տե-ղավորված էր սարի փլուզումից կազմված բնական ծովախորշի խորքում:

Ամառնային կղզին ծառայում էր վորպես հանգրվան նավա-բեկման յենթարկվածների համար, Ռոսվան 1-ին «Թագավորու-թյանը» անցնելից շատ առաջ: Գտանելը պատմեց այդ մասին իր բարեկամներին, այսպես խորագրելով իր պատմվածքը. «Ամա-ռնային կղզին ընկած յերկու շոտլանդացու պատմությունը»:

Դեպքը 1827 թվականին էր: Կղզու մոտով անցնում էր անգ-լիական «Գալմիրա» նավը: Նավից նկատեցին խարույկի ծու-խը: Նավապետը մոտեցավ ափին և գթառատության աղդանշան-ներ տվող յերկու մարդ տեսավ: Նա նրանց հեռուից մակույկ ու-ղարկեց: Ազատվողները ասացին իրենց անունները. մեկը Ռո-բերտ Գրուդֆուտ, միուսը—Ջեկ Գեյլոմ: Անդճերը, համարյա թե կորցրել էին մարդկային կերպարանքը: Տասնութ ամիս անընդ-հատ նրանք հուսահատություն, նեղություն են քաշել, զրկված ամենաանհրաժեշտ բանից, համարյա թե խմելու ջուր չունենա-լով, պաշտպանելով իրենց ամեն միայն խոտնջներով և ձկնե-րով, վոր յերբեմն ընկնում էր ծառն մեխի-կարթին: Պատահում էր, վոր նրանք յերեք օրով վոչինչ չէին ուտում, անդադար վհատության քրմուհու պես պահպանելով վերջին կաթի արեթի ու-նությամբ վառած խարույկը: Նրանք յերբեք չէին թողնում, վոր այդ խարույկը հանգչի: Արդյոք նրանք յերկար, տարի ու կես անցկացրին: Գեյլին և Գրուդֆուտին կղզու ափին թռչեցրեց փոկեր վորսացող նավը: Նրանք պետք է մի ամիս աղքրեյին ափե-րին և փոկի կաշիներին և ճարպի պաշար պատրաստեյին, սպա-սելով նավի վերադարձին: Բայց նավը չվերադարձավ: Հինգ ամ-սից հետո Ամառնային կղզու մոտ կանգնեց Վան-Դիմենի յերկրին ուղևորվող «Յոսպ» նավը: Բայց «Յոսպի» նավապետը բոլորովին անհասկանալի դաժանություն ցույց տվեց և հրաժարվեց նավերը ընդունել նրանց: Այդ դեռ քիչ է, հեռանալիս նա նրանց համար մի հատիկ պաքսիմատ, մի շրթան ալյուր չթողեց: Անհն կասկա-ծից դուրս է, վոր գթառատ ծովագնացները կմեռնեյին կարիքից



Ցաք աղջիկները խփում էին գետնի տակից։

և գրկանքներից, յեթե մոտից անցնող «Պալմիրան» չվերցներ նրանց։

Յերկրորդ արկածը, վոր գրված է Ամստերդամ կղզու պատմության մեջ, յեթե միայն հողի մի այցելուի կարող կարող է պատմություն ունենալ,—դա մի ֆրանսիացու—նավաստի Պերոնի արկածն է։ Այդ պատմությունն սկսվեց այնպես, ինչպես և նախորդը, և նրա պես էլ վերջացավ. կղզու վրա կամավոր մնալը. նավը, վոր չի վերադառնում և քառասուն ամիս նեղություններ կրելուց հետո Ռոբինզոնին վերցնող ատար նավը։ Բայց նավաստի Պերոնի կղզու վրա կենալը հուշակվեց մի արյունոտ դրամայով, վոր տարօրինակ նմանություն ունի այն դեպքերի հետ, վորոնք տեղի ունեցան Դեֆոյի վեպի հերոսի հետ, նրա կղզին վերադառնալուն պես։

Նավաստի Պերոնը հրամայից չորս նավաստու հետ իջեցնել իրեն, յերկու անգլիացի և յերկու ֆրանսիացի։ Նա մտադիր էր տասնհինգ ամիս նվիրել ծովային առյուծների վորսին։ Բայց յերբ տասնհինգ ամիսն անցավ, պարենի պաշարները վերջացան, նավը չվերադարձավ կղզու վրա, «միջնադարյան հարաբերությունները» բավականաչափ բարդացան։ Յերկու անգլիացիները ապստամբեցին նավաստի Պերոնի դեմ, և նա անխուսափելիորեն կկործանվեր, յեթե հայրենակից նավաստիներն օգնության չգային։ Այդ ժամանակից թշնամացող յերկու կողմերն էլ խղճալի գոյության մատնվեցին. գիշեր—ցերեկ՝ մեկը մյուսին հետեվելով, մինչև անգամ քնած ժամանակ զենքից անբաժան, հերթով՝ մերթ վորպես հաղթված, մերթ վորպես հաղթող, նրանք անհավատալի զրկանքներ ու տանջանքներ եյին կրում։ Բայց չպետք է կասկածել, վոր թե ուշ մի բանակը մյուսին կվոչնչացներ, յեթե վոր պատահարար մոտից անցնող անգլիական նավը չվերցներ այդ դժբախտներին և չհասցներ հայրենիք։

Այսպես է այդ կղզու պատմությունը։ Յերկու անգամ նա ծառայել է վորպես հանգրվան մոռացված և լքված տարաբաների համար։ Բայց վոչ մի նավ պետք չի յենթարկվել նրա ափերի մոտ։ Յեթե մոտերքում խորտակում լիներ, ալիքները նրա վորևէ բեկորները ափ կշպրտեյին, մակույկները տուժողների հետ կհասնեյին Վիոյի արդյունաբերություններին։ Այնինչ կղզու վրա մնալու իր յերկար տարիների ընթացքում, ծերունին վոչ մի ան—

գամ առիթ չի ունեցել օգնություն ցույց տալ խորտակումից տուժողներին։ Նա վոչինչ չեր լսել վոչ «Բրիտանիայի», վոչ էլ նավապետ Գրանտի մասին։

Այդ անգետությունը Գլենարվանին վոչ զարմացրեց և վոչ էլ վշտացրեց։ Ովկիանոսի այդ կղզիներում կանգ առնելով, «Դունկանի» ուղևորները նրանց վրա վոչ այնքան նավապետ Գրանտին էյին վորոնում, վորքան այն համոզվածությանը, թե նա այնտեղ չէ։ Զբոսանավի մեկնումը նշանակվեց հետևյալ օրը։

Ճանապարհորդները մինչև յերեկո մնացին կղզում, վորի արտաքին տեսքը շատ եր գուրեկան։ Բայց նրա բուսականությունն ու կենդանական աշխարհը յերկար ժամանակ չեն կարող կաշկանդել բնախույզի ուշադրությունը։ Կենդանիներից, թռչուններից և ձկներից այստեղ գտնվում էյին միայն վայրենի վարազներ, մրրկահավեր, թևատներ ու փոկեր։ Տաք աղբյուրներն ու յերկաթ պարունակող աղբյուրները խփում էյին կղզու զանազան անկյուններում սևացած լավայի տակից, և նրանց գոլորշիները առանց ցրվելու քուլա-քուլա բարձրանում էյին օդում, հրաբխային հողի վրա։ Նրանցից մի քանիսի ջուրը շատ բարձր ջերմություն ուներ։ Ջոն Մանգլսի կախած ջերմաչափը 80° ցույց տվեց, ըստ Ցելսիուսի։ Ծովից բռնած ձուկը աղբյուրից մի քանի քայլ հեռու և համարյա նրա յեռացող ջրի մեջ ձգելուց հետո, կարելի յեր ուտել խաշած, մի քանի րոպեյից հետո։ Այդ համոզեց Պագանելին, վոր չարժե լողանալ աղբյուրում։

Լավ զբոսանքից հետո, յերեկոյան, Գլենարվանն ու իր ուղեկիցները հրաժեշտ տվին ծերունի Վիոյին։ Բոլորն էլ ամեն տեսակ բախտավորություն ցանկացան միայնակ կղզիաբնակներին։ Իր կողմից ծերունին կատարյալ հաջողություն ցանկացավ արշավախմբին։ Ապա, մակույկը յետ տարավ ուղևորներին «Դունկանի» նավեզրը։

### ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ԺԱԿ - ՊԱԳԱՆԵԼԻ ԵՎ ՄԱՅՈՐ ՄԱԿ-ՆԱԲՍԻ ԳՐԱԶԸ

Դեկտեմբերի 7-ին, առավոտյան ժամի յերեքին, «Դունկանն» արդեն գտնվում եր շոգու վրա։ Նավաստիները շարժման մեջ դրին մեքենան։ Ճախարակը բաժանվեց փոքրիկ նավահանգստի —

վազող հատակից և կրկին պառկեց իր բնում, նավերի վրա։ Պտուտակի թիթեռնիկներն սկսեցին ծեծել ջուրը, և զբոսանավը ճանապարհվեց։ Երբ ուղևորներն առավոտյան ժամի ութին նավերը դուրս յեկան, Ամստերդամյան կղզիներն արդեն հազիվ եյին յերևում հորիզոնում։ Դա ցամաքի վերջին կտորն եր մինչև Ավստրալիա, յերեսունյոթերորդ զուգահեռի յերկայնությամբ։ Հիմա նրանք պետք ե յերկար հազար մղոն անցնեյին առանց մի կանգառի։ Եթե ընթացակից քամի լինի և ծովն ել հանդարտ, «Դունկանը» տասներկու որում կհասնի իր նպատակին։

Մերին և Ռոբերտ Գրանտն առանց հուզմունքի չեյին կարողանում նայել ջրին, վորը «Բրիտանիան» ակոսել եր խորտակումից մի քանի որ առաջ։ Գուցե նավապետ Գրանտն այստեղ պայքարել ե անընկճելի ուժով իր նավը դեպի ամայի, վտանգավոր ափեր նետող Հնդկական ծովի ահռելի փոթորիկների դեմ։ Ջոն Մանգլսը քարտեզի վրա ցույց տվեց Մերի Գրանտին այդ տեղերում տիրապետող հոսանքները և հաղորդեց, վոր նրանք միշտ պահում են իրենց ուղղությունը։ Հնդկական ովկիանոսը կարող նրանցից մեկը գնում ե դեպի Ավստրալիայի ափերը։ Նա գտնվում ե վոչ միայն Խաղաղ, այլև Ատլանտյան ովկիանոսում։ Եթե «Բրիտանիան» փոթորկի ժամանակ կորցնելով կայմերն ու ղեկը, ընկել ե նրա շերտը, նա անխուսափելիորեն դժբախտ նավը պիտի քշեր-հասցներ Ավստրալիայի ափերին և այնտեղ ջարդեր խութերի վրա։

Սակայն այստեղ մի կասկած ե ծագում. նավապետ Գրանտի մասին վերջին տեղեկությունը Կալյաոյից եր ստացվել և թվագրված եր 1862 թվի մայիսի 30-ին։ Հապա ինչպես ե, վոր Պերուի ափերից մեկնելուց ութ որ հետո միայն «Բրիտանիան» գտնվեց Հնդկական ծովում։ Պագանելը, վորին արվեց այս հարցը, այնքան պարզ և դյուրըմբռնելի պատասխան տվեց, վոր բավարարեց ամենաանհավատներին։

Այս բանը պատահեց դեկտեմբերի 12-ի յերեկոյան, լողի վեցերորդ որը։ Գլենարվանը, Հելենան, Ռոբերտը, Մերին, նավապետ Ջոնը, Պագանելը և մայորը տախտակամածի վրա նըստած զրուցում եյին։ Սովորականի համաձայն, խոսակցությունը «Բրիտանիայի» մասին եր — մտքերի միակ առարկան զբոսանավի վրա։ Այդ կասկածը Գլենարվանի գլխում ծագեց և իսկույն ևեթ

ահազանգով լցրեց արշավախմբի մյուս բոլոր մասնակիցների մտքերը և սրտերը։

Գալանինը, վորին դիմեց Դյենարվանն այս հարցով, իսկույն գլուխը բարձրացրեց։ Ապա, առանց պատասխանելու, գնաց իր կայուտան, փաստաթղթերի հետևից։ Յետ վերադառնալով, նա ուսերը թոթվեց, ինչպես իրանով անբավական մի մարդ, վոր թույլ տվեց իրեն հուզվել այդպիսի դատարկ բանի համար։

— Բայց և այնպես, թանկագին բարեկամ,— ասաց նրան Դյենարվանը, վոր հրաշալի յեր հասկանում նրա դեմքի արտահայտությունը,— ավելի պարզորոշ պատասխանի պատվի արժանացրեք ինձ։

— Վո՛չ, յես ձեզ չեմ պատասխանի,— ասաց գիտնականը։— Յես կսահմանափակվեմ նրանով, վոր մի հարց կտամ նավապետ Ջոնին։

— Յես լսում եմ ձեզ, պարոն Գալանին,— պատասխանեց յերիտասարդ նավապետը։

— Կարո՞ղ է, արդյոք, արագընթաց նավը մի ամսում լողալ-անցնել Հարավային Ամերիկան Ավստրալիայից բաժանող տարածությունը։

— Կարող է, յեթե նա միջին հաշվով որական յերկու հարյուր մղոն կտրի։

— Բայց դա չափ ու սահմանից դո՞ւրս արագություն է։

— Ամենևին։ Դա ընթացքի միջին արագությունն է։ Առագաստավոր կլիպերներն ընթացակից քամու ժամանակ սովորաբար շատ ավելի արագ են գնում։

— Այդ՝ դեպքում,— շարունակեց Գալանինը,— ընդունենք, վոր ծովը փաստաթղթի մի թվանշանը ջնջել է և «հունիսի 7–ի» փոխարեն կարդացեք հունիսի «17» կամ «27»–ը։ Այն ժամանակ ամեն ինչ կպարզվի։

— Իսկապես,— ասաց Յելենան,— մայիսի 31–ից մինչև հունիսի 27–ը···

— Նավապետ Գրանտը հեշտությամբ կարող եր կտրել ամբողջ Խաղաղ ովկիանոսը,— հաղթականորեն բացականչեց Գալանինը։

Գիտնականի հաղթությունը դիմավորվեց ընդհանուր բավականությամբ։

— Յեվ այսպես, մի հանելուկային հանգամանք ել պարզ-

վեց,—ասաց Գլենարվանը։—Դրա համար մենք նորից Պագանելին ենք պարտական։ Այժմ մեզ մնում է միայն հասնել մինչև Ավստրալիա և նրա արևմտյան ափերին գտնել «Բրիտանիայի» խորտակման հետքերը։

— Ինչո՞ւ արևմտյան,—հարցրեց մայորը։—Չէ՞ որ խորտակումը կարող էր և արևելյան ափին պատահել։

— Դուք իրավացի եք, Մակ-Նաբս։ Իսկապես, այդ մասին փաստաթղթերում ամենափոքրիկ ցուցմունք անգամ չկա։ Դրա համար էլ մենք պետք է վորոնենք թե արևելյան և թե արևմտյան ափերին, այն տեղերում, ուր նրանք կտրվում են յերեսուն-յոթերորդ զուգահեռով։

— Նշանակում է, դուք համոզված չեք, հը՞...—սկսեց Մերի Գրանտը։

— Ո՛, վոչ, օրիորդ Մերի,—շտապեց ընդհատել օրիորդին Ջոն Մանգլսը։ — Պարոն Գլենարվանն ուզեց ասել, վոր մենք, հնարավոր է, վոր ստիպված լինենք մի փոքր միայն ընդարձակել վորոնումների շրջանը։ Ճիշտ է, յեթե նավապետ Գրանտը Ավստրալիայի արևելյան ափն է դուրս յեկել, այն դեպքում նա միանգամից հայրենակիցների վրա հանդիպեր, վորոնք ոգնություն ցույց կտային նրան։ Այդ ամբողջ ծովափը գաղութացրել են անգլիացիք և բավական խիտ բնակչություն ունի։

— Ուղիղ է, նավապետ,—ասաց Պագանելը։—Յես միանում եմ ձեր կարծիքին։ Արևելյան ծովափին—Տուֆոլդա ծովախորշում կամ Եդեմ քաղաքում Հարրի Գրանտը անգլիական գաղութում վոչ միայն ապաստան կգտներ, այլև հայրենիք վերադառնալու հնարավորություն։

— Բայց, ըստ յերևույթին, նավաբեկյալները նույնը չեյին կարող գտնել արևմտյան մասում, ուր այժմ տանում է մեզ «Դունկանը»,—հարցրեց Յելենան։

— Վո՛չ,—պատասխանեց Պագանելը։— Մայր ցամաքի այդ մասն ամայի է։ Այնտեղից ճանապարհներ չկան դեպի Մելբուրն կամ Ադելաիդա։ Յեթե «Բրիտանիան» ջարդվել է այդ ափերի յերկարությամբ ձգված ժայռերին դիպչելով, այն դեպքում նա վոչ մի տեղից ոգնություն չպիտի ստանար, ճիշտ այնպես, ինչպես վոր յեթե այդ պատահեր վայրենի կենտրոնական Աֆրիկայում։

— Ինչպիսի՞ վիճակ էր սպասում այդ ցեղերում իմ հորը,— հարցրեց Մերի Գրանտը։

— Թանկագին Մերի,— պատասխանեց Պագանելը։— Չէ՞ որ դուք չեք կասկածում, որ նավապետ Գրանտը խորտակումից հետո հասել է Ավստրալիական մայր ցամաքին։

— Չեմ կասկածում, պարոն Պագանել։

— Ենթադրենք բոլոր հնարավորությունները, որոնք կարող են հանդես գալ այդ ցեղերում, մանավանդ, որ նրանք շատ քիչ են— ընդամենը յերեք հատ։ Կամ՝ Հարրի Գրանտն ու իր ուղեկիցները հասել են մինչև անգլիական գաղութ— այս առաջին յենթադրությունն է․ կամ՝ նրանք գերի յեն ընկել բնիկների մոտ— սա յերկրորդն է․ վերջապես յերրորդը— նրանք կորել են (մոլորվել են) Ավստրալիայի անսահման, ամայի տարածություններում։

Պագանելը լռեց և նայեց իր ուղեկիցներին, սպասելով հավանության։

— Շարունակեցե՛ք, Պագանել,— ասաց Գլենարվանը։

— Սիրով,— պատասխանեց Պագանելը։— Առաջին յենթադրությունը յես մերժում եմ այն պատճառով, վոր յեթե Հարրի Գրանտին հաջողվեր անգլիական գաղութ հասնել, այն դեպքում նա շատ վաղուց յետ կվերադառնար իր բարի Դյունդի քաղաքը, սիրելի յերեխաների գիրկը։

— Խեղճ հայր,— շշնջաց Մերին։— Ահա արդեն յերկու տարի յէ, ինչ մենք քեզ չենք տեսել։

— Մի ընդհատի պարոն Պագանելին, Մերի,— ասաց Ռոբերտը,— նա մեզ կասի թե վորտեղ է գտնվում մեր հայրը։

— Ավաղ, վոչ, փոքրիկ բարեկամ։ Այդ յես ինքս էլ չգիտեմ։ Ես միայն յենթադրում եմ, վոր նա գերի յէ ավստրալիական վայրենիների մոտ կամ...

Ելենան շուտ ընդհատեց գիտնականին, վորպեսզի չթողնի նրան դարձվածքը վերջացնել։

— Այդ վայրենիները վտանգավոր մարդիկ չե՞ն,— հարցրեց Ելենան։

— Հանգստացեք,— պատասխանեց գիտնականը, հասկանալով Ելենային,— դրանք զարգացման ամենացածր աստիճանի վրա կանգնած հեզահամբույր մարդիկ են, և իրենց ամենամոտիկ հարևանների— Նորզելանդացիների պես արյունարբու չեն։ Եթե նա—

վարպետ Գրանտը և իր աշակերտները ընկել են թշնամիների ձեռքը, նրանց կյանքին վոչ մի վտանգ չի սպառնում։ Ավստրալիայի բոլոր հետախույզները միահամուռ պնդում են, վոր այնտեղի վայրենիները ատում են արյունահեղությունը։ Այդ ճանապարհորդները հաճախ են դիմել վայրենիների ոգնության, վորպեսզի հետ մղեն փախստական աքսորականների շատ ավելի վտանգավոր և արյունարբու ավազակախմբերին։

— Դուք լսո՞ւմ եք, թե ինչ է ասում Պագանելը,— դարձավ Ելենան Մերի Գրանտին։— Յեթե ձեր հայրը գերի յե ավստրալիացիների մոտ, մենք նրան կգտնենք վողջ և անվնաս։

— Իսկ յեթե նա մոլորվե՞լ է այդ անմարդաբնակ յերկրում,— հարցրեց Մերին, աչքերը Պագանելին հառելով։

— Ինչ կա վոր, այն ժամանակ մենք նրան կփնտռենք ու կգտնենք։ Ճիշտ չէ՞, արդյոք, բարեկամներ։

— Հասկանալի յե,— պատասխանեց Գլենարվանը, վորը սիրով կփոխեր խոսակցության նյութը։— Բայց յես չեմ հավատում, վոր նավապետը կարող եր մոլորվել…

— Ես էլ,— ասաց Պագանելը։

— Մե՞ծ է, արդյոք, Ավստրալիան,— հարցրեց Ռոբերտը։

— Նրա մակերևույթը հավասար է յոթհարյուր յոթանասունհինգ միլիոն հեկտարի, այսինքն, մոտավորապես, Յեվրոպայի մակերևույթի չորս հինգերորդականին։

— Ոհո՜,— ասաց մայորը։

— Այո՛, Մակ-Նաբս, այդ այդպես է։ Այժմ հավատո՞ւմ եք, արդյոք, վոր այդ յերկիրն իրավունք ունի պահանջելու մայր ցամաք անունը։

— Իհարկե, Պագանել։

— Ես կավելացնեմ, վոր պատմությունը, համարյա, դեպքեր չգիտե, յերբ ճանապարհորդներն անհայտ կորած լինեն այդ յերկրում։ Կարծեմ, անհայտ է միայն Լեյխարդտի վիճակը։ Այն էլ իմ մեկնումից քիչ առաջ Աշխարհագրական ընկերությունը տեղեկություն ստացավ, վոր Մակ-Ինտայրին կարծես թե գտել է նրա հետքերը։

— Մի՞թե Ավստրալիայի բոլոր մարզերը հետազոտված չեն,— հարցրեց Ելենան։

— Վոչ, պատասխանեց Պագանելը։— Այդ դեռ հեռու յե։ Ավստրալիական մայր ցամաքն ավելի շատ չի հետազոտված,



—Գիտնականները միշտ երազապատված են,— ասաց մայորը։

քան, ասենք, Աֆրիկայի ներքին մարզերը, չնայած նրան, որ թվում էր թե՝ ձեռներից հետախուզների պակասություն չկար։ 1606-ից մինչև 1863 թիվը, համարյա հիսուն մարդ զբաղվել է Ավստրալիայի միջնամասի և ներքին մարզերի հետազոտությամբ։

— Մի՞թե հիսուն,— խորին անվստահության հայացքով հարցրեց մայորը։

— Այո՛,— Մակ-Նաբս, հիսունից ոչ պակաս։ Ես խոսում եմ միայն ճամփորդների մասին, որոնք կյանքը վտանգի ենթարկելով ուսումնասիրել են նոր մայր ցամաքի անհայտ ափերը, և նրա խորքը թափանցող համարձակ ճանապարհորդների մասին։

— Բայց և այնպես դուք ինձ չեք համոզի, որ նրանք հիսուն հոգի լինեն եղել,— պատասխանեց մայորը։

— Այդ դեպքում ես ձեզ կապացուցեմ...— միջեց Պագանելը, ինչպես միշտ՝ հակաճառությամբ գրգռված։

— Ապացուցե՛ք, Պագանել, եթե միայն կարող եք։

— Եթե դուք ինձ չեք հավատում, ես իսկույն կթվեմ ձեզ հիսուն անուն։

— Ահ, այդ գիտնականներն էլ...— հանգիստ ասաց մայորը։— Նրանք միշտ հրապուրվում են։

— Մայոր,— առաջարկեց Պագանելը,— արդյոք, դուք համաձա՞յն եք գրազ գնել Պուրդեյ-Մորի ձեր կարաբինը Սեկրետանի գործ իմ հեռադիտակի դիմաց։

— Ինչու չէ, Պագանել, եթե այդ բավականությունն կպատճառի ձեզ,— պատասխանեց Մակ-Նաբսը։

— Լավ, մայոր,— գոչեց գիտնականը,— այլևս դուք այդ կարաբինով աղվեսներ չեք սպանի, միայն թե դուք կխնդրեք ինձ փոխարինաբար տալ այն, ինչ որ յես միշտ սիրով կկատարեմ։

— Պագանել,— անվրդով պատասխանեց մայորը,— եթե երբևիցե հեռադիտակ հարկավոր լինի ձեզ, իմը պատրաստ է ձեր ծառայությանը։

— Սրտագին շնորհակալ եմ,— պատասխանեց գիտնականը։— Իմ բարեկամներ, դուք դատավոր կլինեք մեր վեճին։ Ռոբերտ, դու, հաշիվը պահիր։

Էդվարդն ու Հելենան, Մերին ու Ռոբերտը, մայորն ու Ջոն Մանգլսը, վեճի ելքով շահագրգռված, պատրաստվեցին լսելու աշխարհագրագետին։ Նա, որ խոսքը Ավստրալիայի մասին էր



Տարերաց հայցում է։

լինելու, ուր ստանում էր նրանց «Դունկանը» և ամեն մեկն ու-
րախ էր այդ երկրի պատմությունն իմանալու հնարավորության
համար։

Դասախոսներն ու ունկնդիրները խնդրեցին Պագանելին, ա-
ռանց հետաձգելու, հենց տեղն ու տեղը սկսել պատմությունը։

— Մեծարգոներ,—բուռն խանդով սկսեց գիտնականը,—հիշո-
ղության աստվածուհի, մուսաների նախամայր, ներշնչիր քո հա-
վատարիմ և ջերմեռանդ երկրպագուին։—Հետո սովորական ձայ-
նով նա շարունակեց։—Սրանից երկու հարյուր հիսուն տարի
առաջ*, Ավստրալիան դեռ չէր հայտնաբերված։ Ճիշտ է, գիտ-
նականները կանխատեսում էին, որ հարավային ծովերում մեծ
մայր ցամաք կա։ Թանկագին Գլենարվան, մեր Բրիտանական Թան-
գարանում պահվող 1550 թվականի երկու քարտեզ ցույց են տա-
լիս, որ Ասիայից հարավ մի մեծ երկիր կա, որը կոչվում է
«Պորտուգալացիների Մեծ Ճավա»։ Բայց այդ քարտեզները կա-
րող է պատահել, որ 1550 թվից բավականաչափ ուշ են կազմ-
վել, այդ պատճառով ես կանգ չեմ առնում նրանց վրա և ուղ-
ղակի անցնում եմ 17-րդ դարին։

1606 թվականին իսպանացի ծովագնաց Կվիրոսը մի անհայտ
երկիր գտավ և անվանեց այն «Australia de Espiritu Santu»,
այսինքն «Ս․ Հոգու հարավային երկիր»։ Բայց մի քանի հեղի-
նակներ պնդում են, որ Կվիրոսը գտել է Նոր Հեբրիդյան կղզ-
իների խումբը և ոչ թե այժմյան Ավստրալիայի մայր ցամա-
քը։ Ես չեմ քննարկի այդ հարցը։ Թոլինե, հաշվիր այդ Կվի-
րոսին, և կանցնենք հետևյալներին։

— Մե՛կ,—ասաց Թոլինեն։

— Հենց նույն թվականին, Կվիրոսի արշավախմբի կրտսեր
հրամանատար Լուիս Վազ դե-Տորրեսը, գնալի հարավ շարունա-
կեց նոր հայտնաբերված երկրների հետազոտությունը։ Բայց
մեծ գյուտի պատիվը նրան էլ չի պատկանում, այլ հոլանդացի
Թեոդորիկ Գերտոգին, որ կանգ առավ Ավստրալիայի արև-
մտյան ափին՝ քսան հինգ աստիճան լայնության տակ, և ի պա-
տիվ իր նավի, նոր երկրին «Ենդրախտ» անունը տվեց։ Գերտո-
գից հետո ծովագնացները գալիս են մեկը մյուսի հետևից։ 1618
թվականին Ցիխենը հյուսիսային կողմում գտնում է Արնհեյմի

* Այսինքն 1606 թվականից։

և Վան-Դիմենի յերկրները։ 1619 թվականին Ժան Եդելսը հետազոտում է արևմտյան ափը և նրա մի մասին իր անունն է տալիս։ 1622 թվականին Լյուվենն իջնում է մինչև այժմ իր անունը կրող հրվանդանը։ 1627 թվականին դե-Նույտսը և Վիտտը, մեկը արևմուտքում, մյուսը հարավում, լրացնում են իրենց նախորդների հայտնագործությունները։ Նրանցից հետո գալիս է նավապետ Կարպենտերը, վորն իր նավերով, այժմ Կարպենտարիա կոչվող մեծ ծոցն է մտնում։ Վերջապես 1642 թվականին հայտնի ծովագնաց Տասմանը շրջանցում է Վան-Դիմենի կղզին, վորը նա թերակղզի յե համարում, և անվանում է այդ Բատավիայի գեներալական նահանգապետի անունով։ Բայց պատմությունն արդարացիորեն Տասմանիայի փոխեց այդ անունը։ Այդպիսով ճանապարհորդները պտտեցին ամբողջ ավստրալիական մայր ցամաքի շուրջը և հաստատեցին, վոր նա շրջապատված է Հնդկական և Խաղաղ ովկիանոսների ջրերով։ 1665 թվականին հարավային ամբողջ ահագին կղզուն Նոր Հոլանդիա անունը տրվեց, իսկ և իսկ այն ժամանակաշրջանում, յերբ հոլանդական ծովագնացները դուրս եյին յեկել ասպարեզից։ Բայց կղզին յերկար չկրեց այդ անունը... Քանի՞ն եմ թվել արդեն, Թոռներս։

— Տասը,— պատասխանեց մայորը։

— Լավ,— շարունակեց Պագանելը,— անցնենք անգլիացիներին։ 1686 թվականին հարավային ծովերի հռչակավոր հելուզակ և ծովային հելուզակների «Մերձափնյա յեղբայրության» անդամ Վիլյամ Դամպիեն, մի շարք, ինչպես տխուր, նույնպես և զվարճալի արկածներից հետո նա նավեց դեպի Նոր Հոլանդիայի հյուսիս-արևմտյան ափը 16° 50′ լայնության տակ, իր «Կարապ» նավով։ Նա հարաբերության մեջ մտավ բնիկների հետ և կազմեց նրանց արտաքինի, բարքերի և սովորությունների մանրամասն նկարագրությունը։ 1699 թվականին նա վերադարձավ հենց այն ծոցը, ուր առաջ եր իջել Դամպիերը, բայց արդեն վոչ թե իբրև հելուզակ, այլ իբրև անգլիական թագավորական նավատորմի կազմի մեջ մտնող «Ռեբուկ» նավի հրամանատար։ Մինչև այդ ժամանակ Նոր Հոլանդիայի հայտնագործությունը մնում եր վորպես զուտ աշխարհագրական մի գյուտ և չեր հարուցում հասարակության հետաքրքրությունը։ Նոր յերկրի գաղութացման մասին վոչ վոք չեր մտածում, և յերեք քառորդ դարի ընթացքում, 1699-ից մինչև 1770 թվականը, վոչ մի ծովագնաց չայ-

ցելից նրան։ Բայց այստեղ բեմ է դուրս գալիս բոլոր ժամանակների և ժողովուրդների ամենահռչակավոր ծովագնաց Կուկը, և նոր մայր ցամաքն սկսում է արագ գաղութացվել յեվրոպական գաղթականներով։

Ջեմս Կուկը, իր ճանապարհորդությունների ժամանակ յերկու անգամ այցելեց Նոր Զելանդիան և առաջին անգամ 1770 թվի մարտի 31-ին։ Տախտի կղզում արեգակի սկավառակի վրայով Վեներայի* անցումը հաջող դիտելուց հետո Կուկն իր փոքրիկ նավն ուղղեց Խաղաղ ովկիանոսի արևմտյան մասը։ Գտնելով Նոր Զելանդիան, նա լողաց դեպի Նոր Զելանդիայի ափերը և խարիսխ ձգեց բազմազան բուսականությամբ այնքան հարուստ ծոցում, վոր նա Բուսաբանական (Բոտանի) ծոց անունը տվեց նրան։ Դա ժամանակակից Բոտանի-բեյն է։ Յես չեմ պատմի նրա հարստությունների մասին պարզագույն ամենատարրական աստիճանի վրա պահվող քննիչների հետ։ Դա անհետաքրքիր է։ Բոտանի-բեյից նա դեպի հյուսիս բարձրացավ և 16° լայնության տակ, Սկոտթի հրվանդանից վոչ հեռու, նրա «Փորձություն» նավը, ափից յերեսուն կիլոմետր հեռավորությամբ, ընկավ մարջանային խութի վրա։ Նավն անխուսափելիորեն պիտի ջարդվեր։ Կուկը կարգադրեց դուրս շպրտել նավերից թնդանոթներն ու բոլոր մթերքները, և հետևյալ որը, թեթևացած նավը մակընթացությամբ ազատվեց խութերից։ Յեթե նա միանգամից չընկղմվեց, այդ միայն շնորհիվ նրա, վոր ծակված անցքից ջրի մուտքը փակող մարջանի խութի բեկոր էր խցկվել։ Կուկին հաջողվեց ափ հասցնել նավը և կանգնեցնել նրան հանգիստ ծովախորշում։ Այն յերկար ամիսներ ընթացքում, վորոնք հարկավոր յեղան նավի վնասված անցքերը նորոգելու համար, անգլիացիները աշխատում էին հարաբերության մեջ մտնել բնիկների հետ, բայց անհաջող։ Անցքը փակելով, «Փորձությունը» շարունակեց իր լողը դեպի հյուսիս։ Կուկն ուզում էր իմանալ, արդյոք, Նոր Գվինեայի և Նոր Հոլանդիայի միջև նեղուց գոյություն ունի՞։ Մի շարք արկածներից հետո, վորոնց ժամանակ անվնաս ծովածանցներին քանի անգամ մահ սպառնաց, նա հարավ-արևմուտքում անցավ ովկիանոսի լայն ընդարձակությունը։ Նեղուց գոյություն ուներ։ «Փորձությունն» անցավ նրա միջով։ Կուկը մո-

* Աստղ է։

անցավ գծայի փոքրիկ Կղզին և իր գտած բոլոր երկրները անգլիական թագավորության հայտարարելով, տալով նրանց Նոր Հարավային Ուելս անգլիական անունը:

Երկու տարի հետո, անմիջական ծովագնացն արդեն երկու նավի արշավախմբի հրամանատար էր—«Ադվենչր» և «Վձեր»: Կուկի հրամանով, նավապետ Ֆյուրնոն «Ադվենչրով» ուղևորվեց Վան-Դիմենի երկիրը հետազոտելու, և վերադառնալով, այն եզրակացության հանգեց, որ դա Նոր Հոլանդիայի մի մասն է: Միայն 1777 թվականին իր երրորդ ճանապարհորդության ժամանակ, Կուկն ինքն այցելեց Վան-Դիմենի երկիրը «Վձեր» և «Հայտնագործություն» նավերով: Այդտեղից նա լողաց դեպի Սանդվիչյան կղզիները, որտեղ նրան դարանում էր իր դաժան մահը:

— Նա մեծ մարդ էր,— ասաց Գլենարվանը:

— Աշխարհի բոլոր ծովագնացներից մեծագույնը: Նրա աշակերտներից մեկը— Բենկսը— անգլիական կառավարությանը Բոտանի-բեյում գաղութ հիմնելու միտք տվեց: Նրանից հետո, բոլոր երկրների ծովագնացները նետվեցին դեպի նոր մայր ցամաքը: 1787 թվի փետրվարի 7-ին Բոտանի-բեյից ուղարկված իր վերջին նամակում դժբախտ հետազոտող Լապերուզը հայտնում է Կարպենտարիի ծոցը և Նոր Հոլանդիայի ափերը մինչև Վան-Դիմենի երկիրն այցելելու իր դիտավորության մասին: Լապերուզը կատարեց իր ուղին և չվերադարձավ: 1788 թվականին նավապետ Ֆիլիպը Պորտ-Ջեքսոնում հիմնում է անգլիական առաջին գաղութը: 1791 թվականին Վանկուվերը հրապարակում է նոր մայր ցամաքի հարավային ափերի նկարագրությունը: 1792 թվականին Լապերուզին փնտրելու ուղարկված դ'Անտրըկաստոն, ճանապարհորդություն է կատարում Նոր Հոլանդիայի շուրջը և ճանապարհին մի շարք նոր կղզիներ է հայտնաբերում: 1795 և 1797 թվականներին երկու երիտասարդ մարդ, Ֆլինդերսը և Բասսը, քաջաբար հետազոտում են հարավային ափը, ութ ոտնաչափ երկարությամբ մի փոքրիկ նավակով: 1797 թվականին հենց այդ նույն Բասսը անցնում է Վան-Դիմենի երկրի և Նոր Հոլանդիայի արանքի նեղուցով, որը այժմ նրա անունն է կրում: Միևնույն թվականին Ամստերդամյան կղզիները հայտնաբերող Ֆլամինգը, արևելյան ափին գտավ Սվան-Ռիվեր գետը, ուր զարմանալի սև կարապներ էին լողում: Ինչ վերա-

բերում է Ֆլինդերսին, նա 1801 թվականին վերցնելով իր հետա-քրքիր հետազոտությունները և 138° 58' երկայնության ու 35° 40' լայնության տակ Տեսակցության ծովախորշում հանդիպելով «Աշ-խարհագրագետ» և «Նատուրալիստ» ֆրանսիական երկու նավե-րին, որոնց հրամանատարում էին նավապետներ Բոդենը և Համելենը։

— Ըհը՛, նավապետ Բոդենը,— ասաց մայորը։

— Այո՛։ Ինչո՞ւ չի զարմացնում ձեզ այդ, մայոր,— հարցրեց Պագանելը։

— Ոչինչ։ Շարունակեցեք, թանկագին Պագանել։

— Շարունակում եմ։ Այս անուններին պետք է ավելացնել նաև նավապետ Կինգին, որը 1817-ից մինչև 1822 թվականը զբաղվում էր Նոր Հոլանդիայի միջարևադարձային գոտիների հետազոտությամբ։

— Արդեն քսանչորս անուն դարձավ,— նկատեց Ռոբերտը։

— Հրաշալի,— ասաց Պագանելը։— Մայորի կարգերին կեսն արդեն իմն է։ Այժմ ես վերջացրի ծովագնացներին թվելը և անցնում եմ ցամաքային հետազոտողներին։

— Կեցցե՛ք Պագանել,— բացականչեց Հելենան։— Դուք հրա-շալի հիշողություն ունեք։

— Այդ առանձնապես անսպասելի չէ,— ավելացրեց Գլենար-վանը,— այդպիսի...

— Ցրված մարդ, ուզո՞ւմ եք ասել,— ընդհատեց նրան Պա-գանելը։— Ավաղ, իմ հիշողությունը միայն թվերն ու փաստերն է պահում։

— Քսանչո՞րս,— կրկնեց Ռոբերտը։— Շարունակեցեք, պա-րոն Պագանել։

— Լավ։ Քսանհինգերորդը լեյտենանտ Դաուսն էր։ Այդ 1789 թվականին կատարվեց, Պորտ-Ջեքսոնում գաղութ հիմնելուց մի տարի հետո։ Մայր ցամաքի չորս կողմն արդեն պտտել էին լո-ղով, բայց թե ինչ կար նրա ներսում, ոչ ոք չէր կարող ասել։ Արևելյան ափին զուգահեռ երկար լեռնաշղթան, թվում էր, թե արգելում էր դեպի մայր ցամաքի ներսը մուտքը։ Լեյտենանտ Դաուսը, սարերի վրայից լեռնանցք գտնելու ինն օրվա անհաջող փորձերից հետո ստիպված էր վերադառնալ Պորտ-Ջեքսոն։ Հենց նույն թվին և նույնքան էլ անհաջող այդ փորձը ձեռնարկեց նա-վապետ Տենչը։ Այդ երկու անհաջողությունները մյուս հետազո-

տողները եւ յերեք տարով յետ մղեցին այդ դժվար խնդրից։ 1792 թվականին, Կենտրոնական Աֆրիկայի համարձակ հետազոտող գնդապետ Պատերսոնը, նույնպես անհաջողություն կրեց այստեղ։ Բայց հետեւյալ տարին, անգլիական նավատորմի հսկարակ քաջման Հաուկինսոն իր բոլոր նախորդներից քան մեկ հեռու մտավ յերկրի խորքը։ Հետեւյալ տասնութ տարում, այդ քաջարդությունը կատարելու միայն յերկու նոր փորձ են արվել ունեցել—արդեն հայտնի Բաուսենը և ճարտարապետ Բարկլեյին, Բայց նրանք էլ անհաջող վերջացան։ Վերջապես 1813 թվականին անցքը գտնվեց Սիդնեյից դեպի հարավ։ Նահանգապետ Մակարին ոգովեց նրանով 1815 թվականին և Կապույտ լեռների այն կողմը հիմնեց Բաթհըրստ քաղաքը։ Այդ ժամանակվանից նոր մայր ցամաքի յուրացումն արագ քայլերով է գնում։ Դրոսորին, Ոկսլեյը յերեք հարյուր մղոն մտան յերկրի խորքը, Գովելը և Գումը ուղեվորվեցին հենց Տուֆոլդա նավահանգստից, վերադարձից անցնում է յերեսունյոթերորդ զուգահեռը, և 1829 թվականին Դառլինգ և Մյուրրեյ գետերը ,հետազոտող նավապետ Շտուրտը,— հետախույզների այդ ամբողջ համաստեղությունը, նոր անդրկություններով հարստացրին աշխարհագրությունը և ողնեց գաղութների ծաղկումին։

— Յերեսունվեց,— ասաց Ռոբերտը։

— Սքանչելի յե,— պատասխանեց Պագանելը։— Յես կտանեմ գրանցը։—Հիշատակեմ Էյրեյի և Լեյխարդտի մասին, վորոնք թափառում եյին անապատ 1840 և 1841 թվականներին։ 1845 թվականին յերկրորդ անգամ Ավստրալիա այցելող Շտուրտի մասին։ Արեւմտյան Ավստրալիայում 1846 թվին ճանապարհորդող Գրեգորի և Գելպման յեղբայրների մասին։ 1848 թվականին Հյուսիսային Ավստրալիայում Վիկտորիա գետը հետազոտող Կեննեդիի մասին։ Գրեգորիի ճանապարհորդության մասին 1852 թվականին, Աուստինի՝ 1854-ին։ Նորից Գրեգորի յեղբայրները 1855-ից մինչև 1858 թվականը դեպի մայր ցամաքի հյուսիս արևմտյան մասը։ Բաբեջի մասին, վոր Տորրենս լճից անցավ մինչև Էյրա լիճը և վերջապես, յերեք անգամ անվեհերությամբ մայր ցամաքը կտրարող, ավստրալիական տարեգրություններում հռչակված Ստյուարտի մասին։ Նրա առաջին արշավը դեպի յերկրի ներսը տեղի յե ունեցել 1860 թվականին։ Ավելի ուշ, յեթե կուզեք, յես ձեզ

կողատմեմ, թե ինչպես չորս անգամ հարավից գնացի հյուսիս և կարվել Անատրպատականը, իսկ այժմ կատարածագործական նրանով, վոր այդ չերկար չարքը կվերջացնեմ գիտության համարձակ մարտիկների անուններով,— յերկրագրյերներ Դեմպսեր, Կլարկսոն և Հարպեր, Բրյուկ և Ռոբին, Նելսոն, Ռոզեր, Լեոնարդո, Մակ-Դոնալ-չեյ, Գոլֆեր...

— Այդքան հերոսներից յետո,— գոչեց Թոմասը։

— Տեսնում եք, մայրիկ,— ասաց Գալանեյը,— յես խոստանում եմ ձեզ, վորովհետև չեմ հիշատակում վոչ Դյուպլեքսի, վոչ Բուգենվիլի, վոչ Ջեյմս-Ռոսի, վոչ Վիլկինսոնի, վոչ Շոուի մասին...

— Բավական է,— ավելացրեց մայրը, ճնշված՝ անունների քանակից։

— Վոչ Պերուզի, վոչ Կուկի,— շարունակեց Գալանեյը, ու-շադրություն չդարձնելով նրա խոսքերին,— վոչ Բենեի, վոչ Կե-նինգեմի, վոչ Նելլի, վոչ Տյերի մասին...

— Խնայեցեք։

— Վոչ Դիկսոնի, վոչ Սարթելեցու, վոչ Ռեյդի, վոչ Մխալե-լի մասին...

— Կանգնեցեք, Գալանեյ,— ասաց Գլենարվանը, որտանից քրքջալով,— մի սպանեք խեղճ Մակ-Նաբսին։ Մեծահոգի յե-ղեք։ Ձե վոր նա պարտված համաձայն իրեն։

— Իսկ նրա կարաբի՞նը,— հաղթանակողի պես հարցրեց գիտ-նականը։

— Նա ձերն է, Գալանեյ,— շտապ ասաց մայորը,— իմ համար շատ է ցավալի ձեզ տալ այն, բայց ամենևին հիշողու-թյամբ, ինչպես ձերն է, կարելի յե վոչ միայն կարաբին տանել, այլ մի ամբողջ հրետանային թանգարան։

— Իսկապես, անհնարին է ավելի լավ իմանալ Ավստրալիայի պատմությունը,— նկատեց Յելենան։— Գալանեյի մտքից վոչ մի անուն, նույնիսկ մի հասարակ չնչին փաստ չի պրծել...

— Ո, փաստերի վերաբերյալ...— մայորը կասկածանքով գլուխը շարժեց։

— Ինչպես, դուք էլ՞ ձերն եք պնդում, Մակ-Նաբս,— գոչեց աշխարհագրագետը։

— Յես միայն ուզում եմ ասել, վոր, հավանորեն, Ավստրա-

լիայի հայտնագործության բոլոր մանրամասնություններն էլ հայտնի չեն ձեզ,— համեստորեն պատասխանեց մայորը։

— Չի կարող պատահել,— հաստատությամբ ասաց Պագանելը։

— Իսկ յեթե յես ձեզ համար անհայտ մի մանրամասնություն պատմեմ, կարաբինը իսկույն կտա՞ք ինձ։

— Նույն րոպեին, մայոր։

— Ձեռք խփե՞նք։

— Ձեռք խփենք։

— Լավ։ Գիտեք արդյոք, Պագանել, թե ինչու՞ Ավստրալիան Ֆրանսիային չի պատկանում։

— Բայց ինձ թվում ե...

— Կամ, ավելի ճիշտ, ի՞նչ են ասում այդ մասին անգլիացիները։

— Չգիտեմ,— չշփոթված պատասխանեց աշխարհագրագետը։

— Դե վոր այդպես ե, իմացեք, վոր Ավստրալիան միմիայն նրա համար չի պատկանում Ֆրանսիային, վորովհետև նավապետ Բոդենը, վորին ի դեպ պետք ե ասել, վախկոտ չեր, 1802 թվականին այնպես վախեցավ ավստրալիական գորտերի կռկռոցից, վոր շտապեց վերցնել խարիսխը և փախավ, վորպեսզի յերբեք չվերադառնա։

— Ինչպե՞ս,— գոչեց գիտնականը։— Անգլիացիները համարձակվո՞ւմ են հաստատել այդ։ Բայց չե՞ վոր դա գռեհիկ բամբասանք ե։

— Իսկապես, դա չարամիտ հանաք ե,— համաձայնեց մայորը,— բայց, այնուամենայնիվ, ամեն մի անգլիացի գիտի այդ։

— Դա վոչ մի բանի նման չի,— վրդովվեց Պագանելը.— և մի՞թե Անգլիայում հավատում են այդ դատարկ բանին։

— Դժբախտաբար, այո, թանկագին Պագանել,— հաստատեց Գլենարվանը, ընդհանուր քրքիջի մեջ։— Մի՞թե դուք վոչինչ չեք լսել այդ մասին։

— Ամենևին։ Բայց յես բողոքում եմ։ Անգլիացիներն իրենք են մեզ «գորտակերներ» անվանում, և ինչպես կարելի յե մեղադրել նրանում, վոր մենք վախեցել ենք այն գորտերից, վորոնց մենք ուտում ենք։

— Այնուամենայնիվ, այդ այդպես է, Պագանել, — պատասխանեց մայորը համեստ ժպիտով։

Այսպիսով Պուրդեյ-Մուրի գործն հրաշալի կարաբինը դարձյալ մնաց մայոր Մակ-Նաբսի տիրապետության տակ։

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՀՆԴԿԱԿԱՆ ՈՎԿԻԱՆՈՍՆ ԱԼԵԿՈԾՎՈՒՄ Է

Այդ խոսակցությունից յերկու օր հետո, Ջոն Մանգլը կեսօրյա դիտողությունն անելով, հայտնեց, վոր «Դունկանը» գտնվում է 113° 37' յերկարության և 37° 01' լայնության տակ։ Քարտեզը ստուգելով, ուղևորները ուրախությամբ համոզվեցին, վոր զբոսանավը հազիվ հինգ աստիճան հեռու յե գտնվում Բերնուիլի հրվանդանից։ Զբոսանավն այժմ լողում եր Հնդկական օվկիանոսի այն մասով, վորը վողողում է ավստրալիական մայր ցամաքը։ Այսպիսով կարելի յեր հուսալ, վոր յերկու-չորս օրից հետո հորիզոնի վրա կերևա Բերնուիլի հրվանդանը։

Մինչև այդ ժամանակ արևմտյան հանդարտ քամին նպաստում եր լողին։ Բայց վերջին օրերը նա կամաց-կամաց սկսեց հանդարտվել, մինչև վոր դեկտեմբերի 13-ին բոլորովին դադարեց։ Առագաստներն անշարժ կախվել եյին կայմերի յերկարությամբ, և, յեթե շոգեմեքենան չլիներ, «Դունկանն» ստիպված պիտի լիներ կանգ առնել, խաղաղությամբ շղթայված։ Այդպիսի յեղանակը կարող եր անորոշ, յերկար ժամանակ տևել։ Դեկտեմբերի 13-ին յերեկոյան Գլենարվանն այդ մասին խոսեց Ջոն Մանգլի հետ։ Յերիտասարդ նավապետը տեսնելով, թե ինչպիսի արագությամբ են դատարկվում իր ածխահորերը, շատ վշտացավ այդ խաղաղությամբ։

Նա պատվիրեց բարձրացնել զբոսանավի բոլոր առագաստները, վորպեսզի ոգտագործի քամու ամենաչնչին տատանումը, բայց, ինչպես նավաստիներն են ասում, քամին հերիք չեր անգամ նույնիսկ մի գլխարկ լցնելու համար։

— Ինչ էլ վոր լինի, — ասաց Գլենարվանը, — սակայն առանձնապես բողոքել և զանգատվել. բոլորովին անքամի ավելի լավ է, քան հակառակ քամին։

— Դուք իրավացի յեք, սեր, — պատասխանեց Ջոն Ման-

գլուխը,— բայց հենց այսպիսի անակնկալ խաղաղություններն են յեղանակի, ասես փոփոխություն գուշակում։ Դրա համար էլ յես անհանգստացած եմ։ Չէ՞ վոր մենք գտնվում ենք մուսոնների* գոտու սահմանում, վորոնք հոկտեմբերից մինչև ապրիլ փչում են հյուսիս-արևելյան ուղղությամբ։ Բավական է, վոր նրանք փչեն մեր ճակատին, և մեր լողն զգալի կերպով կդանդաղի...

— Ինչ արած, Ջոն։ Յեթե դա պատահի, ստիպված ենք համակերպվել։ Չէ՞ վոր վերջին վերջո դա վոչ այլ ինչ է, յեթե վոչ հապաղում։

— Իհարկե, յեթե միայն փոթորիկը չխառնվի։

— Մի՞թե դուք փոթորիկ եք սպասում,— հարցրեց Գլենարվանը, աչքերը դեպի բոլորովին անամպ յերկինքը բարձրացնելով։

— Այո՛, սըր։ Յես այդ ձեզ եմ ասում,— շտապեց ավելացնել յերիտասարդ նավապետը,— բայց չարժե վախեցնել տիկին Գլենարվանին և օրիորդ Գրանտին։

— Ուղիղ է։ Բայց ինչո՞ւ յեք դուք այդպես մտածում։

— Փոթորիկի մերձենալու հաստատ նշաններ կան։ Անամպ յերկինքի անաքով մխիթարվել չի կարելի, սըր։ Դրանից խաբուսիկ բան չկա։ Ահա արդեն յերկու օր է, ինչ ծանրաչափն իջնում է։ Այսօր նրա անկումն արդեն մեծ է և լուրջ սպառնալիք է ներկայացնում։ Նա կանգ է առել յոթհարյուր յերեսուն մեկ միլիմետրի վրա, նորմալ յոթհարյուր վաթսունի փոխարեն։ Դա անհանգստացնող նախազգուշացում է։ Չի կարելի արհամարհել այն, մանավանդ հարավային ծովերում, վորոնց կատաղի փոթորիկների հետ յես արդեն առիթ եմ ունեցել ծանոթանալու, բևեռամերձ սառույցների հսկայական տարածությունների վրա ջրային գոլորշիների խտացումն օդային ուժեղ հոսանքներ է առաջացնում այստեղ։ Այստեղից է բխում բևեռային քամիների պայքարը հասարակածայինների հետ, վորը նավերի համար շատ վտանգավոր ցիկլոններ, տեղատարափներ և փոթորիկներ է ծնում։

— Ջոն,— պատասխանեց Գլենարվանը,— «Դունկանը» ա-

---

* Մուսոնները մշտական քամիներ են, վորոնք գլխավորապես տարեդարձային պատում են փչում ձմեռը—մայր ցամաքներից դեպի օվկիանոսները և հակառակ ուղղությամբ։

մութ նավ էր, իսկ նրա նավապետը—հմուտ ծովայինը։ Թող փոթորիկը վրա տա, մենք կկարողանանք պաշտպանել մեզ։

Ջոն Մանգլսի յերկյուղներն ակնթարթում յերևան յեկան ծովագնացի բնազդով։ Ծանրաչափի անընդհատ այսպես անկումից համոզվելով իր յերկյուղների մեջ, նա բոլոր անհրաժեշտ քայլերն արեց մրրիկին դիմադրելու համար։ Ծանրաչափը նախազգուշացնում էր, վոր դրսառանային լուրջ փորձություն է սպասում, և նա կուրորեն հավատում էր անխաբուսական գործիքին թեև անամպ յերկինքի տեսքը հակասում էր նրա ցուցմունքներին։

Ոդային հոսանքներն իրենց տեղերից մթնոլորտային բարձր ճնշումով սլանում են դեպի այն տեղերը, ուր մթնոլորտային ճնշումն ավելի ցածր է։ Վորքան ավելի մոտիկ են այդ տեղերն իրար, այնքան ավելի մեծ է քամու արագությունը։

Ջոն Մանգլսն այդ ամբողջ գիշերը կամրջակի վրա անցկացրեց։ Ժամը տասնմեկին հարավային յերկինքն ամպերով պատվեց։ Ջոն Մանգլսը բոլորին կանչեց վերև և հրամայեց բոլոր առագաստները հավաքել, բացի առաջնակայմից, առաջնակից և մարսելից։ Կես գիշերին թարմ քամի բարձրացավ։ Քամին շարունակ ուժեղանում էր և օդի մոլեկուլների տեղափոխության արագությունը վեց մետրի յեր հասնում մի վայրկյանում։ Վերջինչ ճռճռացող ուղեկալներին արթնացրին քամու վռնոցը, ճոպանների ճռճռոցը, առագաստների չոր ծափը, ներքին կահավորությունների փայտի ճայթյունը։ Պագանելը, Գլենարվանը, մայորը և Ռոբերտը տախտակամած դուրս յեկան, վորը հետաքրքրությունից, վորն էլ իր ծառայությունները նավապետին առաջարկելու նպատակով։ Նախորդյակի անամպ և աստղալից յերկինքը ծածկված էր հոծ մուրի նման սև թուխպերով։

— Մրրի՞կ,— ուղղակի հարցրեց Գլենարվանը Ջոն Մանգլսին։

— Դեռ վոչ, բայց շուտով կսկսվի,— պատասխանեց նա։ Եվ նա շուռ յեկավ դրասանակի առջևից, վորպեսզի հրաման տա վերցնելու մարսելի առաջին առագաստը։

Նավաստիները պայքարելով քամու պոռթկումների հետ, դժվարությամբ ծալեցին քամու դեմ դրած առագաստի հարթությունը, բարակ պարաններով քաշելով այն հորիզոնական առագաստակալին։ Ջոն Մանգլսն ուզում էր հնարավոր առագաստա-

նավության մաքախմալը պահել, վորոգեաքի պրոսանավն ամելի կայուն դարձնի և կատեցնի ճոճումը։

Երբ այդ խաղաշարժը կատարվեց, նա կանչեց Թոմ Աուստինին ու բոցմանին և հրամայեց նրանց պատրաստվել փոթորկին, վորը բոլոր առ բոլոր ուժով բարձրանար։ Նավաստիներն ամենի ամրացրին մակույկները, նավակի թիզանոթը պաշտպանելով փայլերքովով, ճոպանները ձգեցին, բոլոր ծակերը խցեցին։ Ջոնը վոչ մի վայրկյան չթողեց նավապետի կամրջակի վրայի իր մարտական պոստը և, յերկինքի մեջ խորը անատելով, կարծես թե աշխատում եր կորզել նրանից խնամքով պահված գաղտնիքը։

Այդ րոպեյին ծանրաչափն իջավ մինչև յոթհարյուր քսանինը միլիմետրի, վոր այդքան իսկ բարոմետրի չափը կարող եր մատնել յերկնային հողմի մեջ և "շտորմ"*-գլասը փոթորիկ եր ցույց տալիս։

Գիշերվա ժամի մոտ մեկն եր։ Ելենան և Մերին, վորոնց չարթնեցրեց ճոճումը, տախտակամած բարձրացան։ Այժմ քամին մի վայրկյանում մեծանցուցյա ասուման արագությամբ եր փչում, սուլելով և վոռնալով անցնելով նավի առագաստական մեջերով։ Մեծագույն թոկերը գրկելում եյին բարերի նման, յերբ նրանց խորխում և հակառակ կենտրոնը։ Առագաստները քամու պատռվածներից նման ,եյին տալիս, ինչպես թնդանոթային կրակոցներ։ Փոթորկի բարձրացրած ահագին ալիքները խուժում եյին պրոսանավի վրա, ձգտելով վողողել այն, բայց հրաշալի նավը հեշտությամբ կատարների վրա յեր բարձրանում, ծաղրելով ալիքների կատաղությունը։

Ուղեվորներին տեսնելով, Ջոն Մանգլսն արագ մոտեցավ նրանց և խնդրեց նավասենյակ վերադառնալ։ Ալիքներն արդեն մի քանի անգամ թռան տախտակամածի վրայով, և այնտեղ յերկար մնալը վտանգավոր եր։ Փոթորկի աղմուկն այնքան եր ուժեղ, վոր Ելենան հազիվ լսեց յերիտասարդ նավապետի խոսքերը։

— Արդյոք վտանգ կա՞,—հարցրեց նա վայրկյանական հանդարտ միջոցին։

---

* Շտորմ—գլաս—ապակե անոթ, վորը՝ նայած յեղանակին, ելեկտրականությամբ և մթնոլորտի հոսքերման ներգործումով—գույնը փոխող խառնուրդ է պարունակում։

— Վաղ մի վառենք,— պատասխանեց Ջոն Մանգլսը,— բայց կարիք չկա, վոր դուք մնաք տախտակամածում:

Հելենան և Մերի Գրանտը պետք է յենթարկվեյին այդ հրամանին, վոր ավելի շուտ աղերսանքի նման էր, և անհաջողության նավի ցնցվելու զանգերում, յերբ մի ահագին ալիք տախտակամածի վրա թափվեց արտակարգ ուժով, վոր ամբողջ նավը դողաց: Այնինչ քամու կատաղությունը կրկնապատկվեց, կայմերը ծալվում եյին առագաստների ծանրության տակ, թվում էր, թե զրոսանավը ալիքների խաղալիք է դարձել:

— Առագաստները ճոճանների վրա,— հրամայեց Ջոն Մանգլսը.— Իջեցնել մարսը ու բրամսելը:

Նավաստիները նետվեցին իրենց տեղերը: Ձողամբարձները թուլա թողեցին, ճոպանները ձգվեցին, մարսը և բրամսելը մի վայրկյան նույնիսկ կատաղած տարերքի մռնչյունը խեղդող աղմուկով ցած իջեցրին: «Դունկանը», վորի ծխնելույզներից սև ծխի քուլաներ եյին ժայթքում, թռչկոտում էր ալիքների վրայով, ջուրը պտուտակով խորը ու բոլոր ճեղքելով:

Գլենարվանը, մայորը, Պագանելը և Ռոբերտը սարսափով համակված—հիացմունքով նայում եյին զրոսանավի տարերքների դեմ մղած պայքարին: Նրանք կպել եյին ժանճապանների ցանցին: Հնարավորություն չունենալով գոնե մի բառ փոխանակել, նրանք լուռ հետևում եյին ալիքի մեջ չարաճճող մրրկահավերի թռիչքին, վատ յեղանակի այդ չարագուշակ թռչուններին:

Այդ վայրկյանին մի խլացուցիչ սուլոց ծածկեց նույնիսկ մրրիկի աղմուկը: Դա շոգին էր, վոր ուժգին դուրս պրծավ, բայց վոչ դուրս պրծած խողովակի միջով, այլ անմիջապես կաթսայի կափարիչներով: Ահազանգի սուլիչը սուլեց: Զրոսանավը սաստիկ թեքվեց մի կողքի վրա և ղեկանիվի վրա (շտուրվալային) կանգնած Վիլսոնը գլորվեց ալիքի անսպասելի հարվածով: «Դունկանը» ղեկավարվելուց դադարեց և նավակողով դեպի ալիքը շրջվեց:

— Ի՞նչ պատահեց,— գոչեց Ջոն Մանգլսը, կռանալով իր կամրջակի հենարանից:

— Զրոսանավը կողքի վրա յե պառկում,— պատասխանեց Թոմ Աուստինը:

— Մենք ղեկը կորցրել ենք:



Ալիքները ցասումով շպրտում էին նավը։

— Նավապետը թող անցնի մեքենայի բաժանմունքը,— լսվեց մեքենավարի ձայնը։

Ջոնը սանդուղքներով ցած վազեց։ Տաքու օդը լցված էր մե-քենայի բաժանմունքի օդը։ Մեքենայի գլանների մխոցները չէ-յին գործում, շատուռնները թիավարող վակերին չէին պտտաց-նում։ Մեքենապետը տանջվելով, վոր ինչ վոր լուրջ աղետ է տեղի ունեցել մեքենայի մեջ, և վախենալով, թե համբարձ կաթսա-ները պայթեն, չոգին բաց թողեց խողովակով։

— Ի՞նչ է պատահել ձեզ,— հարցրեց նավապետը։

— Պտուտակի հետ ինչ վոր մի բան է պատահել։ Նա չի աշ-խատում։ Ջախջախված, կոտրվել է, թե ծռվել ու ծակվել է։

— Պետք է ստուգել այն։

— Անհնար է։

Մեքենավարն իրավացի էր։ Այժմ նորագույնների մասին մը-տածելու ժամանակը չէր։ Պետք էր հաշտվել այն բանի հետ, վոր պտուտակը չի աշխատում և հենց դրանով էլ ամբողջ մեքե-նան շարքից դուրս է ելել։ Ջոն Մանգլսին մնում էր միայն վերադառնալ առագաստանավային և առագաստների օգնությամբ փորձել դրանով շրջանցել գործել քամուն, վորը մինչև հիմա նավի հակառակորդն էր։

Նա կարկուտ խոսքով դրությունը բացատրեց Գլենարվանին և խնդրեց նրան ու միսս ուղևորներին նավախցում գնալ։ Բայց Գլենարվանը չէր ուզում հեռանալ տախտակամածից։

— Սէր,— հաստատակամ ասաց Ջոն Մանգլսը,— հարկավոր է, վոր տախտակամածի վրա մնանք միայն յես ու իմ նավաստի-մը։ Հեռացեք։ Ամեն րոպե ալիքը կարող է փշրել և ամեն ինչ կտանի։

— Բայց մենք կարող ենք օգտակար լինել...

— Հեռացեք, սէր։ Այդպես է հարկավոր։ Այժմ նավի տերը յես եմ։ Հեռացեք, յես այդ պահանջում եմ։

Յեթե արդեն Ջոն Մանգլսն այդ լեզվով խոսեց, դրությունն անհերքելիորեն շատ էր լուրջ։ Գլենարվանը հասկացավ, վոր հնա-զանդության օրինակ պիտի տա իր ուղեկիցներին։ Նա հեռացավ տախտակամածից Պագանելի, Ռոբերտի և մայորի ուղեկցու-թյամբ և նրանք նավի դահլիճում միացան յերկու ուղևորուհի-ներին, վորոնք անհանգստությամբ էին սպասում ընդդեմ տարերքների պայքարի լուծմանը։



«Դունկանը» սաստիկ թեքվեց մի կողքի վրա։

— Եռանդոտ տղա՛ է այդ Ջոնը, — ասաց Գլենարվանը նավասենյակ-կայուտ մտնելով։

— Այո՛,— պատասխանեց Պագանելը։— Նա ինձ հիշեցնում է մեր մեծ Շեքսպիրի «Մրրիկի» այն բոցմանին, վոր գոռում էր իր նավակազմում գտնված թագավորի վրա․ «Դուրս այստեղից։ Լռե՛ք։ Մարշ՝ դեպի նավասենյակ։ Եթե դուք տարերքին չեք կարող ստիպել վոր լռի, ինքներդ լռեցե՛ք։ Ճանապարհից հեռու, ասում եմ ձեզ»։

Այնինչ Ջոն Մանգլը վոչ մի վայրկյան չկորցնելով, անում էր ինչ վոր անհրաժեշտ էր, վորպեսզի զբոսանավին դուրս բերի այն վտանգավոր դրությունից, վորի մեջ դրեց նրան պտուտակի փչացումը։ Նա վորոշեց դրեյֆի պառկել, վորպեսզի վորքան հնարավոր է քիչ շեղվի ճանապարհից։ Դրա համար հարկավոր էր բանալ առագաստները և նավը շեղակի ուղղել դեպի քամին։ Նավաստիները արագությամբ մեծ կայմի ճողանի վրա դրին առագաստակայմի մարսելն ու լիսեռային ֆոկը, և զբոսանավը կանգնեց քամու տակ։

Ծովագնացության գերազանց հատկություններով հայտնի դարձած զբոսանավը սլացավ առաջ, ինչպես ցեղական ձի, վորի կողերը խթաններ են մխել։ Այժմ ամեն ինչ մի բանից էր կախված— արդյոք առագաստները կդիմանան։ Ճիշտ է, նրանք չինված էին հոլանդական ամենամուր քաթանից, բայց ինչ գործվածք կարող էր դիմանալ այդպիսի փոթորկի ճնշումին։

Դրեյֆով զբոսանավն ալիքների հարվածների դեմ դնում էր իր ամենաամուր մասերը։ Բացի դրանից, Ջոն Մանգլի այդ մանյովրն այն առավելությունն ուներ, վոր դրա ժամանակ զբոսանավն ամենից քիչ էր շեղվում իր ճանապարհից։ Սակայն դրեյֆն էլ անվտանգ չէր, վորովհետև զբոսանավը կարող էր ընկնել յերկու ալիքի արանքը և այլևս դուրս չգալ։ Բայց Ջոն Մանգլն ուրիշ ելք չուներ, և նա վճռեց դրեյֆ անել մինչև այն ժամանակ, քանի դեռ կայմերն ու առագաստները դիմանում են։ Զբոսանավի ամբողջ անձնակազմը գտնվում էր տախտակամածի վրա, պատրաստ իսկույն կատարելու իր յերիտասարդ նավապետի յուրաքանչյուր հրամանը։

Գիշերվա մնացած մասն այդ դրությամբ անցավ։ Բոլորն էլ հույս ունեին, վոր ցերեկվա հետ մրրիկը կհանդարտի։ Իզուր հույս։ Առավոտյան ժամի ութին քամին ավելի ուժեղացավ։

Այժմ նա փչում էր արդեն տասնութ տարին արտաքսությամբ, մի վայրկյանում։ Դա մրրիկ էր։

Ջոնը վոչինչ չէր տեսում, բայց ներքուստ զգում էր նավի և նրա ուղևորների համար։ «Դոմինիկանը» հուսահատորեն յերերվելով էր թավալվում, այնպես վոր ամբողջ նավիրանն ա-ղմուկով ճռճռում էր։ Ցերբեմն նրա կայմերի պատառները դիպ-չում էին ալիքների կատարներին։ Մի վայրկյան թվաց, յերբ ամբողջ նավակազմը կարծում էր, վոր մի կողքի վրա թեքված դրոշանավը չի ուղղվի։ Նավաստիները կացինները ձեռքերին ար-դեն թռան կայմերը կտրատելու, յերբ հանկարծ առագաստնե-րը բազմաթիվ թնդանոթների համազարկի աղմուկով պոկվեցին կայմերից և թռան ինչպես հսկայական մրրկահավեր։

«Դոմինիկանն» ուղղվեց։ Բայց դրոշանավին, վորը զրկվել էր քամուն դիմադրելու համար առագաստների ընձեռած հենարա-նից, ալիքներն այնպես էին շպրտում չոր կողմի վրա, վոր կայ-մերն ամեն բոպե սպառնում էին խորտակվել։ Զրոշանավը յեր-կար չէր կարող դիմանալ այդ կարգը խախտող, ամբարտավանը-րը թուլացնող արարումին։ Թվում էր, թե հիմի վարարեն վոր և նավերի ճեղքվածքներով ջուրը կներխուժի նկուղի մեջ։

Ջոն Մանզլըն մի բան էր մնում անել միայն. գնել Փոր-տակենդի-առաջակայմը և գնալ քամու ուղղությամբ։ Բայց դա այն-քան էլ հեշտ չէր։ Քամին քաշն անգամ սարսափեց նորից սկսել, համարյա, վերջացրած աշխատանքը, և միայն կեսօրվա ժամի յերկուքին առաջատան ամրացվեց առաջնակայմի ճողանին։ Նավա-խելից փչող փոթորկալից քշվելով, «Դոմինիկանը» միանգամից, անվըր-դովելի ուժով առաջ սլացավ։ Քամին տանում էր դրոշանավին դեպի Հյուսիս-արևելք։ Ջոն Մանզլըը հասկանում էր, վորովհետև նավը չկորցնի արագությունը, վորովհետև ապագա[ն] միայն վազքի արագությունից էր կախված։ Ցերբեմն կտրելով այն ա-լիքների առաջը, վորոնց քամին քշում էր միևնույն կողմը, «Դոմինիկանը» կորչում էր նրանց ետ սուր քթով և թաղվում էր ջրի մեջ, ինչպես մի հսկայական կիտ ձուկ։ Բայց յերբեմն պա-տահում էր, վոր նրա վազքի արագությունը հավասարվում էր ալիքների շարժման արագությանը։ Այն ժամանակ ղեկը դադա-րում էր գործելուց, և դրոշանավն սկսում էր անտղնական կեր-պով այս ու այն կողմ ընկնել, սպառնալով իր յերկրներով ղեկի ալիքները դառնալ։

Վերջապես, պատահում էր և այնպես, վոր ալիքներն զրոսանավից էլ ավելի արագ եյին սլանում։ Այն ժամանակ նրանց ազատ թափալվում եյին նրա վրայով նավախելից մինչև քիթը։

Այդ ամբողջ օրը, դեկտեմբերի 15-ին, և հետևյալ գիշերը, «Դունկանի» դրությունը մնում էր սպառնալից։ Հույսն իր տեղը զիջում էր հուսահատությանը, իսկ հուսահատությունը նորից փոխվում էր հույսի։ Ջոն Մանգլը վոչ մի վայրկյան չէր թողնում իր ղեկը։ Նա վոչինչ չէր կերել այդ ժամանակում։ Հրաշալի կերպով իրեն զսպող, արտաքուստ բոլորովին հանգիստ, յերիտասարդ նավապետն իրապես տանջալի տագնապ էր ապրում։ Նա լարված նայում էր ծովին, փորձելով հայացքով թափանցել թուխպերով ծածկված հյուսիսային հորիզոնը։

Իսկապես նավապետն անհանգստանալու բոլոր հիմունքներն ուներ։ Քամու շնորհիվ իր ճանապարհից մի կողմի վրա տարվելով, «Դունկանն» անհայտ արագությամբ սլանում էր դեպի ավստրալիական ափը։ Ջոն Մանգլը բնազդորեն զգում էր, վոր զրոսանավին քաշում է մի ինչ վոր անհայտ հոսանք։ Ամեն մի վայրկյան զրոսանավը կարող էր խութի վրա ընկնել և հազար կտոր դառնալ։ Նրա հաշիվներով ափին ավելի հեռու չէր գտնվում, քան քսան կիլոմետր—քամու տակ։ Այդպիսի մրրիկի ժամանակ կարիք չկար մտածել բարեհաջող կերպով ափին մոտենալու մասին։ Ափի մոտիկությունն սպառնում էր զրոսանավին խորտակումով։ Հարյուր անգամ ավելի լավ կլիներ գտնվել բաց ովկիանոսում, վորտեղ նավը կարող է պաշտպանվել ալիքների հարվածներից, զիջելով նրանց։ Բայց յերբ մրրիկը նրան ափին է շպրտում, նա անվերադարձ կկորչի։

Ջոն Մանգլը Գլենարվանին իր մոտ կանչեց և բացատրեց նրան ստեղծված դրությունը, վոչինչ չծածկելով։ Նա Գլենարվանին նախազգուշացրեց, թե հնարավոր է, վոր ինքն ստիպված լինի ափ շպրտել «Դունկանին»։

— Յես կզոհաբերեմ նավը, — վերջացրեց նա, — վորպեսզի ազատեմ ուղևորներին և նավախումբը, յեթե հնարավոր լինի այդ։

— Լավ, Ջոն, — պատասխանեց Գլենարվանը։

— Հապա՞ տիկին Գլենարվանը, հապա՞ օրիորդ Գրանտը.

— Յես նրանց կնախազգուշացնեմ ամենավերջին վայրկյա-

նին միայն, յերբ այլևս ջրի վրա մնալու վոչ մի հույս չի լինի։ Դուք ինձ կտեղեկացնեք։

— Լավ, սըր, յես ձեզ կտեղեկացնեմ։

Գլենարվանը վերադարձավ ուղևորների մոտ, վորոնք չեյին պատկերացնում վտանգի ամբողջ չափը, բայց գլխի եյին ընկնում նրա մասին։ Ցելենան և Մերին իրենց նույնպես անվեհեր եյին պահում, ինչպես վոր նրանց ուղեկից—տղամարդիկ եյին։ Պագանելը խոսում եր ոդային հոսանքների ուղղության թեմայի մասին։ Նա, իրեն սովորությամբ լսող Ռոբերտին հետաքրքիր մանրամասնություններ եր պատմում քամիների մասին, ցիկլոնների, տեղատարափների և փոթորիկների հետ համեմատելով։ Մայորը, ճակատագրին հավատացող մուսուլմանի նման հանգիստ կերպով սպասում եր վերջին։

Դեկտեմբերի 16-ին, առավոտյան ժամի մոտ տասնմեկին, փոթորիկը կարծես թե թուլացավ, խոնավ մառախուղը ցրվեց և յերկինքի բացված տեղով Ջոն Մանգլսը, քամու ուղղությամբ տեսավ ցածր ափը։ Զբոսանավն ամբողջ թափով սլանում եր դեպի ափը։ Մինչև հիսուն վառնաչափ բարձրությամբ ահագին ալիքները թավալվում եյին ծովի վրայով։ Ջոն Մանգլսը մտածեց, վոր ալիքներն այդպիսի բարձրության չեյին հասնի, յեթե ափին հենարան չգտնեյին։

— Այստեղ, անշուշտ, ավազոտ ծանծաղուտներ են, — ասաց նա Թոմ Աուստինին։

— Յես ել եմ այդպես կարծում, — պատասխանեց ոգնականը։

— Բանը վատ ե, — նորից խոսեց Ջոնը։ — Յեթե մենք նրանց արանքում անց չգտնենք, «Դունկանը» կորած ե...

— Նավապետ, այժմ բարձր մակընթացություն ե, գո՞ւցե մենք կարողանանք անցնել ծանծաղուտների վրայով։

— Ի՞նչ եք ասում, Աուստին։ Նայեցեք այդ ալիքներին։ Նրանք մեզ կփշրեն տաշեղի նման, յեթե մենք թեկուզ մի վայրկյան հպվենք ծանծաղուտի վրա։

Այնինչ «Դունկանը» շարունակում եր ամբողջ արագությամբ սլանալ ֆոր-ստենգի-ստակսելի տակ։ Շուտով նա մոտեցավ ծանծաղուտներին, յերկու մղոն տարածության վրա։ Բարձրացող մառախուղի կտորներն ամեն վայրկյան աչքից ծածկում եյին ցամաքը։ Սակայն Ջոն Մանգլսին թվում եր, վոր ա-

մի ծննկումից առաջացած փրփուրի գծի այն կողմում ավելի հանդիստ ջրաշերտն է գտնվում։ Եթե «Դունկանին» հաջողվեր ընկնել այնտեղ, նա հարաբերական անվտանգության մեջ կլիներ։ Բայց ի՞նչպես անցնել։

Ջոնն ուղևորներին կանչեց տախտակամածի վրա։ Նա չէր ուզում, որ խորտակումը [illegible] գտնի նրանց։

Ուղևորները տագնապով էին նայում ահռելի ծովին։ Մերի Գրանտը գունատվեց։

— Ջո՛ն, — մեղմորեն ասաց Գլենարվանը յերիտասարդ նավապետին, — յես կաշխատեմ ազատել իմ կնոջը կամ կկործանվեմ նրա հետ միասին։ Հոգացեք Մերի Գրանտի մասին...

—Համաձայն եմ, սըր, — պատասխանեց Ջոնը, ձեռքը գըլխարկի հովհարին մոտեցնելով։

«Դունկանն» արդեն հազիվ մի քանի տասնյակ մարդաչափ էր հեռու ծանծաղուտներից։ Մակընթացության բարձր ջուրը, անկասկած, կթողներ, որ նավն անցնի այդ վտանգավոր ափով, չխփելով նրան։ Բայց նավը մեծ բարձրության վրա բարձրացնող և հետո նրան խոր անդունդի մեջ շպրտող ալիքները, անխուսափելիորեն պիտի խփեին նրա հատակին։

Ո՞, չէ՞ր հնարավոր լինել մի վայրկյան խաղաղացնել ծովը։

Ջոն Մանգլսի մտքում հանկարծ մի գաղափար ծագեց։

— Յուղ, — գոչեց նա։ — Յուղ, տղերք։ Փոկի ճարպով տակառներն այստեղ բերեք։

Նավաստիները իսկույն հասկացան նավապետի միտքը։ Նա ուզում էր մի միջոց գործադրել, որը յերբեմն հրաշալի հետևանքներ է տալիս։ Ալիքների վրա հեղուկ ճարպի շերտ լցնելով, կարելի յէ խափանել նրանց կատաղությունը։ Այդ շերտը մակերևույթի վրա յէ լողում և թուլացնում է ալիքներին։ Ճարպը վայրկենապես հանդարտեցնում է ալիքներին, բայց նրա ազդեցությունը կարճատև է։ Երբ նավը սահում — անցնում է այդ արհեստականորեն հարթած մակերևույթի վրայով, ծովն ազատվում է նրանից և սկսում է մոլեգնել կրկնակի կատաղությամբ։ Վայ այն նավին, որը կհամարձակվի լողալ առաջինի հետևից*։

* Այդ պատճառով ծովային կանոններն արգելում են նավագնացներին կիրառել այդ միջոցն այն ժամանակ, յերբ նրանց հետևից, միևնույն ուղղությամբ, ուրիշ նավեր են լողում։

Ջոկախումբը, վորի ուժերը տասնապատկել էր վտանգը, վայրկենապես տախտակամածի վրա դուրս հանեց փոկի ճարպով տակառները։ Նրանց հատակները պոկեցին և բարձրացրին նավի բորտերի վրա։

— Զգուշացեք։ Սպասեք իմ հրամանին, — գոչեց Ջոն Մանգլսը, սպասելով հարմար վայրկյանի։

Քսան վայրկյանից հետո զբոսանավը գտնվում էր հենց ծանծաղուտի սահմանի մոտ, ուր կատաղությամբ փրփրում (յեռում) և շաչում էր ջուրը։ Վայրկյանը հասավ։

— Թափեք, — գոչեց նավապետը։

Տակառները վայրկենապես շուռ տվին և ճարպի ծորերը (հոսանքները) ծովի մեջ թափվեցին։ Հենց նույն վայրկյանին ճարպի յուղոտ խառնուրդը շղթայեց կատաղած ծովին, և «Դունկանը», սահելով ջրի հարթ մակերևույթի վրայով, մտավ խաղաղ ջրավազանը։ Կապանքներից ազատված ալիքխառնը տասնապատկված ուժով մռնչաց նավախելի հետևում։

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

## ԲԵՐՆՈՒԻԼԻ ՀՐՎԱՆԴԱՆԸ

Ամենից առաջ Ջոն Մանգլսը շտապեց յերկու խարիսխներ ձգել։ Ջրավազանի հատակը բաղկացած էր ամուր ավազե խճից և հրաշալի կերպով պահում էր խարիսխները։ Այդպիսով նավին այնուհետև վտանգ չէր սպառնում։ Այդքան տառապանքներից և վտանգներից հետո «Դունկանը» վերջնապես հանգիստ ապաստան գտավ ալիքխառնի քամիներից առափնյա դարավորված բլուրներով պաշտպանված ծովախորշում։

Գլենարվանն ամուր սեղմեց յերիտասարդ նավապետի ձեռքը։

— Շնորհակալություն, Ջոն, — ասաց նա։

Յեվ Ջոնն այդ յերկու բառով բոլոր աշխատանքների համար վարձատրված զգաց իրեն։ Գլենարվանը վոչ մի խոսք չասաց այդ տագնապի մասին, և վոչ Յելենան, վոչ Մերին, վոչ էլ Ռոբերտը նույնիսկ չկասկածեցին, թե վորպիսի ահռելի վտանգից են ազատվել իրենք։

Այժմ պետք էր պարզել մի կարևոր հանգամանք։ Ավստրալիական ափի վո՞ր տեղն է շպրտել մրրիկը «Դունկանին»։ Վո՞ր-

քան հեռու չէ ափերից, նա նույն յերկայնությամբ զուգահեռից։ Իրենցից ի՞նչ տարածության վրա չի գտնվում Բերնուլիի հրվանդանը։ Այս հարցերն առաջարկվեցին Ջոն Մանգլսին։ Մի քանի յերևացող աստղերից օգտվելով, Ջոնը հաշվողությունները կատարեց և նրանց յեզրակացությունը նշեց քարտեզի վրա։

Ընդհանուր առմամբ «Դունկանը» չափազանց չէր շեղվել իր ճանապարհից — հազիվ յերկու աստիճան։ Նա գտնվում էր 136° 12' յերկայնության և 35° 07' լայնության տակ Կատաստրոֆ (աղետ) հրվանդանի մոտ, Ավստրալիայի, հարավային ափին, այսինքն Բերնուլիի հրվանդանից յերեքհարյուր մղոն հեռու։

Այսպիսի չարագուշակ անունով այդ հրվանդանը գտնվում է Կենգուրու կղզու ծայրի մեջ ցցված լեզվակի վրա, Բորդա հրվանդանի դիմաց։ Այդ յերկու հրվանդանների արանքում գտնվում է Ինվեստիգատորի նեղուցը, վորը տանում է դեպի յերկու խոր ծոցեր. հյուսիսում — Սպենսերի ծոցը, հարավում — Ս. Վինցենտի ծոցը։ Այս վերջինի արևելյան ափին է գտնվում Ադելաիդա նավահանգիստը, Հարավային Ավստրալիայի նույնանուն գավառի մայրաքաղաքը։

1836 թվականին հիմնված Ադելաիդա քաղաքը քառասուն հազար բնակիչ ունի։ Դա հարուստ, կատարելապես ժամանակակից քաղաք է, բայց նրա բնակիչները ավելի շատ յերկրագործությամբ են զբաղվում, քան թե արդյունաբերությամբ։ Հենց դրա համար էլ քաղաքում շատ ավելի գյուղատնտեսներ կան, քան թե ճարտարագետներ, և' արդյունաբերությունը, և' առևտուրն այնտեղ հարգի չեն։

Կարո՞ղ է, արդյոք, «Դունկանը» նորոգել այնտեղ փոթորկի ժամանակ ստացած վնասվածքները։ Այդ դժվար էր ասել։ Ջոն Մանգլսը պատվիրեց ջրասույզին հետազոտել վնասվածքների բնույթը։ Վերջինս զեկուցեց, վոր պտուտակի թիակներից մեկը ծռվել է, վորի հետևանքով պտուտակը չի կարողանում պըտըտվել։ Դա լուրջ վթարում էր, այնքան լուրջ, վոր դժվար էր հույս դնել նրա ուղղման վրա Ադելաիդայում։

Յերկար քննարկումներից հետո, Գլենարվանը և նավապետ Ջոնը հետևյալ վորոշումն ընդունեցին. «Դունկանը» կգնա Ավստրալիայի ափերի յերկարությամբ, առագաստներով, ճանապարհին փնտրելով «Բրիտանիայի» խորտակման հետքերը։



Գլենարվանց մակույկներ սպարինց կղզու ափերը գնացին:

Բերնուկլի հրվանդանի մոտ նա կանգ կառնի։ Այնտեղ կարելի կլինի տեղեկություններ հավաքել տեղական բնակիչներից՝ այդտեղ պատահած բոլոր խորտակումների մասին։ Այստեղից ղըրանավը կըգնա Մելբուռն՝ նորոգման համար, ցամաքային նավաշինարան։ Երբ բոլոր վնասվածքները կուղղվեն, ղըրանավը նորից ծով դուրս կըգա և կըշարունակի «Բրիտանիայի» վորոնումները արևելյան ափին։

Բոլորն էլ միաձայն համաձայնություն տվին այդ վորոշմանը։ Ջոն Մանգլը վճռեց խարիսխը հավաքել, սպասելով առաջին համընթաց քամուց։ Նա ստիպված չեղավ յերկար սպասել։ Յերեկոյան դեմ ծովը բոլորովին հանդարտվեց, և ծովային թեթև քամին փոխարինեց քիչ առաջ կատաղող փոթորկին։ Զբոսանավը սկսեց պատրաստվել մեկնումի։ Ճղճղված առագաստները նորերով փոխարինվեցին։ Առավոտյան ժամի չորսին նավաստիները խարիսխները բարձրացրին, առագաստները բաց արին, և, փոքրիկ ալիքների վրա սահուն որորվելով, «Դունկանը» լողաց Ավստրալիայի ափի յերկարությամբ։

Յերկու ժամից հետո Կատաստրոֆ հրվանդանը ծածկվեց տեսողությունից, և զբոսանավը արդեն գտնվում էր Հետազոտողների նեղուցի հարավային ամբողջության մոտ։ Յերեկոյան դեմ նա պտտեց Բորդա հրվանդանի չուրջը և անցավ ավստրալիական կղզիներից գլխավորի՝ Կենգուրուսյի յերկարությամբ։ Ծովից կղզու տեսքը հրապուրիչ է։ Թավ կանաչը ծածկում է նրա ափերը։ Նրա անտառներում կենգուրուների անթիվ հոտեր են գտնվում։

Հետևյալ օրը Գլենարվանը կարգադրեց մակույկներ ուղարկել կղզու ափերը դիտելու համար։ Նա գտնվում էր 36°-լայնության վրա, բայց Գլենարվանը չէր ուզում 36° և 38° լայնության միջև ընկած վոչ մի կտոր հող թողնել առանց հետազոտելու։

Դեկտեմբերի 10-ի ցերեկը, բոլոր առագաստներով լողացող «Դունկանը», ինչպես իսկական առագաստավոր նավ, անցավ Տեսակցության ծովախորշի մոտով։

1828 թվականին ճանապարհորդ Շտուրտը, Ավստրալիայի ամենամեծ գետ Մյուրեյը հայտնաբերելուց հետո, ընկավ այդտեղ։ Բայց այդ ծովախորշի ափերը վոչնչով չէին հիշեցնում Կենգուրու կղզու կանաչի բուսականությամբ լցված ափերը։

Այստեղ, ընդհակառակն, ամեն ինչ մերկ էր, դատարկ, գծուծ։

Այստեղ արդեն զգացվում էր քաղաքամերձ շրջանի աղքատությունը։

Այս շրջանի ժամանակ «Դունկանի» մանկություններին ծանր աշխատանքի բաժին ընկավ։ Բայց նախատինքները չէին պակասում։ Ամեն ուղղությամբ կատարված համարյա բոլոր աշխատություններին մասնակցում էին Գլենարվանը, նրա անբաժան բարեկամ Պագանելը և Ռոբերտը։ Նրանք ցանկանում էին անձամբ մասնակցել «Բրիտանիայի» խորտակման հետքերի վորոնումներին։ Բայց, չնայած ամենատարբեր խուզարկություններին, վոչինչ չհայտնաբերվեց։ Ավստրալիայի ափերը նույնպես համր էին այդ մասին, ինչպես և Պատագոնիայի լեռները։ Սակայն ճանապարհորդները հուսահատ չէին ընկճվում, վորովհետև նրանք դեռ չէին հասել այն տեղը, վոր առույգ նշանակված էր փաստաթղթում։ Այդ վորոնումներն էլ կատարվում էին խղճի հանգստության համար, վորպեսզի հետո վոչ մի բանում իրենց չմեղադրեն։ Գիշերը «Դունկանը» խարիսխի վրա էր կանգնում, կամ դրեյֆում էր այնպես, վորպեսզի բաց հեռավորությամբ հեռանա այն տեղից, վորտեղ նրան յերևակայած առաջնամասը էր վրա հասնում, դրա համար էլ ափերն ամենայն կերպով էին հետազոտում։

Աշխատելով քիչ-քիչ առաջանալով, զբոսանավը միայն դեկտեմբերի 20-ին հասավ Բեռնուիլի հրվանդանին, ճանապարհին «Բրիտանիայի» խորտակման վոչ մի նշան չհայտնաբերելով։ Բայց վորոնումների անհաջողությունը վոչինչ չէր ապացուցում։ Չէ՞ վոր աղետի ժամանակից յերկու տարուց ավել էր անցել, և ծովը կարող էր յերեք կայմանի նավի խորտակման ամեն մի հետքը վոչնչացնել, յեթե նույնիսկ նա ամբողջությամբ մնացած էլ լիներ խութերի վրա։ Վերջապես տեղացիներն էլ, խորտակման հոտն առնելով, այնպես, ինչպես ցիները, հեռվից առնում են լեշի հոտը, կարող էին իրենց համար վերցնել նրա բոլոր բեկորները, մինչև ամենամանրիկները։ Ինչ վերաբերում է Հարրի Գրանտին և նրա յերկու ուղեկիցներին, նրանք էլ, ամեն մի կասկածից դուրս է, գերի յեն ընկել այն բնիկներին, յերբ ափ են հանել, առաջ տարվել են յերկրի խորքը։

Սակայն այդ յենթադրությունը կասկածի տակ էր դնում Ժակ Պագանելի ամենաբարդ յենթադրություններից մեկը։ Բա-

նի գնա խոսքը արդյունաբերության անցյալ պատմության մասին էր, գիտա-
կանն իրավունք ունեն պնդելու, վոր փաստաթղթում նշված
լայնությունը վոչ թե խորտակման անդին է վերաբերում, այլ
գերիների մշտական մնալու անդին։ Սակայն ենթադրում, պատմագրան-
րում հաղորդ մեծ գետերը և նրանց բազմաթիվ վտակները թույլ
էին տալիս վորոնել ուղղում են ձգեն չէին փաստաթղթերի հետ,
այն հաշվով, վոր հոսանքը ծովը կտանի այն։ Այնինչ Անատոլ-
իայի այդ մասում, այն գետերը, վորոնք հոսում են յերկաթուղ-
յութերը գուղաշեհերի մասին, չափազանց փոքրաթիվ են։ Բա-
ցի դրանից, Անդրկովկասյան Թիֆլ—Պոլորադյան և Թիֆլ—Նեղդրան ա-
մայի մարզպետություններով են հոսում գետի ավելիսանտա, հետո
մարզկային ընկերություններից։ Իսկ այստեղ՝ Անատոլիայի
գլխավոր գետերն են — Մյուրքելը, Ցարան, Տորքենը, Դաու-
լինգը—վորոնք՝ կամ մեկը մյուսի մեջ են թափվում, կամ
ավելանում են թափվում այն գետաբերաններով, վորոնք բազմա-
թիվ նավերով ալյուսյու առևտրական նավահանգիստներ են դը-
ժվարանում։

Դժվար էր յենթադրել, վոր դյուրաբեկ չէին կարող էր ա-
նարգել տանել այդ ջրերով, վորոնց հարյուրավոր նավեր են
բացվող Մանկ—Նարաքի հետ միջնելիս։ Այստեղից զգվում էր, վոր
փաստաթղթում նշված լայնության սահմանները կարող են
ցույց տալ միայն հենց խորտակման անդը և վոր չէին ծովին և
ձգվել Անատոլիայի արևմտյան յերկրին, Քրիստոնեության ար-
ևից անմիջապես հետո։
ակոսում, և ընկնել Հնդկական ովկիանոսը։

Այս նկատառումը ցնցում էր Գլենարվանի սուր մաքից։
Այրտոնական դավանների պարտավորում Պագանելի միանգա-
մայն արդարացի յենթադրությունն անկիրառելի լեր Անատոլ-
իայում։ Պագանելն ինքը խոստովանեց այս, այդ հարցը բարձ-

Սակայն, ինչպես արդարացի նկատեց Գլենարվանը, փաս-
տաթղթի այդ անմիջելի մեկնաբանությունը չէր բացառում այն
հնարավորությունը, վոր նավապետ Գրանտը գանվում է ապա-
ցինների մոտ՝ վորպես գերի։ Ընդհակառակը, նա ինքն է մատ-
նանշել դրա անխուսափելիությունը մի դարձվածքով․ «սուր նը-
րանք գերի կընկնեն դաժան ապաշխերի մոտ»։ Այստեղից մի
արտառոցական յեզրակացություն էր հետևում, վոր արժե էլ
նույնքան հիմունքներ կային նավապետ Գրանտին յերեսունյա-

թերորդ զուգահեռի վրա փնտռելու, ինչպես և մի փոքրիկ ու-րիշ զուգահեռի վրա։

Հարցը յերկար քննարկելուց հետո, ճանապարհորդները հե-տևյալ վերջնական վորոշմանը յեկան, յեթե Բերնուիլլի հրվան-դանի վրա ել չի հաջողվի «Բրիտանիայի» խորտակման վոչ մի հետք գտնել, Գլենարվանին մնում է միայն վերադառնալ Եվ-րոպա։ Արշավը, ճիշտ է, անհաջող կվերջանա, բայց նա իր պարտականությունը կկատարի բարեխիղճ և մինչև վերջը։

Այդ վորոշումը, վորի ճշմարտությունն անվիճելի յեր, այ-նուամենայնիվ զարմանալի բոլոր ուղևորներին թախիծի մեջ ձգեց և հատկապես Մերի և Ռոբերտ Գրանտին։ Գլենարվանի, Մակ-Նաբսի, Ջոն Մանգլսի և Պագանելի հետ միասին ափ ու-ղևորվելով, խեղճ յերեխաներն զգում եյին իրենց, վոր այժմ վերջնականապես կլուծվի իրենց հոր բախտը։ Եվ իսկապես, յեթե այստեղ ել «Բրիտանիայի» հետքերը չերևան, հետագա վո-րոնումներն ի զուր կլինեն։ Չէ՞ վոր Պագանելը դեռ առաջ եր ապացուցում, վոր արևելյան ափին խորտակված չեր կարող լինել, վորովհետև այդ դեպքում նավապետ Գրանտն ու իր ուղեկիցներն արդեն վաղուց միջոց կգտնեյին հայրենիք վերա-դառնալու համար։

— Հույսներդ մի կորցնեք, սիրելի Մերի, — փաղաքշան-քով ասաց Գլենարվան իր կողքին նստած յերիտասարդ օրիորդին։ — Ինձ ինչ վոր մի բան ասում է, վոր մենք շուտով նորություն-ներ կլսենք ձեր հոր մասին։

Ափը մի չափաթոկից վոչ ավելի տարածության վրա յեր։ Յերկու մղոն ծովի մեջ մտնող հրվանդանի վերջավորությունը, զառիվայր իջնում եր դեպի ջուրը։ Մակույկը թիավարեց դեպի ափը, փոքրիկ ծովախորշիկում, վոր կազմված եր ավազ մարջա-նե ծանծաղուտներով, վորոնք ժամանակի ընթացքում խութե-րից գոտի յեն կազմում Ավստրալիայի հարավային մասի շուր-ջը։ Բայց հենց այժմ ել արդեն մարջանե կառուցվածքներն այդ ափի մոտ բավականաչափ բարձր եյին, վորպեսզի ընկղմեյին մի այնպիսի նավ, ինչպես «Բրիտանիան» եր։

«Դունկանի» ուղևորներն ու նավաստիները առանց դժվարու-թյան դուրս յեկան բոլորովին ամայի ափը, վորի ուղղությամբ վաթսունից մինչև ութսուն վոտնաչափ բարձրությամբ ժայռե-

րի մի շերտ էր ձգվում։ Այդ բնական ամրությունն առանց ամե-նափոքր կամ կարծրավոր թռչերի դժվար կլիներ անցնել, բայց, բարեբախտաբար, Ջոն Մանգլը դեռ ծովից էր նկատել այդ պատի ճեղքը, վոր գոյացել էր ժամանակի փլուզումի հետևան-քով։ Անկասկած, գիշերահավասարի ուժեղ մրրիկների ժամա-նակ ալիքները հասնում էին փոսի մինչև այդ փակոցին և իրենց հարվածներով առաջացնում էին ժայռերի վերևին մասե-րի փլուզումները։

Գլենարվանը և իր ուղեկիցները մտան պատռվածքի մեջ և բավական թեք վերելքով բարձրացան ժայռի գագաթը։ Ռոբեր-տը կատվի պես մագլցեց, համարյա ուղղաձիգ լանջով և ամե-նից առաջ հասավ ժայռի գագաթին, կտրելով Պագանելի առա-ջը, վորը վոչ մի կերպ չէր կարողանում մխիթարվել, վոր իր քառասունամյա յերկար վոտքերը հաղթվել էին տասներկու-ամյա փոքրիկ վոտքերից։ Նա իսկն իրեն վարձահատույց յե-ղավ միայն նրանով, վոր մի քիչ առաջ ընկավ մայորից, բայց վերջինս վճռականորեն անտարբեր էր այդ բանին։

Համախմբվելով առաջամարտի կառավարին, փոքրիկ ջոկատը հետա-քրքրությամբ դիտում էր իր աչքերի առաջ տարածված հովիտը։ Դա խոտերով և թփուտներով ծածկված պատած մի ընդարձակ և անմշակ տափարակ էր։ Գլենարվանին նա հիշեցնում էր Շոտ-լանդիայի հարթությունների անտառոտ տարածությունը, իսկ Պագանելը — Բրետանիի ամայի հողերը։ Բայց յեթե այդ հարթու-թյան առափնյա մասն անմարդաբնակ էր թվում, ապա նրա խոր-քում յերևացող մի քանի կառուցվածքներ, անկասկածելիորեն ապացուցում էին մարդու ներկայությունը, և այն էլ վոչ թե վայրենի, այլ քաղաքակիրթ։

— Աղորի՛ք, — բացականչեց Ռոբերտը։

Իսկապես, ափից յերեք մղոնի վրա քամին պտտեցնում էր աղորիքի թևերը։

— Այո՛, դա աղորիք է, — հաստատեց Պագանելը, ուղղե-լով իր հեռադիտակը Ռոբերտի ցույց տված ուղղությամբ։

— Գնանք այնտեղ, — ասաց Գլենարվանը։

Բոլորն էլ ճանապարհ ընկան։ Կես ժամ գնալուց հետո, նը-րանք հասան մինչև մշակված հողի սահմանները։ Անպտուղ տա-փաստանի կուլտուրական դաշտերի փոխվելը շատ անսպասելի էր։ Վայրենի բուսանոց թփուտը հանկարծ փոխվեց դալար ցանքա-



— Աղօրի՞ք,— բացականչեց Ռոբերտը։

պատի, վոր հենց նոր էր անցկացրել մաքրած հողամասի շուրջը։ Մի քանի յերեխեր և մի գյուղացին ձեռք արածում էյին մարգա-գետնի խոտ խոտը, բարձր անկյուններից հովանու տակ, վորոնց այստեղ էյին բերվել Կենտրոնական կղզու անապատ անդաստաններից։ Ավելի հեռուն յերևում էյին հացահատիկների ցանքերը, հսկա փեթակների պես բարձրացող խոտի դեզեր, պողպատե այդի՞ թարմ ցանկապատի հետևում, ասես պահեստներ և ուրիշ ամեն տեսակ անասնական կառուցվածքներ և վերջապես մի գողարիկ բնակելի տուն, վորի հետևում ուրախ բարձրանում էր աղորի-քի արածայր կերպարանքը։

Այդ վայրկյանին, չորս չափ հաչոցի վրա, ամից դուրս յե-կավ հաճելի, պայծառ դեմքով, մոտ հիսուն տարեկան մի մարդ։ Հինգ բարձրահասակ և գեղեցիկ յերիտասարդներ, ըստ յերևույ-թին նրա տղաները, և մի խոշոր, լիքը կին գնում էյին նրա հե-տևից։ Թավշական էր մի հայացք ձգել այդ կուսական առափնա-տանում նոր չինգերով չըջապատված քաղաքի ընտանիքի վրա, ճանաչելու համար այն դառնությունը խոնդությունների, վորոնց մինչև վերջը իրենց հայրենիքում մնանում էյին քաղցածու-թյունից և մեկնել էյին ավելի ուր այն կողմը, բախտ փնտրե-լու։

Գլենարվանն ու իր ուղեկիցները դեռ չէյին մոտեցել, յերբ տանտերը ջերմացնելով վող նրանց անունները, վող էլ ինչ կոչ-ման տեր լինելը, արտասնց վողջունեց նրանց.

— Թասարներկրացիներ, համեցեք Պադդի Ո'Մուրի տունը։

— Դուք իռլանդացի՞ յեք, — հարցրեց Գլենարվանը, սեղ-մելով տանտիրոջ մեկնած ձեռքը։

— Ո, մի ժամանակ յես արքայախին էյի, — պատասխանեց Ո'Մուրը, — արժե յես ավստրալիացի յեմ։ Մտեք, պարոններ-ցիներ, և, ով էլ ուզում է լինեք, ձերն համարեք այս տունը։

Մնում էր միայն ընդունել այդ սրտանց հրավերը։ Ցելենան և Մերի Գրանտը տան մոտան տիկին Ո'Մուրի հետ այն ժամա-նակ, յերբ գաղութականի տղաներն օգնում էյին հյուրերին զենքերը հանելու։

Յերեք գյուղամանց առախատակներից չինած բնակելի սան առաջին հարկում գանվում էր մի լուսավոր, ընդարձակ սենյակ։ Նրա կահավորությունը կազմում էյին թարմ ներկված վաթ-լող պատերի յերկարությամբ դրված նստարանները, տասնյակ

ատրուբեռնակները, յերկու մեծ աչքը, ողխառակ հանճառական ա-մանեկեններով և մաքրությամբ փայլող կաթսաներով և վերջա-պես մի լայն և յերկար սեղան, վորի շուրջը 20 մարդ կարող եր նստել: Կահավորումն ավելի քան ներդաշնակվում եր ամուր տան տեսքի, նրա բարձրահասակ, առողջ տերերի հետ:

Կեսօրին ճաշը մատուցվեց: Սեղանի վրա ձիթապտուղների, խաղողի և նարինջների լիքը ափսեներով շրջապատված ռոզբի-ֆի և վոչխարի տապակած մսի սկուտեղների արանքում գոլորշի յեր թողնում տապով լցված ամանը: Դա ճոխություն չեր, այլ լրիվ բավականություն: Տանտերն ու տանտիրուհին այնքան ա-բարի եյին, սեղանի վրայի խորտիկներն այնպիսի ախորժելի տեսք ունեյին, վոր անհնարին եր մերժել հյուրասիրությունը: Ֆերմայի ծառաներն ու բանվորներն արդեն մի սեղանի շուրջը բազմել եյին իրենց տերերը, տան տիրոջ հետ: Պադդի Ո՛Մուրը ձեռքի շարժումով ցույց ավեց հյուրերին նրանց համար թողած նստարանները:

— Յես ձեզ եյի սպասում, — պարզ ասաց նա Գլենարվա-նին:

— Մե՞զ, — շատ զարմացավ նա:

— Յես միշտ սպասում եմ հյուրերի, — պատասխանեց իռ-լանդացին:

Ճանապարհորդներն ու տնեցիները պատշաճ շնորհակալու-թյուն հայտնեցին: Սեղանի շուրջը կենդանի խոսակցություն բաց-վեց: Շոտլանդացուց մինչև իռլանդացին մի քայլ է միայն: Մի քանի սաժեն լայնություն ունեցող Տվիդ* գետն ավելի խոր ան-դունդ է փորել Շոտլանդիայի և Անգլիայի միջև, քան Հին Կա-լեդոնիան** և կանաչ Երինը*** բաժանող Իռլանդական նեղու-ցի ութսուն կիլոմետր տարածությունը: Պադդի Ո՛Մուրը պատ-մեց իր պատմությունը: Դա հայրենիքից աքսորված բո-լոր վտարանդիների պատմությունն եր: Նրանցից շատերը, նոր տեղերում, բավականության փոխարեն ել ավելի վիշտ և նե-ղություն են գտնում: Բայց համարձակները և աշխատասերնե-րը, լուրջերը և ժրաջանները առաջադիմում են:

* Անգլիայի և Շոտլանդիայի սահմանի վրա հոսող գետ
** Հին Կալեդոնիա—Շոտլանդիա
*** Կանաչ Երին—Իռլանդիա

Այս վերջիններին էր պատկանում նաև Գաղզի Ո'Մուրը։ Ոլստերից, ուր նրա ընտանիքը ժառանգել էր տոհմից, նա գաղթեց Անգլիայից, իջավ Անգլեկիրկայում, հրաժարվելից անխուհեմ քաղաքը այլասավորումից, ինչ վոր առաջարկում էին նրան, վորպեսզի լիակատարությամբ պարապի և զալուց լիրկու. անխոհետո ազգին ցանկալի համար մաքրում էր մի վայրենի հողամաս, հենց այն, վորն էր ծաղկած անտառով ուրախությամբ ճանապարհորդների աչքերը։

Հարավային Անգլիայի ամբողջ անբնակավայրան բաժանված է առանձին հողամասերի, յուրաքանչյուրն ունենում ակր* տարածություն։ Կառավարությունն այդ հողամասերը ձրի բաժանում էր գաղթականներին, ինչքի արագ գաղութացման նպատակներով։ Անեն մի հողամաս վոչ միայն կարող էր կերակրել աշխատավոր ֆերմերին, այլ և թույլ էր տալիս գնել խնայողություններ էլ անել։

Գաղզի Ո'Մուրը գիտեր այդ։ Ուժերը չխնայելով, նա և իր ընտանիքն աշխատում էին իրենց հողամասում։ Ընտանիքն արդպես էր ծաղկում, ինչպես և նրա կալվածքները։ Իռլանդական գյուղացին դարձավ հողային սեփականատեր։ Այժմ նրան էր պատկանում մի հողամաս, վոր պատկառելի էր դարձել նրա աշխատանքների շնորհիվ, և հինգհարյուր գլուխ անասուն մի հոտ։ Իռլանդական կալվածատերերի քիչ առաջվա ստրուկը, դարձավ ազատ քաղաքացի։

Ճանապարհորդները սրտանց շնորհավորեցին վարպետի հաջողությունը։ Գաղզի Ո'Մուրը, վերջացնելով իր պատմությունը, լռեց, բայց յերևույթին պատասխան պատմությամբ սպասելով, թույց վոչ մի բանի մասին չհարցնելով։ Սակայն Գլենարվանն ինքն էր շահագրգռված նրանում, վորպեսզի գաղութականն իմանար ամբողջը «Դունկանի» ճեպընթացի հրաշագան գալու, և այն վորոնումների մասին, վոր կատարում էր ցյուրանդաալի ամբողջ աշխարհում։ Սակայն, վորպես մի մարդ, վորը միշտ ուղիղ գնում է դեպի նպատակը, նա ամենից առաջ հարցրեց Գաղզի Ո'Մուրին. արդյո՞ք, նա «Բրիտանիայի» խորտակման մասին վորևէ բան չի լսել։

Իռլանդացին բացասական պատասխան տվեց։ Նա յերբեք

* Ակրը հավասար է 0,404 հեկտարի։



— Ձեր նավապետ Գրանտը կենդանի է, նա գտնվում Ավստրալիայում։

չէր լսել այդ նավի մասին։ Վերջին յերկու տարում վոչ մի նավ չի խորտակվել վոչ Բերնուիլի հրվանդանի մոտ, վոչ էլ նրա շրջակայքում։ Բայց քանի վոր «Բրիտանիայի» աղետը պատահել և որանից ընդամենը յերկու տարի առաջ, այդ պատճառով նա կատարյալ համոզվածությամբ հայտարարեց, վոր Գլենարվանի վորոնած մարդիկ չկան և չեն յեղել այս մերձափնյա մասում։

— Իսկ այժմ թույլ տվեք իմանալ, սըր, ինչո՞ւ համար եք դուք առաջարկում ինձ այդ հարցը, — վերջացրեց նա։

Այն ժամանակ Գլենարվանը դաղութականին պատմեց շշի մեջ յեղած փաստաթղթերի գտնվելու պատմությունը, «Դունկանի» արշավախմբի կազմակերպության և նավապետ Գրանտին գտնելու նրա ձեռնարկած բոլոր փորձերի մասին։ Գլենարվանն խոստովանեց չթաքցրեց, վոր նրա կարծիքով պնդումը փշուր-փշուր արեց գժբախտ ծովագնացներին գտնելու վերջին հույսը։

Այդ խոսքերը չէյին կարող ճնշող տպավորություն չգործել Գլենարվանի ուղեկիցների վրա։ Ռոբերտն ու Մերին նստած էյին արցունքոտ աչքերով։ Մինչև անգամ Պագանելը միխիթարական խոսք չգտավ նրանց համար։ Ջոն Մանգլսը կրկնակի յեր տառապում, Մերիի և իր համար։ Հուսահատությունը լցրել եր այդ մեծահոգի մարդկանց սրտերը, վորոնց «Դունկանն» ի զուր եր բերել աշխարհի հեռավոր ափերը, յերբ հանկարծ, անսպասում տիրող լարված խաղաղության մեջ մի ձայն լսվեց.

— Մի հուսահատվեք, սըր, յեթե նավապետ Գրանտը կենդանի յե, նա գտնվում է Ավստրալիայում։

## ԳԼՈՒԽ ՅՈԹՆԵՐՈՐԴ

## Ա Յ Ր Տ Օ Ն

Դժվար է նկարագրել այն հիացմունքը, վոր առաջացրին այդ խոսքերը։ Գլենարվանը վայրկյանապես վեր ցատկեց իր տեղից, և նրա աթոռը գլորվեց հատակի վրայով։

— Ո՞վ ասաց այդ, — գոչեց նա։

— Յես, — պատասխանեց Պադդի Օ'Մուրի աշխատավորներից մեկը, վոր նստած եր սեղանի հակառակ ծայրում։

— Դո՞ւ, Այրտոն, — բացականչեց դաղութականը, վոր Գլենարվանից պակաս չեր զարմացել։

— Յես, — վրդովված, բայց հաստատ պատասխանեց Այր-

անքը։ — Ես էլ նույնպիսի շոտլանդացի եմ, ինչպես և դուք, սըր, և «Թրիստանիայի» խորտակումից ազատվածներից մեկն էլ եմ։

Այս հայտարարությունն անսպասելի տպավորություն գործեց։ Մերի Գրանտը վրդովմունքից խեղդվելով, շշմած բախտի անսպասելի ներխուժման զգացումով, կիսաուշաթափ խոնարհեց Հելենայի կրծքին։ Ջոն Մանգլսը, Օստինը, Պագանելը, իրենց տեղերից վեր թռչելով նետվեցին դեպի այն աշխատավորը, վորին Օ'Մուրը հենց նոր Այրտոն անվանեց։

Դա քառասունհինգ տարեկան մի մարդ էր, կոշտացած դեմքով և կենդանի աչքերով, վորոնք խորը թաղված էին աչքերի խոռոչներում և ծածկված էին շատ թավ հոնքերով։ Չնայած նրա նիհարությանը, իսկույն յերևում էր, վոր նա արտասովոր ուժեղ է։ Նրա մարմինը կարծես թե կազմված էր միմիայն ոսկորներից և մկաններից։ Շոտլանդական արտահայտությամբ, «նա ժամանակ չէր կորցրել ճարպակալելու համար»։ Նա վոչ բարձրահասակ, լայնաթիկունք մի մարդ էր, վստահ, յեռանդոտ շարժումներով և խիստ, բայց ընդհանուր առմամբ իր դեմքին արտահայտող դեմքի խելոք արտահայտությամբ։ Դեպի նա ներշնչող համակրանքի զգացումն ավելի յեր շատանում կրած և նրա դեմքի վրա զրկանքների դրոշմած հետքերով։ Իսկույն յերևում էր, վոր նա շատ է տառապել, թեև նա աներկյուղ և տառապանքներ հաղթահարող մարդու տպավորություն էր թողնում։

Գլենարվանը և իր բարեկամներն առաջին հարցերից հասկացան այդ։ Այրտոնի արտաքինը միանգամից վստահություն ներշնչեց նրանց։ Գլենարվանը հարցեր էր, վոր տեղում էր Այրտոնի գլխին։ Նա սիրով պատասխանում էր։ Հանդիպումը «Թրիստանիայի» խորտակումից ազատվածներին վորոնող ճանապարհորդների հետ, ըստ յերևույթին նրա վրա վոչ պակաս խորը տպավորություն էր թողել, քան իր խոսքերը ճանապարհորդների վրա։

Հուզմունքից դեռևս չկազդուրված Գլենարվանի հարցերը թափվում էին անկարգ։ Յերևում էր, վոր նա այդ հարցերը բոլորովին անգիտակցաբար էր տալիս։

— Դուք «Բրիտանիայի» խորտակման ականատեսներից մե՞կն եք, — հարցրեց նա։

— Այո՛, սըր։ Ես վորպես ավագ նավաստի եղել եմ ծառայում նավապետ Գրանտի մոտ։

— Դուք նրա հետ միասի՞ն եք ազատվել։

— Վո՛չ, սըր, վոչ։ Այդ ահռելի րոպեյին ալիքը ինձ քշեց տախտակամածից և ափը տարավ։

— Նշանակում է, դուք այն յերկու նավաստիներից թվից չե՞ք, վորոնց մասին խոսվում է փաստաթղթում։

— Վոչ, յես այդ փաստաթղթի մասին վոչինչ չգիտեմ։ Հավանաբար նավապետը ծովն է ձգել այն, յերբ յես արդեն նավի վրա չեմ յեղել։

— Բայց նավապե՞տը...

— Ես կարծում եյի, վոր նա կկորչի «Բրիտանիայի» ամբողջ նավանձնակազմի հետ։ Ինձ թվում եր, վոր միմիայն յես եմ ազատվել խորտակումից։

— Բայց չե՞ վոր քիչ առաջ դուք ասացիք, վոր նավապետ Գրանտը կենդանի յե։

— Վո՛չ, յես ասացի... «յեթե նա կենդանի յե»։

— Ձեզ ավելացրիք. «վոր նա Ավստրալիայում է»։

— Ճիշտ է, նա չի կարող ուրիշ վոչ մի տեղ լինել։

— Նշանակում է, ձեզ հայտնի չե՞, թե նա վորտեղ է գտնվում։

— Վո՛չ, սըր, կրկնում եմ։ Չե՞ վոր յես յենթադրում եյի, թե նա խեղդվել է ալիքներում, կամ ջարդվել է ժայռերին զարնվելով։ Միայն ձեզնից լսեցի, թե, նա, կարող է պատահել, վոր դեռ կենդանի յե։

— Այդ դեպքում հապա, ձեզ ի՞նչ է հայտնի։

— Միայն այն, ինչ վոր յես արդեն ասացի. յեթե նավապետ Գրանտը դեռ կենդանի յե, նա գտնվում է Ավստրալիայում։

— Խորտակումը վորտե՞ղ է յեղել, — հարցրեց մայորը։

Այդ հարցն իհարկե, պետք եր ամենից առաջ տալ։ Բայց վրդովված Գլենարվանն շտապելով իմանալ, թե, արդյոք, նավապետ Գրանտը դեռ կենդանի յե, միանգամից գլխի չընկավ տալու այն։ Այն րոպեյից, յերբ մայորը մեջ ընկավ, Այրտոնի հարցաքննումը, անկարգ, հաճախ խառնաշփոթ և անտրամաբանական, թույլ հարցերը շոշափող, վոչ մեկը չհասցնելով ա—



Ալիքն Այրտոնին նետեց խութի վրա։

վերջի հանդիսավոր բնույթ ստացավ, և շուտով ունկնդիրների առաջ կանգնեցին այդ պատմության բոլոր մանրամասնությունները, կապակցված և հաջորդական կարգով:

Այրտոնը մայորի հարցին պատասխանեց հետևյալ խոսքերով.

— Յերբ ալիքն ինձ քշեց տախտակամածից, յերբ յես առագաստներն էյի կարճում առաջնակայմի վրա, «Բրիտանիան» ընթանում էր ուղիղ դեպի Ավստրալիայի ափը: Այդ պատահեց վոչ ավելի, քան յերկու շաբաթով առաջ հետո: Հետևաբար խորտակումը տեղի պիտի ունենար հենց այդ տեղում:

— Լայնության յերեսունյոթերորդ աստիճանի՞ վրա, — հարցրեց Ջոն Մանգլսը:

— Այո՛, — պատասխանեց Այրտոնը:

— Ավստրալիայի արևմտյա՞ն ափին:

— Ո՛չ, վոչ, — արագ պատասխանեց բոցմանը: — Արևելյան ափին:

— Յե՞րբ:

— 1862 թվականի հունիսի 27-ի գիշերը:

— Այդպես է: Հենց այդպես է, վոր կա, — գոչեց Գլենարվանը:

— Այժմ դուք տեսնում եք, սըր, — ավելացրեց Այրտոնը, — վոր յես իրավունք ունեյի ասելու. «Յեթե նավապետ Գրանտը դեռ կենդանի յե, նրան պետք է փնտրել միայն ավստրալիական մայր ցամաքի վրա, և ուրիշ վոչ մի տեղ»:

— Յեվ մենք կփնտրենք ու կգտնենք նրան, — բացականչեց Պագանելը: — Ո՛, թանկագին փաստաթուղթ, — ավելացրեց նա միամտորեն, — ինչ բախտավորություն է, վոր դու խորաթափանց մարդկանց ձեռքն ես ընկել:

Պագանելի այս ինքնագովությունը վոչ վոք չլսեց: Գլենարվանն ու Ելենան, Մերին և Ռոբերտը խմբվեցին Այրտոնի շուրջ կողմը: Նրանք սեղմում էին նրա ձեռքերը, կարծես թե այդ մարդի հետ հանդիպումը ծառայում էր վորպես Հարրի Գրանտի ազատվելու գրավական: Յեվ իսկապես, յեթե բոցմանը վողջ և անվնաս է դուրս յեկել այդ սարսափելի աղետից, ինչո՞ւ չէր կարող նույնպես վողջ մնալ և ազատվել նաև նավապետը: Այրտոնն անընդհատ կրկնում էր, վոր նավապետ Գրանտը պիտի կենդանի մնար: Վորտե՞ղ է գտնվում նա, այդ չգի-

տեր Այրտոնը, բայց չէր կռահում, վոր Ախտարաչիայի մայր ցամաքի վրա յեր։

Գլենին հետաքրքրող հարցեր թափառական նախկին բոցմանը պատասխանում եր նրանց պատրաստակամությամբ, խելացիորեն և զարմանալի ճշտությամբ։ Մերին իր փոքրիկ ձեռքերից բաց չեր թողնում նրա ձեռքերը, քանի նա խոսում եր։ Չե՞ վոր նա իր հոր ուղեկիցը, ընկերն եր, «Բրիտանիայի» նավաստին։ Նա տեսել ե Հարրի Գրանտի կողքին, նրա հետ միասին շնչել ե միևնույն ոդը, բաժանել ե նրանց հետ աշխատանքները և վտանգները։

Մինչև այժմ ճանապարհորդներից վոչ վոք մտքովն էլ չեր անցկացնում կասկածել այն մարդու անկեղծությունների ճշմարտության և անձի վրա, վորն իրեն ներկայացնում եր վորպես «Բրիտանիայի» բոցման։ Գուցե միայն բնությունից անվստահ և զգույշ մայորն եր հարցնում իրեն՝ արդյո՞ք, Այրտոնի խոսքերն արժանի յեն կատարյալ վստահության։ Այդ անակնկալ հանդիպումն իսկապես կարող եր կասկածներ հարուցել։ Ճիշտ ե, Այրտոնը թվերն ու մի քանի փաստեր բացարձակապես ուղիղ եր տալիս։ Բայց վորքան էլ ճշմարտանման լինեյին նրա բերած մանրամասնությունները, նրանք կույր վստահության հիմունքներ չեյին տալիս։ Ճշմարտության տեղ ցուցադրվող սուտն ավելի հաճախ հենվում ե հենց ճշմարտանման մանրամասնությունների վրա։

Բայց Մակ-Նաբսը կասկածանքները թաքցրեց իր հոգու մեջ և վոչ վոքի չեր արտահայտում այն։

Ինչ վերաբերում ե Ջոն Մանգլսին, նրա մեջ ծագած կասկածն իսկույն անհետ ցրվեց այն բանից հետո, յերբ Այրտոնը խոսեց Մերի Գրանտի հետ, նրա հոր մասին։ Այրտոնը շատ լավ եր ճանաչում Ռոբերտին և Մերիին։ Նա տեսել եր նրանց Գլազգոյում, «Բրիտանիայի» մեկնումի որը։ Նա հիշեցրեց, վոր Մերին, ներկա յեր նավապետի՝ իր բարեկամներին տված նախաճաշին «Բրիտանիայի» նավախցում։ Նրանց թվում եր նաև շերիֆ Մակ-Ինտայրը։ Ռոբերտին հսկելը, վորն այն ժամանակ հազիվ տասը տարեկան եր, հանձնարարված եր բոցման Դիկ Տուրներին, բայց տղան դուրս պրծավ նրա ձեռքից և մագլցեց առագաստակայմի վրա։

— Ճիշտ ե, ճիշտ։ Ես հիշում եմ, — ասաց Ռոբերտը։

Այրտոնը բազմաթիվ մանր փաստեր հիշեցրեց, ըստ յերե-վույթին վոչ մի նշանակություն չտալով նրանց։ Բայց Ջոն Մանգլսի համար այդ բավական էր, հավաստիանալու համար, վոր Այրտոնն իսկապես այն անձնավորությունն է, վորի անունն է դնում ինքն իրեն։ Երբ նա լռում էր, Մերին աղերսագին բա-ցականչում էր.

— Խնդրում եմ, պարոն Այրտոն, ելի մի բան պատմեք հորս մասին։

Եվ բոցմանը նորից էր սկսում պատմել։ Գլենարվանը նրան չէր ընդհատում, թեև իր լեզվի վրա ավելի շատ կարևոր հարցեր կային կուտակվում Այրտոնի համար։ Բայց յերբ չհամ-բերելով նա ուզեց կանգնեցնել Այրտոնին, Հելենան բռնեց նրան, հայացքով ցույց տալով Մերիի յերջանիկ դեմքը։

Մերիի հարց ու փորձերին պատասխանելով, Այրտոնը պատ-մեց «Բրիտանիայի» ամբողջ լողի մասին Խաղաղ ովկիանոսում։ Այդ պատմությունից մի մասը հայտնի յեր Մերիին, վորովհետև նավապետ Գրանտի վերջին նամակը թվագրված էր 1862 թվա-կանի մայիսին։ Լողի ժամանակ «Բրիտանիան» այցելեց Ովկիա-նիայի ամենագլխավոր կղզիները։ Նա անցել էր Նոր Հեբրիդյան կղզիները, Նոր Գվինեան, Նոր Զելանդիան և Նոր Կալեդոնիան։ Բայց նավապետ Գրանտի այցելած բոլոր կղզիներն արդեն գը-րավված եյին մեկն ու մեկի կողմից, հաճախ առանց վորևէ իրավունքների։ Անգլիական ներկայացուցիչներն ամեն տեսակ արգելքներ եյին պատճառում նավապետ Գրանտին, նախազգու-շացված լինելով գաղութների մինիստրության կողմից նրա հե-տապնդած նպատակի մասին։ Այնուամենայնիվ, նա ամեն տե-սակետից մի հարմար վայր գտավ Նոր Գվինեայից դեպի արև-մուտք։ Նա չէր կասկածում, վոր իր հայրենասիրական ծրագրին ան-պայման պիտանի յե գաղութացման համար և վոր բարգավա-ճումն ապահովված է իր այն հայրենակիցների համար, ովքեր կհամաձայնեին գաղթել այստեղ։ Եվ իսկապես, Մոլուկյան և Ֆիլիպինյան կղզիների արանքում ընկած ճանապարհի վրայի նա-վահանգիստը կծաղկեր և շատ նավեր կբերեր այստեղ այն բանից հետո, հենց վոր Սուեզի ջրանցքի փորելը կվերացնի հին ծովա-յին ճանապարհը դեպի Հնդկաստան, Բարեհուսո հրվանդանի շուրջ կողմով։ Հարրի Գրանտն այն սակավաթիվ անգլիացիներից էր, վորոնց ազգային գոռոզությունը չէր խանգարում տեսնել



Տեղացիները Այրտոնին գերի վերցրին։

Լեսսեպսի* ձեռնարկած գործի մեծ նշանակությունը և ամեն կերպ համակրել նրան։

Նոր Գվինեա այցելելուց հետո, «Երկաթանիխան» ուղևորվեց Կալլաո, վորպեսզի մթերքները լրացնի։ Նա թողեց այդ նավահանգիստը 1862 թվականի մայիսի 30-ին, ուղևորվելով դեպի Ցել-բոզա, Հնդկական ովկիանոսի և Բարեհուսո հրվանդանի վրայով։ Կալլաոյից մեկնելուց յերեք օր հետո սարսափելի մրրիկ բարձրացավ։ Նավը այնպես էր թեքվում ձախ կողքի վրա, վոր ստիպված յեղան կայմերը կտրել։ Նկուղում սկսեց ջուր թափվել։ Նրան խցկել անհնարին դարձավ։ Նավակայմը չուտով վերջնականապես ուժասպառ յեղավ։ Զրհանները չէյին հաջողում ջուրը նկուղից հանել։ Ութ օրվա ընթացքում փոթորիկը «Երկաթանիխային» խաղալիքի պես, շպրտում, գլորում, ձգում էր։ Ջուրը նկուղում մինչև վեց վոտնաչափ բարձրացավ։ Նավը աստիճանաբար ընկղմվում էր։

Սակույքները քշվեցին դեպ փոթորկի առաջին օրը։ Նավաբեկությունը, թվում էր, թե անխուսափելի յեր, յերբ հանկարծ հունիսի 27-ի գիշերը անսպասելի կերպով յերևաց Ավստրալիայի արևելյան ափը։ Ծուռ, չափազանց չուտ «Երկաթանիխան» քշվեց հենց ափի մոտ։ Սարսափելի ճայթյուն լսվեց։ Այդ րոպեյին ալիքը սահմանակամանից քշեց Այրտոնին և ձգեց նրան առափնյա փրփրադեզ ալեկոծության վրա։ Ցերեկ գիտակցության յեկավ, նա արդեն գերի յեր վայրենիների մոտ, վորոնք մայր ցամաքի խորքը տարան նրան։ Այն ժամանակվանից նա վոչինչ չի լսել «Երկաթանիխայի» մասին և միանգամայն համոզված է յեղել, վոր նավը և նրա ամբողջ անձնակազմը կորել են Տուֆոլդա ծովախորշի ահեղի խութերի վրա։ Սրանով վերջացավ Այրտոնի պատմության առաջին մասը, վորը կապված էր նավապետ Գրանտի հետ։

Ունկնդիրների վշտամորմոք բացականչությունները շարունակ ընդհատում էյին պատմողին։ Նույնիսկ մայորի մաքուրն էլ չէր անցնում կասկածել նրա ճշմարտախոսության վրա։

Պատմության` յերկրորդ մասը — հենց էր, Այրտոնի դըժբախտության վերաբերյալ — ավելի՛ դիպչում ունկնդիրների համար ավելի մեծ հետաքրքրություն էր ներկայացնում։ Իսկապես,

* Սուեզի ջրանցքը կառուցողը։

կասկածելու տեղիք չկար նրանում, վոր բացի Այրտոնից, խոր-տակումից հետո ազատվել են նաև նավապետ Գրանտն ու նրա նավաստիներից յերկուսը։ Այդ մասին վկայում եյին գտնված փաստաթղթերը։ Հետևապես, Այրտոնի պատմածով կարելի յեր պատկերացնել մնացած նավաստիների հետագա վիճակի մասին։ Բոլորն էլ անհամբերությամբ խնդրում եյին «Բրիտանիայի» բոցմանին շարունակել իր պատմությունը։ Նա շատ կարճ և պարզ դուրս յեկավ։

Տեղացիները գերի նավաստուն տարել են յերկրի խորքը, այն տեղերը, վորոնք վառոգվում են Դառլինգ գետով, այսինքն յերեսունյոթերորդ զուգահեռից մոտավորապես չորսհարյուր մղոն դեպի հյուսիս։ Կյանքը գերության մեջ ծանր եր, բայց վոչ թե նրա համար, վոր նրա հետ վատ եյին վարվում, այլ նրա համար, վոր տեղացիներն իրենք խղճուկ գոյություն եյին քարշ տալիս։ Յերկու տարի տևեց այդ տանջալի գերությունը։ Սակայն ազատության հույսը յերբեք չեր թողնում Այրտոնին։ Նա սպասում եր փախուստի ամենաչնչին հնարավորությանը, թեև գիտեր, վոր փախուստը նրան դեմ առ դեմ կկանգնեցնի անհամար վտանգների առաջ։

1864 թվականի հոկտեմբերյան մի մութ գիշեր վերջապես հարմար մոմենտը հասավ։ Խաբելով վայրենիների զգոնությունը, նա փախավ և թաքնվեց կուսական անտառի թավուտում։ Մի ամսից ավել նա սնվում եր միայն արմատիքներով, թափառելով անծանոթ անտառներով, ամայի անապատներով։ Հոգնածությունից ուժասպառ, տառապելով անձրևի պակասությունից, հաճախ հուսահատության մեջ ընկնելով, նա այնուամենայնիվ գնում եր ու գնում, ցերեկը կողմնորոշվելով արևով, գիշերը — աստղերով։ Անդադար թափառում եր նա գետերի, ճահիճների, լեռների վրա և մայր ցամաքի այդ անմարդաբնակ մասի անտառներով, վորոնք, նրանից առաջ այցելում եյին միայն փոքրաթիվ քանակությամբ համարձակ հետազոտողները։ Վերջապես բոլորովին ուժասպառ, մեռնելու դուռը հասած, և վայրենացած, նա հասավ մինչև Պադդի Օ'Մուրի հյուրասեր տանը։ Բարի ֆերմերն ընդունեց նրան աշխատանքի, և շուտով Այրտոնը ֆերմայում տանու մարդ դարձավ։

— Յեթե Այրտոնն ինձ գովաբանում է, յես էլ պատրաստ եմ հատուցել նրան ըստ արժանվույն, — ասաց իռլանդացի գա-

ղութարարը, յերբ նա վերջացրեց իր պատմությունը. — Այր-տանը խելոք, համարձակ և հրաշալի աշխատավոր է։ Պադդի Օ'Մուրի տունն այնքան յերկար նրանը կլինի, վորքան նա ինքն այդ կկամենա։

Այրտանը գլխի շարժումով շնորհակալություն հայտնեց իռ-լանդացուն և լռեց, սպասելով նոր հարցերի, թեև կարծում եր, վոր ամբողջովին արդեն բավարարեց ճանապարհորդների իրա-վացի հետաքրքրությունը։ Ել ի՞նչ կարող եր ավելացնել նա իր պատմությանը։ Գլենարվանն ուզում եր արդեն սկսել Այրտա-նից ստացած տեղեկությունների վրա հիմնված նոր վորոնում-ների պլանի քննարկությունը, յերբ հանկարծ մայորը հետևյալ հարցով դիմեց նավաստուն.

— Դուք ասում եք, վոր ծառայե՞լ եք «Բրիտանիայի» վրա վորպես բոցման։

— Այո՛, — պատասխանեց Այրտանը։

Յեվ, գլխի ընկնելով, վոր մայորի հարցը կարող եր թե-լադրված լինել անվստահությունից կամ կասկածից, նա ավե-լացրեց.

— Անենք, խորտակումից հետո ինձ մոտ մնացել է նավա-տիրական գրքույկը։

Նա շտապ դուրս յեկավ սենյակից, վորպեսզի բերի այդ պաշտոնական փաստաթուղթը։ Նրա բացակայությունը մի քա-ռորդից ավել չտևեց, բայց Պադդի Օ'Մուրն հաջողեց այդ ժա-մանակամիջոցում Գլենարվանին ասել.

— Այրտանն ազնիվ մարդ է, սեր։ Այն յերկու ամսում, ինչ վոր նա ծառայում է ինձ մոտ, չի պատահել, վոր յես վորևեից բանում նախատեմ նրան։ Յես առաջ ել եյի լսել նրանից խոր-տակման և իր գերության պատմությունը։ Նա ուղիղ և ձեր ու-շադրությանն արժանի մարդ է։

Գլենարվանը հենց ուզեց պատասխանել իռլանդացուն, վոր ինքը չի ել կասկածել Այրտանի ճշմարտախոսության վրա, յերբ վերջինս վերադարձավ, ձեռքին բռնած իր նավաստիական գըր-քույկը։ Նրա վերջին եջում ստորագրել եր «Բրիտանիայի» տերը և նավապետ Գրանտը, վորի ստորագրությունը Մերին իսկույն ճանաչեց։ Գրության մեջ ասված եր, վոր առաջին կար-գի նավաստի Թոմ Այրտանն ընդունված է վորպես բոցման յե-



Ուժասպառ և վայրենացած, նա հասավ Ռեմուրի պարտեզը։

բեց կապտանի «Բրիտանիա» նավի վրա, Գլազգոյից։ Այսպիսով կասկածանքի վերջին նշույլն Այրտոնի վերաբերյալ ցրվեց։ Իսկապես, անմիտ բան կլիներ կասկածել այդ մարդու վրա նրանում, որ դա ուրիշի դերում է, այն բոլոր մանրամասնություններից հետո, որոնք նա պատմեց «Բրիտանիայի» և նրա նավապետի մասին։

— Այժմ, բարեկամներս, — ասաց Գլենարվանը, — ես հրավիրում եմ ձեզ բոլորիդ մասնակցել մեր արշավի նոր պլանի մշակմանը։ Ձեր կարծիքը, Այրտոն, առանձնապես արժեքավոր կլինի մեզ համար, և ես շատ շնորհակալ կլինեմ, եթե դուք արտահայտեք այն։

Այրտոնը մի քիչ մտածեց և ասաց.

— Շնորհակալ եմ ձեզնից վստահության համար, սըր։ Կաշխատեմ արդարացնել այն։ Ես մի քիչ ճանաչում եմ այս երկիրը, նրա բնակիչների բարքերն ու սովորությունները։ Եթե ես կարող եմ օգտակար լինել ձեզ...

— Համոզված եմ, — ընդհատեց նրան Գլենարվանը։

— Ես հիմա չեմ կասկածում, որ նավապետ Գրանտը և երկու նավաստի ազատվել են խորտակումից, — շարունակեց Այրտոնը։ — Բայց քանի որ նրանք չեն հասել անգլիական գաղութներին և ընդհանրապես կորել են անհետ, ես համոզված եմ, որ նրանք նույն վիճակին են արժանացել, ինչ որ ես, այսինքն, որ նրանք գերի են ընկել տեղացիների մոտ։

— Դուք իմ խոսքերն եք կրկնում, Այրտոն, — ասաց Պագանելը։ — Իհարկե, որ խորտակումից ազատվածները գերի են ընկել վայրենիների ձեռքը։ Նրանք նախատեսել են այդ և գրել են փաստաթղթում։ Այդտեղ, այդ չի՞ նշանակում, որ նրանց, ինչպես և ձեզ, տեղացիները տարել են երեսունյոթերորդ զուգահեռից դեպի հյուսիս։

— Դա միանգամայն հնարավոր է, — պատասխանեց Այրտոնը։ — Անհաշտ ցեղերը խուսափում են երևալ անգլիական գաղութների մոտերքում։

— Այդ բանը կբարդացնի մեր որոնումները, — վշտացած նկատեց Գլենարվանը։ — Մենք ինչպե՞ս կարող ենք գտնել երեք գերիների հետքերը, չիմանալով, թե ահագին մայր ցամաքի որ տեղն են տարել նրանց։

Սենյակում խորին լռություն տիրեց։ Ցելենան քննական հայացքով դիտում էր իր ուղեկիցների դեմքերը, բայց պատասխան չէր գտնում նրանց վրա։ Նույնիսկ Պագանելը, հակառակ իր սովորության, լռում էր։ Այս դեպքում նրա սուր միտքն էլ էր անզոր։ Ջոն Մանգլսը մեծ քայլերով ման էր գալիս սենյակում, կարծես թե այդ իր նավի նավապետական կամրջակն էր։

— Իսկ դուք, Այրտոն,— դիմեց վերջապես Ցելենան նավաստուն,— ի՞նչ խորհուրդ կտաք։

— Ես, տիկին,— արագ պատասխանեց նա,— կվերադառնայի «Դունկանի» վրա և ուղիղ Էդենի ծոցը կգնայի, իսկ այնտեղ կգործեի նայած հանգամանքներին և հայտնաբերած հետքերին։

— Ճիշտ է,— ասաց Գլենարվանը։— Բայց դրա համար պետք է սպասել, մինչև «Դունկանը» դուրս գա նորոգումից։

— Մի՞թե դուք վնաս եք ունեցել,— հարցրեց Այրտոնը։

— Այո՛,— պատասխանեց Ջոն Մանգլսը։

— Լո՞ւրջ վնաս է։

— Առանձնապես — ոչ։ Բայց նրա ուղղելն այնպիսի հարմարություններ է պահանջում, որոնք չկան զբոսանավի վրա։ Պտուտակի թիակներից մեկը ծռվել է և միայն Մելբուռնում կարող են նորոգել այն։

— Իսկ դուք չե՞ք կարող առագաստներով լողալ։

— Կարող ենք, բայց եթե քամին «Դունկանին» հակառակ փչի, շատ ժամանակ կպահանջվի Տուֆոլդա հրվանդանին հասնելու համար։ Բացի դրանից, այսպես թե այնպես, ստիպված ենք Մելբուռն մտնել։

— «Դունկանը» թող գնա Մելբուռն,— բացականչեց Պագանելը,— իսկ մենք առանց նրան կուղևորվենք դեպի Տուֆոլդա հրվանդանը։

— Ինչպե՞ս,— հարցրեց Ջոն Մանգլսը։

— Մենք Ավստրալիան կկտրենք հենց նույնպես, ինչպես որ-դեն կտրեցինք Ամերիկան, գնալով յերեսունյոթերորդ զուգահեռի երկարությամբ։

— Հապա «Դո՞ւնկանը»,— հարցրեց Այրտոնը, ձայնին ինչ վոր տարօրինակ առոգանությամբ։

— «Դունկանը» կգա մեզ կամ մենք կգնանք նրան, նայած հանգամանքներին։ Եթե մենք նավապետ Գրանտին փնտրելու

ցինք մայր ցամաքի խորքում, մենք միասին կուղևորվենք Մելբուրն։ Յեթե, ընդհակառակը, մենք ստիպված լինենք յերկարացնել վորոնումները մինչև հենց արևելյան յեզերքը, «Դունկանը» կգա այնտեղ մեզ դիմավորելու։ Այս պլանի դեմ ո՞վ առարկություններ ունի։ Համաձայն եք, մայո՞ր։

— Վո՛չ,— պատասխանեց Մակ-Նաբսը,— յեթե միայն անցումը հնարավոր է ավստրալիական մայր ցամաքի վրայով։

— Այնքան է հնարավոր,— ասաց Պագանելը,— վոր յես առկյա Ցելենային և օրիորդ Մերիին առաջարկում եմ ուղեկցել մեզ։

— Դուք լո՞ւրջ եք ասում, Պագանել,— հարցրեց Գլենարվանը։

— Ավելի քան լուրջ, թանկագին սեր։ Այդ ընդամենը յերկհարյուր հիսուն մղոն է, վոչ ավել։ Որական տասներկու մղոն անելով, մենք կվերջացնենք այն մի ամսում, իսկ և իսկ «Դունկանի» նորոգումը վերջանալու րոպեյին։ Այ, յեթե կարելի չլիներ կտրել ավստրալիական մայր ցամաքը, ավելի ցածր լայնության տակ, յեթե ստիպված լինեյինք անցնել այն ամենալայն տեղով, ահագին անապատների միջով, վորտեղ ամառն անտանելի տապն է թագավորում, մի խոսքով, յեթե խոսքը մի այնպիսի ճանապարհորդության մասին լիներ, վորի առաջ մինչև հիմա նահանջել են ամենահամարձակ հետազոտողները, այն ժամանակ յես չեյի անի այս առաջարկությունը։ Բայց յերեսունյոթերորդ զուգահեռը կտրում է Վիկտորիա գավառը, վորը գաղութացված է անգլիացիների կողմից, ունի ճանապարհներ և նույնիսկ յերկաթուղային ճանապարհներ և բնակեցված է, համարյա թե, իր բոլոր մասերով։ Այդ ճանապարհորդությունը կարելի յե անել սայլակով։ Նա ավելի վտանգավոր չե՝ քան Լոնդոնից Եդինբուրգ գնալը։ Ուրիշ վոչինչ։

— Իսկ վայրենի գազաննե՞րը,— հարցրեց Գլենարվանը, վոր ցանկանում եր հաշվի առնել իրեն այդ անցումի բոլոր պայմանների մասին։

— Ավստրալիայում գիշատիչներ չկան։

— Իսկ վայրենինե՞րը։

— Այդ լայնության տակ վայրենիներ չկան։ Իսկ յեթե նրանք պատահել են, նրանք արյունարբու նոր զելանդացիներ չեն։

— Իսկ փախստական տաժանակիրնե՞րը։

— Ավստրալիայի հարավային գավառներում փախստական տաժանակիրներ չկան—նրանք իրենց համար ապաստան են գըտնում արևելյան ափին։ Վիկտորիա գավառում չափազանց խիստ օրենք է գործում, վորն ուղղված է վոչ միայն փախստական, այլև պատժի ժամկետը լրացրած տաժանակիրների դեմ։ Դեռ ավելին, գավառի կառավարությունն այս տարի արտոնեց և Պենինսուլյարյան նավային ընկերությանը զրկել նրան նավակից, յեթե այդ ընկերության նավերը շարունակեն ատոնց բառնալ արևմտյան Ավստրալիայի նավահանգիստներում, վորտեղ տաժանակիրներին չեն հանդուրժում։ Մի՞թե դուք չգիտեք այդ, դուք անգլիացի յեք։

— Ամենից առաջ յես անգլիացի չեմ, այլ շոտլանդացի,—առարկեց Գլենարվանը։

— Պարոն Պագանելը միանգամայն իրավացի յե,—նկատեց Պադդի Օ՛Մուրը.—Վոչ միայն Վիկտորիա գավառում, այլև, ամբողջ Հարավային Ավստրալիայում, Կվինսլենդում և նույնիսկ Տասմանիայում տաժանակիրների դեմ բացառիկ օրենքներ են գործում։ Այն ժամանակվանից, ինչ յես ապրում եմ այս ֆերմայում, յես վոչ մի տաժանակրի մասին չեմ լսել։

— Իսկ յես վոչ մեկին չեմ պատահել,—ավելացրեց Այրտոնը։

— Տեսնո՞ւմ եք ահա, բարեկամներս,—հաղթականորեն վերջացրեց Պագանելը,—վայրենիները չկան քեզ, գիշատիչ գազաններ թունավոր չկան, տաժանակիրներ չկան։ Արդյոք, յերկրագնդում շա՞տ յերկրներ կարող են պարծենալ այսպիսի անվտանգությամբ։ Յեվ այդպես վճռվա՞ծ է։

— Ի՞նչպես է ձեր կարծիքը, Յելենա,—հարցրեց Գլենարվանը։

— Մեր ընդհանուր կարծիքը,— պատասխանեց յերիտասարդ կինը, հայացք ձգելով իր ուղեկիցների վրա,—ճանապարհ ընկնել, ճանապարհ ընկնել։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

# ՄԵԿՆՈՒՄ

Մի վայրկյան վարանումից ընդունելուց հետո, Գլենարվանը ամբողջապես հենց այնտեղ, առանց ժամանակ կորցնելու, հրատարակում էր այն։ Հենց վոր Պագանելի առաջարկին ընդունվելից, նա իսկույն ևեթ հրամայեց ամենակարճ ժամկետում բոլոր անհրաժեշտ պատրաստությունները տեսնել և մեկնումը նշանակեց վաղը չէ մյուս օրը, դեկտեմբերի 22-ին։

Ի՞նչ կարելի էր սպասել այդ ճանապարհորդությունից։ Քանի վոր Հարրի Գրանտի ավստրալիական մայր ցամաքում գտնվելն անհերքելի փաստ էր դարձել, արշավախումբը կարող էր հույս դնել վորոնումների կատարյալ հաջողության վրա, կամ ծայրահեղ դեպքում, այսուհետ տեղեկություններ ստանալ խորտակման ազատվածների գտնված տեղի մասին։ Վոչ վոք հույս չուներ գտնել նավապետ Գրանտին հենց յերեսունյոթերորդ զուգահեռականի վրա, վորի յերկարությամբ էր հաշված արշավախմբի ուղեգծությունը, բայց կարելի էր հուսալ հանդիպելու նրա վրա վորևէ հետքերի, և համենայն դեպս նա այդտեղ բերել էր ուղիղ հենց «Բրիտանիայի» խորտակման տեղը։ Իսկ գլխավորը դա յեր։

Բացի դրանից Այրտոնը համաձայնեց մասնակցել արշավին, ծառայել նրան վորպես ուղեցույց, Վիկտորիա գավառում։ Դրա մեջ էլ նույնպես հաջողության գրավական կար։

Հարրի Գրանտի նախկին ուղեկցի մասնակցությունը արշավի համար շահավետ ազդակ համարելով, Գլենարվանը հարցրեց Պադդի Օ'Մուրին, արդյոք, թույլ չի տա իրենց աշխատողին առաջարկություն անել Այրտոնին։

Իռլանդացի գաղութականը համաձայնեց, թեև նա չէր էլ ուզում բաժանվել հրաշալի աշխատավորից։

Այն ժամանակ Գլենարվանը հարցրեց — Այրտոն, դուք մեզ հետ կգնա՞ք, արդյոք, վորոնելու ձեր նախկին նավապետին։

Այրտոնը միանգամից չպատասխանեց այդ հարցին։ Նա կարծես թե տատանվում էր վորոշ ժամանակ, ինչ վոր բանի իրեն խորհելով։ Վերջապես նա ասաց — Լավ, սըր։ Յես կգնամ ձեզ հետ։ Ինձ յեթե չհաջողվի էլ նավապետ Գրանտի հետքերի վրա տանել ձեզ, համենայն դեպս յես կկարողանամ ցույց տալ ձեզ նրա նավի խորտակման տեղը։



Ուղեւորները վերադարձան Հէտմէկանին վրայ։

— Շնորհակալություն, Այրտոն,— պատասխանեց Գլենար-վանը։

— Թույլ տվեք ձեզ մի հարց տալ, սըր։

— Խնդրեմ, իմ բարեկամ։

— Դուք վո՞րտեղ պիտի հանդիպեք «Դունկանի» հետ։

— Եթե մենք նավապետ Գրանտին գտնենք Ավստրալիայի ներքին գավառներում, այն ժամանակ Մելբուրնում։ Իսկ հակառակ դեպքում—արևելյան ափերին, Տուֆոլդյա ծովախորշի մոտ։

— Այդ դեպքում, «Դունկանի» նավապետը...

— Կսպասի իմ կարգադրություններին Մելբուրնում։

— Լավ, սըր, կարող եք վստահել ինձ։

— Ես հենց ձեզ էլ վստահում եմ, Այրտոն,— պատասխանեց Գլենարվանը։

«Դունկանի» ուղևորները սրտանց շնորհակալություն հայտնեցին «Բրիտանիայի» բոցմանին։ Նրա նախկին նավապետի վորդիները փաղաքշանքներ և ուշադրության նշաններ շնորհեցին նրան։ Բոլորն էլ բախտավոր էին, վոր նա համաձայնեց ուղեկցել իրենց, յեթե չհաշվենք իռլանդացուն, վորը կորցնում էր հավատարիմ և ճարպիկ օգնականին։ Բայց Պադդի Օ'Մուրը հասկանում էր, թե ինչպիսի նշանակություն ունի Գլենարվանի արշավախմբի համար Այրտոնի մասնակցությունը, և սրտնեղվելով, հաշտվեց։

Գլենարվանը իռլանդացուն խնդրեց ծախել իրեն տեղափոխության միջոցներ՝ Ավստրալիայի վրայով անցնելու համար, և արագ գործարք կնքելով, «Դունկանի» ուղևորները յետ վերադարձան գյուղատնակը, առաջուց պայմանավորվելով Այրտոնի հետ տեսակցության տեղի մասին։

Վերադարձի ճանապարհին ուրախ էին։ Այդ մի օրում ամեն ինչ փոխվեց։ Համարձակ ճանապարհորդներն այլևս խարխափելով չպիտի քայլեին գծային յերևակայական զուգահեռի յերկարությամբ։ Այժմ ստուգապես հայտնի դարձավ, վոր Հարրի Գրանտը գտնվում է Ավստրալիայում, և բոլոր սրտերը լցվել էին այն ուրախությամբ, վորը տանջալի կասկածների յերկար ժամանակամիջոցից հետո հանկարծակի անցումն է տալիս դեպի համոզվածությունը։

Եթե հանգամանքները հաջող դասավորվեն, վոչ ավելի ուշ,

քան յերկու ամսից հետո, «Դունկանը» Շոտլանդիա կհասցնի նավապետ Գրանտին։

Երբ Ջոն Մանգլսը պաշտպանեց Ավստրալիայի ցամաքով անցնելու նախագիծը, նա չէր կասկածում, վոր այս անգամ ինքն էլ կմասնակցի արշավին։ Նա Գլենարվանին ասաց իր հավատարմության մասին Ելենայի և նրա նկատմամբ, իր ծառայությունների անհրաժեշտության մասին, վորպես կարավանի կազմակերպիչ և իր միանգամայն անպատասխանատվության մասին «Դունկանի» նավերգում մնալու համար, նորոգման ժամանակ։ Մի խոսքով նա հազար առարկություն բերեց, բացի գլխավորից, բայց, բարեբախտաբար, Գլենարվանն առանց նրան էլ գիտեր այդ առարկությունը։

— Մի հարց տամ, Ջոն,—պատասխանեց նա նրան։—Արդյոք, դուք լիովին հավատու՞մ եք ձեր ոգնականին։

— Միանգամայն համոզված եմ, սեր,—ասաց Ջոնը։—Թոմ Աուստինը—հին ծովագնաց է։ Նա «Դունկանին» կհասցնի մինչև նշանակված տեղը, կվերանորոգի այն և կբերի մեզ հետ տեսակցության տեղը, ճիշտ նշանակված ժամկետին։ Թոմը—իր պարտականության և կարգապահության մարդն է։ Նա յերբեք չի համարձակվի չկատարել հրամանը կամ թե յերկարաձգել նրա կատարման ժամկետը։ Դուք կարող եք նրա վրա հույս դնել այնպես, ինչպես և ինձ, սեր։

— Լավ, Ջոն,—պատասխանեց Գլենարվանը,—դուք կարող եք ուղեկցել մեզ։ Հարկավոր է, վոր դուք ներկա լինեք այն րոպեյին,—ավելացրեց նա ժպտալով,—յերբ մենք կգտնենք Մերի Գրանտի հորը…

— Օ, սեր…—կմկմաց Ջոն Մանգլսը։

Նա այլևս վոչինչ չկարողացավ արտասանել և շնորհակալությամբ սեղմեց Գլենարվանի մեկնած ձեռքը։

Հետևյալ որը Ջոն Մանգլսը վերադարձավ իռլանդացու ագարակը, պարենի պաշարներ բերող նավային հյուսնի և նավաստիների ուղեկցությամբ։ Պադդի Օ'Մուրի հետ միասին նա պետք է զբաղվեր կարավանի սարքավորումով։

Իռլանդացու ամբողջ ընտանիքն աշխատում էր նրան, վորպեսզի ոգնի այդ գործում։ Այրտոնը իր կողմից մասնակցում էր աշխատանքին և, յելնելով անձնական փորձից, շատ ոգտակար խորհուրդներ տվեց։

Պաղջին և նա համաձայն էյին այն բանում, վոր ճանապարհորդուհիները Ֆուրգոնով պիտի գնան ամբողջ ճանապարհը, իսկ ճանապարհորդները ձիով։

Ֆուրգոնն իրենից ներկայացնում էր բրեզենտի ծածկոցով մի սայլակ, քսան վոտնաչափի յերկարությամբ։ Նրա չորս անիվները վոչ մասեր, վոչ ողեր և վոչ էլ նույնիսկ յերկաթե կապեր չունեյին։ Դրանք տախտակի հասարակ սկավառակներ էյին։ Ամենանախապատմական հարմարությամբ Ֆուրգոնի հատակին ամրացրած առաջին առանցքը թեք պտույտներ չէր կարողանում անել։ Այդ առանցքից դուրս յեկող ձողը յերեսունհինգ վոտնաչափի յերկարություն ուներ։ Նրան յերեք զույգ յեզներ կարելի յեր լծել։ Մեծ հմտություն էր պահանջվում, այդ յերկար, նեղ, անկայուն Ֆուրգոնը միայն մի սրածայր փայտի ոգնությամբ կառավարելու համար։ Բայց Այրտոնն այդ բանը սովորել էր ագարակում, և Պաղջի Ո'Մուրը յերաշխավորեց, վոր նա հրաշալի կերպով կկատարի Ֆուրգոնի կառավարի պարտականությունները։

Թեթևություն չունեցող Ֆուրգոնը դժվար է դյուրակեցիկ կառք անվանել։ Բայց ուրիշ ընտրություն չկար։ Սակայն, դրա փոխարեն, Ջոն Մանգլը ավելի քան լավ սարքավորեց այն։ Ամենից առաջ նա պատվիրեց յերկու մասի բաժանել Ֆուրգոնը, տախտակե միջնորմով։ Հետևի մասում պիտի տեղավորվեյին պարենի պաշարները, բաղաժը և պարոն Ոլբինեթի արշավանքի խոհանոցը։ Առաջին մասն ամբողջովին հատկացվում էր ուղևորուհիներին։ Նավային հյուսնի հմուտ ձեռքն այդ բաժանմունքը խուցն մի գողտրիկ սենյակ դարձրեց, հատակով, վոր ծածկված էր հաստ գորգով, սուսլեկալի փոքրիկ սեղանով և յերկու մահճակալով (փայտե թախտով) Ելենա Գլենարվանի և Մերի Գրանտի համար։ Կաշվե վարագույրը փոխարինում էր դռան պատին և բավականաչափ պաշտպանություն էր ներկայացնում քամուց և գիշերվա ցողությունից։ Անհրաժեշտության դեպքում Ֆուրգոնը կարող էր տեղավորել և անձրևից պաշտպանել արշավախմբի ամբողջ տղամարդկանց կազմը, իսկ լավ յեղանակին տղամարդիկ պետք է քնեյին քաթանի ընդարձակ վրանում։ Ջոն Մանգլը հնարը գտավ Ֆուրգոնի կանանց բաժանմունքի փոքրիկ տարածության վրա տեղավորել այն ամենը, ինչ վոր կարող էր պետք գալ ուղևորուհիներին ճանապարհին։ Ելենան և Մերին այդ



Ճանապարհորդները սկսեցին պատրաստել փուրգոնը
ուղեվորվելու համար։

շարժական սենյակում նույնպիսի հարմարություն պիտի գտնեին, ինչպես և «Դունկանի» վրա։

Տղամարդկանց ճանապարհի պատրաստությունն ավելի համառոտ էր։ Ավստրալիական յոթ ամրակազմ ձի ճարեցին Գլենարվանի, Ռոբերտի, Պագանելի, Ջոն Մանգլսի, Մակ-Նաբսի, Վիլսոնի և Մյուլրեդիի համար, որոնք պիտի ուղեկցեին Գլենարվանին այդ արշավի ժամանակ։ Այրտոնը տեղավորվելով ֆուրգոնի առջևի մասում, իսկ պարոն Օլբինեթը, որ ձիերից հեծյալ-թյան յերկրպագու չէր յեղել, հայտարարեց, որ նա խնդրում է տեղավորվել ֆուրգոնի ետևի բաժանմունքում։

Պադդի Օ'Մուրի վաճառած ցուլերն ու ձիերը արածում էին մարգագետնում, հենց տան կողքին, և նրանց կարելի էր հավաքել ուզած րոպեյին։

Բոլոր կարգադրություններն անելով և համաձայնվելով, որ ճիշտին հավաքվեն նրանք, Ջոն Մանգլսը Գլենարվանին [illegible]լության վերադառնալ ցանկացող խոստանալով ընտանիքի հետ վերադառնալով «Դունկանի» վրա։ Այրտոնը թույլտվություն խնդրեց միանալ նրանց, և կեսօրվա ժամի մոտ չորսին Ջոնը և իր ուղեկիցները սանդուղքով բարձրացան «Դունկանի» վրա։

Այնտեղ ողջույնով ընդունեցին նրանց։ Գլենարվանը չցանկանալով հյուրընկալության պարտքի տակ մնալ, բոլորին ճաշի հրավիրեց զբոսանավի վրա։ Հյուրերը սիրով ընդունեցին այդ հրավերը։ Պադդի Օ'Մուրը հիացել էր։ Նավասենյակների, սալոնների կահավորությունը, գորգերը, նկարները, կարմիր փայտը,— այդ բոլորը հիացմունքի բացականչություններ էին կորզում նրանից։ Ընդհակառակը, Այրտոնը շատ զուսպ էր և չէր հիանում, իր կարծիքով, ուղևորների բնակարանների այդ ավելորդ շքեղությունից։

Բայց դրա փոխարեն «Բրիտանիայի» նախկին բոցմանը, զբոսանավն ամբողջ տեսած, հիմնավոր զննում կատարեց, լինելով նաև նավախցիկի խորքում, և՛ պատուստակային կարգավորանքում, և՛ մեքենայական բաժանմունքում։ Այնտեղ նա տեղեկացավ մեքենայի զորության, վառելանյութի քանակության, նրա հզորության մասին։ Հետո նա նորից դիտեց ամբարները, պահեստանոցը, նավասենյակը։ Նա առանձնապես հետաքրքրվեց զենքի պահեստով և «Դունկանի» քթի վրա դրած թնդանոթով։ Գլենարվանը համոզվեց, որ Այրտոնն իսկապես ծովային գործի գիտակ

է։ Այդ ժամին կարելի չէր դառնալ թեկուզ հենց նրա տված հար-ցերով։ Վերջապես Այրտոնը, դիտումը վերջացրեց կայմերի հարդարանքի և նավասարքի ստուգումով։

— Գեղեցիկ զբոսանավ է,—ասաց նա իբրև եզրակացու-թյուն։

— Յեվ հրաշալի ընթացող,—պատասխանեց Գլենարվանը։

— Ի՞նչ տարողություն ունի նա։

— Յերկու հարյուր տասը տոնն։

— Կարծում եմ, վոր չեմ սխալվի, յեթե ասեմ, վոր «Դուն-կանը» լողալիս գնալով պիտի տասնհինգ հանգույց անի,—ասաց Այրտոնը։

— Հաշվեք տասնյոթ,—ձայնեց Ջոն Մանգլսը։—Այն ժամա-նակ սխալ չի լինի։

— Տասնյո՞թ,—բացականչեց նախկին քոդմանը։—Բայց այդ դեպքում վոչ մի ռազմանավ չի կարող հասնել «Դունկանին» հե-տևից։

— Իհարկե,—պատասխանեց Ջոն Մանգլսը,—«Դունկանը» իս-կական մրցման զբոսանավ է։ Յեվ յես վոչ մի նավ չգիտեմ, վո-րը կարողանար մրցել նրա հետ արագընթացության մեջ։

— Նույնիսկ առագաստներո՞վ,—հարցրեց Այրտոնը։

— Նույնիսկ առագաստներով։

— Այդ դեպքում ընդունեցեք իմ շնորհավորանքները, սըր, և դուք, նավապետ,—դա նավերից բան հասկացող ծովայինի շնորհավորանք է։

— Շնորհակալություն, Այրտոն,—պատասխանեց Գլենարվա-նը։—Մնացե՞ք մեզ հետ, և այս նավը ձերը կդառնա։

— Յես այդ մասին կմտածեմ, սըր,—պարզ պատասխանեց քոդմանը։

Այդ րոպեին պարոն Օլբինեթը զեկուցեց, վոր ճաշը մա-տուցված է։ Գլենարվանը հրավիրեց հյուրերին նավադահլիճ գնալ։

— Այրտոնը խելոք մարդ է,—կամաց ասաց Պագանելը մայո-րին։

— Չափազանց խելոք,—փնթփնթաց Մակ-Նաբսը, վորին, միջանկյալ, առանց վորևէ հիմունքի՝ դուր չեկան «Բրիտանիա-յի» նախկին քոդմանի վարմունքն ու խոսքերը։

Ճաշի ընթացքում Այրտոնը հետաքրքիր մանրամասնություն-

Նեք էր պատմում ավստրալիական մայր ցամաքի մասին, որը նա հրաշալի գիտեր։ Միջանկյալ նա անդրադարձավ, թե քանի նավաստի է վերցնում իր հետ Գլենարվանն արշավի համար, և, իմանալով, որ ընդամենը յոթն է հոգի, շատ զարմացավ։ Նա Գլենարվանին խորհուրդ տվեց արշավախմբի կազմի մեջ էլի մի քանի մարդ մտցնել լավ նավաստիներից։ Այդ բանը նա շատ առաջ-առաջ էր պնդում, որը պետք է և որ մայորի ուղեկից ջնջեր ամեն մի վտանգ։

— Բայց չէ՞ որ Հարավային Ավստրալիայով ճանապարհորդելը բոլորովին անվտանգ է,— առարկեց Գլենարվանը։

— Միանգամայն անվտանգ,— շտապեց հաստատել Այրտոնը։

— Այդ դեպքում որքան հնարավոր է շատ մարդ թողնենք «Դունկանի» վրա։ Նրանք պետք կգան թե առագաստով լողալիս և թե նորոգման ժամանակ։ Ամենից առաջ մեզ համար կարևոր է ապահովել «Դունկանի» գալու հնարավորությունը ժամադրության տեղը, ուղիղ նշանակված ժամկետին։ Այդ պատճառով նրա համար թողնենք ամբողջ նավակազմը։

Այս պատճառաբանությունը կարծես թե համոզեց Այրտոնին, և նա դադարեց վիճելուց։

Երեկոյան իռլանդացիները հրաժեշտ տվին շոտլանդացիներին։ Այրտոնը և Օ'Մուրի ընտանիքը իսկույն վերադարձան։ Ֆուրգոնը, ձիերը և եզները պատրաստ սպասում էին ճանապարհորդելու արշալույսին։ Ուղևորումը նշանակված էր առավոտյան ժամի ութին։

Ելենան և Մերի Գրանտը հավաքեցին ճանապարհի բաղադրը։ Կանանց այդ վերջին պատրաստությունները երկար չէին և համենայն դեպս արդեն ավելի պակաս բարդ էին, քան թե Ժակ Պագանելի պատրաստությունները, որը գիշերվա մեծ մասը քարշ եկավ իր հեռադիտակի հետ, քանդելով, մաքրելով և նորից իրար հագցնելով նրա մասերը։ Այդ պատճառով գիտնականը դեռ քնած էր, երբ բոլորն արդեն ոտքի վրա էին, և մայորն ստիպված էր արթնացնել նրան։

Արշավախմբի բագաժն արդեն Ջոն Մանգլսը առաջուց էր ուղարկել։ Մակույկը ճանապարհորդներին սպասում էր ծանծաղուտի մոտ և նրանք շտապեցին տեղ բռնել նրա մեջ։ Երիտասարդ նավապետն արդեն վերջին կարգադրություններն էր տվել Թոմ Օստինին։



Գլենարվանը Մէկնուէլի ագարակը տեսաւ։

Հրաժեշտին՝ նա մի անգամ էլ առաջարկեց նրան տպավել Գլենարվանի գրավոր հրամանին՝ Մելբուռնում և հրաման ստանալուն պես ամենաստույգ կերպով կատարել այն, ինչ տեսակ էլ վոր նա լինի։

Հին ծովագնացը հավատացրեց Ջոն Մանգլսին, վոր նա կարող է հույս դնել իր վրա։ Ամբողջ նավախմբի անունից նա մեկնողներին բարի ճանապարհ մաղթեց։ Վորոտընդոստ հուռա-յի գոչով մակույկը հեռացավ «Դունկանի» նավեզրից։

Տաս րոպեյում նա ափ հասավ։ Մի տասնհինգ րոպեյից հետո էլ ճանապարհորդները մտան Պադդի Ո՛Մուրի ագարակի դարպասները։

Ամեն բան պատրաստ էր մեկնումի համար։ Յելենան հիացած էր Ֆուրգոնի մեջի սենյակի կառուցվածքից, և հենց ինքը, ահագին սայլը իր փայլուն միապաղաղ անիվներով և ծանրաքարշ ատամնաքներով շատ դուր յեկավ նրան։ Լծած եզը կանգնած, հանգիստ վորոճացող վեց յեզը այդ սայլին նահապետական տեսք էին տալիս։ Այրտոնը, սրածայր փայտը ձեռքին բռնած, արդեն նստած էր Ֆուրգոնի առաջին մասում և սպասում էր իր նոր տիրոջ հրամաններին։

— Սատանան տանի,—բացականչեց Պագանելը։—Ահա սա, զարմանալի կառք է, յեվրոպական ամեն տեսակ հանրակառքերից լավ է։ Ըստ իս, աշխարհում ճանապարհորդելու ավելի հաճելի միջոց չկա, քան այս։ Մտածեցեք, մի տուն, վորը գլորվում է ճանապարհով և կանգ է առնում ուր հարկավոր է։ Դրանից ավելի լավ բան ի՞նչ կարող է լինել։ Հնում սարմատները հրաշալի կերպով հասկացան այդ և ուրիշ ձևով չեյին ճանապարհորդում։

— Պարոն Պագանել,—ասաց Յելենան,—յես հուսով եմ, վոր դուք վորևէ կերպ կհարգեք իմ սալոնը ձեր ներկայությամբ։

— Հաճականալի յե, տիկին,—պատասխանեց գիտնականը,—առանձին պատիվ կհամարեմ։ Արդյոք, դուք ձեր ժուրֆիկսը* նշանակե՞լ եք արդեն։

— Բարեկամների համար յես միշտ տանն եմ,—ծիծաղելով պատասխանեց Յելենան,—բայց դուք…

— Ձեր բարեկամներից ամենահավատարիմը,—վրա բերեց Պագանելը։

---

* Ժուրֆիկս—ընդունելության օր

Միրալիրությունների այս փոխանակությունը ընդհատվեց Պադդի Օ՛Մուրի ծառաներից մեկի յերևալով, վոր իր տաշտին բռնած էր յոթ հատ խանձած և թարմած ձու: Գլենարվանը վճարեց իռլանդացուն նրանից ձեռք բերած բոլոր բաների համար և շնորհակալական մի քանի խոսքեր ավելացրեց, վորոնք իռլանդացու հոգուն եղան վոչ պակաս, քան գինեյաները*:

Այսպես Գլենարվանը տվեց մեկնումի ազդանշանը: Հելենան և Մերին բռնեցին տեղերն իրենց բաժանմունքում, Այրտոնը Փուրգոնի առաջամասում, Օլբինեթը [illegible] բաժանմունքում: Գլենարվանը, մայորը, Պագանելը, Ռոբերտը, Ջոն Մանգլսը, Վիլսոնը և Մյուլրեդին, բոլորն էլ հրացաններով և ատրճանակներով զինված, նստեցին թամբերին: Պադդի Օ՛Մուրը և նրա ընտանիքը խմբովին բարի ճանապարհ մաղթեցին նրանց: Այրտոնը մի առանձին ձևով կանչեց և փայտով խփեց լծկաններին մոտիկ դուրգին: Ֆուրգոնը շարժվեց, նրա տախտակները ճռռացին, անիվները թրխկթրխկացին, և ազնիվ իռլանդացու հյուրասեր տունը շուտով ծածկվեց ճանապարհի վոլորանում:

## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

## ՎԻԿՏՈՐԻԱ ԳԱՎԱՌ

Վրա հասավ 1864 թվականի դեկտեմբերի 23-ը: Հյուսիսային կիսագնդում ցուրտ խոնավ, մռայլ դեկտեմբեր ամիսն այստեղ պետք է հունիս կոչվեր: Աստղաբաշխական ամառը հարավային կիսագնդում արդեն յերկու օր դրանից առաջ էր սկսվել. դեկտեմբերի 21-ին արևը հասավ արևադարձ Այծեղջյուրին և այդ ժամանակից օրերն արդեն սկսեցին կարճանալ:

Այդպիսով Գլենարվանի արշավախումբը պետք է ճանապարհորդեր ամառվա ամենաշոգ ժամանակ, արևադարձի համարյա թե ուղիղ ճառագայթների տակ:

Խաղաղ ովկիանոսի այդ մասի անգլիական տիրապետությունները կոչվում են Ավստրալիա: Սրա մեջ մտնում են. Նոր Հոլանդիան, Տասմանիան, Նոր Զելանդիան և շրջակա մի շարք կղզիներ: Ավստրալիական մայր ցամաքն ինքը վարչական տեսակետից բաժանված է մի քանի գաղութների, վորոնք միմյանցից տարբեր-

---

* Գինեյա—անգլիական վոսկե դրամ

վում են թե՛ ծավալով և թե՛ իրենց նշանակությամբ։ Պետերմա-նի կամ Պրեշելի կազմած Ավստրալիայի ժամանակակից քարտեզ-ների ամեն մի դիտողի աչքին է ընկնում իսկույն այդ բաժա-նումների ուղղագիծ լինելը։ Անգլիական աշխարհագրագետները մի գավառը մյուսից բաժանող պայմանական գծերը քանոնով են քաշել։ Դրա հետ միասին հաշվի չեն առնվել ո՛չ ջրային ավա-զանները, ո՛չ գետերի հոսանքները, ո՛չ կլիմաների բազմազա-նությունը, ո՛չ էլ զանազան ցեղերը։ Գաղութներն ուղիղ ուղ-ղանկյուններով մեկը մյուսին են կպչում ինչպես պարկետի կտորներ։ Այդ ուղիղ գծերի և անկյունների մեջ տեսանելի յե յերկրաչափի և ո՛չ թե աշխարհագրագետի ձեռքը։ Մայր ցամա-քի ափերն են միայն, որ իրենց գոգավորություններով, ծովախորշերով, ծոցերով, հրվանդաններով և դուրս ցցված մասերով պաշտպա-նում են բնության իրավունքները այստեղ, վկայելով չկանխամտածված գեղեցկության համար։

Այդ շախմատային վանդակները միշտ ուրախացնում էին Պագանելին։ «Եթե Ավստրալիան Ֆրանսիային պատկաներ,—ասաց նա,—ֆրանսիական աշխարհագրագետները թույլ չէին տա իրենց այդքան հեռու գնալ, տարվելով քանոնով և գծագրիչ գոր-ծիքով»։

Ներկայումս Ավստրալիան բաժանված է վեց գավառների. Նոր Հարավային Ուելս—Սիդնեյ մայրաքաղաքով. Կվինսլենդ—Բրիսբեն մայրաքաղաքով. Վիկտորիա—Մելբուրն մայրաքաղա-քով, Հարավային Ավստրալիա—Ադելաիդա մայրաքաղաքով. Ա-րևմտյան Ավստրալիա—Պերտ մայրաքաղաքով. վերջապես Հյու-սիսային Ավստրալիա, վորը դեռ մայրաքաղաք չունի։ Գաղութա-կանները բնակվել են միայն յեզերքի յերկարությամբ։ Հազվա-գյուտ գծագրերում միայն կարելի յե հանդիպել յերկու հարյուր մղոն յերկրի խորքը մտած մեծ բնակավայրի։ Ցամաքի ամբողջ կենտրոնը, այսինքն Ցենտրալային յերկրու յերրորդ մասին հավա-սար տարածությունը, համարյա, չի հետազոտված։

Բարեբախտաբար յերեսունյոթերորդ զուգահեռն այդ ահա-գին, քիչ մատչելի անապատներից հեռու յե անցնում, վորոնք արդեն շատ զոհեր են արժեցել գիտության համար։ Գլենարվա-նի արշավախումբը չէր կարող կարել այն։ Մեր ճանապարհորդ-ների առաջ ավելի թեթև խնդիր կար, անցնել Հարավային Ավստ-րալիայով, Ադելաիդա գավառի նեղ լեզվակի վրայով, Վիկտո-



Մոծակները կհասնեին ճանապարհորդներին։

րիա գավառի ամբողջ լայնությունը և վերջապես Նոր Հարավա-յին Ուելս գավառի շրջված յեռանկյունու նմանությամբ գոգա-թի վրայով։

Բենդուկիի հովանոցանից մինչև Վիկտորիայի սահմանները ըն-դամենը վաթսունհինգ մղոն է, այսինքն յերկու օրվա ճանա-պարհից վոչ ավել։ Այդ պատճառով Ավստրալն առաջարկեց հետե-վյալ յերեկոյան գիշերել Վիկտորիա գավառի ամենաարևմտյան քաղաքում—Էպլում։

Ամեն մի ճանապարհորդության սկիզբը աչքի յե ընկնում հեծվորների վոգևորությամբ և ձիերի առույգությամբ։ Ա-ռաջինի դեմ չեր պատահել, վոր առարկեն, բայց յերկրորդը սկսած եր զսպել։ Ով ուզում է հեռու գնալ, պիտի պահպանի իր ձին։ Այդ պատճառով վորոշեցին ցերեկվա անցումները միջին թվով քսանհինգ-յերեսուն մղոնով սահմանափակել։

Բացի դրանից ձիերի վազքի արագությունը պիտի համա-պատասխանեցվեր յեզի մի շնչում գնալու հետ, ինչպես նաև, կեն-դանի մեխանիզմի մի շնչում գնացող լծասարքի հետ, վորն ա-րագության մեջ նույնքան է կորցնում, վորքան նա շահում է ու-ժի մեջ։ Ֆուրգոնն իր ուղևորներով, պարենի և զենքի պաշար-ներով արշավախմբի կորիզն եր, նրա շարժական բերդը։ Հեծվոր-ները կարող եյին հոյապշավել, ինչքան վոր սիրտներն ուզեր, բայց վոչ մի դեպքում չհեռանալ ֆուրգոնից։

Քանի վոր վորևե վորոշակի ռազմական շարքի կարիք չկար, արշավախմբի ամեն մի մասնակից, վորոշ սահմաններում իրեն բոլորովին ազատ եր զգում։ Վորսորդները մոտակա դաշտերում շափ եյին գցում ձիերը՝ վորս փնտրելու համար, նրբակիրթ մար-դիկ շատախոսում եյին ֆուրգոնի բնակչուհիների հետ, փիլիսո-փաներն էլ փիլիսոփայում եյին իրար մեջ։ Պագանելը, վոր միա-ժամանակ և՛ վորսորդ եր, և՛ կավալեր, և՛ փիլիսոփա՝ քրքրվում եր, բայց ամեն տեղ էլ հասնում եր։

Ադելաիդայի գավառով անցնելը վոչ մի հետաքրքրության չեր ներկայացնում։ Ցածր, փոշոտ բլուրների շարքերը, մերկ հարթությունների անվերջ տարածությունները, վորոնք այստեղ պրուշերս են կոչվում, վերջապես հազվադեպ մարգագետինները՝ ցածրիկ թփուտներով ծածկած, աղի և ծակող տերևներով, վոր վոչխարների սիրած կերակուրն է—հաջորդում եյին միմյանց շատ մղոնների յերկարությամբ։ Հաճախ եյին պատահում pigs'-

faces-ի համերը—Ավստրալիայի միայն հատուկ խոզի դունչերով վոչխարների առանձին տեսակը։

Ամբողջ ճանապարհի յերկարությամբ ձգվում եյին հեռագրասյուները, վորոնք նոր եյին միացրել Ադելաիդայի գավառը ովկիանոսի ափի հետ։

Մինչև այժմ տեղագրությունը քիչ բանով եր տարբերվում արգենտինյան պամպասների միօրինակ հարթություններից։ Հողը նույնպես խոտավետ եր և հարթ, հորիզոնն էլ նույնպես հեռավոր և սուր գծագրված։ Մակ-Նաբսը պնդում եր, վոր իրենք դեռևս Ամերիկայում են, բայց Պագանելը հավատացնում եր բոլորին, վոր շուտով տեսարանը կփոխվի և նրանք կտեսնեն բնական հրաշքներ։ Գիտնականին հավատում և անհամբերությամբ սպասում եյին խոստացած հրաշքներին։

Կեսօրվա մոտ ժամի յերեքին ջոկատը կտրեց «Մոծակների հովիտ» անունը կրող լայն հարթավայրը, վորի վրա վոչ մի հատիկ թուփ չեր բուսնում։ Հովիտը միանգամայն արժանի յեր այդ անվանը։ Ճանապարհորդները ու կենդանիները սաստիկ տառապում եյին այդ յերկթևանիների կծելուց։ Նրանցից թաքնվելու հնարավորություն չկար։ Ստիպված յեղան սահմանափակվել ճամփորդական դեղատան նաշատիրասպիրտով կծած տեղերը քսելով։

Պագանելը վախվխելով, աչքի տակով Փոլբրտնին նայելով, հայհոյում եր և բոլոր սատանաների մոտ եր ուղարկում իր յերկար մարմինն անխնա կծոտող գարշելի միջատներին։

Յերեկոյան դեմ հարթավայրի տեսքը կենդանացավ։ Ակացիաների անտառ յերևաց, մի քանի խումբ աղխոտի, խեժարեր ծառեր և յեվկալիպտական ծաղումի առանձին ծառեր։ Յերեկոյան ժամի ութին ջոկատը ժամանեց Բլեք Պոյմ կայանը։

Ավստրալիայում կայաններ են կոչվում այն անասնապահական ձեռնարկությունները, վորտեղ սնուցանվում են մատղաշ անասունները։ Ինչպես հայտնի յե, Ավստրալիայի գլխավոր հարստությունն անասունն է կազմում։ Անասնապահներն այստեղ կոչվում են «սկվատերներ»—«հողի վրա նստողներ»․ անգլիական to squat-նստել բայից։ Յեվ իսկապես, այդ գիրքն ամեն գաղութական սիրով է ընդունում, անվերջ տափարակների վրա թափառելուց հոգնելով։

Բլեք Պոյմ կայանը փոքրիկ և անշուք եր։ Այնուամենայնիվ,

Գլենարվանի ջոկատին այնտեղ սիրալիր կերպով դիմավորեցին։ Այդ միայնակ կանգնած տներում սեղանը միշտ լիքն ե ճանապարհորդների համար, և նրանցից յուրաքանչյուրին ավստրալիացի գաղութաբնակը դիմավորում ե վորպես թանկագին հյուրի։

Հետևյալ օրը, լույսը դեռ հազիվ եր բացվել (դեռ նոր եր ծեգծգում), յերբ Այրտոնը լծեց յեզներին։ Նա ուզում եր յերեկոյան հասնել մինչև Վիկտորիայի սահմանները։

Այդ օրը հողի մակերևույթն արդեն այնպես հարթ չեր, ինչպես նախօրեյին։ Գետինը ալիքավորվում եր մակերևույթի վրա կարմիր ավազի պես փռված մի շարք ցածրիկ բլուրներով...Հեռվից թվում եր, վոր գետնի վրա մի ահագին կարմիր դրոշակ ե ընկել, վորի ծալքերը քամուց ուռել եյին գետնի վեր։ Մի քանի մալլեյներ, ուղիղ և հարթ բունով սպիտակ ռետիններ, սփռել եյին իրենց կանաչ ճյուղերը մարգագետինների խիտ խոտերի վրա, վորտեղ չարաճճում եյին ճագարամուկների ուրախ յերամակները։ Ավելի ուշ սկսեցին հանդիպել թփուտներով և յերիտասարդ, խեժաբեր ծառերով ծածկված ընդարձակ տարածություններ։ Ավելի հեռու՝ ծառերի խմբերը խառնվում եյին միմյանց, թփուտները տեղը ծառերին եյին զիջում, և ճանապարհորդները ծանոթացան ավստրալիական անտառների առաջին նմուշի հետ։

Վիկտորիա գավառի սահմաններին մոտենալու հետ, տեսարանն ել ավելի եր փոփոխվում։ Այժմ ճանապարհորդները գնում եյին կուսական հողի վրայով։ Նրանք անշեղ գնում եյին ուղիղ գծով, չնահանջելով վոչ լեռների, վոչ անտառների առաջ և հաստատապես հիշելով յերկրաչափության առաջին թեորեման թե՝ յերկու կետերի միջև ամենակարճ ճանապարհն ուղիղ գիծն ե։ Վոչ հոգնածությունը, վոչ ել ճանապարհի դժվարությունները չեյին կանգնեցնում նրանց։

Կառավանը դանդաղ եր առաջ շարժվում, համակերպվելով իր քայլը յեզների դանդաղ քայլվածքի հետ։ Բայց յեթե այդ հանգիստ կենդանիները արագ գնալ չեն կարողանում, դրա փոխարեն նրանք գնալու ժամանակ յերբեք կանգ չեն առնում։

Այսպիսով յերկու օրում վաթսուն մղոն անցնելով, դեկտեմբերի 23-ի յերեկոյան կառավանը ժամանեց Վիկտորիա գավառի առաջին քաղաք Ապսլին, Վիմերրի շրջանում—յերկայնության հարյուր քառասունմեկերորդ աստիճանի տակ։



Ծեդ Գաւմ կայանը։

Ծուրգանը կանգնեցրին պանդոկի բակում, վորը կրում էր «Թաղի Հյուրանոց» հին անունը։

Ընթրիքին համալսարանականներին միայն վոլխովի մի առա-ջարկեցին, ամեն տեսակ տեսակ պատրաստած։ Չնայած հա-մեստ խորտիկացուցակին, բոլորն էլ մեծ ախորժակով էյին ուտում և անգամի առաջ ավելի շատ խոսում էյին, քան թե ուտում։ Բո-լոր համալսարանականները ցանկանում էյին ավելի շատ տեղեկու-թյուններ իմանալ ավստրալիական այդ մայր ցամաքի առանձ-նահատկությունների մասին և հարցեր էյին տալիս գիտնական աշխարհագրագետի գլխին։ Պագանելը չէր սպասում յերկու ան-գամ խնդրել իրեն և սիրով էր բաժին հանում այն ամենից, ինչ վոր գիտեր Վիկտորիա գավառի մասին, վորը նաև «Յերջանիկ Ավստրալիա» յեր կոչվում։

— Դա սխալ անուն է,—նկատեց աշխարհագրագետը։—Ավե-լի ուղիղ կլիներ այդ գավառը «Հարուստ Ավստրալիա» անվանել, վորովհետև յերկրների հետ էլ նույնն է կատարվում, ինչ վոր մարդկանց հետ—հարստությունը յերջանկություն չի տալիս նրանց։ Ավստրալիայի վոսկու հարուստ ավազահանքերը վորպես հրապույր ծառայեցին, բացի վոսկուց, ամեն բանի նկատմամբ գաժան և անտարբեր բախտախնդիրների համար։ Դուք դրանում ինքներդ կհամոզվեք, յերբ մենք կանցնենք վոսկեբեր շրջաննե-րով։

— Վաղո՞ւց է, արդյոք, կազմված Վիկտորիա գավառը,—հարցրեց Յելենան։

— Վո՛չ, բոլորովին մանո՛ւկ, արանից վոչ ավել, քան յերե-սուն տարի առաջ։ Այդ կատարվել է 1835 թվականի հունիսի 6-ին, յերեքշաբթի օրը...

— Յերեկոյան ժամի յոթն անց քառասունհինգ րոպե,—վրա բերեց մայորը, վորը միշտ ծաղր էր անում Պագանելին, այնպիսի մի տեսք ընդունելով, վոր չի հավատում նրա բերած թվերին։

— Վոչ, յոթն անց տասը րոպե,—բոլորովին լուրջ պատաս-խանեց գիտնականը։—Հենց այդ րոպեյին Բեթմանն ու Ֆոլկնե-րը Պորտ—Ֆիլիպ գյուղի հիմքը դրին այն ծովախորշի ափին, ուր այժմ գտնվում է Մելբուռն մեծ քաղաքը։ Հետևյալ տասնհինգ տարվա ընթացքում այդ գաղութը մնում էր Նոր Հարավային Ուելսի գավառի կազմի մեջ, բայց 1851 թվականին նա առանձ-

նաչվեց վորպես անկախ վարչական միավոր, և Վիկտորիայի գա-վառ անունն ստացավ։

— Եվ այն ժամանակվանի՞ց էլ սկսվեց նրա ծաղկումը,— հարցրեց Գլենարվանը։

— Ինքներդ դատեք այդ մասին, Թալկավին բարեկամ,— պատասխանեց Պագանելը։— Ես հիմա կբերեմ ձեզ այդ հարցի վերաբերյալ վիճակագրական վերջին տվյալները, և, ինչ էլ վոր ասի Մակ-Նաբսը, յես ավելի պերճախոս բան չգիտեմ, քան այդ թվերն են։

— Տվեք, տվեք, Պագանել,— խրախուսականորեն ասաց մա-յորը։

— Համեցեք։ Պորտ-Ֆիլիպի գաղութը 1836 թվականին յեր-կու հարյուր քառասուն չորս բնակիչ ուներ։ Այսոր Վիկտորիա գավառում հինգհարյուր հիսուն հազար բնակիչ կա։ Յոթ մի-լիոն քառակուսի վտանաչափ տարածությամբ խաղողի այգիները տարեկան հարյուր քսան մեկ հազար գալլոն գինի յեն տալիս։ Հարյուր յերեք հազար ձիեր են արածում գավառի անսահման արոտավայրերում՝ վեցհարյուր յոթանասուն հինգ հազար յեր-կու հարյուր յոթանասուն յերկու գլուխ յեղջյուրավոր անասուն-ների հետ։

— Ես լսել եմ, վոր այստեղ խոզաբուծությունն էլ է զար-գացած,— ասաց մայորը։

— Այո՛, մայոր, ձեր թույլտվությամբ այստեղ յոթանասուն-ինը հազա՛ր վեցհարյուր քառասունհինգ խոզ կա։

— Իսկ քա՞նի վոչխար կա այստեղ, Պագանել։

— Յոթ միլիոն հարյուր տասնհինգ հազար ինըհարյուր քա-ռասուն յերեք, Թալկավին Մակ-Նաբս։

— Հաշվելով նաև այն, վոր այժմ մենք ուտո՞ւմ ենք, Պա-գանել։

— Վոչ։ Այս վոչխարը չի կարելի հաշվել, վորովհետև նա արդեն յերեք քառորդ մասով կերված է։

—Կեցցեք, Պագանել,—ծափահարեց Ելենան, ծիծաղելով գիտնականի սրախոսությունից։—Չի կարելի չընդունել, վոր դուք աշխարհագրական արտասովոր գիտելիքների տեր եք, և վորքան էլ քննող տղա Մակ-Նաբսը աշխատի, նրան չի հաջողվի բռնել ձեզ չիմանալու մեջ։

— Բայց չէ վոր այդ թվերն իմանալն իմ արհեստն է, Թալ-

կողքին ավելին ցնցենա։ Դրա համար էլ չեմ ձեզ ասացի, վոր այս զարմանալի յերկիրը լավ անակնկալներ շատ է պատրաստում մեզ համար։

— Սակայն մինչև հիմա...— ասաց Մայորը, շարունակելով ձեռք առնել աշխարհագրագետին, վորպեսզի գրգռի նրան հետագա պատմվածքների համար։

— Դեռ սպասեցեք, անհամբեր մարդ եք դուք,— գոչեց Պագանելը։— Դուք միայն յերկրորդ որն է, վոր գտնվում եք այս յերկրամասի վրա և արդեն ուզում եք ամբողջը տեսնել։ Համբերեցեք ինձ,— յես այս ասում եմ իմ խոսքերի լրիվ պատասխանատվությամբ,— վոր այս յերկիրն ամենահետաքրքրականն է ամբողջ յերկրագնդի վրա։ Նրա ծագումը, բնությունը, արդյունաբերությունը, կլիման— զարմացրել է, զարմացնում է և դեռ կզարմացնի ամբողջ աշխարհի գիտնականներին։ Բարեկամներս, դուք ձեզ պատկերացրեք մի մայր ցամաք, վորը բարձրացել է ծովի հատակից, իր ափերում բարձրությունների յուրահատուկ հսկայական ձգտումով չքնաղապատված։ Ափերին, նկատեցեք այդ, և վոչ թե կենտրոնում։ Մի մայր ցամաք, վոր հավանորեն իր կենտրոնական մասում պարփակում է կեսով չափ գոլորշիացած ծով։ Մի մայր ցամաք, վորի գետերն որեցոր ավելի շատ են ցամաքում։ Մի մայր ցամաք, վորը վոչ մթնոլորտում, վոչ էլ հողի մեջ խոնավություն չունի։ Վորտեղ ծառերն ամեն տարի կորցնում են իրենց կեղևը, բայց վոչ տերևները. ուր տերևները կողքերը դեպի արևն են անում և ստվեր չեն տալիս, ուր փայտը հաճախ չի այրվում, ուր հենց քարերը տարրալուծվում, հալվում են անձրևի տակ, ուր անտառները կարճահասակ են, բայց խոտը հսկայական բարձրության է հասնում, ուր, ինչպես հեքիաթի մեջ, չորքոտանիները կտուց ունեն, վորը բնագետներին հարկադրեց նրանց համար առանձին դաս հնարել— չայնաղի կամ միանցքանի*, ուր կենգուրուի առաջին և յետին թաթերը միատեսակ յերկար չեն, ուր վոչխարները խոզի գլուխ ունեն, ուր աղվեսները ծառից ծառ են թռչկոտում, ուր կարապները սև են, ուր մեծ մկները բույն են հյուսում։ Մի մայր ցամաք, վորտեղ թռչունները գիտուններին զարմացնում են փետրավորման և ձայների բազմազանությամբ. մի թռչուն շրխկացնում է, ինչպես փառա-

* Պոպանեյն ինկյանի ունի յեխիդնե կոչված կենդանին, վոր կտուց ունի։

տար կարգի կառավարիչ մարդ, մյուսը ակնկալացնում է, պարզ ժամացույցի ճոճանակի պես վայրկյաններն անջատելով, ցերեկը տասնամյակներն է ծծնադում՝ ցերեկ արեգակը ծագում է, շորբորդը լաց է լինում յերեխաները, ցերեկ նա մայր է մանում։ Ո, սա խոհական հետաքրքիր յերկիր է, ուր ամեն ինչ ծառս լիզանի պես է կատարվում, ուր բնությունը կարծես թե ըմբոստանում է ինքն իր դեմ։ Իզուր չէ, վոր գիտնական Գրիմարը, իր «Հուլյան մասին» հայտնի աշխատանքի մեջ այս երկրի մասին ասել է. Ավստրալիան համաշխարհային օրենքների ծաղրական նմանությունների յերկիր է, դա մնացած ամբողջ աշխարհին ձգված մարտահրավեր է։

Գաղանեյն այդ յերկար ճառաբանությունը միանգամից կըտրեց, տեսնելով արգելանքների բաց թողած ուրհանդակային զնացքի պես։ Աշխարհագրական ընկերության քարտուղարն այլևս չլսեց իրեն։ Նա խոսեց, խոսեց, խոսեց, կատաղի շարժումներ անելով և ձեռքի յերկու մատն այնպես թափահարելով, վոր նրա հարևաններն ստիպված եյին հեռու քաշվել, վորպեսզի աչքերից չզրկվեյին, բայց ճառի վերջում նրա ձայնը ծածկեցին հիացմունքի «կեցցե՛»-ներ գոչելով, և նա ստիպված եր լռել։

Ավստրալիական մայր ցամաքի այդ փայլուն թվարկություններից հետո, թվում եր, վոր արդեն այլևս վոչինչ մասին չպիտի հարցներ Գաղանեյին։ Սակայն մայորը չզգացվեց և իր ավելորդական հանդիսա ձայնով հարցրեց.

— Ամբողջն ա՞յդ է, Գաղանել։ Ել բան չե՞ք ավելացնում։

— Վո՛չ, ամբողջը չի,— պատասխանեց գիտնականը նորից բորբոքվելով։

— Ի՞նչպես,— զարմացած հարցրեց Գլենարվանը.— Ավստրալիական հրաշքները դեռ չե՞ն վերջացել։

— Վո՛չ։ Կլիման դեռ մնում է, վորի տարօրինակությունները շատ են հեռու, հեռևում թողնում այն ամենը, ինչ վոր ձեզ ասացի։

— Զի կարող պատահել,— գոչեցին Գաղանեյին չորս կողմից։

— Ցես ձեզ չեմ պատմի ավստրալիական օդի առողջապահական հատկությունների մասին, վորը հարուստ է թթվածնի բովանդակությամբ և աղքատ ազոտով։ Բայց այստեղ խոնավ քամիներ չեն լինում, վորովհետև մուսոնները ավելորդապար յերկրերին զուգահեռ են փչում և հիվանդությունների մեծ մասը, վո-

քանդից ստացվում են աշխարհի մյուս մասերը, այստեղ անհայտ են, սկսած ավիֆից և վերջացրած ծաղիկով։

— Ո՞չ, այդ արդեն ինքնըստինքյան փոքրիկ առավելություն չէ,— ասաց Գլենարվանը։

— Հասկանալի է,— պատասխանեց Պագանելը։— Բայց խոսքը դրա մասին չէ։ Այստեղի կլիման մի հատիկ··· վոչ ճշմարտապատում առանձնահատկություն ունի։

— Ի՞նչպիսի,— հարցրեց Ջոն Մանգլը։

— Դուք ինձ յերբեք չեք հավատա։

— Կհավատանք, կհավատանք,— գոչեցին չահամբերված ունկնդիրները։

— Այդպես ուրեմն։ Նա··· —գիտնականը լռեց։

— Նա ի՞նչ։

— Նա··· բարոյական ներգործության հատկություններ ունի։

— Բարոյակա՞ն ներգործություն։

— Այո՛,— ասաց գիտնականը։— Այստեղ մետաղները, ինչպես և մարդիկ, ոչի մեջ չեն ժանգոտում։ Այստեղ մաքուր, չոր օդն արագ սպիտակեցնում է ինչպես սպիտակեղենը, այնպես էլ հոգին։ Ցեվ իզուր չէ, վոր Անգլիան այստեղ է ուղարկում իր արատավոր քաղաքացիներին։ Անգլիացիներն ուղղակի նկատել են ավստրալիական կլիմայի այդ հատկությունը։

— Դուք մեզ ծաղրո՞ւմ եք, Պագանել,— ասաց մայորը։

— Ամենևին։ Կլիմայի ազդեցությունն այստեղ կենդանիների վրա նույնպես է տարածվում, ինչպես և մարդկանց։ Դուք ուշադրություն դարձրեք այն բանին, թե վորքան հեզ և հնազանդ են այստեղ ձիերը։

— Չի կարող պատահել։

— Դուք ինքներդ տեսեք։ Ավստրալիայում տաժանակիր աշխատանքի դատապարտված չարագործները մի քանի տարում վերածնվում են, ազնիվ մարդիկ են դառնում։ Բոլոր մարդասերները գիտեն այդ։ Ավստրալիայում բոլոր բնավորությունները լավանում են։

— Այնպես վոր ձեր քաղցր բնավորությունը, Պագանել,— ավելեց Յելենան,— այս խոստացյալ յերկրում···

— Հրեշտակային կդառնա, տիկին,— ուղղակի հրեշտակային ձևով պատասխանեց գիտնականը։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

# ՎԻՄԵՐՐԱ ԳԵՏԸ

Հետևյալ օրը, դեկտեմբերի 24-ին, լուսաբացին կարավանը ճանապարհ ընկավ։ Շոգն արդեն բավական ուժեղ էր, բայց այնուամենայնիվ տանելի։ Ճանապարհը հարթ և բանուկ էր։ Ցերեկոյան դեմ փոքրիկ ջոկատը քսանհինգ մղոն անցավ և գիշերը անցկացրեց Սպիտակ լճի ափերի մոտ, վորի ջուրն աղի էր և խմելու համար անպետք։

Ժակ Պագանելն ստիպված էր խոստովանել, վոր այդ լճը Սպիտակի անունին արժանի չէր, քան Սև ծովը—սևերին, Կարմիր ծովը—կարմրերին, Դեղին գետը—դեղիններին և Կապույտ լեռները—կապույտներին։

Նա փորձում էր հավանավորել այդ անունը, պաշտպանելով իր աշխարհագրագետ պաշտոնակցի պատիվը, վոր այնպես անհաջող մկրտել էր լճը, բայց ջախջախվեց վեճի մեջ։

Պարոն Օլբինեթն ընթրիքը պատրաստեց իր մանրակրկիտությամբ։ Ընթրիքից հետո ճանապարհորդները պառկեցին քնելու, վորը ֆուրգոնում, վորը վրանի մեջ։ Նրանք շատ պինդ էյին քնել, չնայած դինգոների, ավստրալիական այդ շակալների անընդհատ վռնոցին։

Սպիտակ լճի մյուս կողմն ամբողջապես բազմերանգ վառվռուն ծաղիկներով ծածկված մի հրաշալի հովիտ էր տարածվում։ Լուսաբացին արթնանալով, Գլենարվանն ու իր ուղեկիցները չկարողացան զսպել հիացմունքի բացականչությունները, այդ զարմանալի հրաշալիքը տեսնելիս։ Նրանք ճանապարհ ընկան։

Հեռու հարավում գետինը աստիճանավորվում էր ցածրիկ բլուրներով, բայց կարավանի ճանապարհն ընկնում էր գարնանային ծաղկման պայծառ ներկերով փայլող բոլորովին հարթ հովիտով։ Գառների բազմաթիվ այլազանությունները կենդանացնում էին այդ կանաչը, և նույնիսկ աղային հողամասերը կորչում էին թավշի և ճակնդեղի խիտ ծածկոցի տակ։ Բուսաբանության մեջ բուսաբան դառնալով, Պագանելը տալիս էր նրանց անունները և ամեն ինչ թվերով հաստատելու իր մշտական հակումին տուրք տալով, չզլացավ նկատել, վոր ավստրալիական բուսականությունը բաղկացած է չորս հազար յերկուհարյուր զանազան բույսերից, վորոնք պատկանում են հարյուրքսան ընտանիքի։

Մի քանի ժամ ուշ, նրանից հետո, յերբ արդեն սահեցին տասնյակ մղոններ, ֆուրգոնը մտավ ակացիաների, պատկառուկ-ների և սպիտակ խեժաբեր ծառերի թավուտը։

Բազմաթիվ աղբյուրներով վոռոգվող այդ հովտի բուսական թագավորությունն ապերախտություն չէր ցուցաբերում ցերեկ-վա լուսատուի վերաբերյալ և հարյուրապատիկ էր վերադարձ-նում նրան խիտ կանաչով՝ տված ճառագայթների համար։

Կենդանական թագավորությունն զգալիորեն չէր մնում իր ներկայացվածով։ Հովտում թռչկոտում էին մի քանի ջայլամներ, բայց կրակոցի տարածությամբ նրանց մոտենալը չհաջողվեց։ Սակայն, դրա փոխարեն մայորը հաջող կրակոցով մի շատ հազ-վագյուտ, յերկրի յերեսից արդեն անհետացող յաբիրու—հսկայա-կան կռունկ խփեց։ Դա հինգ վոտնաչափ բարձրությամբ մի թռչուն էր, սրածայր վերջավորությամբ սև, լայն կտուցով։ Թվում էր, վոր բնությունն իր ներկապնակից չափ չի խնա-յել՝ յաբիրայի փետրավորման համար։ Նրա գլուխը ծիրանի-մանիշակագույն էր, վիզը կանաչ, կուրծքը կուրացուցիչ սպիտակ և վոտքերը վառ-կարմիր։

Ճանապարհորդները հիանում էին այդ գեղեցիկ թռչունով, և մայորն արդեն հերոսը կդառնար, յեթե Ռոբերտ Գրանտը մի քիչ ուշ չհանդիպեր և դիպուկ կրակոցով տեղն ու տեղը չփռեր մի այլ կենդանու, վորը վոչ ծովոզնի յեր, վոչ էլ մրջնակեր։

— Դա յեխիդնան է,—ասաց Պագանելը,—անվանելով այդ լայ-նալի կենդանուն իր իսկական անունով։—Դուք յերբևիցե տեսե՞լ էք Յեվրոպայում սրա նման վորևէ բան։

— Նա զզվելի յէ,—պատասխանեց Գլենարվանը։

— Զզվելի յէ, համաձայն եմ, բայց թե չափազանց հետա-քրքիր էլ է։ Բացի այդ, նա միայն Ավստրալիայում է գտնվում և աշխարհի ուրիշ վոչ մի մասում,—նկատեց Պագանելը։

Բնական է, Պագանելը կամեցավ յեխիդնայի նմուշը պահել։ Նա տարավ այն ֆուրգոնի մոտ, վորպեսզի թաքցնի ծանրոցի բաժանմունքում, բայց պարոն Օլբինետն այնպիսի զայրացկո-տությամբ հակառակեց դրան, վոր գիտնականն արագությամբ նահանջեց և հրաժարվեց ավստրալիական միանցքանի կենդանու նմուշը Փարիզ բերելու մտքից։

Ճանապարհորդները հասան 141° 30′ յերկարության։ Մինչև այժմ նրանց չհանդիպեցին վոչ հողագործ գաղութականներ, վոչ



Մայօրը կրակեց ջաբիրուի վրայ։

սկվատերներ—անասնապահներ։ Վայրը բոլորովին ամայի չէր թվում։ Տեղացիների հետքն անգամ չկար։ Նրանց թափառաշրջիկ ցեղերն ավելի հյուսիս էին թափառում, Դառլինգի և Մյորրեյի վտակներով վոռոգվող անսահման տափաստաններում։

Բայց այդ օրը Գլենարվանին և իր ուղեկիցներին հաջողվեց տեսնել մեկն այն յերեք հսկայական հոտերից, վորոնց ագահ սպեկուլյանտները արևելյան լեռներից քշում են Վիկտորիա և Հարավային Ավստրալիա գավառները։

Կեսօրվա ժամի մոտ չորսին Ջոն Մանգլսը ցույց տվեց իր ընկերներին հորիզոնի վրա յերևացող փոշու ահագին սյունը։ Ինչի՞ց էր առաջացել այդ տարօրինակ յերևույթը։ Ոչ մի քամի չէր։ Պագանելը յենթադրեց, վոր դա թաթառ է և սկսեց հըր-մարտանման բացատրություններ փնտրել այդ յերևույթի համար, բայց Այրտոնն իսկույն դուրս բերեց նրան կասկածների խորքերից, ասելով, վոր այդ փոշին յեկող հոտն է բարձրացրել։

Բոցմանը չսխալվեց։ Փոշու սյունը մոտենում էր, և ճանապարհորդները շուտով վրնջացող, մայող և բառաչող ձայների խլացուցիչ համերգ լսեցին, վորին խառնվում էին մարդկային ճիչ-ճիչ բացականչություններ և սուր սուլոցներ։

Փոշու միջից վերջապես մի մարդ յերևաց։ Դա չորքոտանիների այդ բանակի գլխավոր ուղեցույցն էր։ Գլենարվանը մոտեցավ նրան և խոսակցության բռնվեց։ Պարզվեց, վոր ուղեցույցն այդ ամբողջ հոտի տերն է։ Նրա անունը Սեմ Միտչել էր։ Նա գալիս էր արևելյան գավառներից և ուղևորվում էր դեպի Պորտլանդ ծովախորշը։

Սեմ Միտչելի հոտը տասներկու հազար յոթանասուն հինգ գլուխ էր. հազար հատ յեզ, տասնմեկ հազար վոչխար և յոթանասուն հինգ ձի։

Այդ բոլոր կենդանիները վողորմելի և լղար վիճակում գնված էին Կապույտ լեռների ստորոտում, և հիմա նրանց պետք էր գիրացնել Հարավային Ավստրալիայի պարարտ արոտատեղերում և հետագայում մեծ շահույթներ տային իրենց տիրոջը։ Դա ձեռնտու գործ էր։ Բայց վորքան համբերություն և յեռանդ էր պահանջվում, վորպեսզի կարողանային այդքան մեծ տարածություն անցկացնել այդ կամակոր կենդանիներին և վորքան

հաղթեցուցիչ էր անվերջ համարձակություն ցուցադրելու։ Համբե-ռությունը ծանր գնով էր ձեռք բերվում։

Սեմ Միտչելը կարճ խոսքերով ասաց իր պատմությունն այն ժամանակ, յերբ նրա հոտը շարունակում էր առաջանալ պատ-կառուկների թփերի միջով։ Յելենան, Մերին և բոլոր հեծվոր-ները ձիերից իջան և, նստելով խնձարկեր, ճյուղոտի ծառի ստվե-րում, լսում էին պատմվածքը։

Սեմ Միտչելն արդեն յոթ ամիս էր ինչ ճանապարհին էր։ Մի-ջին հաշվով նա օրական տասը մղոնից ավել չէր անում, և այդ անվերջ թափառումը դեռ յերեք ամիս էլ պիտի շարունակվեր։ Աշխատանքի մեջ նրա ոգնականներն էին քսան շուն և յերեսուն մարդ, վորոնց թվում հինգ անգլացիներ, վորոնք հատկապես պա-րապում էին հոտից յետ ընկած կենդանիներին վորոնելով։ Այդ բանակի հետևից վեց սայլակ էր գնում։ Տասնութ դյույմ յեր-կարությամբ կոթ ունեցող խարազաններով և ինը դյույմանոց մտրակակալներով զինված ուղեցույցները ձիավարում էին շար-քերով, վերականգնելով հաճախակի խախտվող կարգը։ Հոտի շուրջը, կարծես թևերով սլացող շներն օգնում էին նրանց։

Ճանապարհորդները հիանում էին հոտի մեջ հաստատված կարգապահությամբ։ Կենդանիների տարբեր տեսակները ջոկ-ջոկ էին ընթանում, վորովհետև յեզներն ու վոչխարները վատ էին յոլա գնում իրար հետ։ Առաջինները վոչ մի կերպ չէին համա-ձայնում արածել այնտեղ, վորտեղով արդեն անցել էին յերկ-րորդները։ Այդ բանն անհրաժեշտություն հարուցեց յեզներին հոտի գլուխը կանգնեցնել։ Յերկու գումարտակի բաժանված, նրանք հպարտությամբ առաջ էին ընթանում։ Նրանց հետևից գնում էին վոչխարների գնդերը, քսան ուղեցույցների հրամա-նատարության տակ։

Շների մի դասակ վերջապահ էր կազմում։ Սեմ Միտչելն իր ունկնդիրների ուշադրությունն այն բանի վրա դարձրեց, վոր վոչ ուղեցույցները, վոչ էլ շները— այդ բանակի իսկական ա-ռաջնորդները չէին։ Իսկական առաջնորդները յեզներն էին։ Նրանք հպարտ առաջանում էին առաջին շարքում, ընտրելով ա-վելի լավ ճանապարհ։ Նրանք հոտի կատարյալ տերերն էին և հոտն առանց վորևէ բողոքի նրանց էր հպատակվում։ Յեթե նը-րանք կանգ էին առնում, բոլորն էլ նրանց օրինակին էին հե-տևում, և քշողների բոլոր ջանքերն իզուր կլինեին՝ առաջ

կենդանիներին առաջ շարժվել, քանի դեռ իրենց գլխավորներն ուղեվորման ազդանշան չէին տվել: Սեմ Միաչելի ավելացրած մի քանի մանրամասնություններն արժանի էին Քսենոֆոնի* գրչին:

Քանի դեռ բանակը հովիտով էր գնում, ամեն ինչ լավ էր: Նվազագույն հոգատարություն և նվազագույն հոգնածություն: Կենդանիները հանգիստ գնում էին ճանապարհով, ծարավն ու քաղցը հագեցնելով արոտատեղերում, գիշերը քնում էին, ցերեկը հնազանդությամբ հավաքվում էին չների կանչով և նորից էին ճանապարհվում: Բայց մայր ցամաքի թավուտ անտառներում, եղեգնուտներում և պատնեշների գետափերում դժվարությունները կրկնապատկվում էին: Դաշտակները, գոմարտակները և գնդերը մերթ խառնվում էին մի կույտի մեջ, մերթ հեռանում էին իրարից մեծ տարածությամբ, և շատ ժամանակ էր պահանջվում հարկավոր կարգը վերականգնելու համար: Երբեմն, դժվարությամբ, առաջնորդներից մեկն էր կորչում, պետք էր նրան գտնել ինչ գնով ուզում էր լինի, հակառակ դեպքում ամբողջ հոտը կարող էր անկարգ փախուստի դիմել: Տեղացի սևամորթ քշողներն այդ դժվար վորոնումների վրա հաճախ մի քանի օր էին վատնում: Երբ հաճախակի անձրևներն սկսվում էին, ծույլ կենդանիները հրաժարվում էին շարունակել ճանապարհը, իսկ տասնյակ ամպրոպների ժամանակ խուճապը տիրում էր հոտին, կենդանիները ցնդում էին յերկյուղից:

Սակայն քշողների յեռանդը ու գդոնությունը հաղթահարում էին բոլոր այդ կրկնվող դժվարությունները և հոտն առաջ էր գնում մղոն առ մղոն, թողնելով հետևում հովիտներ, անտառներ և սարեր: Բայց քշողները տանջված էին իրենց բոլոր հատկությունների վրա մի հատ էլ ամենաարժեքավորն ավելացնել— համբերություն, համբերություն, վորը պետք է ամեն ինչի հաղթահարեր, համբերություն, վորը հարկավոր էր պահել վոչ թե ժամերով և օրերով, այլ ամբողջ շաբաթներով,— այդ հենց գետերի վրայով անցնելու ժամանակ էր: Այստեղ քշողներն ընդհարվում էին յեթե վոչ անհաղթահարելի, համենայն դեպս մեծ դժվարությամբ հաղթահարելի արգելքների հետ: Այդ արգելքն այն հանգամանքն էր, վոր հոտի գլխավորները հրաժարվում են-

* Հին հույն պատմագիր (430–355 թ. մ. թ. ա.):

յին գնալով անցնել։ Ջրին հազիվ քայլող ձիերը շատ էին պառկում իրենց սեփական հեծյալներով։ Վոլխարները, հազիվ նկատելով ջուրը, փախչում էին դանդաղան կողմեր։ Պետք էր ազատել զինվորներին, վորպեսզի հետո լինեին հասու ջրի մոտ բերել, բայց դա էլ չէր օգնում։ Ոտքերին ջուրն էին ձգում— մաքիները չեյին համարձակվում գնալ նրանց հետևից, փորձում էին համառ կենդանիների վրա ազդել նրանով, վոր մի քանի որ նրանց չեյին թողնում ջուր խմել։ Հոտը տառապում էր ծարավից, բայց առջեւ չէր շարժվում։ Գառները հակառակ ափին էին անդադար մայում այն հույսով, վոր մայրերը լողալով կանցնեն նրանց մայունի պատճառով։ Գառները մայում էին խեղճ մաքիները, մյուս ափում, չեյին էլ մտածում անդից շարժվել։ Յերբեմն այդպես մի ամբողջ ամիս էր շարունակվում։ Բժիշկները հուսահատվում էին չիմանալով, թե ինչ անեն այդ մայող, վրնջող, մռնչող բանակի հետ։ Յեվ հանկարծ, մի գեղեցիկ որ, չի իմացվում թե ինչ քմահաճույքով, ամբողջ առաջավոր ջոկատը գետի գետն է նետվում և նոր դժվարություն էր ծագում։ Այժմ պետք էր խանգարել, վոր հոտը անկարգ կերպով չգնա նրանց հետևից։ Շարքերում իրարանցում էր տիրում, և ճնշման մեջ շատ կենդանիներ էին փչանում։

Այսպես էին Սեմ Միտչելի պատման մանրամասնությունները։ Այն ժամանակվա ընթացքում, յերբ նա պատմում էր, հոտի մեծ մասը, լրիվ կարգապահությամբ շարանցում էին ճանապարհորդների առաջ։

Ժամանակը հասել էր, վոր Սեմ Միտչելը կանգնի իր բանակի գլուխը, վորպեսզի արոտավայրի համար ավելի լավ տեղ ընտրի։ Նա հրաժեշտ տվեց Գլենարվանին, թռավ տեղական հրաշալի ձիու վրա, վորին իր սպասավորներից մեկը քաշում էր սանձից, և, նրանց սեղմելով բոլոր ճանապարհորդների ձեռքը, մի քանի վայրկյանից հետո կորավ փոշու ամպերում։

Կապիտանը շարունակեց իր ընդհատված ճանապարհը և արդեն այլևս կանգ չառավ ուղիղ մինչև Տալբոտ լեռան ստորոտը։

Պագանելի առաջարկով Վիկտորիա գավառով ճանապարհորդելու այդ առաջին որը տոնվեց փառավոր ընթրիքով։

Պետք է ասել, վոր այդ որն Ոլբինետն ինքն իրեն գերազանցեց։ Իր պաշարներից նա յեվրոպական մի չորս ուտելիքներ պատրաստեց, վորոնց համը տարօրինակ էր թվում Ավստրա-

լճակի ամայության սրտի մեջ։ Այնտեղ մեն, որը դրան մոտ կտորներ, խոզի միս, գարու և վարսակի ալյուրից քաղցր կարկանդակներ, հրաշալի թեյ, վիսկի, մի քանի շիշ պորտվեյն— ահա թե ինչից էր բաղկացած այդ յերեկոյի ընթրիքը։ Կարելի չէր յերևակայել, վոր գտնվում ես Մալկոլմ-Գրեայի հաշտարանում, Շոտլանդիայի հենց խորքում։

Այդ խնճույքում ամեն ինչ՝ կար, սկսած սուպից և վերջացած շամպայնիթով, վորպես քաղցրեղեն։ Բայց Պագանելը հարկավոր համարեց այդ բոլորին միացնել նաև քրոսերի լանջերին աճող վայրենի նարինջներ։

Դրանք բավական անհամ պտուղներ էին, բայց նրանց հատիկները, յեթե մարդ ուտի, բերանն այրում էին կայենյան պղպեղի նման։ Համառ աշխարհագրագետը գիտության սիրույն այնքան կամակորությամբ էր ուտում այն, վոր բոլորովին վառեց քիմքը և չէր կարողանում պատասխանել մայորի կնու հարցերին։

Հետևյալ օրը, դեկտեմբերի 26-ին, նշանավոր բան չպատահեց։ Ճանապարհորդներն անցան մինչև Նորանն-Վրեկա աղբյուրները և շատով հասան կիսով ցամաքած Մեկենզի գետին։ Յեղանակը լավ էր, շոգը միանգամայն տանելի։ Քամին հարավից էր փչում և զովություն սփռում այնպես, ինչպես հյուսիսային քամին հյուսիսային կիսագնդում։

Պագանելն այդ բանի վրա դարձրեց իր բարեկամ Ռոբերտ Գրանտի ուշադրությունը։

— Մեր գործը հաջող է,— ասաց նա,— վորովհետև միջին ջերմությունը հարավային կիսագնդում ավելի բարձր է քան հյուսիսայինում։

— Ինչո՞ւ համար,—հարցրեց տղան։

— Դու հարցնում ես, թե ինչո՞ւ համար — Ռոբերտ,—պատասխանեց Պագանելը։— Մի՞թե դու յերբեք չես լսել, վոր յերկիրն ամենից շատ ձմեռն է արևին մոտիկ լինում։

— Յես այդ գիտեմ։

— Յեվ վոր ձմեռը ցուրտը նրանից է առաջանում, վոր արեգակի ճառագայթները շեղակի յեն ընկնում յերկրի վրա։

— Իհարկե։

— Հրաշալի, իմ տղա։ Հենց այդ պատճառով էլ հարավային կիսագնդում ավելի տաք է, քան թե հյուսիսայինում։

— Ես չեմ հասկանում,— պատասխանեց Թոլինեն, աչքերը լայն բանալով։

— Լավ մտածի՛ր,— ասաց Պագանելը։— Երբ վոր Եվրոպայում ձմեռ է, տարվա ի՞նչ ժամանակն է այստեղ, Ավստրալիայում, մյուս կիսագնդում։

— Ամառ է,— պատասխանեց Թոլինեն։

— Ահա, հենց դրա շնորհիվ, վոր [illegible] այդ ժամանակ յերկիրն արեգակին ավելի մոտիկ է գտնվում... Հիմա հասկանո՞ւմ ես։

— Հասկանում եմ։

— Ամառը հարավային կիսագնդում ավելի շոգ է, քան հյուսիսային կիսագնդում։

— Պարզ է, պարոն Պագանել։

— Եվ այդպես, յերբ ասում են, վոր յերկիրն արեգակին ավելի մոտիկ է ձմեռը, այդ միայն մեր, հյուսիսային կիսագնդի բնակիչների վերաբերմամբ է ճիշտ։

— Ա՛յ, յես հենց դրա մասին է, վոր չեմ մտածել,— բացականչեց Թոլինեն։

— Դե՛, չմոռանաս այդ, տղաս։

Այսպիսով Թոլինեն աշխարհագրության մի փոքրիկ դաս առավ և վորպես յեզրակացություն իմացավ, վոր ըստ Ֆարենհեյտի*, Վիկտորիա գավառում միջին ջերմությունը հասնում է 70°-ի։

Զոկատը յերեկոյան ճամբար խփեց Լոնե-Դել լճից հինգ մղոնի վրա, վորը գտնվում է հյուսիսում բարձրացող Դրումոնդա լեռան և Դրոյդեն սարի արանքում, վորի ցածրիկ գագաթը պատկերվում եր հարավային հորիզոնում։

Հետևյալ օրը սայլակն արդեն Վիմերրա գետի ափերին եր, յերկայնության 143° վրա։

Կես մղոն լայնություն ունեցող գետը բարձր խեժարբեր ծառերի և ակացիաների յերկու շարքերի միջով թավալվում եր իր հանդիստ, թափանցիկ ջրերը։

Այս ու այնտեղ ծրանենու հրաշալի ծառերը աճում և հինգ վոտնաչափ բարձրությունից գետնի վրա սփռում եյին կարմիր գույներով ներկված իրենց յերկար, ճկուն ճյուղերը։ Հաղարա-

* Ըստ Ցելսիուսի մոտ 21°։

վոր թռչուններ—պիրոլներ, սերինոսներ, աղավնիներ վոսկենցի փետրավորությամբ, եւ չէր խոսում չտեսնված թռչունների մա-սին,— թռչկոտում էին գետի կանաչ գետաբույսերի մեջ: Նրանց տակ, ջրերի հարթ մակերևույթի վրա չխչխկացնում էին մի զույգ սև, յերկչոտ և անմերձենալի կարապներ: Անտարբերա-կան ջրերի այդ հավերժական թռչկոտներն խոկույն անհետացան գետի վտակներում, վորը քմահաճորեն գալարվում էր կա-խարդական հովիտով: Ֆուրգոնը կանգ առավ թավ կանաչ խո-տերի գորգի վրա, վոր հասնում էր ուղիղ մինչև գետը և ծաղա-վոր ժապավենի նման յեզրապատում էր նրա ջրերը: Վոչ մի տեղ կամուրջի կամ լաստանավի նշաններ չկային: Բայց և այնպես, պետք էր մյուս ափն անցնել:

Այրտոնն զբաղվեց ծանծաղուտ փնտրելով: Քառորդ մղոնի վրա, հոսանքի հետ գետի վեր՝ գետը նրան ավելի պակաս խո-րություն թվաց, և նա վորոշեց մյուս ափն անցնել այս տե-ղով:

Զոնդումը ցույց տվեց, վոր խորությունն այստեղ յերեք վոտնաչափից ավելի չէ:

Ֆուրգոնն առանց վտանգի յենթարկվելու կարող էր ճանա-պարհվել:

— Ուրիշ վո՞չ մի միջոց չկա գետի վրայով անցնելու,— հարցրեց Գլենարվանը բոցմանին:

— Վո՛չ, սեր,— պատասխանեց Այրտոնը,— բայց այս ան-ցումն ինձ անվտանգ է թվում:

— Ավելի լավ չէ՞, վոր կանայք դուրս գան ֆուրգոնից:

— Վոչ մի դեպքում: Իմ յեզների վոտքերը պինդ են: Յես հանձն եմ առնում ուղևորել նրանց ճիշտ ճանապարհով:

— Գնացեք, Այրտոն, յես վստահում եմ ձեզ,— ասաց Գլե-նարվանը:

Ճանապարհորդները շրջապատեցին ծանր սայլը և վճռակա-նորեն մտան ջուրը: Սովորաբար, յերբ սայլակները անցա-ծում են ծանծաղուտով, նրանց շրջապատում են դատարկ տա-կառների շղթայով, վորոնք նրանց պահում են ջրի մակերևույ-թի վրա՝ Բայց այստեղ բացակայում էր այդ լողացող գոտին: Մնում էր ամբողջապես վստահել յեզների բնազդին և Այրտոնի զգուշությանը:

Այդ վերջինն իր նստած տեղի բարձունքից կառավարում էր



Ֆուրգոնը ծռվեց կողքի վրա։

տայլը։ Մայրն ու յերկու նավաստի առջևվից եյին գնում։ Գլենարվանն ու Ջոն Մանգլսը գտնվում եյին Փուրգոնի յերկու կողմերին, միշտ պատրաստ ամեն րոպե ոգնության գալու ճանապարհորդներին։ Պագանելն ու Ռոբերտը փակում եյին յերթը։

Մինչև գետի մեջտեղն ամեն ինչ լավ եր գնում։ Բայց այստեղ խորությունը մեծացավ, և ջուրը առանցքներից վերև բարձրացավ։ Կորցնելով վոտների տակի հողը, յեզները ծանծաղուտից մի կողմի վրա փախան, քաշելով իրենց հետևից Փուրգոնը։ Այրտոնը, շատ համարձակ եր գործում։ Նա թռավ ջրի մեջ և յեզների պոզերից բռնելով, առխոսեց նրանց յետ դառնալ ուղիղ ճանապարհի վրա։

Այդ ժամանակ մի անակնկալ ցնցում կատարվեց, Փուրգոնը ծովեց կողքի վրա, ջուրը վողողեց համապարհորդուհիների վոտքերը և, չնայած Ջոնի և Գլենարվանի բոլոր ջանքերին՝ պահելու Փուրգոնը— հոսանքն սկսեց տանել այն։ Դա շատ վտանգավոր րոպե յեր։ Բարեբախտաբար յեզների ամբողջ ընվածքը ուժով առաջ անցավ և Փուրգոնն ավելի ծանծաղ տեղ դուրս բերեց։ Շուտով թե՛ ձիերը և թե՛ յեզներն իրենց վոտքերի տակ գետի ափը տանող վերելք զգացին, և կարճ ժամանակից հետո մարդիկ և կենդանիներն արդեն գետի մյուս ափին եյին, այն չափով թաց, վոր շատ և թրջված եյին։

Անցումի միակ հետևանքն այն յեղավ, վոր Փուրգոնի առաջին մասը խախտվեց և Գլենարվանի ձին պայտը կորցրեց։ Հարկավոր եր անհապաղ կարգի բերել այդ վնասվածքները։ Բայց ամայության մեջ դա արդեն այնքան էլ հասարակ գործ չեր։ Դրությունն Այրտոնը փրկեց, վոր առաջարկեց գնալ Բլեկ-Պոյնտ կայարանը, վորը գտնվում եր քսան մղոնի վրա դեպի հյուսիս, և դարբին բերել այնտեղից։

— Գնացե՛ք, սիրելի Այրտոն,— ասաց նրան Գլենարվանը։— Ձեզ ինչքա՞ն ժամանակ ե հարկավոր, վորպեսզի գնաք այնտեղ և վերադառնաք։

— Տասնհինգ ժամ, վոչ ավել,— պատասխանեց Այրտոնը։

— Այն ժամանակ— ճանապարհվեք։ Սպասելով ձեր վերադարձին, մենք կանգ կառնենք ճամբարում, Վիմերրայի ափին։

Մի քանի րոպեյից հետո բոցմանը Թոմ Վիլսոնի ձիու վրա և կորավ պատկառուկների խիտ գեռաբույսերի մեջ։

## ԹՅՈՐԿ ՅԵՎ ՍՏՅՈՒԱՐՏ

Ցերեկվա մնացորդը նվիրեցին հանգստանալու։ Ճանապարհորդներն զբաղվում էին Վիկտորիայի ափին, զրուցելով և վայելելով չըլքապատող բնությամբ։

Գույնզգույն մոխրագույն կոուկինները նրանց մոտենալիս սուր ճիչով բարձրանում էին օդի մեջ։ Կիրոլները, քանդակոտ-կարմիր թռչունները ճախրում էին ջուջանների ցողունների արանքում, ճուտերը թողնում էին իրենց սովորական ձկնորսությունը և թռչում, հեռանում էին, և միայն ծիածանի բոլոր գույներով փայլող կապտագլուխ թութակները, ծիրանի գլխով և դեղին պարանոցով փոքրիկ ռոզելները և կարմիր-կապտավուն փետրավորությամբ վրձնալեզու թութակները շարունակում էին իրենց խլացուցիչ ճռվողյունը խեժաբեր ծառերի գագաթներին։

Մերթ հանգիստ քրքջացող ջրի մոտ կանաչ խոտի վրա պառկելով, մերթ հենց այնպես թափառելով պատկառուկների գեղարույսերի մեջ, ճանապարհորդները վայելում էին բնությունը մինչև արեգակի մայր մտնելը։

Հանկարծակի վրա հասնող գիշերը նրանց գտավ կանգառի տեղից կես մղոն հեռավորության վրա։ Նրանք վերադարձան գնդի վրանները, ղեկավարվելով ոչ թե բևեռային աստղով, որ անտեսանելի էր հարավային կիսագնդում, այլ հորիզոնի վրա փայլող Հարավային Խաչի համաստեղությամբ։

Օլբինեթն ընթրիքը վրանում էր պատրաստել։ Բոլորը նըստեցին սեղանի շուրջը։ Այդ ընթրիքի առանձին հաջողությամբ պատվեց Վիլսոնի խփած թութակների ռագուն։

Ընթրիքը յերկարեց, և դա պատճառ դարձավ, որ նրանք հեռու չցրվեն այդպիսի հրաշալի գիշերը։ Հելենան խնդրեց Պագանելին պատմել ավստրալիական հայտնի ճանապարհորդների մասին վաղուց խոստացած պատմությունը։

Պագանելը չստիպեց իրեն երկար խնդրել և ուրախությամբ համաձայնեց։

Նրա ունկնդիրները նստեցին հրաշալի պատվանդանի մոտ։ Օդի մեջ սպիտակին էին տալիս սիգարի ծխի ողակները։ Նրանք վերև էին բարձրանում և անհետանում ծառի թավ տերևների մառախուղում։

Աշխարհագրականը ծածկելով էր հիշողությունը պատմու-թյունն ակունք։

— Դուք, ի հարկե, չեք կարող մոռանալ, բարեկամներ, և հատկապես դուք, մայոր, ճանապարհորդների այն չորսը, վո-րը յես ձեզ թվեցի «Դունկանի» նավասրահում։ Բոլորից, ովքեր փորձել են թափանցել մայր ցամաքի խորքը, միայն չորսին է հաջողվել կտրել այն հարավից դեպի հյուսիս և հյուսիսից դե-պի հարավ։ Դրանք են. Բյորկ 1860 և 1861 թվերին, Մակ Կին-լեյ 1861 և 1862 թվերին, Լենդսբորո 1862 թվին և Ստյուարտ՝ նույնպես 1862 թվին։

Մակ Կինլեյի և Լենդսբորոյի մասին յես շատ քիչ տեղեկու-թյուն կարող եմ հաղորդել ձեզ։

Առաջինը Ադելաիդայից մինչև Կարպենտարիի ծոցն է գնացել. յերկրորդը Կարպենտարիից մինչև Մելբուռն։ Նրանց յերկուսն էլ ավստրալիական կոմիտեն էր ուղարկել Բյորկին փնտրելու համար, վորն այլևս չվերադարձավ և չէր էլ կարող վերադառնալ։

Բյորկ և Ստյուարտ — ահա այն յերկու անվեհեր հետազո-տողների անունները, վորոնց մասին յես պատրաստվում եմ պատմել ձեզ առանց յերկար առաջաբանների։

1860 թվականի օգոստոսի քսանին Թագավորական Մելբուռ-նյան ընկերությունը մի արշավ կազմակերպեց իռլանդացի սպա Օ'Հար Բյորկի հրամանատարության տակ։ Նրան ուղեկցում էին տասնմեկ մարդ. յերիտասարդ աստղագետ Վիլյամ Ջոն Ուիլսը, դոկտոր Բեկլերը, բուսաբան Գրեյը, հնդկական բանակի յերի-տասարդ սպա Կինգը, Լենդելսը, Բրահեն և մի քանի սիպայի-ներ*։

Քսանհինգ ձի և քսանհինգ ուղտ տանում էին իրենց վրա ճանապարհորդներին, նրանց ծանրոցը և տասնութ ամսվա ճա-նապարհի ուտեստի պաշարը։ Արշավախումբն ուղևորվեց դեպի Կարպենտարիի ծոցը, նրա հյուսիսային ափը և առաջ պիտի գնար Կուպերս գետի ընթացքով։ Առանց վորևե դժվարությունների, արշավախումբը կտրեց Մյուրրեյի և Դառլինգի վտակած հողերը և ժամանեց գաղութի սահմանում գտնված Մենինդիյի կայանը։

Այնտեղ պարզվեց, վոր մեծ բազմությունը չափազանց ծանրաբեռ-նող բան է։ Այս հանգամանքը և Բյորկի բնավորության մի վո-

* Անգլիական գաղութային բանակի զինվորներ։



Գիշերը վրա հասաւ։

բոլ ավելորդ համառությունը պառակտում ստեղծեցին արշավախմբի անդամների մեջ։ Լանդելը մի քանի ինդուս-գլողների հետ բաժանվեց արշավից և վերադարձավ Դառլինգի ափերը։ Բյորկը շարունակեց առաջ շարժվել։ Գնալով մերթ ձոր և սառցարեն վտանգված հովիտներով, մերթ խոնավությունից բոլորովին զուրկ քարքարոտ տարածություններով, նա հասավ մինչև Կուպեր—Կրիկ։ Նոյեմբերի 20-ին, այսինքն մեկնումից յերեք ամիս հետո, նա առաջին անգամ գետի ափին լրացրեց ուտելիքի պաշարը։

Ճանապարհորդներն այստեղ մի վորոշ ժամանակ մնացին, հետախուզելով հարմար ճանապարհ դեպի Հյուսիս, ուր նրանք կապահովվեյին ջրով։ Մեծ դժվարություններով նրանք հասան այն տեղը, վոր իրենք Ուիլս ամրոց անվանեցին։ Նրանք այստեղ պոստ հիմնեցին և շրջապատեցին այն ցիցերի ցանկապատներով։ Այդ պոստը գտնվում եր Մելբուռնի և Կարպենտարիի ծոցի ճանապարհի կեսին։ Այստեղ Բյորկն իր ջոկատը յերկու մասի բաժանեց։ Մի մասը, Բրագեյի հրամանատարությամբ, պիտի մնար Ուիլս ամրոցում յերեք ամսվա ընթացքում և ավելի, յեթե կենդանական մթերքները բավական լինեյին և սպասեր մյուսի վերադարձին։ Մյուս մասը պիտի շարունակեր ճանապարհը։ Այս մասը բաղկացած եր միայն չորս մարդուց․ Բյորկ, Գրեյ, Կինգ և Ուիլս։ Նրանք իրենց հետ վեց ուղտ և յերեք ամսվա անհրաժեշտ պաշար վերցրին․ յերեք կվինտալ ալյուր, վեց կվինտալ ձիու չորացրած միս, հարյուր ֆունտ աղը դրած խոզի միս, յերեսուն ֆունտ պաքսիմատ,— ամբողջը, ինչ վոր հարկավոր եր վեցհարյուր փարսախ ճանապարհորդելու համար։

Եվ այսպես, այդ չորս մարդը ճանապարհվեցին։ Քարքարոտ անապատի դժվարին անցումից հետո նրանք յեկան Եյրե գետի ափերը, Շտուրտի չվացուցակի 1845 թվականի վերջին կետը, և այնտեղից ուղևորվեցին դեպի Հյուսիս, ըստ հնարավորության խստորեն պահելով յերկայնության հարյուր քառասուն աստիճանը։

Հունվարի յոթին, անտանելի խանձող տապի ժամանակ, նրանք կտրեցին արևադարձը։ Հաճախ նրանց խաբում եյին միրաժները, ավելի հաճախակի դաժան ծարավն եր տանջում, վորը հագեցնել հաջողվում եր միայն մեծ ամպրոպների օրերին։ Հազվագյուտ դեպքերում եյին նրանք պատահում իրենց ճանա-

պարհին թափառաշրջիկ տեղացիների կայանների և հիմք չունե-
յին նրանցից գանգատվելու։ Ընդհանուր առմամբ այն ճանապար-
հը, վոր գնում էր բնական արգելքներից հեռու— սարեր, լճեր և
գետեր,— չափազանց դժվար չէր։

Հունվարի տասներկուսին հեռվում ավազոտ բլուրներ յերե-
վացին, նույն թվում Թորբոսի լեռը, իսկ նրանց հետևում գրանի-
տի սարերի շղթան, վորոնք այստեղ «ռենդժս» են կոչվում։ Այս-
տեղից սկսած ճանապարհը դժվարին և հոգնեցուցիչ էր դառ-
նում։ Արշավախումբն առաջ էր քարշ գալիս, ծայրահեղ լարվա-
ծությամբ։ Բեռնակիր կենդանիները համառեցին և չէին ուզում
գնալ։

«Մենք գետեր անընդհատ բնադավայրում էինք,— գրում էր Բյոր-
կը ճանապարհի օրագրում։— Ուղտերը քրտնում են վախից»։
Ցեռանդի ահագին լարվածության գնով ճանապարհորդները հա-
սան Տերներ գետի ափերը, իսկ հետո նաև մինչև Ֆլինդերս գե-
տի վերին հոսանքին, վորտեղ նրանցից առաջ, 1841 թվականին
Ստոկսն էր յեղել։ Այդ գետը յերկու շարք արմավենիների և եվ-
կալիպտների միջով է հոսում և թափվում է Կարպենտարիի ծոցը։
Ովկիանոսի մոտիկությունն արտահայտվում էր ճահճացած տեղե-
րի առատությամբ։ Ուղտերից մեկը կորավ ճահիճում, մնացած-
ները հրաժարվեցին առաջ գնալ։ Կինգը և Գրեյը ստիպված էին
մնալ նրանց հետ։ Բյորկը և Ուիլսը շարունակեցին իրենց ճանա-
պարհը դեպի հյուսիս և, մի շարք դժվարություններ հաղթա-
հարելով,— այդ մասին խուլ կերպով ասված է օրագրում,—
հասան մի ճահճոտ տեղ, վորը լցնում էր մակընթացության ջու-
րը, բայց այնուամենայնիվ ովկիանոսը չտեսան։ Այդ կատարվեց
1861 թվականի փետրվարի 11-ին։

— Ուրեմն,— ասաց Գլենարվան,— այդ ճանապարհորդները
չկարողացա՞ն շարունակել իրենց հետազոտությունը։

— Այո՛, դա այդպես է։ Ճահիճների յեզերքում հողն այնքան
քայլափոխում սպառնում էր վոչնչացնել նրանց։ Ստիպված էին
նահանջել և վերադառնալ Ուիլս ամրոցում թողած իրենց ըն-
կերների մոտ։ Դա շատ վշտամորմոք վերադարձ էր, կարող եք
հավատալ ինձ։ Թույլ, ուժասպառ, վոտքերը հազիվ փոխող
Բյորկն ու իր ուղեկիցը հասան մինչև Կինգի և Գրեյի կայանը։
Այստեղ միացյալ ջոկատը ուղևորվեց դեպի հարավ, Կուպեր-Կրիկի
մոտ, արդեն անցած ճանապարհով։

Այդ ճանապարհորդության ժամանակ նրանց կրած բոլոր միջադեպերի, վտանգների և տառապանքների մասին, մենք ըստույգ բան չգիտենք, վորովհետև այդ որերում, օրատետրերի մեջ, գրանցումներ համարյա չկան։ Բայց մենք իրավունք ունենք յենթադրելու, վոր այդ փորձությունները չափազանց ծանր եյին։

Յեվ իսկապես, Կուպեր–Կրիկի հովիտը ապրիլին արդեն ժամանեցին միայն յերեք ճանապարհորդ։ Գրեյը գրկանքներից մեռավ ճանապարհին։ Չորս ուղտ սատկեցին։ Յեթե Բյորկին և նրա ընկերներին հաջողվեր հասնել մինչև Ուիլս ամրոցը, ուր նրանց սպասում եր Բրահեն և պարենի պաշարները, նրանք կփրկվեյին։ Ամբողջ ուժերը լարելով, նրանք առաջ են քարշ գալիս դեռ մի քանի որ էլ և վերջապես ապրիլի 21-ին հասնում են ամրոցի ցանկապատին և ներս են մտնում։ Նա դատարկ եր։ Նախորեյին Բրահեն թողել եր այն, հինգ ամիս իզուր սպասելուց հետո։

— Թողե՞լ,— բացականչեց Ռոբերտը։

— Այո՛, թողել է հենց նախորեյին,— պնդեց Պագանելը։— Նրա թողած գրությունը վկայում եր, վոր յոթ ժամ առաջ նա ամրոցն ե լքել։ Բյորկը չեր էլ կարող յերազել նրա հետևից հասնելու։ Դժբախտ ճանապարհորդները մի քիչ կազդուրվեցին պահեստում մնացած ուտելիքով, բայց նրանք յերթևեկության միջոցներ չունեյին, իսկ մինչև Դառլինգ դեռ վեցհարյուր կիլոմետրից ավել եր մնացել։

Այն ժամանակ Բյորկը, հակառակ Ուիլսի կարծիքին, վորոշում ե ուղեվորվել դեպի Գոպլես սարի տարածքում գտնված ավստրալիական գաղութը, վոր Ուիլս ամրոցից յերկուհարյուր քառասուն կիլոմետրի վրա յեր։ Յերեք դժբախտներ ճանապարհ են ընկնում։ Վողջ մնացած յերկու ուղտերից մեկը կորչում ե Կուպեր–Կրիկի վտակի ճահճուտներում, իսկ յերկրորդն այնքան ե թուլանում, վոր մի քայլ անգամ չի կարողանում անել։ Ստիպված են լինում սպանել նրան և միսն ուտել։ Շուտով վերջանում են ուտելիքի վերջին պաշարները։ Թշվառներն ստիպված եյին սնվել միայն նարդուով, ուտելու սերմեր ունեցող ջրային բույսով։ Նրանք չեն համարձակվում հեռանալ Կուպեր–Կրիկի ափերից։ Չորս կողմում վոչ մի կաթիլ ջուր չկա։ Հրդեհը վոչնչացնում ե նրանց ճամբարը։ Անկողինները այրվում են։ Այժմ

նրանք անդարձ կորստյան են մատնված։ Նրանց մնում է միայն մեռնել։

Բյորկը Կինդին իր մոտ է կանչում։ «Թեև մի քանի ժամից ավել չեմ ապրի,— ասում է նա,— Ահա իմ ժամացույցը և ճանապարհորդական օրագիրը։ Ես ձեզ խնդրում եմ, իմ մահից հետո ատրճանակը դնեք աջ ձեռքումս և այդպես թողնեք մնամ հողի վրա, առանց թաղելու»։ Սրանք Բյորկի վերջին խոսքերն էին։ Նրա հոգեվարքը բռնեց և հետևյալ օրվա առավոտյան ժամի ութին նա մեռավ։

Գլխավորապես, վշտից խոցված Կինդը դես ու դեն ընկավ մի վորևէ տեղական ցեղ փնտրելու համար։ Երբ նա վերադարձավ, Ուիլսը նույնպես մեռած էր։

Կինդը ապաստանեց տեղացիների մոտ, և սեպտեմբերին նրան գտավ Հովիթի արշավախումբը, վոր ուղարկված էր Բյորկին փնտրելու։ Այսպիսով ավստրալիական մայր ցամաքը կտրող չորս ճանապարհորդներից միայն մեկը կենդանի մնաց։

Պագանելի պատմվածքը խոր տպավորություն թողեց ունկնդիրների վրա։ Ամեն մեկը մտածում էր նավապետ Գրանտի մասին, վորը, ինչպես և Բյորկը, կարող է պատահել ստիպված է լինել թափառել այդ վտանգավոր մայր ցամաքում։ Արդյո՞ք, խորտակումից ազատվածները խուսափել են այն տառապանքներից, վորոնք բաժին ընկան դժբախտ հետազոտողներին։ Այս զուգահեռը Բյորկի և Գրանտի միջև այնքան էր բնական, վոր Մերիի աչքերն արցունքով լցվեցին։

— Հայր, խեղճ հայր,— շշնջաց նա։

— Մի վշտանաք, օրիորդ Մերի,— ասաց Ջոն Մանգլսը։— Այդ վտանգները դարանամուտ են լինում ճանապարհորդներին միայն մայր ցամաքի խորքերում։ Իսկ նավապետ Գրանտը, ինչպես և Կինդը, ընկել է տեղացիների ձեռքը և, նույնպես, ինչպես Կինդը նա կազատվի։ Նա վոչ մի կերպ չի կարող այնպիսի վտանգավոր դրության մեջ ընկնել, ինչպես Բյորկը։

— Վոչ մի կերպ,— պնդեց Պագանելը։— Կրկնում եմ ձեզ, թանկագին Մերի, ավստրալիական վայրենիները հյուրասեր և հեզահամբույր մարդիկ են։

— Ո՜, յեթե այդ այդպես լիներ,— ախ քաշեց Մերին։

— Իսկ Սայմո՞ւրը,— հարցրեց Գլենարվանը, վորպեսզի խոսակցության նյութը փոխի։

— Ստյուա՞րտը,— վերահարցրեց Պագանելը։— Մ՛, Ստյուարտն ավելի հաջողակ դուրս յեկավ և նրա անունն այժմ գրված է Ավստրալիայի պատմության մեջ։ Ջոն Մակ Դուալ Ստյուարտը, ձեր հայրենակիցը, բարեկամներս, դեռ 1858 թվականին ձեռնարկեց իր առաջին ճանապարհորդությունն Ավստրալիայում, ուղեկցելով Շտուրտին, Ադելաիդայից դեպի հյուսիս։ 1860 թվականին յերկու ուղեկիցներով նա փորձեց թափանցել ցամաքի խորքը, բայց այդ փորձը հաջողությամբ չպսակվեց։ Սակայն Ստյուարտի պարծենկոտությունը կոտրելն այնքան էլ հեշտ չէր։ 1861 թվականի հունվարի 1-ին, տասնմեկ վճռական մարդկանցից բաղկացած ջոկատի գլուխն անցած, նա նորից դուրս յեկավ Չեմբերս-Կրիկից։

Այդ ջոկատն ընդամենը յերկու հարյուր հիսուն կիլոմետր հեռու կանգնեց Կարպենտարիի ծոցից։ Բայց այստեղ, ուտելիքի պակասության պատճառով, նա ստիպված էր Ադելաիդա վերադառնալ, անապատի ցամաքը հենց այնպես էլ դեռ չկտրած։ Իրեն ջարդված չհամարելով, Ստյուարտը թվով յերրորդ արշավը կազմակերպեց, վորոշելով այս անգամ արդեն, ինչ գնով ուզում է լինի, նպատակին հասնի։

Հարավային Ավստրալիայի պառլամենտն այդ նոր արշավն իր հովանավորության տակ առավ և նրա կազմակերպման համար Ստյուարտին յերկու հազար ֆունտ ստեռլինգ նպաստ ավեց։ Ստյուարտը մանրամասներին կերպով պատրաստվեց նոր արշավին։ Նրան մասնակցում էին Ստյուարտի բարեկամները. նատուրալիստ Ուոտերհաուզը, Ֆրինգը, Կեկուիկը, նախկին արշավների ընկեր Վուդֆորդը, Ոլդը և ուրիշները, ընդամենը՝ տասը մարդ։

Ստյուարտը ջրի համար տասը հատ տիկ վերցրեց ամերիկական կաշվից, յուրաքանչյուրը յոթ գալլոն տարողությամբ և 1862 թվականի ապրիլի 5-ին արշավի մասնակիցներն արդեն հասան Նյուկեստլ–Ուոտերի ջրաբաշխին, անցնելով տասնութերորդ զուգահեռն այն անգամ, վորտեղից անցյալ արշավին Ստյուարտն ստիպված էր յետ դառնալ։ Նոր արշավի չվացուցակը գծված էր մոտավորապես հարյուր յերեսուն մեկերորդ միջօրեականի յերկարությամբ, այսինքն յոթ աստիճան դեպի արեվմուտք Բյորկի արշավի չվացուցակից։

Նյուկեստլ–Ուոտերի ջրաբաշխը դարձավ Ստյուարտի արշա-

վի հեռագրա հեռագրությունների քաղաքն։ Նրան շրջապատող խիտ անտառները խանգարում էին դեպի հյուսիս և հյուսիս-արևելք գնալ։ Նույնպես անհաջող էին դեպի արևմուտք, Վիկտորիա գետի մոտ ճեղքելու փորձերը։ Անանցանելի, կուսական անտառները փակում էին բոլոր ճանապարհները։

Այն ժամանակ Ստյուարտը վորոշեց անդրադառնալ ճամբարը, և նրան հաջողվեց փոխել այն մի քիչ ավելի հյուսիս, Գովերնվյան ճահիճների մոտ։ Այստեղից գետի արևելք խոտավետ տափաստան էր գնում։ Այդ ճանապարհով գնալով, Ստյուարտն ընկավ Դեյլիի վտակների վրա և նրա հոսանքով յերեսուն մղոն գետի վեր անցավ։

Շրջապատող տեղագրությունն արտասովոր գեղեցիկ էր։ Նրա գատարկ արոտները կրախտավորեցնեին ամեն մի ականատեսի։ Եվկալիպտներն այստեղ ահագին բարձրության էին հասցնում իրենց գագաթները։ Հիացած Ստյուարտը շարունակում էր առաջ գնալ։ Նա հասավ Լեյխարդտի հայտնաբերած Ստրանգուեյ և Ռոպեր-Կրիկ գետերի ափերին։ Այդ գետերի հուներն ընկնում էին արմավենու հրաշալի անտառների միջով, վոր արժանի էին արևադարձային այդ շերտին։ Արշավախումբն այստեղ տեղական ցեղերի հանդիպեց, վոր նրանց լավ ընդունելություն ցույց տվեց։

Այստեղից Ստյուարտի ուղղությունը դեպի հյուսիս-արևմուտք վերցրեց, փնտռելով Վան-Դիմենի ծոցը թափվող Ադելաիդա գետի ակունքները։ Արշավի ճանապարհն անցնում էր Արնհեմի յերկրի միջով, կաղամբի դաշտերի գետաբույսերի, բամբուների, առճիների և պանդանուսների միջով։ Ադելաիդայի հունը լայնանում էր, նրա ափերը ճահճոտ էին դառնում։ Ովկիանոսը մոտիկ էր։

Յերկուշաբթի որը, հուլիսի 22-ին, Ստյուարտը դադար առավ Ֆրեշ-Ուոտեր ճահճի մոտ։ Ամբողջ որն արշավախմբի առաջ գործն այն էր, վոր վառքով անցնում էր իր ճանապարհը կտրող անթիվ վտակները։ Ստյուարտն իր ուղեկիցներից յերեքին ուղարկեց, վոր ավելի հարմար ճանապարհ փնտռեն։ Հետևյալ որը, մերթ շրջանցելով խոր ջրամբարները, մերթ թաղվելով յերերուն հողերի մեջ, նա վերջապես մի սարահարթի վրա դուրս պրծավ, վորը ծածկված էր կանաչ խոտով, խեժաբեր ծառերի խմբերով և ինչ վոր մանրաթել կեղևով ծառերով։ Այնտեղ ոդի մեջ

սլանում էին բադերի, իբիսների և յերկնքում ջրահավքերի յերամները։ Այստեղ անդաստաններ չկային, բայց հեռվում, հորիզոնի վրա, խարույկների ծխիկներ էին յերևում։ Ադելայիդայից մեկնելուց ինն ամիս հետո, հուլիսի քսանչորսին, Ստյուարտը վաղ առավոտյան ճանապարհ ընկավ դեպի հյուսիս։ Նա ցանկանում էր հենց նույն օրը հասնել մինչև օվկիանոսի ափը։ Ճանապարհը շարունակ սարն ի վեր էր գնում։ Հողը ծածկված էր յերկաթի հանքային կտորներով և հրաբխային ծագումի քարերով։ Ծառերը սկըսեցին կարճանալ և պակասել։ Ճանապարհորդների առաջ հանկարծ մի լայն ջրատեղն հովիտ ցցվեց, վոր վերջում յեզրազարդված էր թփուտով։ Ստյուարտը պարզ լսում էր օվկիանոսի մակընթացության աղմուկը, բայց վոչինչ չէր ասում իր ուղեկիցներին։ Նրանք մտան թփուտի թավուտը, ճեղքելով և զուրս գալով վայրենի խաղողի գետաքույրի միջով։

Մի քանի քայլ ևս — և նրանք արդեն Հնդկական օվկիանոսի ափին կլինեն։

«Ծովը՛, ծովը՛» գոռում է զարմացած Թրինգը։

Մնացածները մոտ են վազում, և յեռանդի «կեցցե»ն վողջունում է օվկիանոսին։

Ավստրալիայի մայր ցամաքը չորրորդ անգամ մի ծայրից մյուս ծայրն անցան։ Ստյուարտն իր յերեսը, ձեռքերն ու վոտքերը լվաց Հնդկական օվկիանոսի ջրով։ Այստեղ նա վերադարձավ հովիտ և ծառերից մեկի վրա փորագրեց. իր անուն-ազգանվան սկզբնատառերը՝ «Ջ. Մ. Դ. Ս.»։ Դրանից հետո միայն օվկիանոսը թափվող արագահոս գետակի ափին ճամբար խփվեց։

Հետևյալ օրը Թրինգը գնաց հետախուզության։ Նա պիտի պարզեր, անցանելի յե, արդյոք դեպի Ադելայիդայի գետաբերանը տանող հարավ-արևմտյան ճանապարհը։ Բայց հողը չափազանց յերերուն էր, ձիերը չէյին կարող գնալ նրանով։ Ստիպված էյին հրաժարվել այդ պլանից։

Այն ժամանակ Ստյուարտը, մի բարձր ծառ ընտրելով, կտրեց նրա ստորին ճյուղերը և գագաթի վրա բարձրացրեց ավստրալիական դրոշակը։ Ծառի կեղևի վրա նա հետևյալ բառերը փորագրեց. «Փորիր հողը հարավային կողմից, մի վոտնաչափ տարածությամբ»։

Եվ յեթե յերբևիցե ճանապարհորդը նշան անելով քանդի հողը, նա այնտեղ մի թիթեղյա տուփիկ կգտնի մի փաստաթղթ-

*թով, վորի բովանդակությունն անջնջելի կերպով մեխվել է իմ հիշողության մեջ։ Ահա նա.*

**«ԱՆՑՈՒՄ ԱՎՍՏՐԱԼԻԱԿԱՆ ՑԱՄԱՔՈՎ**
**ՀԱՐԱՎԻՑ ԴԵՊԻ ՀՅՈՒՍԻՍ**

Հետազոտողների մի խումբ, Ջոն Մակ Դուալ Ստյուարտի գլխավորությամբ այստեղ ժամանեց 1862 թվականի հուլիսի 25-ին, որանից հետո, երբ կտրեց ամբողջ Ավստրալիան՝ Հարավային ծովից մինչև Հնդկական օվկիանոսի ափերը, անցնելով երկրի կենտրոնով։ Նրանք Ադելաիդան թողին 1861 թվականի հոկտեմբերի 26-ին, իսկ 1862 թվականի հունվարի 21-ին արշավեցին դեպի հյուսիս, վերջին բնակելի վայրից։ Վորպես այս չքնաղին դեպքի հիշատակ, նրանք այստեղ ավստրալիական դրոշակ բարձրացրին և ծառի վրա փորագրեցին արշավը գլխավորողի անուն-ազգանվան սկզբնատառերը։ Ոլլ ռայտ*»։

*Շարունակության մեջ հաղորդվում էին Ստյուարտի և իր ընկերների առարկությունները։*

*Այսպես ավարտվեց այդ մեծ գործը, վոր արձագանք գտավ ամբողջ աշխարհում։*

*— Հուսով եմ, վոր այդ անվեհեր մարդիկ բարեհաջող կերպով վերադարձան իրենց հարազատ ընկերների մոտ,— հարցրեց Հելենան։*

*— Այո՛,— պատասխանեց Պագանելը,— բայց վոչ առանց աշխատանքի և զրկանքների։ Ամենից շատ փորձությունները Ստյուարտին բաժին ընկան։ Նրա առողջությունն արդեն ուժեղ կերպով խախտվել էր լնդախտով, և նրանք վերադարձի ճանապարհը բռնեցին դեպի Ադելաիդա։ Սեպտեմբերի սկզբին հիվանդությունն այնքան հեռու գնաց, վոր նա այլևս հույս չուներ կենդանի հասնել մինչև մի բնակելի տեղ։ Նա չէր կարողանում մնալ թամբի վրա, և նրան տանում էին երկու ձիերի մեջ կախված պատգարակով։ Հոկտեմբերի վերջին նա արյուն էր թքում։ Թվում էր, վոր նրա դրությունն անհույս է։ Ուղեկիցները մի ձի մորթեցին, վորպեսզի բուլյոն յեփեն նրա համար։ Հոկտեմբերի 28-ին նա զգաց, վոր մեռնում է։ Բայց դա պատահար տեղ-*

* Ամեն ինչ կարգին է։

նաց էր, և դեկտեմբերի 10-ին փոքրիկ ջոկատն ամբողջ կազմով հասավ մինչև առաջին բնակելի տեղը։

Դեկտեմբերի 17-ին Ստյուարտը մուտք գործեց Ադելաիդա, քաղաքի ամբողջ բնակչության վողջույնի հիացմունքի բացականչություններով։ Բայց նրա առողջությունը հիմնավորապես խախտված էր, և աշխարհագրական ընկերությունից վոսկե մեդալ ստանալուց հետո նա անհապաղ գնաց հայրենիք, իր սիրելի Շոտլանդիան, ուր մենք նրան կտեսնենք Ավստրալիայից վերադառնալուն պես*։

— Այդ մարդը, — նկատեց Գլենարվանը, — օժտված էր արտասովոր բարոյական ուժով, վորն ավելի շատ է անհրաժեշտ նման քաջագործություններ անելու համար, քան ֆիզիկական առույգությունը։ Շոտլանդիան իրավունք ունի պարծենալու իր այդ զավակով։

— Իսկ Ստյուարտից հետո՞, — հարցրեց Ելենան։ — Արդյո՞ք, ուրիշ ճանապարհորդներ էլ փորձել են հենց այդ նույն անցումը կատարել։

— Փորձել են, — պատասխանեց Պագանելը։ — Ես արդեն ձեզ ասացի Լեյխարդթի մասին։ Այդ ճանապարհորդը դեռ 1844 թվականին յերևելի ճանապարհորդություն կատարեց Ավստրալիայով։ 1848 թվականին նա յերկրորդ ճանապարհորդությունը նախաձեռնեց դեպի հյուսիս-արևելյան մարզերը, վորից չվերադարձավ։ Արդեն տասնյոթ տարի յե անցել, բայց մինչև այժմ նույնիսկ նրա հետքն էլ չի գտնված։ Անցյալ տարի հայտնի բուսաբան դոկտոր Մյուլլերը — Մելբուռնից, հասարակական հանգանակություն հայտարարեց Լեյխարդթին փնտրող արշավ կազմակերպելու համար։ Նվիրաբերությունները ամեն կողմից թափվում էին և անհրաժեշտ գումարն արագ հավաքվեց։ Անվեհեր սկվատերների ջոկատը խելոք և ուժեղ Մակ Ինտիրի հրամանատարությամբ 1864 թվականի հունիսի 21-ին Պարուայից ուղևորվեց Լեյխարդթին փնտրելու։ Հավանորեն այս րոպեյիս, Մակ Ինտիրի ջոկատը գտնվում է ավստրալիական մայր ցամաքի հենց կենտրոնում։ Ցանկանք նրան հաջողություն

* Ժակ Պագանելն իսկապես տեսավ Ստյուարտին, Եվրոպա վերադառնալուց հետո, բայց յերկար չզրկվեց նրա ընկերությունից։ Ստյուարտը մեռավ 1866 թ. հունիսի 5-ին։

խորհուրդների մեջ և մենք ինքներս էլ ցանկանք չունենք գտնել նրանց, ով թանկ է մեզ համար։

Այս խոսքերով աշխարհագրագետը վերջացրեց իր պատմությունը։ Ժամանակն արդեն ուշ էր։ Բոլորն էլ շնորհակալություն հայտնեցին Պագանելին հետաքրքիր պատմության համար և գնացին քնելու։ Մի քանի րոպեից հետո բոլորն էլ հանգիստ քնած էին և միայն ժամացույց-թռչունը, վոր թաքնվել էր խեժաբեր ծառի ոստերում, վայրկյաններն էր հաշվում գիշերվա խաղաղության մեջ։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

## ՑԵՐԿԱԹՈՒՂԻ ՄԵԼԲՈՒՌՆԻՑ ՍԵՆԴՀՈՐՍՏ

Մայորը դժկամակությամբ իմացավ, վոր Այրտոնը թողնում է Վիմերրայի մոտի ճամբարը, վորպեսզի Բլեկ-Պոյնտ կայանը գնա դարբնի հետևից։ Բայց նա վոչ վոքի վոչ մի բառ չասաց իր անվստահության մասին «Բրիտանիայի» նախկին բոցմանի նկատմամբ և բավականացավ միայն նրանով, վոր վորոշեց չքնել գիշերը և պահպանել ճամբարը։ Սակայն գիշերն առանց արկածների անցավ։ Արևածագը բոլոր ճանապարհորդներին արդեն վոտքի վրա գտավ։

Ինչ վերաբերում է Գլենարվանին, նա մի բանից էր վախենում միայն. չլինի՞ թե Այրտոնը մենակ վերադառնա Բլեկ-Պոյնտից։ Եթե նրան չհաջողվի դարբին գտնել այնտեղ, ֆուրգոնը չի կարող ճանապարհը շարունակել։ Այդ բանը շատ օրեր կհետաձգեր արշավը, իսկ Գլենարվանը, վորն անհամբերությամբ իր նպատակին էր ձգտում, չէր հաշտվում նույնիսկ ամենաչնչին հապաղումի հետ։

Բարեբախտաբար Այրտոնն ի զուր չէր գնացել Բլեկ-Պոյնտ։ Լուսով, արեգակը ծագելուց հետո, նա վերադարձավ մի մարդու ուղեկցությամբ, վոր իրեն կայանի դարբինն էր համարում։ Դա մի ամրակազմ տղամարդ էր, լայն ուսերով, բայց ցածրիկ ճակատով և դեմքի վանող արտահայտությամբ, վորի մեջ ինչ վոր անասնական մի բան կար։ Սակայն դա հետաքրքրություն չէր ներկայացնում, յեթե միայն նա իսկապես գիտեր իր արհեստը։ Նա լռակյաց էր և ուժ ու ժամանակ չէր վատնում դատարկ շատախոսությամբ։

— Արդյոք նա լա՞վ աշխատող է,— հարցրեց Ջոն Մանգլը Այրտոնին։

— Ես նրան ավելի չգիտեմ, քան դուք, նավապետ, — պատասխանեց Այրտոնը։ — Տեսնենք։

Այն բանից, թե ինչպես դարբինն սկսեց աշխատանքը, միանգամից կարելի յեր տեսնել, վոր նա իր գործի վարպետն է։ Աշխատանքը յեռում եր նրա ձեռքերում, և նա ցուցաբերում եր նրանում արտասովոր ուժ և ճարպկություն։ Մայորը նկատեց, վոր նրա յենթադաստակների կաշին բորբոքված և կարծես թե ընդգրկված է ապարանջանով, բաց յերեույթին, արյան դեռ թարմ ճնշումների շերտով։ Բրդե եժանագին վերնաշապիկի քղանց թևերը չեյին թաղցնում նրանց։ Մայոր Մակ-Նաբսը հարցրեց դարբնին, թե վորտե՞ղ է նա ստացել այդ շատ հիվանդագին վերքերը։ Բայց նա վոչինչ չպատասխանեց և շարունակում եր աշխատել։ Յերկու ժամից հետո ֆուրգոնը նորոգված եր։

Գլենարվանի ձիու գործն ավելի հեշտ եր։ Դարբինը գիտեր յեր ընկնել և իր հետ պայտեր եր վերցրել։ Մայորն ուշադրություն դարձրեց այն բանին, վոր այդ պայտերը նշված են յերեքնուկի կոպիտ չինած նշանով, դրսի կողմից։ Մակ-Նաբսը ցույց ավեց դրանք Այրտոնին։

— Դա Բլեկ-Պոյնտ կայանի դրոշմն է, — պատասխանեց բոցմանը։ — Նրա շնորհիվ տվիլատերները հեշտությամբ են գտնում մոլորված ձիերին և իրենց յերամակների հոտերն ուրիշների հետ չեն խառնում։

Դարբինն արագ պայտեց ձին և իր աշխատանքի վարձն ստանալով, հեռացավ, ամբողջ ժամանակ չորս բառից ավել չասելով։

Կես ժամից հետո արշավախումբը ճանապարհվեց։ Պասկա-տուկների գետապտույտներից այն կողմ ձգվում եր լայն, բաց դաշտ։ Բարձր, կանաչ խոտի մեջ և ցանկապատերի կողքին, վորոնց մեջ բազմաթիվ հոտեր եյին արածում, տեղ-տեղ թափթփված եյին կվարցի կտորներ և մագնիսային յերկաթաքարի կույտեր։

Մի քանի մղոն անցնելուց հետո, ֆուրգոնը խոնավ հողամաս ընկավ, վորի մեջ նրա անիվները խոր հետքեր եյին թողնում։ Աջ կողմից կարկաչում եյին առվակները, վորոնք վարագուրվում եյին հսկայական յեղեգների գետապտույտներով։ Ավելի հեռուն,

ճանապարհն անցնում էր ընդարձակ, աղաչուր ծովալճակների մոտով, վորոնք արդեն կիսով չորանում էյին արեգակի ուղղաձիգ ճառագայթների տակ։

Յերթը դանդաղ կատարվում էր առանց դժվարության և, կարող է ավելացնել, ուրախ։

Յելենան հետևորդներին հերթով իր մոտ էր հրավիրում։ Նրա [illegible] չափազանց նեղ էր, վորպեսզի կարողանար բոլորին միանգամից անդրադառնալ։ Նրանք արդեն համոզվում էին վոչ միայն հենրիկացից, այլ և հրճվում էյին [illegible] յերկու միջոցից և համակրելի [illegible] զրույցով։ Հասկանալի յե, վոր Յելենան չէր մոռանում ամենն որ հրավիրել Ջոն Մանդլսին, և չի կարելի ասել, վոր նրա վորոշ չափով [illegible] [illegible] դուր չէյին գալիս Փուրդանի բնակչուհիներին։ Ընդհակառակն։

Այդ ժամանակ արշավախումբն անկյունադարձով կարեց Կրոսլենդից Մորահեմ տանող փոստային ճանապարհը։ Այդ ճանապարհը շատ էր փոշոտ և հետիոտները խուսափում էյին նրանից։ Տալրոտ կոմսության սահմանի վրա գտնվող մի խումբ բլուրների ստորոտներով անցնելով, յերեկոյան դեմ ջոկատը կանգ առավ Մերիբորոյից յերեք մղոն հեռու։ Մանրահատիկ անձրև էր մաղում։ Թեպետ յերկիրներում հողը կոխոտվեց, բայց այստեղ չոր տղն այնպես էր կլանում և իր մեջ ծծում խոնավությունը, վոր ջոկատն ամենևին չտուժեց նրանից։

Հետևյալ օրը, դեկտեմբերի 29-ին, Ջվիցերիայի փոքրացած նմանությամբ ցանկրեկ բլուրների մի շարք քիչ հապաղեցրեց արշավը։ Ամբողջ ժամանակն աշխատած էյին մերթ սարնիվեր բարձրանալ, մերթ իջնել սարնիվար, ընդ վորում Փուրդանը թափ էր տալիս և ցնցում ամենաանողորմ կերպով։ Վերջիվերջո ճանապարհորդուհիները նախապատվեցին վոտքով գնալ։ Ծնցումից հետո զբոսանքը նրանց շատ հաճելի թվաց։

Առավոտյան մոտ ժամը տասնմեկին յերևաց բավական խոշոր Կառլսբրուկ քաղաքը։ Այրտոնն առաջարկեց շրջանցել քաղաքը, կանգ չառնելով այնտեղ, ժամանակ չահելու համար։ Գլենարվանը համաձայնեց նրա հետ, բայց նոր տպավորությունների նկատմամբ միշտ ագահ Պագանելը հայտարարեց, վոր ինքն անպայման պիտի մտնի քաղաք։ Նրան այդ հնարավորությունը տվին, իսկ Փուրդանը դանդաղ գնաց թիկանցելով։ Պագանելն

էր մշտական ուղեկից Ռոբերտի հետ, խթանելով ձիերին, սլա-ցան քաղաք։ Վորքան էլ կարճատև և մակերեսային էր նրա դի-տելը, այդ բավական էր ընդհանրապես ավստրալիական քա-ղաքների մասին պատկերացում կազմելու համար։ Կառլսբրու-կում կային՝ բանկ, դատարանի շենք, շուկա, մի դպրոց, մի յեկեղեցի և մոտ հարյուրի չափ բոլորովին միատեսակ աղյու-սե տներ։ Այդ բոլոր շենքերը դասավորված էին ուղիղ քառան-կյունով՝ և կտրտված էին զուգահեռ փողոցների ցանցով։ Դը-րանից ավելի միապաղաղ և թախծալի բան դժվար է պատկե-րացնել։ Յերբ քաղաքն աճում է, նրա փողոցները յերկարում են դեպի տափաստանի անծայրածիր կողմը, բայց ընդհանուր համաչափու-թյունը դրանով չի խանգարվում։

Կառլսբրուկում մեծ կենդանություն էր տիրում, վոր սովո-րական յերևույթ է բոլոր նորաշեն քաղաքներում։ (Ավստրա-լիայում քաղաքները ծառերի նման են բուսնում։ Նրանց, կար-ծես թե, արեգակի ճառագայթներն են կյանքի կոչում)։ Զբաղ-ված մարդիկ շտապ քայլում էին փոքրիկ քաղաքի փողոցներով։ Վոսկու առևտրականները խռնվում էին վոսկու արդյունաբե-րության գրասենյակների մուտքերի առաջ, սպասելով տեղական վարչականության ձեռքով ոստիկանական պահակներով առաքված թանկագին մետաղի զումակներին Բենդիգոյի և Ալեքսանդրի լեռան գործարաններից։ Թվում էր, վոր շահույթի ծարավը կու-րացրել է փոքրիկ քաղաքի ամբողջ բնակչությանը, և վոտարեր-կրացիների գալուստը վոչ վոքի ուշադրությունը չգրավեց։

Կառլսբրուկում մի ժամ թափառելով, Պագանելը և Ռոբեր-տը դուրս յեկան նրա սահմաններից և սլացան խնամքով մշակ-ված դաշտերի յերկարությամբ, մտան կարավանին միանա-լու համար։ Այժմ Գլենարվանի արշավախումբը գնում էր մար-գագետնով, վորտեղ վոչխարների անթիվ հոտեր էին արածում։ Մարգագետինն ավստրալիական բնությանը հատուկ հանկարծա-կիությամբ (անակնկալությամբ) վերջացավ, և անմիջապես նը-րանից հետո սկսվեց անապատը։ Սիմպսոնի բլուրները և Տա-րանգովերի սարը նշում էին այնտեղ Լոդդոն շրջանի հարավային սահմանը, յերկայնության հարյուր քառասունչորսերորդ աստիճանի վրա։

Մինչև այդտեղ արշավախումբը վոչ մի անգամ չհանդիպեց նախապատմական կյանք վարող տեղացի ցեղերի։ Գլենարվանն

սկսում էր անհանգստանալ, վոր իրենք Ավստրալիայում նույնպես քիչ ավստրալիացիների կհանդիպեն, ինչպես Պատագոնիայում՝ պատագոնացիների։ Բայց Պագանելը հանգստացրեց նրանց, հաղորդելով, վոր վայրենիներն այդ տեղերից հարյուր մղոն դեպի արևելք են ապրում, Մյուրրեյի հովտում։

— Մենք մոտենում ենք վոսկու հանքերի շրջաններին, — ասաց նա։ — Երկու օրից հետո մենք կլինենք Ալեքսանդրի լեռան վոսկու ամենահարուստ հանքավայրերի մոտ։ Վոսկի փնտրողները հեղեղի պես ներխուժեցին այնտեղ 1852 թվականին, ստիպելով տեղացիներին շատ կերպով նահանջել ներքին Ավստրալիայի անապատները։ Թեև այդ աչքի չի ընկնում, բայց մենք այժմ գնում ենք քաղաքակրթված տեղերով և մինչև օրվա վերջը մենք կհատենք Մյուրրեյի հովիտներն ովկիանոսի ափի հետ միացնող յերկաթուղու գիծը։ Զարմանալի բան, բարեկամներս, Ավստրալիայում յերկաթուղի։

— Այդտեղ ի՞նչ զարմանալի բան կա, Պագանել, — հարցրեց Գլենարվանը։

— Ինչպես, միթե՞ դուք այստեղ առկայություն հակասություն չեք տեսնում։ Ո՛, յես շատ լավ գիտեմ, վոր դուք, — անգլիացիներդ — սովորել եք գաղութացնել ձեր հեռավոր տիրապետությունները, վոր դուք էլեկտրական հեռագիր եք կառուցում և համաշխարհային ցուցահանդես սարքում Նոր Զելանդիայում և դա համարում եք ամենասովորական — առօրյա մի գործ։ Այդ խեղճում է իմ բոլոր պատկերացումները վայրենի Ավստրալիայի մասին։

— Վորովհետև դուք մտածում եք յերկրի անցյալի, և վոչ թե նրա ներկայի և ապագայի մասին, — պատասխանեց կապիտան Ջոն Մանգլը։

— Համաձայն եմ, — ասաց Պագանելը։ — Բայց և այնպես ամեն մի մարդ, վորը պատահի չունի անգլիացի կամ ամերիկացի լինել, զարմանքից բերանը բաց կմնար տեսնելով անապատով սլացող շոգեքարշ, պատկառուկների ճյուղերի վրա նստած շողշող թռչուններ, ճեղքելով գնացքներից փախչող յեխիդնաներ և կենգուրուներ, և գիտենալով այն վայրենիներին, վորոնք Մելբուռնից Կեստլմեն գնացող էքսպրեսսի առաջ են գնում։ Պոեզիան փախչում է անապատից, յերբ յերկաթուղին յերևում է այնտեղ։

— Ի՞նչ անենք, դա չարիք չէ, յեթե նրան տաճկահպատակությունն է փոխարինում, — նկատեց մայրը։

Շոգեքարշի սուր սուլիչը դադարեցրեց բորբոքվելու պատրաստվող վեճը։

Ճանապարհորդները պտտվում էին յերկաթուղու գծից վոչ ավելի քան մի մղոն հեռավորության վրա։ Հարավից յեկող շոգեկառքը կանգ առավ հենց յերկաթուղու վրա, անցման մոտ, դեպի վորն ուղևորվում էր Փուրգոնը։ Ինչպես վոր ճիշտն ասաց Պագանելը, այդ յերկաթուղին միացնում է Վիկտորիա գավառի ծովամերձ մայրաքաղաքն Ավստրալիայի ամենամեծ գետի, Մյուրեյի հովտի հետ։ Այդ ահագին ջրամբարը, վորը հայտնաբերել է Շտուրտը 1828 թվականին, բղխում է Ավստրալիական Ալպերից և Լախլան ու Դառլինգ վտակների ջրերն իր մեջ ծծելով, հսկայական ամի պես ձգվում է Վիկտորիա գավառի հյուսիսային սահմանի յերկարությամբ մինչև Ադելաիդայի մոտի ծովածոցը։ Գետը հոսում է Ավստրալիայի ամենահարուստ հողերով, անթիվ անասնապահական տնտեսությունների մոտով, վորոնք զարգացել են այդ տեղերում, շնորհիվ յերկաթուղու մոտիկության և Մելբուռնի հետ հեշտ հաղորդակցության։

Այդ ժամանակ յերկաթուղու այդ գիծը շահագործվում էր հարյուր հինգ մղոն տարածությամբ, Մելբուռնից մինչև Սենդհըրստ, անցնելով Կինետոն և Կեստլմեն։ Ճանապարհի կառուցվող մասը, յոթանասուն մղոն յերկարությամբ պիտի միացներ Սենդհըրստն Եխուկայի հետ, վորն այս տարի յեր հիմնվել Մյուրեյի ափին։

Յերեսունյոթերորդ զուգահեռը կտրում էր յերկաթուղին մի քանի մղոն հարավ Կեստլմենից դեպի Կեմդեն-Բրիջ, Մյուրեյի բազմաթիվ վտակներից մեկի, Լյուտտոնի կամուրջի մոտ։

Այրտոնը Փուրգոնը տանում էր հենց դեպի այդ կամուրջը։ Ձիավորները Փուրգոնի առաջը կտրելով, քառատրոփ սլացան դեպի Կեմդեն-Բրիջ, հետաքրքրությամբ տարված։

Իսկապես այդ հետաքրքրությունը կատարելապես արդարացավ։ Յերկաթուղու կամրջի մոտ մարդկանց մեծ ամբոխ էր հավաքվել։ Մոտակա կայանների բնակիչները թողնելով իրենց տները, անասնապահները, ձգելով հոտերը, բոլորը ձգտում էին դեպի այդ տեղը։ Մարդազանգվածում մի կանչ էր հնչում։



Երկաթուղային. խորտակում Լյուսատան գետի վրա։

— Դեպի յերկաթուղի, դեպի յերկաթուղի։

Ըստ յերևույթին այդ ընդհանուր հուզմունքը բղխում եր մի ինչ վոր կարևոր դեպքից։

Գլենարվանն ու իր ուղեկիցները խթանեցին ձիերին և մի քանի րոպեյում արշավելով հասան մինչև Կեմդեն-Բրիջ։ Այնտեղ նրանք իսկույն հասկացան ամբոխի կուտակման պատճառը։

Սարսափելի աղետ եր յեղել։ Գնացքը դուրս եր յեկել գծերից և ընկել եր գետակի ափը։

Այս խորտակումը հիշեցնում եր ամերիկական ճանապարհների վրա գնացքների հետ պատահած այնքան հաճախակի դըժբախտ դեպքերը։ Յերկաթուղու կամրջի տակ գետը լցվել եր վագոնների և շոգեքարշի բեկորներով։ Նրա հետևանքով, վոր կամուրջը չեր դիմացել բեռնված վագոնների բեռների ծանրության տակ, թե գծերի անհարթության հետևանքով, բայց Լյուսատոն գետի մեջ եյին թափվել շոգեքարշը և գնացքի կազմի վեց վագոնից հինգը։ Միայն վերջինը, վեցերորդ վագոնը, հըրաշքով ազատված, մնացել եր փանդղում անդունդից մեկ վոտնաչափ հեռավորության վրա։ Ներքևում անհավատալի քաոս եր, այրված և ոլորված տախտակների, ծռված առանցքների՝ անիվների հետ միասին, ջարդված արկղների, ռելսի կտորների։ Խորտակման ժամանակ պայթած կաթսայի կտորներն ահագին տարածությամբ դես ու դեն եր շպրտել։ Այդ բեկորների այդ կուտակումից դեռևս լեզուներ եյին դուրս պրծնում, ժայթքում եյին սև ծխի քուլաներ և գոլորշու ամպեր։ Ամեն կողմում տեսնվում եյին արյան լճակներ, պոկռտված վերջավորություններ, դիակների ածխացած կտորներ, և վոչ վոք չեր համարձակվում հաշվել, թե քանի զոհ ե տարել այդ սարսափելի աղետը։

Գլենարվանը, Պագանելը, մայոր Մակ-Նաբսը, Ջոն Մանգլսը, խառնվելով ամբոխի հետ, լսում եյին խորտակման բեկորների տակից վիրավորներին հանելու և ամփոփելում եյին այդ աշխատանքին մասնակցողների կարծիքների փոխանակությունը։ Ամեն մեկն աշխատում եր գտնել աղետի պատճառների բացատրությունը։

— Կամուրջը կոտրվել ե, — ասաց մեկը։

— Նա վո՞նց ե կոտրվել, — առարկում եյին նրան ամեն կողմից, — յերբ այս րոպեյիս էլ կանգուն ե։ Ուղղակի մոռա-

ցել են մնացնել այն գնացքն անցնելուց առաջ։ Ահա և բոլորը։

Իսկապես դա անհնարին կամուրջ էր, որը անցք էր բաց անում գետային նավերի համար։ Մի՞թե պահակը, անհերքելի զզվանությամբ մոռացել է մնացնել կամուրջը և ամբողջ թափով սլացող ճեպընթացը հանկարծ կախվել է անդունդի վրա։ Այս ենթադրությունը միանգամայն ճշմարտանման էր թվում, վերամբարձ կամրջի կեսն էր փլատվել խորտակումից, իսկ երկրորդ կեսը կախված էր իր շղթաներից, գետի հակառակ ափին, բոլորովին անվնաս։ Ցավ արդյոք, որ մի կասկած չկար։ Խորտակումը կատարվել է պահակի միջոցով։

Ճեպընթաց № 37-ի հետ գնացքը պատահել է գիշերը։ Նա մեկնել է Մելբուռնից գիշերվա ժամի տասներկու և քառասուն հինգ րոպեին։ Կաստլմեյնի կայարանից դուրս գալուց քսան հինգ րոպե հետո, այսինքն՝ մոտ չորրորդ ժամի առաջին քառորդին, ճեպընթացը խորտակվել է Կեմդեն-Բրիջի մոտ։ Վերջին վագոնում անվնաս մնացած մարդիկ իսկույն եթ փորձեցին օգնության կազմակերպել տուժածների համար։ Նրանք ուզում էին դժբախտության մասին հեռագրով իմաց տալ Կաստլմեյն, բայց հեռագրասյուները ընկած էին և լարկաթալարը կտրված էր։ Ստիպված էին մարդ ուղարկել վազքով, և արդյունքում իշխանությունները խորտակման տեղը ժամանեցին յերկու ժամից հետո միայն։ Անտառապահերն ու նրանց աշխատավորներն ամենից առաջ զբաղվեցին կրակը հանգցնելով, որը զարմանալի արագությամբ էր կլանում վագոնների բեկորները։ Մինչև անճանաչելիության այլանդակված մի քանի դիակներ շարքով դըրվեցին յերկաթգծի թմբության վրա։ Պետք չէր մտածել, որ թեկուզ մի հատ մարդ դեռ կենդանի յե մնացել այդ շիկացած վառույթի մեջ։ Կրակն արագությամբ լրացրեց իր ավերիչ գործը։ Ուղևորների և գնացքի սպասավորների թվից վողջ էին մնացել միայն տասը մարդ, վորոնք գնում էին վերջին վագոնում։

Գլենարվանը ներկայացավ ճանապարհի նոր ժամանած գլխավոր քննիչին և վոստիկանական սպային և խոսեց նրանց հետ։ Վոստիկանական սպան զարմանալի սառնարյուն մարդ էր։ Թվում էր, վոր այդ դժբախտությունն ամենևին չի ազդում նրա վրա։ Ցերբ Գլենարվանը դիմեց անձամբ հետևյալ խոսքերով. «Վորպիսի սարսափելի դժբախտություն», վոստիկանը հանգիստ պատասխանեց.

— Դրանից ավելի վատը կա, սէր։

— Ի՞նչպես թե դրանից ավելի վատը,— բացականչեց Գլենարվանը, վրդովված այդ անհասկանալի հարցից։— Եվ ի՞նչը կարող է ավելի վատ լինել այս դժբախտությունից։

— Վոճրագործությունը, — նույնպես հանգիստ պատասխանեց վոստիկանը։

Գլենարվանը, հակաճառության մեջ չմտնելով այդ դարձվածքի առթիվ, աչքերը գլխավոր տեսուչին հառեց, հայացքով հարցնելով նրան։

— Այո՛, սէր, — պատասխանեց նա, — մեր կատարած քննարկությունը մեզ համոզվածություն ներշնչեց, վոր այս աղետը — վոճրագործության հետևանք է։ Ծանրոցի վագոնը կողոպտված է։ Աղետից մնացած վագոնի ուղևորների վրա չարագործների մի խմբակ է հարձակվել։ Կամուրջը միացված չի յեղել վոչ թե պահակի անփութությամբ, այլ դիտմամբ։ Յեթե այս համադրենք նրա հետ, վոր պահակը թաղնվել է, կարելի չէ չկասկածել, վոր այդ սրիկան վոճրագործների համախոհն է յեղել։

Տեսչի այս խոսքերի ժամանակ, վոստիկանը բացասաբար պտտեց գլուխը։

— Դուք համաձայն չե՞ք իմ կարծիքի հետ։

— Պահակի համախոհության վերաբերյալ մասի հետ—վո՛չ։

— Բայց այս վոճրագործությունը կարող էին կատարել միայն Մյուրրեյի հովիտում թափառող վայրենիները։ Յեթե պահակի օգնությունը չլիներ, վայրենիները չէին կարող կամուրջն անջատել։ Նրանք իրենք չէին կարող գլուխ հանել կամուրջի մեխանիզմից։

— Միանգամայն ճիշտ է, — ասաց վոստիկանը։

— Իսկ, այնինչ, — շարունակեց տեսուչը, — Կեմդեն-Բրիջի կամուրջի տակով անցնող նավավարը, յերեկոյան ժամի տասն անց քառասուն րոպե, հայտարարեց, վոր իր անցնելուց հետո պահակն անհապաղ միացրեց կամուրջը։

— Այդպես։

— Իմ կարծիքով, այդ փաստերն անհերքելիորեն հաստատում են պահակի մեղավորությունը։

Վոստիկանը նորից գլուխը պտտեց։



Երկու մարդ տանում էին պանակի դիակը։

— Նշանակում է, վոր դուք վայրենիներին չե՞ք համարում խորամանկման մեղավորներ, — դիմեց նրան Գլենարվանը։

— Վոչ մի դեպքում։

— Հապա, ո՞վ է մեղավոր։

Այդ ժամանակին կես մղոն տարածության վրա, գետի հոսանքով դեպի վեր, ուժեղ աղմուկ լսվեց։ Այնտեղ մի խումբ մարդ էր հավաքված, վորը մի ամբողջ ամբոխ դարձավ։

Մի քանի րոպեից հետո ամբոխը մոտեցավ կամուրջին։ Նա շրջապատել էր յերկու մարդու, վորոնք տանում եյին յերրորդի դիակը։ Դա պահակի արդեն սառած դիակն էր։ Դաշույնի հարվածը սրտին իջնելով, սպանել էր նրան։ Նրա մարմինը Կեմդեն-Բրիջից հեռու քարշ տալով, մարդասպաններն ըստ յերևույթին ցանկացել են, թեկուզ սկզբնական ժամանակներում, հետախուզ իշխանություններին սխալ ճանապարհի վրա ձգել։ Դիակի գտնվելը լիովին հաստատեց վոստիկանի յենթադրությունները։ Վայրենիները մեղավոր չեյին վոճրագործության մեջ։

— Աղետի մեղավորները, — ասաց նա, — լավ են ծանոթ այդ մանեկի հետ։

Ցեվ նա ցույց տվեց ձեռքի մի զույգ կապանքներ — կրկնակի յերկաթի օղակ, կողպեքով փակվող շղթայի վրա։

— Ցես հույս ունեմ, — շարունակեց վոստիկանը, — վոր մոտիկ ապագայում կարող կլինեմ վոճրագործներին այս նվիրաբերությունն անել։

— Ո՞ւմ վրա յեք կասկածում դուք։

— Այն անձնավորություններին, վորոնք ձրի ուղևորություն են ստանում դեպի Ավստրալիա։

— Ի՞նչպես, տաժանակիրներին, — բացականչեց Պագանելը, վոր ծանոթ էր ավստրալիական գաղութներում գործածվող այդ փոխաբերությանը։

— Ինձ թվում էր, — նկատեց Գլենարվանը, — վոր տաժանակիրներին արգելված է Վիկտորիա գավառի տերիտորիայում մնալը։

— Ինչ մի յերևելի բան է, — առարկեց վոստիկանը։ — Նրանք իրենք են առել այդ իրավունքը։ Տաժանակիրները յերբեմն գտնում են քանդարկության տեղից փախչելու հնարքը, և դժվար թե յես սխալվեմ, յեթե ասեմ, վոր այդ քաջերն ուղղակի Պեր-

ափ տաժանակրությունից են այստեղ բերել։ Ինչ արած, մի ան-հանգստանանք, մենք կկարողանանք նրանց նորից յետ տեղափո-խել։

Տեսուչը գլխով արեց, վորպես համաձայնության նշան։ Այդ րոպեյին ֆուրգոնը մոտեցավ յերկաթուղու վրայով անցումի ան-ցքին։ Գլենարվանը վորոշեց հեռու պահել ուղևորուհիներին Կեմբ-րիջյան վերջին աղետի տպավորության տեսարանից և դրա համար էլ, շատ հրաժեշտ տալով տարիճանավորներին, ուղղվեց դեպի ֆուրգոնը, նշանով առաջարկելով ուղևորներին, վոր իրեն հե-տևեն։

— Սա հենց չէ, վոր ընդհատենք մեր ճանապարհորդու-թյունը,— ասաց նա։— Առանց մեզ էլ, այստեղ բավական ժողո-վուրդ կա։

Մոտենալով ֆուրգոնին, նա Հելենային և Մերիին պատմեց միայն յերկաթուղու աղետի վերաբերյալ, վոչ մի բառ չարտա-սանելով այն մասին, վոր աղետը վոճրագործության հետևանք է։ Նա լռեց նաև այն մասին, վոր ինչ վոր տեղում, շրջակայքում թափառում է փախած տաժանակիրների շայկան, վորոշելով մի կերպ, ավելի ուշ այդ մասին նախազգուշացնել միայն Այրտոնին։

Փոքրիկ ջոկատը, կամուրջից մի քանի տասնյակ վոտնաչափ ցած, գետն անցավ ջանասիրությամբ և շարունակեց իր ճանապարհը դեպի արևելք։

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ
## ԱՌԱՋԻՆ ՊԱՐԳԵՎԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Պայծառ յերկնքի ֆոնի վրա մի քանի բլուրներ եյին պատ-կերվում, վորոնք փակում եյին Լյուսոտոնի հովիտը յերկաթուղու ճանապարհից յերկու մղոն հեռավորությամբ։ Ֆուրգոնը մտավ մի նեղ, վոլորապտույտ ձորի մեջ։ Նրանից դուրս գալուց հետո ճանապարհորդները ընկան մի կախարդական հովիտ, վորի վրա արևադարձային փարթամ տերևներով ծառեր եյին աճել։ Ծառերն աճել եյին առանձին խմբակներով։ Նրանց մեջ ամենից ուշագրավ-ները կազուարինաներն եյին, վոր փոխ եյին առել կաղնուց հզոր բունը, ակացիաներից—նրանց բուրավետ պատիճները և յեղևին-ներից—տաղարթների կոշտությունը և ամրությունը։ Նրանց լայնատարած ճյուղերի տակ տարածվել եյին կախարդիչ, վա-

յեղյակազմ բանկսիաներ, ավելի ճիշտ, նրանց այլանդակություննե-րը, banksia latifolia: Մեծ թփերը, գետնի ցած ընկնող ճյուղերով, կանաչ չէր վառակներ թաղալող լեզը անոթի տպավորություն էին գործում: Մարդու աչքեր շաղվում էին բնության այդ հրաշալիքների մեջ:

Փոքրիկ ջոկատը մի քույն կանգ առավ: Գլենարվի հրամանով Այրտոնը կառեցրեց իր յեզների լուծքը: Փայտե անիվների հառաչանքները դադարեցին կվարցի ավազուտում ճռռալուց: Թավ, կանաչ գորգը սփռված եր ծառերի ստվերում, վորոնք ցածրիկ ավազե թմբակներով ուղղանկյունների էին բաժանվել: Այդ բանաստեղծական կանաչ քառակուսիների մեջ Պագանելն առաջին հայացքից ճանաչեց հավիտենական հանգստության տեղերը:

— Սա ավստրալիական գերեզմանատուն է,— ասաց նա:

Ցեղ խոկալու, ճանապարհորդների աչքի առաջ ընկած եր տեղական գերեզմանատունը, բայց այնքան կանաչ, այնքան թարմ և ստվերախիտ ծառերի այնպիսի գեղեցիկ խմբերով, վորոնց ուրախ ճռվողում էին թռչունները, վոր նա թախծալի տպավորություն չէր թողնում: Շատ հեշտությամբ կարելի յեր սովորական այգու տեղ ընդունել այն: Այն շիրիմները, վորոնց սովորաբար յերկյուղածությամբ էին խնամում տեղացիները, այժմն ծածկվել էին խոտ, կանաչ խոտով: Զավթող-յեվրոպացիների արշավանքն ստիպել եր բնիկ ավստրալացիներին թողնել իրենց նախորդների աճյունները և փախչել, ուր աչքը կտրում է, դեպի յերկրի խորքը, իսկ յերկրի անճոռ գաղութացումն այդ մահվան հովիտները դարձրել է անասունների արոտատեղեր: Այդ պատճառով էլ որ-որի վրա ավելի հազվադեպ են պատահում տեղական անձեռնմխելի գերեզմանոցներ:

Պագանելն ու Թոլինեթը, կարավանից առաջ ընկնելով, փոքրացան գամբարանների հողաթումբերի շարքերում ընկած ճեմուղիներում:

Բայց նրանք դեռ քառորդ մղոն էլ չէյին հեռացել, յերբ Գլենարվանը տեսավ, վոր նրանք կանգնեցրին ձիերը, հառեցան մի ինչ վոր բանի, հողի վրա, իսկ հետո ձիուց իջան: Վորքան կարելի յեր դատել նրանց աշխույժ շարժումներով, նրանք մի ինչ վոր չափազանց հետաքրքիր բանի էին հանդիպել:

Այրտոնը գավազանով քշեց յեզներին, և փուրգոնը շուտով



Ցերեկայի մեջքին պլակատ էր կպցրած ։

Հասավ յերկու բարեկամներին։ Նրանց կանգնելու և զարմանքի պատճառն իսկույն ևեթ պարզվեց։ Դա, ութ տարեկանից վոչ ավել, յեվրոպական հագուստով մի տղայի դին էր, վոր հանգիստ քնած էր հրաշալի բաղնիքի սալերում։ Դժվար էր ճանաչել նրա մեջ տղայուն։ Ճնուճ մարմինը, համարյա սև կաշին, տափակ քիթը, հաստ շրթունքներ և արտահայտող յերկար ձեռքեր— այդ ամբողջը միանգամից նմանեցնում էր, վոր նա Ավստրալիայի ներքին մարզերի բնակիչ է։ Դրա հետ միասին հագուստը և խելացի դեմքը ցույց էին տալիս, վոր այդ տղան հաղորդակից է յեղել յեվրոպական կրթությանը։

Գլենարվան շատ հետաքրքրվեց տղայով և դուրս յեկավ Փուրգոնից։

Տուտով ամբողջ ջոկատը կուտակվեց խոր քնած տղայի շուրջը։

— Խեղճ յերեխա,—ասաց Մերի Գրանտը,—նա, հավանորեն, մոլորվել է անապատում...

— Բայց յես կարծում եմ,—առարկեց Գլենարվան,— վոր նա հեռացել է այստեղ յեկել, վորպեսզի յերկրպագի հարազատ շիրիմներին։ Հավանորեն այստեղ թաղված են նրանք, վորոնց նա սիրում էր։

— Զարթնեք և թողնել նրան,—բացականչեց Ռոբերտը։—Նա այնպես մենակ և փոքրիկ է... Ռոբերտը համարյա կարեց իր խոսքը։ Փոքրիկ տղայենն մյուս կողքի վրա շուռ յեկավ, առանց զարթնելու, և չորս կողմում յեղած բոլոր մարդիկ նրա թիկունքի վրա մի փոքրիկ պլակատ տեսան, հետևյալ մակագրությամբ.

> Տոլինե. պետք է հասցնել Եչուկա։ Հանձնարարվում է յերկաթուղային կոնդուկտոր Ջեֆրի Սմիթի խնամակալությանը։ Ճանապարհածախսը վճարված է։

— Այ, այս արդեն միանգամայն արժանի յե անգլիացիներին,—բացականչեց Պագանելը։—Նրանք յերեխաներին փոստով են ուղարկում, իբրև սովորական ապրանքներ, նրանց վրա, ինչպես ծրարի՝ դնում են իրենց դրոշմները։ Ինձ արդեն վաղուց են ասել այդ մասին, բայց յես հրաժարվում էի հավատալ։ Այժմ յես համոզվեցի։

— Խեղճ տղա,—ասաց Գլենարվան։—Հավանորեն, նա նույն

գնացքով էր գնում, վորը խորտակվեց Կեմդեն-Բրիջի մոտ։ Կարող է պատահել, վոր նրա հարազատները վոչնչացել են, և նա մենակ է մնացել աշխարհում...

— Չեմ կարծում,—պատասխանեց Ջոն Մանգլը,—այս պլակատով դատելով, նա մենակ է գնացել։

— Նա զարթնեց,—ասաց Մերի Գրանտը։

Յեվ խեղճ յերեխան զարթնեց։ Նա բաց արեց աչքերը, բայց լույսից կուրանալով, իսկույն նեթ փակեց։ Յելենան բռնեց նրա ձեռքից և նա կանգնեց, զարմացած նայելով իր շուրջը խմբված ճանապարհորդներին։ Վայրկյանական յերկյուղ արտահայտվեց նրա փոքրիկ դեմքի վրա, բայց, Յելենային տեսնելով, նա հանգստացավ։

— Արդյոք, անգլիերեն հասկանո՞ւմ ես դու, փոքրիկ բարեկամ,—հարցրեց Յելենան։

— Հասկանում և խոսում եմ,—պատասխանեց յերեխան ճանապարհորդների հարազատ լեզվով, բայց ուժեղ ակցենտով։

Կարելի յեր կարծել, վոր անգլիերեն այդպես խոսողը Ֆրանսիացի յե։

— Անունդ ի՞նչ է,—շարունակեց Յելենան։

— Տոլինե,—պատասխանեց փոքրիկ անծանոթը։

— Ըհը՛, Տոլինե,—բացականչեց Պագանելը։—Յեթե չեմ սխալվում, „այդ անունն ավստրալիերեն նշանակում է «ծառի կեղեվ»։

Տղան, գլխով դրական շարժում արեց և նորից ուշադրությամբ նայեց ճանապարհորդներին։

—Վո՞րտեղացի յես, տղաս,—հարցրեց Յելենան։

— Մելբուռնից։ Յես յեկա Սենդհորստի ճեպընթացով։

— Դու ա՞յն գնացքով եյիր, վորը խորտակվեց Կեմդեն-Բրիջում,—հարցրեց Գլենարվանը։

— Այո՛, սըր, բայց յես բարեբախտաբար ազատվեցի։

— Դու մենա՞կ եյիր գնում։

— Մենակ։ Ռեվերենդ Պաքստոնն ինձ հանձնեց կոնդուկտոր Ջեֆրի Սմիթին, բայց նա դժբախտաբար սպանվեց խորտակման ժամանակ։

— Իսկ բացի նրանից դու գնացքում վոչ վոքի չեյի՞ր ճանաչում։

— Վոչ վոքի։

— Ինչ ես անում դու այս անապատում։ Ինչո՞ւ փախար Կեմպին-Բրիջից,— շարունակում էր Ցելեստան ազայի հարցաքննումը։

— Ես վերադառնում եմ իմ աշխարհ մոտ, Լախլան,— պատասխանեց յերեխան,— ուզում եմ տեսնել մորս։

— Քո ծնողները ավստրալիացի՞ներ են։

— Այո՛, ավստրալիացիներ են, Լախլանից,— պատասխանեց Տոլինսն։

— Դու հայր ել ունես, մա՞յր ել,— հարցրեց Թորփերտը։

— Այո՛, իմ յեղբայր,— պատասխանեց Տոլինսն, ձեռքը յերկ-տասարդ Գրանտին մեկնելով։

Թորփերտին հուզեց այդ «յեղբայր» բառը, և նա սրտանց համբուրեց փոքրիկ տեղացուն։ Այդ արդեն բավական էր յերկու ազաների բարեկամացնելու համար։

Այնինչ ճանապարհորդները, չափազանց շահագրգռված պատանի տեղացու պատասխաններով, շրջապատեցին և հետաքրքրությամբ լսում էին նրան։ Արևն արդեն թեքվում էր ծառերի գագաթների հետևում։ Վորովհետև այդ տեղը միանգամայն հարմար էր գիշերոթի համար, և առանձին կարիք չկար շտապելու և գնալ մի քանի մղոն ել անել մինչև գիշերելու վրա հասնելը, Գլենարվանը հրամայեց հենց այդտեղ ճամբար խփել։ Այրտոնը յեզներն արձակեց, Մյուլրեդիի և Վիլսոնի օգնությամբ նրանց յերկաթ վոտը կապեց և թողեց արածելու։

Հետո վրան զարկեցին, և Ոլբինետը ընթրիք պատրաստեց։ Ցերեկար նաղ ու առաղ անելուց և հրաժարումներից հետո Տոլինսն համաձայնեց մասնակցել ընթրիքին, թեև նա շատ էլ քաղցած էր։ Վերջիվերջո բոլորն ել նստեցին տեղանի առաջ, յերկու ազային իրար կողքի նստացնելով։ Թորփերտն իր նոր ընկերոջ համար լավ կտորներ էր ընտրում, իսկ նա ընդունում էր այն նազելիությամբ լի ամոթխածությամբ։

Այնինչ զրույցը տեղանի շուրջը չէր լռում։ Բոլորին հետաքրքրեց այդ արտասովոր յերեխան, և ամեն մեկը ձգտում էր իմանալ նրա պատմությունը։ Նա շատ պարզ էր։ Նրա անցյալը մանուկ հասակից բարեգործական ընկերությունների զառածխարակությունը հանձնված բոլոր այդպես տեղացիների յերեխաների անցյալի նման էր։ Ավստրալիացիք ընդհանրապես հայտնի յեն հեզ վարքով ու բարքով։ Նրանք գավթող-անգլիացիների հետ այնպիսի անհաշտ ատելությամբ չեն վերաբերվում, վոր բնորոշ է

Նոր-Զելանդացիների համար Անգլիայից սփռված են լինում մեծ քաղաքներում,—Ադելաիդայում, Սիդնեյում, Մելբուռնում: Այնտեղ, փողոցներում հաճախ իրենց նախապատմական հագուստներով զբոսնող տեղացիների կարելի չի հանդիպել: Այնտեղի շուկաներում նրանք վաճառում են իրենց անտառային արդյունաբերության գործվածքները, փորագրական և ձկնորսական պիտույքներ, զենք: Ցեղերի մի քանի առաջնորդներն իրենց յերեխաներին սիրով են ուղարկում անգլիական դպրոցներ սովորելու համար:

Այցելել են փորձել նաև Տոլինեյի հարազատները, վայրենիներ Լանկլանդից—մի ընդարձակ տեղ, վորն ընկած է Մյուրրեյ գետից դեպի հյուսիս:

Հինգ տարի Մելբուռնում մնալով, տղան իր հարազատներից վոչ վոքի չի տեսել: Եվ այնուամենայնիվ դեպի նրանց տածած սերը կենդանի յեր մնացել նրա սրտում, և, հենց վոր թույլատրեցին նրան այդ, նա շտապեց տեսնել իր ընտանիքի հետ, վոր գուցե արդեն վոչնչացել է, և ցեղի հետ, վոր հավանորեն արդեն ցրվել է ամբողջ Ավստրալիայի մայր ցամաքի վրա:

— Նշանակում է, հարազատներիդ տեսնելուց հետո դու ուզո՞ւմ ես վերադառնալ Մելբուռն,—հարցրեց Ցելինան:

— Այո, տիկին,—պատասխանեց Տոլինեն:

— Իսկ յերբ մեծանաս, ի՞նչ ես ուզում դառնալ:

— Ցես ուզում եմ իմ ցեղակիցներին ազատել աղքատության և տգիտության ճանկերից: Ցես ուզում եմ ամեն բան սովորեցնել նրանց: Ցես ուսուցիչ պիտի դառնամ:

Ութ տարեկան յերեխայի շրթունքների այդ ճառում խոսքերը, հավանորեն, կծիծաղեցնեյին թեթևամիտ և մակերեսային մարդուն: Բայց լուրջ շոտլանդացիք հասկացան տղային, և իր ժողովրդին ծառայելու արտահայտած պատրաստակամության մեջ վոչ մի ծիծաղաշարժ բան չտեսան: Պագանելը հուզվել եր մինչև հոգու խորքը և զգում եր, վոր դեպի այդ փոքրիկ տեղացին ունեցած ջերմ համակրանքի ալիքը վողողում է իր սիրտը:

Պետք է, արդյոք, ասել, վոր յեվրոպական հագուստով այդ փոքրիկ վայրենին մինչև այժմ դուր չեր գալիս նրան: Աշխարհագրագետը նրա համար չեր եկել Ավստրալիա, վորպեսզի նայի պիջակ հագած վայրենիներին: Նա ուզում եր տեսնել նրանց սովորական, կոտած «հագուստով»: Իսկ այդ կարգին հագուստը շփոթում եր նրա միտքը: Սակայն Տոլինեյի ջերմ ճառից հետո նա

փոխեց իր հայացքը աղայի նկատմամբ և սկսեց հիանալ նրանով։ Բայց Տոլինեյի հետ ունեցած զրույցի վերջավորությունն աշխարհագրագետին ստիպեց դարձնել փոքրիկ ավստրալիացու լավ բարեկամը։ Եվ իսկապես, Ելենայի հարցին Տոլինեն պատասխանեց, վոր նա սովորում է Մելբուռնի տարրական դպրոցում։

— Իսկ ի՞նչ են սովորեցնում ձեր դպրոցում,—հարցրեց Ելենան։

— Մենք սովորում ենք հին կտակարան, մաթեմատիկա, աշխարհագրություն։

— Հա՛, աշխարհագրություն,—բացականչեց Պագանելը, վոր հետաքրքրվում էր իր՝ սիրած առարկային վերաբերող ամեն մի բանով։

— Այո՛, պարոն,—պատասխանեց Տոլինեն,—յես նույնիսկ առաջին պարգևն ստացա աշխարհագրությունից, հունվարի արձակուրդներից առաջ։

— Այ թե ինչ, դու պարգև ես ստացե՞լ, տղա։

— Ահա նա, պարոն,—ասաց Տոլինեն, գրքույկը գրպանից հանելով։

Դա մի գեղեցիկ գրքույկ էր, նկարներով։ Առաջին էջի վրա մի սիրուն մակագրություն կար. «Տարրական դպրոց Մելբուռնում։ Աշխարհագրությունից հրաշալի գիտելիքների համար, աշակերտ Տոլինեյին՝ Լախլանից»։

Պագանելը հիացած էր։ Մի փոքրիկ ավստրալիացի, առաջին պարգևն է ստացել աշխարհագրություն իմանալու համար։ Դա հրաշալի բան էր։ Նա համբուրեց Տոլինեյի յերկու այտը։ Նա հավանորեն պակաս չէր պարծենում այդ աշակերտով, քան թե հենց ինքը, նրա ուսուցիչ պարոն Պաքստոնը, պարգևները բաշխելու օրը։

Բայց Պագանելը պետք է վոր իմանար, վոր նման դեպքերը հազվագյուտ չեն ավստրալիական դպրոցներում։ Յերիտասարդ վայրենիները հեշտությամբ են յուրացնում աշխարհագրական գիտությունը, ինչ վոր չի կարելի ասել մաթեմատիկայի մասին։ Այս գիտությունը նրանք ամենամեծ դժվարությամբ են հասկանում։

Այսպես թե այնպես, բայց Տոլինեն զուր էր զարմացել քնքշության այդ հանկարծակի տեղումով։ Ելենան բացատրեց նրան,



Փոքրիկ բժիշկը պատասխանում է Պագանելին։

վոր Գաղանիկը—հայանի աշխարհագրագետ է, աշխարհագրության պրոֆեսոր։

— Աշխարհագրությա՞ն պրոֆեսոր,—գոչեց Տոլինեն:—Այո, պարո՛ն, քննեցեք ինձ, խնդրում եմ։

— Քննե՞մ քեզ—ուրախությամբ, այո։ Ես պատրաստվում էյի առանց քո թույլտվության անել այդ։ Ես շատ եմ ուզում իմանալ, թե Մելբուռնի տարրական դպրոցում ինչպես են աշխարհագրություն սովորեցնում։

— Բայց ի՞նչ կասեք, Գաղանիկ, յեթե Տոլինեն աշխարհագրությունը ձեզնից ավելի լավ իմանա,—ասաց Մակ-Նաբը։

— Ֆրանսիական Աշխարհագրական ընկերության քարտուղարից ավելի՞ լավ,—գոչեց Գաղանիկը։ Յեվ, ակնոցները քթի վրա ամրացնելով, նա խիստ տոնով ընդունեց և քննության սկսեց, վորպես ամենախստական պրոֆեսոր։

— Աշակերտ Տոլինեն, կանգնեցեք,—ասաց նա։

Տոլինեն, վոր առանց այդ էլ կանգնած էր, ճշտությամբ չէր կարող այդ հրամանը կատարել։ Նա ավելի պատկառելոր դիրք ընդունեց և սպասեց աշխարհագրագետի հարցերին։

— Աշակերտ Տոլինեն,—կրկնեց Գաղանիկը,—ասացեք ինձ հինգ աշխարհամասերի անունները։

— Ավստրալիա, Ասիա, Ամերիկա, Յեվրոպա, Աֆրիկա,—պատասխանեց Տոլինեն։

— Հրաշալի։ Առաջ Ավստրալիայի մասին խոսենք, վորովհետև ավյալ ժամանակ մենք աշխարհի հենց այդ մասում ենք գտնվում։ Ի՞նչպիսի գլխավոր մասերի յե բաժանվում նա։

— Նա բաժանվում է Պոլինեզիայի, Մելանեզիայի և Միկրոնեզիայի։ Դրանք Ավստրալիայի ամենամեծ կղզիներն են։ Դրանք պատկանում են Անգլիային։ Նոր Զելանդիան էլ է պատկանում Անգլիային, Տասմանիան էլ, Չաթեմ, Ոկլանդ, Մակարի, Կերմադեկ, Մակին, Մարակի կղզիները և ուրիշները—դրանք բոլո՛րը նույնպես Անգլիային են պատկանում։

— Հրաշալի,—ասաց Գաղանիկը,—իսկ, հապա Նոր Կալեդոնիա՞ն, Մարկիզյան կղզինե՞րը, Պաումոտու կղզինե՞րը։

— Այդ կղզիները գտնվում են Մեծ Բրիտանիայի հովանավորության տակ։

— Ի՞նչպես։ Մե՞ծ Բրիտանիայի հովանավորության տակ,—գոչեց Գաղանիկը.—Ինձ թվում է, ընդհակառակն, Ֆրանսիայի…

— Ցրանսիա՞ յի,— զարմացկոտությամբ վերահարցրեց տղան։

— Ահա թե ի՞նչ,— յերկարացրեց Գագանիկը։— Ահա թե ինչպես են սովորեցնում Միչյուսնի աշխարհական դպրոցում։

— Այո՛, պարոն պրոֆեսոր, բայց մի՞թե սա վատ է։

— Սքանչելի յե,— պատասխանեց Գագանիկը։— Յեվ այդպես, ամբողջ Ովկիանիան Անգլիային է պատկանում։ Դա սովորական պատմություն է։ Բայց առաջ անցնենք։

Գագանիկը կիսավիրավորական, կիսազարմացական տեսք ուներ։ Մայրը հրճվում եր։ Քննությունը շարունակվեց։

— Անցնենք Ասիային,— ասաց աշխարհագրագետը։

— Ասիան,— ասաց Տոլինեն,— դա մի հսկայական յերկիր է։ Նրա մայրաքաղաքը Կալկաթան է։ Գլխավոր քաղաքներն են— Բոմբեյ, Մադրաս, Մալաքա, Սինգապուր, Կոլոմբո։ Կղզիներն են. Լակադիվյան և Մալդիվյան և այլն։ Պատկանում են Անգլիային։

— Հրաշալի, աշակերտ Տոլինեն։ Իսկ Աֆրիկա՞ն։

— Աֆրիկան բաղկացած է յերկու գլխավոր գաղութներից։ Հարավում—Բարեհուսո հրվանդանը՝ Կապշտադտ մայրաքաղաքով, արևելքում նույնպես անգլիական կալվածքներ են, գլխավոր քաղաքը—Սիերրա-Լեոնե։

— Շատ գեղեցիկ պատասխան է,— ասաց Գագանիկը, վորին հակել էր բավականություն պատճառել անգլո-ֆրանսիական այդ աշխարհագրությունը։— Իտալացիների բացառիկ առավելություն։ Լավ, հապա Մարոկկոն, Ալժիրը, Յեգիպտոսը,—նրանց բա՞ց են թողել բրիտանական ատլասում։ Բայց թողնենք նրանց, ավելի լավ է Ամերիկայի մասին խոսենք։

— Ամերիկան,— վրա բերեց Տոլինեն,— բաժանվում է Հյուսիսայինի և Հարավայինի։ Առաջինում Անգլիային է պատկանում Կանադան, Նոր Բրունսվիկը, Նոր Շոտլանդիան և Միացյալ Նահանգները, Նահանգապետ Ջոնսոնի կառավարության տակ։

— Նահանգապետ Ջոնսո՞ն,— գոչեց Գագանիկը։— Մեծ Լինկոլնի* հաջորդը, վոր անմիտ ֆանատիկ-ստրկատիրոջ գոհը գարձավ։ Շատ հրաշալի յե։ Ավելի լավ լինել չի կարող։ Իսկ ինչ վերաբերում է Հարավային Ամերիկային՝ իր Գվինեայով, Ֆոլկլենդյան կղզիներով, Նոր Շոտլանդական արշիպելագով, Ջամայկա—

---

* Միացյալ Նահանգների Նախագահը։

յով, Տրինիդադով և այլն—նա՞ էլ է Անգլիային պատկանում։
Եա, իհարկե, չեմ վիճի այդ մասին։ Բայց ասա ինձ, Տոլինե, ի՞նչ կարծիք ունես դու Եվրոպայի մասին կամ, ավելի ճիշտ, ի՞նչ կարծիք ունեն ձեր ուսուցիչներն աշխարհի այդ մասի վերաբերյալ։

— Եվրոպա՞ն,—կրկնեց Տոլինեն, չհասկանալով, թե ինչն այդպես վրդովեցրեց իր քննարկողին։

— Այո, Եվրոպան, ո՞ւմ է պատկանում Եվրոպան։

— Եվրոպան պատկանում է Անգլիային,—համոզված տոնով պատասխանեց տղան։

— Ես չէի կասկածում քո պատասխանում։ Բայց թե ի՞նչ ձևով, յես այդ կուզենայի իմանալ։

— Անգլիա, Շոտլանդիա, Իռլանդիա, Մալթա, Ջերսեյ և Գվերնսեյ կղզիները, Հեբրիդյան կղզիները, Օրկնեյները…

— Լավ, Տոլինե, իսկ մյուս պետությունները, դու մոռացար նրանց թվել ինձ, ասաց։

— Վորո՞նք, պարոն,—հարցրեց երեխան զարմացած։

— Իսպանիան, Ռուսաստանը, Ավստրիան, Գերմանիան, Ֆրանսիան…

— Դրանք գավառներ են և վոչ թե պետություններ,—առարկեց Տոլինեն։

— Գավառնե՞ր…

Պարոնի ակնոցները քթիցը պոկվեց։

— Այո՛, գավառներ են։ Օրինակ, Իսպանիայի մայրաքաղաքը—Ջիբրալտարն է։

— Զարմանալի յե։ Սքանչելի. անըմբռնելի։ Ե, հապա Ֆրանսիա՞ն։ Ես Ֆրանսիացի յեմ, և ուզում եմ իմանալ, թե յես ո՞ւմ եմ պատկանում։

— Ֆրանսիան,—հանգիստ պատասխանեց Տոլինեն,—Ֆրանսիան— դա անգլիական գաղութ է։ Նրա գլխավոր քաղաքը Կալեն է։

— Կալե՞։ Ինչպես, դու կարծո՞ւմ ես, վոր Կալեն մինչև այժմ Անգլիային է պատկանում։

— Հապա, իհարկե պարոն։

— Իսկ ի՞նչ է Ֆրանսիայի մայրաքաղաքը։

— Ֆրանսիայի մայրաքաղա՞քը։ Դա այն տեղն է, ուր ապրում է Նահանգապետը, լորդ Նապոլեոնը։

Պագանելին ծիծաղը բռնեց։ Տոլինեն չէր իմանում, թե ինչ անի։ Նրան հարցնում եյին, իսկ նա աշխատում էր վորքան կարելի է լավ պատասխանել։ Նրա պատասխանների անհեթեթությունը չէր կարելի նրա մեղքը համարել։ Այդ անհեթեթության մասին նա նույնիսկ չէր էլ կասկածում։ Դրա համար էլ նա ամենեին չվրդովվեց և իր ճշմարտության ամբողջ գիտակցությամբ հետագա հարցերին էր սպասում։

— Դուք տեսնում եք այժմ, վոր յես իրավացի եյի, յերբ ասացի, վոր Տոլինեն աշխարհագրությունը ձեզնից լավ գիտի,— ծիծաղելով ասաց Մակ-Նաբսը։

— Դուք իրավացի չեք, ինչպես միշտ, սիրելի մայոր։

— Ահա թե ի՞նչպես են աշխարհագրություն ավանդում Մելբուռնում։ Տարրական դպրոցի պրոֆեսորներն անհոգ ապրում են։ Եվրոպան, Ասիան, Աֆրիկան, Ամերիկան, Ավստրալիան, ամբողջ աշխարհը—բոլորն Անգլիային է պատկանում։ Նրանք համոզմամբ են դաստիարակում տեղացուն։ Այժմ յես ամենեին չեմ զարմանում, վոր տեղացիներն առանց հակաճառելու հպատակվում են նրանց։ Այո, հա, մի հարց էլ, Տոլինե, լուսնի գործն ի՞նչպես է։ Դու ինչպես ես կարծում, արդյոք, լուսի՞նն էլ է Անգլիային պատկանում։

— Նա էլ կպատկանի Անգլիային,—արժանապատվությամբ պատասխանեց փոքրիկ վայրենին։

Այս խոսքերի ժամանակ Պագանելը վեր կացավ և փախավ։ Նա այլևս չկարողացավ մնալ իր տեղում։ Նա, համարյա, մի քառորդ մղոն փախավ ճամբարից, և այնտեղից լսվում եյին նրա վորոտընդոստ քրքջոցի պայթյունները։

Գլենարվանը, քրքրելով իր ճանապարհորդական գրադարանը, գտավ այնտեղ Սամուել Ռիչարդսոնի «Աշխարհագրության ձեռնարկը» հեղինակությունը։ Այդ գիրքը մեծ հեղինակություն ունի Անգլիայում և մի քիչ ավելի ստույգ տեղեկություններ է տալիս աշխարհի աշխարհագրության մասին, քան Մելբուռնյան պրոֆեսորները։

— Վերցրու այս գիրքը, տղա,—ասաց նա Տոլինեյին,—վերցրու և պահիր։ Դու մի քիչ սխալ պատկերացումներ ունես աշխարհագրության մասին և նրանք պետք է ուղղել։ Յես նվիրում եմ քեզ այս գիրքը վորպես մեր հանդիպումի հիշատակ։

Տոլինեն լուռ վերցրեց գիրքը։ Նա ուշադրությամբ դիտեց

ալի, անվստահորեն գլուխը պտտեցնելով և չհամարձակվելով պահել գրպանում։

Այդ ժամանակ գիշերը վրա հասավ։ Արդեն յերեկոյան ժամի տասն էր։ Ժամանակն էր հանգստի մասին մտածելու։ Ռոբերտն առաջարկեց իր բարեկամին իր անկողնու կեսը։ Փոքրիկ անգլիացին ընդունեց այդ առաջարկը։

Մի քանի րոպեյից հետո Յելենան և Մերին արդեն պառկած էյին իրենց անկողինների վրա, ֆուրգոնում։ Տղամարդիկ տեղավորվեցին վրանում, և միայն Պագանելն էր, վոր վոչ մի կերպ չէր հանգստանում։ Դեռ յերկար ժամանակ լսվում էր ավստրալիական կաչաղակների քնքուշ կչկչոցը խլացնող նրա ծիծաղը։

Հետևյալ որը, առավոտյան ժամի վեցին, յերբ արեգակի առաջին ճառագայթները արթնացրին քնածներին, բոլորն ամենից առաջ հիշեցին փոքրիկ ավստրալիացու մասին։

Տոլինեն անհետ կորել էր։ Գո՞ւցե նա ուզում էր կորցրած ժամանակը լրացնել։ Կամ թե, նրան վիրավորեցի՞ն Պագանելի ծաղրերը։ Այդ վոչ վոք չգիտեր։ Բայց Յելենան, արթնանալով, պատակասուկների մի թարմ փունջ գտավ իր բարձի վրա, իսկ Գլենարվանն իր գրպանում Սամուել Ռիչարդսոնի «Աշխարհագրությունը»։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

## ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԼԵՌԱՆ ՀԱՆՔԵՐԸ

1814 թվականին, Լոնդոնի Թագավորական աշխարհագրական ընկերության խնկական նախագահը, սըր Ռոդերիկ Մերչիսոնը, հարցը յերկար ուսումնասիրելուց հետո յեկավ այն յեզրակացության, վոր Ուրալյան լեռնաշղթայի և Ավստրալիայի հարավային ափի յերկարությամբ ձգված լեռնաշղթայի գծագրություններում բավականաչափ նմանություն կա։

Հայտնի յե, վոր Ուրալյան լեռնաշղթան առատ է վոսկեբեր յերակներով։ Գիտնական յերկրաբանը յենթադրում էր, վոր թանկագին մետաղը կարող է հայտնաբերվել նաև Ավստրալիական Կորդիլիերներում։ Նա չսխալվեց։

Յերկու տարուց հետո նրան վոսկու հանքանյութի նմուշներ ուղարկվեցին, վորոնք գտել էյին Նոր Հարավային Ուելսում, և կոռնուելյան բանվորներն խմբովին ևեթ ուղևորվեցին Նոր Հոլանդիա,

վոսկի փնտրելու համար։ Նրանց մեջ էին Հարավային Ավստրալիայում բնական առաջին վոսկին գտնող Ֆրանցիսկ Դյուտանը, և Նոր Հարավային Ուելսում վոսկեբեր յերակներ հայտնաբերող Ֆարրը և Սմիթը։

Առաջին հաջողությունը բոլորին հարբեցրեց։ Վոսկի փնտրողների հոսանքն ամբողջ աշխարհում աճեց օրեցօր։ Մարդիկ Ավստրալիա էին գալիս Անգլիայից, Ամերիկայից, Իտալիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Չինաստանից։

Բայց հանքի խոշորագույն հարուստ շերտերը գտնվեցին միայն 1851 թվականի ապրիլի 3-ին։ Դրանց գտնողը վոսկի փնտրող Հարգրեյվսն էր և նա Սիդնեյան գաղութի նահանգապետ Ֆից Ռոյին առաջարկեց գնել այն, ավելի քան չափավոր գնով․ հինգ հազար ֆունտ ստեռլինգով։

Նրա առաջարկությունը չընդունվեց, բայց վոսկեբեր յերակի հայտնաբերման լուրն արագ տարածվեց ամբողջ շրջակայքում։ Վոսկի փնտրողների նոր հոսանքն ուղղվեց Սոմմերխիլ և Լեմիս-Պոնդ։ Այստեղից հիմնվեց Օֆիր քաղաքը, և շուտով նա այնպես հարստացավ, վոր միանգամայն արժանի դարձավ իր բիբլիական անունին։ Այդ ժամանակից Վիկտորիա գավառն անցավ հետին պլանի վրա, թեև իրավունքով հենց նա պիտի կանգներ առաջին տեղը, իր հանքային շերտերի հարստությամբ։

Բայց մի քանի ամիս ավելի ուշ, 1851 թվականի օգոստոսին, Վիկտորիայում գտնվեցին առաջին բնահանքները, և շուտով չորս շրջաններում արդեն հանքը կանոնավոր կերպով շահագործվում էր։ Այդ չորս շրջաններն էին․ Բալլարատ, Ովենս, Բենդիգո և Ալեքսանդրի սարը։ Բոլոր այդ շրջանները հանքերով շատ էին հարուստ, բայց Ովենս գետի վրա աշխատանքների կատարումը (աշխատելը) դժվարանում էր ջրի ավելցուկով։ Բալլարատում հանքի անհամաչափ շերտերը խանգարում էին ծավալելու հանույթը։ Բենդիգոյում քարոտ հողը դժվարացնում էր մշակույթը։ Եվ միայն Ալեքսանդրի սարի վրա յեր, վոր հաջող աշխատանքի համար ամեն ինչ առկա յեր։ Հենց ուղիղ այստեղ, ուր այնքան հաճախ ամբողջ կարողություններ էին քամուն արվում և խորտակվում էին անմիտ հույսերը, յերեսունյոթերորդ զուգահեռը մի խումբ մարդիկ բերեց, վորոնք փնտրում էին Նավապետ Գրանտին։

Թե՛ յեզներին և թե՛ ձիերին տանջող տարափելի ճանապարհ-

նորով մի ամբողջ օր ուղևորվելուց հետո, ճանապարհորդները վերջապես տեսան Ալեքսանդրի լեռան կլորացած գագաթները։ Ճամբարը խփեցին մի նեղ ձորում, վորն ընկած եր ցածրիկ նախալեռների արանքում, և շուտով արդեն յերեք վրանից կազմած կենդանիներն արածում եյին կվարցի կույտերի մեջ, վոր ամբողջապես ծածկել եյին ձորի հատակը։ Բայց դա դեռ չբացատրվող յերևույթների վերջը չեր։ Միայն հետևյալ որը, 1865 թվականի առաջին որը, Փուլադինի անխմբերը գլորվեցին վրանների հողի վրայով։ Ժակ Պագանելն և իր ընկերները հիացած եյին, վոր տեսան այդ նշանավոր տարրը։

Այստեղ եր ուղևորվում արկածախնդիրների, գողերի և ազնիվ մարդկանց ամբողջ խուռն բազմությունը։ Մեծ գյուղի առաջին լույսի հետ, 1851 թվականին, ծովագնացները, բանվորները և հողագործները թողին դաշտերը, քաղաքները և նավերը։ Վոսկու դողերոցքը համաճարակային յերևույթ դարձավ։ Նա նույնպես վարակիչ եր, խեղդիչ և չուժամ, և վորքան մարդ կորավ այն ցնորքային, յերբ նրանց թվում եր, վոր բախտը բռնել են իրենց ձեռքում։ Ասում եյին, վոր բարեբար բնությունը միլիոններ եր ցանել այդ զարմանալի յերկրում։ Հնձի որը հասավ, և հնձվորները հավաքվեցին, վոսկեղեն բերքը հավաքելու։

Դիգգերի—հողափորի արհեստը գերակշռում եր բոլորից։ Վոսկի փնտռողների մեծ մասը, տանջված ուժից վեր աշխատանքից, կորավ, բայց կային մարդիկ, վորոնք հարստանում եյին բահի հենց առաջին հարվածով։ Հազարավորները քայքայվեցին, և այդ մասին վոչ վոք վոչինչ չեր ասում, բայց դրա փոխարեն ամեն մի հաջողություն տարածվում եր փառքի համբավով, և լուրը նրա մասին հասնում եր ամենահեռավոր անկյունները։ Բախտի յուրաքանչյուր նվերի մասին հայտնի յեր դառնում աշխարհի բոլոր հինգ մասերում։

Շուտով վոսկի փնտռողների հոսանքները վողողեցին Ավստրալիայի ափերը։ Միայն 1852 թվականի վերջին չորս ամսում այստեղ է յեկել հիսուն չորս հազար վտարանդիների (գաղթականների) մի ամբողջ բանակ։ Բայց այդ բանակն անղեկավար եր, անդիսցիպլին, դիմակավորների բանակ, մի խուժան, հիսուն չորս հազար, ամենավատթար բնավորության, դեկլասսերներ։

Այդ անմիտ գրգռման սկզբի տարիներում անհավատալի քաոս եր թագավորում, բայց ժամանակի ընթացքում, անգլիա-




Այստեղ մի խռովական ժողով էր անել։

ցիք հասան իրենց նպատակին և դրության տերը դարձան։ Այն ժամանակվանից մեծ փոփոխություններ կատարվեցին։ Տանները տարում վոսկու հանույթի շահագործումը սիստեմատիկ բնույթ ընդունեց, խիստ կազմակերպվածության բոլոր կանոններով։ Մինչև այդ ժամանակ հանքերն արդեն սպառվել եյին բոլորովին, Յեվ ինչպես կարող եյին շարունակել Թանկարժեք մետաղի շերտերը, յերբ միայն 1852-ից մինչև 1858 տարիներում վոսկի փնտրողները Վիկտորիայի հանքերի խորքերից 3,107,478 ֆունտ ստերլինգ վոսկի հանեցին։ Վաչարանդիների հոսանքը բավականաչափ պակասեց։ Նրանք շտապեցին բախտ փնտրելու գնալ անհայտ մարզերում։ Յեվ Ավստրալիայում ու Մալբուրայի մոտերքը, Նոր Զելանդիայում, շուտով գտնված վոսկու դաշտերը վողողվեցին հազարավոր յերկոտանի մրջյուններով։

Ժամի տասնմեկին ճանապարհորդներն արդեն գտնվում եյին հանքային մշակությունների հենց կենտրոնում։ Այստեղ մի իսկական քաղաք եր աճել, գործարաններով, բանկերով, յեկեղեցիով, զորանոցներով և թերթի խմբագրատնով։ Հյուրանոցներ, ագարակներ, վիլլաներ,—այստեղ ամեն ինչ կար, ինչվոր պետք է լինի իսկական քաղաքում, ներառյալ և թատրոնը։ Թատրոնում մեծ հաջողությամբ եր գնում «Ֆրանցիսկ Օբադիա, կամ յերջանիկ հանքափորը» վոդեվիլը։ Նրա լուծումն այսպես եր. արդեն բոլորովին հուսահատված հերոսը, բախտի վերջին հարվածի հետ ընկնում է չսպասված մեծությամբ վոսկու մի ինքնածին կտորի վրա։

Գլենարվանի համար հետաքրքիր եր դիտել Ալեքսանդրի լեռան վոսկու հանածոները։ Նա ֆուրգոնն առաջ ուղարկեց Այրտոնի և Մյուլրեդիի հսկողությամբ, և խոստացավ հասնել նրանց մի քանի ժամից հետո։

Պագանելը հրճվեց այդ կարգադրությունից և ըստ սովորության ուղեցույցի և թարգմանի պարտականություններն իր վրա վերցրեց։

Նրա խորհրդով ճանապարհորդներն ամենից առաջ ուղևորվեցին դեպի բանկ։ Քաղաքի լայն, մայթեր փողոցները խնամքով ջրցանված եյին։

Մերթ այստեղ, մերթ այնտեղ աչքի եյին ընկնում առևտրական ամեն տեսակ ձեռնարկությունների ահագին հայտարարությունները։ Կապիտալիստներն ու գիշատիչ-միջնորդներն ամուր հաստատվել եյին այստեղ աղքատ հանքափորների ուսերի վրա։

Ամեն տեղ լողում էր վոսկեբեր ավազ մաքրող մեքենաների աղմուկը։ Բաղադրային կառուցվածքների գծից դուրս սկսվում է-յին հանածոները։ Դրանք ընդարձակ դատարկություններ էին, որ մշակույթներ էին կառուցվում։ Այստեղ յեռ ու զեռի մեջ էին գտնվում ընկերությունների վարձած հանքափորերը։ Գետնի վրա անհամար քանակությամբ ճեղքվածքներ էին յերևում։ Թաքերի յերկաթը փայլում էր արևի տակ և գետնի վրա մի ինչ վոր անընդհատ փայլկտանք էր կանգնած։ Հանքափորերի մեջ կարելի յեր հանդիպել ամենատարամարդան ազգությունների ներկայացուցիչներին։ Նրանք չէյին կռվում իրար հետ, չե վոր նրանք միայն ռոճիկ էին ստանում իրենց աշխատանքի համար։

— Սակայն զարմանք է կարծել, — ասաց Գաղանեյը, — վոր անհողորեն վոսկու փնտրողների ցեղը Աֆրիկայի հողն է անդադար խովել, վորպես իր յերկրյա յավ և ոսկով վոսկու փնտրումով զբաղվողներ։ Իհարկե, մեծ մասն աշխատանքի յե վարձվում ընկերությունների մոտ։ Նրանցից ուրիշ վոչինչ չի մնում անել, վորովհետև բոլոր վոսկեբեր հողերը ծախված են կամ պատկանում են կառավարությանը։ Բայց նրանք, ովքեր վոչինչ չունեն, ովքեր չեն կարող վոչ գնել, վոչ վարձել, նրանց համար հարստանալու մի հսարի միջոց է մնում։

— Ի՞նչպիսի, — հարցրեց Ցելենան։

— Հաջողությունը՝ դեմայինդի ժամանակ, — պատասխանեց Գաղանեյը։ Նույնիսկ մենք ձեզ հետ, մենք, վոր վոչ մի իրավունք չունենք այդ վոսկեբեր ավազների վերաբերյալ, յեթե գտնենք մեզ մոտ, կարող ենք հարստանալ։

— Բայց ի՞նչպես, — հարցրեց մայրը։

— Դեմայինդի իրավունքով, ինչպես յես արդեն պատմել ունեցա զեկուցել ձեզ։

— Ի՞նչ է այդ դեմայինդը, — նորից հարցրեց մայրը։

— Դա հանքափորերի և հանքատերերի համաձայնությունն է։ Այդ համաձայնության հետևանքը համախ բանությունն և անկարգություն է լինում, բայց իշխանությունները անզոր են փոխել այն։

— Դե, մի կարգին բացատրեցեք, Գաղանեյ, — անհամբերությամբ ընդհատեց նրան մայրը, — ջուր մի ծեծեք սանդում։

— Համեցեք։ Այստեղ մի կանոն կա, վոր յեթե չահագործ-

վող անցյի վորևէ մասում ամբողջ ժամվա ընթացքում անընդհատ, բացառությամբ մեծ տների, մշակույթներ չեն կատարվում, այն դեպքում այդ հողամասը գտնվում է հասարակության սեփականության։ Ով առաջինը կտրի այն, իրավունք ունի հարստանալու, յեթե բախտը ժպտա նրան։ Ցեվ արդյոք, Ռոբերտ, տղաս, փորձիր հետապնդել այդ ձգված փառերից մեկը—նա քոնն է արդեն։

— Պարոն Պագանել,— ընդհատեց նրան Մերի Գրանտը,— նման մտքեր մի ներշնչեք իմ յեղբորը։

— Բայց չէ վոր յես կատակ եմ անում, թանկագին օրիորդ և Ռոբերտը շատ լավ է հասկանում այդ։ Վոսկի փնտրե՞լ գնա՞ նա։ Նա՞։ Յերբեք։ Ուրախալի բան է, փորել հողը, մշակել այն և հետո հավաքել իր աշխատանքի պտուղները։ Բայց փորել այն, կույր խլուրդի նման, վորպեսզի վոսկու մի քանի խղճուկ հատիկներ դուրս բերի,—դա տխուր արհեստ է։ Պետք է հետիններից հետինը լինել, դրանով պարապելու համար։

Այցելելով գլխավոր հանքերը և անցնելով այն հողամասերով, վորոնց հողը մեծ մասամբ կվարցից և կավախառն թերթաքարից ու ավազներից եր կազմված, վորոնք գոյացել եյին ժայռերի քայքայվելու պրոցեսում, ճանապարհորդները վերջապես ուղևորվեցին դեպի բանկ։

Դա մի խոշոր շենք եր, վորի ճակատի վրա ծածանվում եր ալիս անգլիական դրոշակը։

Այստեղ, գլխավոր տեսուչը հյուրասիրաբար ընդունեց Գլենարվանին։

Բանկում պահվում է այն վոսկին; վորը հանքափորերն են ձեռք բերել, իրենց աշխատանքը շահագործող մեծ ընկերությունների համար։ Վաղուց է անցել այն ժամանակը, յերբ վոսկի փնտրողների աշխատանքների պտուղները հատուկենտ սպեկուլյանտներն եյին հնձում, վորոնք իրենց ցանցերով խճճում եյին հանքափորերին և վոսկին գնում եյին նրանցից ունցիան* հիսուն յերեք շիլլինգով, վորպեսզի հենց այնտեղ, Հարևան քաղաքում, վերավաճառեն այն վաթսուն հինգ շիլլինգով։

Բանկի տեսուչն այցելուներին ցույց տվեց վոսկեբեր տեսակների և քանդվածքների հետաքրքիր նմուշներ և պատմեց նրանց .

* Ունցիան—մոտ 30 գրամ է։

վոսկու հանույթի զանազան միջոցների մասին։ Վոսկու ծննդյան տեղերը բնության մեջ յերկու տեսակ են լինում— արմատական, կամ յերակային և վոսկեբեր հատիկներով։ Արմատական ծննդավայրերում վոսկու հատիկները միացած են լինում յերակային տեսակի, գլխավորապես կվարցի մեջ։ Վոսկեբեր ավազները կազմըվել են յերակների փշրումից։ Նույն ծննդավայրի բնույթին, ըստ այնմ էլ կատարվում է վոսկու հանույթը։ Արմատական, կամ յերակային վոսկին դուրս է բերվում հանքից կոտրականացում մանրացնելու և տանդերում հետագա մանրացման ճանապարհով, վորից հետո վոսկու հատիկներն ամալգամացվում են (միացվում են սնդիկի հետ)։ Վոսկեբեր ավազները հանվում են լվանալու միջոցով, վորի ժամանակ վոսկին, իբրև ավելի ծանր բան, նստում է հատակին, իսկ լվացված հանքը թափվում է։ Ալեքսանդրի սարում վոսկեբեր ավազ կար, և նա պատահում եր այսպես կոչված «ըղբադաններին»՝ փոքրիկ հողամասերի ձևով, վորոնք այդ թանկագին մետաղից բավական քանակություն եյին պարունակում։ Մի տրդպխի «ըղբադան» գտնելը հաջողակ հանքափորների համար անհագին հարստության կերերը։

Ճանապարհորդները դիտեցին բանկի հանքաբանական թանգարանը, վորտեղ ապակյա ցուցափեղկերի հետևում հավաքել եյին Ավստրալիայի բոլոր հանածոների նմուշները։ Այդ յերկրի միակ հարստությունը վոսկին չեր։ Ցուցափեղկերի ապակու հետևում, տեղերը ցույց տվող նշաններով օժտված, թե նրանք վորտեղ են գտնվել, փայլում եյին ազնիվ տոպազներ, սուտակներ, կապույտ շափյուղաներ և վերջապես Տերոնի ափին գըտնված մի մեծ ալմաստ։ Դա թանկագին քարերի լրիվ կոլեկցիան եր, իսկ շրջանակի վոսկու համար հեռու գնալու կարիք չկար— նա հենց այդտեղ, կողքին ընկած եր։ Գլենարվանը շնորհակալություն հայտնեց բանկի տեսչին բացատրությունների համար և հրաժեշտ տվեց նրան։ Այժմ, ճանապարհորդներն ուղևորվեցին դիտելու Ալեքսանդրի լեռան հանքաշերտերը։

Վորքան էլ Պագանելը անտարբեր եր յերկրային հարստությունների նկատմամբ, նա չեմ ու չումով, բայց քննական հայացք եր նետում գետնին։ Դա՞ նրանից ուժեղ եր, և նա չեր կարող զսպել իրեն աչքերով չփորփրել հողի յերեսը, չնայած իր ուղեկիցների ծաղրերին։ Նա ամեն քայլ կռանում եր և ջոկում

էր կամ փոքրիկ գործեր, կամ կովարցի փշրանքներ: Մոռացնելով այն կարճատես աչքերին, նա խեղճուկ ներ անպաշտպանությամբ դեն էր շպրտում: Արցունքներ շարունակելից փոշկերը հողամասում գտնվելու ամբողջ ժամանակ:

— Ի՞նչ է պատահել ձեզ, Գաղանել,— անձեղ ձևով հարցրեց նրան մայրը:— Դուք վորևէ բա՞ն եք կորցրել:

— Իհարկե,— պատասխանեց զինվորականը,— մենք բոլորս էլ իրավունք ունենք կորցրած համարել այս յերկրում վաղուց և թանկագին քարերի մեր չգտած հարստությունը: Ձեզ խմանում ենք, բայց զգում եմ, վոր հաճելի կլինեն ինձ հետ տանել այստեղից վորևէ փոքրիկ քար վաղուց հետ խառն կամ նույնիսկ նրա բնականը, մոտավորապես քառն ֆունտ ծանրությամբ:

— Իսկ դուք ի՞նչ պետք անեիք այն, Թանկագին Գաղանել,— հարցրեց Դելեմարլանը:

— Ո, յես գիտեմ, թե ինչպես կվարվեմ նրա հետ,— պատասխանեց զինվորականը:— Ցես կընծայաբերեի այն Ֆրանսիական բանկին...

— Վորպես հիշատա՞կ:

— Իհարկե: Այն նկատառումով, վոր այնտեղ ընթացիկ հաշիվ բացեյին ինձ համար:

Բոլորն էլ ծիծաղեցին այն բանի վրա, թե Գաղանելն ինչպես է ուզում բարերարությունն անել իր հայրենիքին, իսկ Ցելենան մաղթեց նրան գտնել աշխարհում վաղուց ամենամեծ բնական կտորը:

Ծիծաղով և հանաքներով, ճանապարհորդները շարունակում էյին զբոսանքը վաղուց հանքերում: Ամեն տեղ հանքափորերն աշխատում էյին ճշտապահությամբ, ջանասիրությամբ, բայց առանց վորևէ հրապույրի:

Ցերկու ժամվա զբոսանքից հետո Գաղանելը բոլորովին կարգին անցավ մի պանդոկ նկատեց և առաջարկեց իր ուղեկիցներին մտնել այնտեղ և կարգավոր վերադառնալուց առաջ մի քիչ հանգստանալ:

Ցելենան համաձայնեց, բայց քանի վոր անհամբեր էր պանդոկում նստել, վոչինչ չպատվիրելով, ուստի Գաղանելը հրամայեց անգլական վորևէ խմիչք մատուցել:

Պանդոկապետը շտապեց յուրաքանչյուրին մի մի գավաթ նոբլեր տալ: Նոբլերն իր բաղադրիչ մասերով վոչնչով չի տար-



Ճանապարհորդները դիտեցին հանքաբանական թանգարանը:

բերվում անգլիական գրոգից, և նրանց տարբերությունը միայն արտասանելու ձևի մեջ է։ Այն ժամանակ, երբ Բրիտանիայում գրոգին պատրաստում են մի փոքրիկ ոսկեմկա ափսեի մեջ մեծ բաժակ ջրի մեջ լցնելով, այստեղ մի փոքրիկ ոսկեմկա ջուրը լցնում են մի մեծ բաժակ ափսեի մեջ, խառնուրդը քաղցրացնում են ու խմում։ Դա ուղղակի ավանդական խմիչք էր, բայց, ի մեծ զարմանս պանդոկապետի, հյուրերը մի մեծ գրաֆին ջուր պահանջեցին և փչացրին նորլերը, հիշեցնելով այն անգլիական ավանդական գրոգի տասենանի։

Խոսում էին հանքերի և հանքափորերի մասին։ Գաղանները լսում էր գոհ ամբողջ ատամով, բայց զգում էր, վոր ներկայացուցած անհատական ավելի հետաքրքիր էր այն ժամանակ, երբ Ալեքսանդրի տարը գետ նոր էին սկսել մշակել հատ ու կենտ վտանգավորությունները։

— Հողը,— պատմում էր նա,— քրքրված էր փորերով և շաղ էր տված, կարծես մրջյունների հորդաներով։ Բոլոր վտարանդի — հանքափորերն աշխատում էին վորպես ինկական մըրջյուններ, բայց, ավաղ, մրջյունի կանխատեսությունը չէին ցուցաբերում։ Ցերեկվա ձեռք բերած վոսկին գիշերը վատնում էին քեֆերում։ Վոսկին խմում, տարվում էին թղթախաղով։ Այս պանդոկը, ուր մենք նստած ենք այժմ, «Հյուսիսային գծողք» էր, ինչպես ասում էին այն ժամանակ։ Թղթախաղը կամ կռճախաղը զանակով էր վերջանում։ Վատեկանությունն անզոր էր, և նահանգապետը շատ անգամ է ստիպված յեղել բանակ բերել այս, կատաղած վտանգավորություններին զսպելու համար։ Սակայն վերջիվերջո նա կարողացավ խաղաղեցնել նրանց. ամեն մեկին պարտավորեցրեց վկայական վերցնել հանքանների շահագործման իրավունքի համար, և վճարել նրա փոխարեն, այնպես վոր, ընդհանուր առմամբ, այստեղ անկարգությունները ավելի պակաս էին, քան Կալիֆորնիայի հանքաններում։

— Արդյոք, ամեն մարդ էլ ուժ ունի՞ հանքափոր դառնալու,— հարցրեց Ցելենան։

— Այո՛։ Դրա համար հարկավոր չի համալսարան ավարտել։ Բավական է առույգ մկաններ ունենալ։ Բոլոր յերկրների թափառախնդիրները, վորոնց աղքատությունը հայրենիքից էր քշել— յեկան, հավաքվեցին այստեղ,— հարուստները քլունգով, աղքատները զանակով։ Նրանք մոլեգնած էին աշխատում։ Հա-

մոլեգնությամբ կարելի չե ասել, վոր վոչ մի տեղ աշխատանք չեր կատարվում այնպիսի սիրով և ջերմեռանդությամբ, ինչպես այդ: Ավստրալիայի այն ժամանակվա տարորինակ տեսք ուներ: Հողը ծածկված եր վրաններով, բրեզենտներով, անասուններով, խրճիթներով— հողից, տախտակից, ճյուղերից: Ժամանակավոր բնակավայրերի կենտրոնում բարձրանում եր նահանգապետի ճոխ վրանը, վորի գլխին փողփողում եր բրիտանական դրոշակը: Նրան շրջապատում եյին վարչության աստիճանավորների, դրամափոխների, վոսկու առևտրականների, ապրանք ծախողների, սպեկուլյանտների վրանները, վորոնք ամբողջ աշխարհից այստեղ եյին սլացել, վորպեսզի հարստանան աղքատության և հարստության այս աննկարագրելի խառնուրդում: Բոլոր այդ գիշատիչները խոսում եյին հաստատապես— անգլերեն: Նրանց համար հարմարություն ապահովվում եր, համենայն դեպս միջնորդական հանքափորերի հաշվին, վորոնք ապրում եյին կեղտի և խոնավության մեջ: Չորս կողմում լսվում եր քլունգների գետնին խփող հարվածների անվերջ դղրդյունը: Ոդի մեջ տարածված եր կենդանիների քայքայված դիակների հեղձուցիչ հոտը, վորոնց վոչ վոք չեր հավաքում: Ամեն մի ներշնչման հետ թանձր փոշին նստում եր այդ դժբախտ մարդկանց թոքերի վրա, և զարմանալի չե, վոր մահացությունը նրանց մեջ շատ բարձր աստիճանի յեր հասնում: Յեթե Ավստրալիայի կլիման ավելի պակաս առողջարար լիներ, ապա թիֆի համաճարակն սաստ հանձ կաներ այստեղ: Բոլոր այդ տառապանքները կմոռացվեյին, յեթե յուրաքանչյուր հանքափոր հաջողության հասներ: Բայց հենց բանն ել այն ե, վոր մի հաջողակ, հարստացած վոսկեխույզին ընկնում ե հարյուր, յերկու հարյուր, գուցե նույնիսկ հազար մարդ, վորոնք մնում են չքավորության և հուսահատության մեջ:

— Գիտե՞ք, արդյոք, Պագանել, թե նրանք ինչ միջոցով եյին վոսկի հանում հողից,— հարցրեց Գլենարվանը:

— Սիրով կպատասխանեմ ձեզ,— ասաց գիտնականը:— Առաջին վոսկեխույզները վոսկին լվանում եյին այնպես, ինչպես այդ դեռ այժմ ել կատարվում ե Սեվեննայում, Ֆրանսիայում: Նրանք փոսեր եյին փորում, հանում եյին այնտեղից վոսկեբեր համարվող ավազը, և լվանում եյին այն ջրով, վորպեսզի ծանր մետաղը զատեն ավելի թեթև հանքից: Նրանք լվանում եյին առանձին անոթի մեջ, վոր Ամերիկայից եյին փոխ առել և վորը

կոչվում էր «կրեդլ» կամ որորոց։ Դա մի տուփ է հինգ-վեց վոտնաչափ յերկարությամբ, բաց դագաղի նման մի բան, վոր միջնորմով յերկու մասի յեր բաժանվում։ Առաջինում տեղավորված էր մեկը մյուսի տակ դրված քարմաղերի մի շարք, ծակերի աստիճանաբար նվազող տրամաչափով։ Յերկրորդ բաժանմունքը նեղացրած է իր ստորին մասում։ Տեսակը անում են առաջին բաժանմունքի վերևի քարմաղի մեջ, վրան ջուր են լցնում, և ամբողջ տուփը թափահարում են, ավելի ճիշտ որորում են, որորոցի պես։ Քարերը մնում են առաջին քարմաղում, վոսկին և ավազը տարհում են հետևյալների վրա։ Լվացած տեսակը ջուրը տանում է յերկրորդ բաժանմունք և այնտեղից դուրս է շպրտում գետնի վրա։ Ահա և այն ժամանակվա մշակումների ամբողջ սարքավորումը։

— Հավանորեն, դեռևս ամեն մեկն էլ այդպիսի որորոց չուներ,— նկատեց Ջոն Մանգլը։

— Վոսկեխույզները գնում էին այն իրենց քայքայված կամ հարստացած կոլեգայից,— պատասխանեց Պագանելը,— կամ բոլորովին առանց նրան էին յոլա գնում։

— Հապա նրանք ինչո՞վ էին փոխարինում այն,— հարցրեց Մերին։

— Սովորական կոնքով, սիրելի Մերի,— ամենահասարակ թիթեղյա կոնքով։ Նրանք վոսկին այնպես էին քամհարում, ինչպես գյուղացիք հացահատիկն են քամհարում, միայն թե ցորենի հատիկների փոխարեն, հաջողության ժամանակ կոնքի մեջ մնում էին վոսկու հատիկները։ Առաջին տարվա ընթացքում, շնորհիվ այդպիսի կոնքի, շատ հանքափորներ կարողություն դիզեցին։ Գիտեք, բարեկամներս, դա այնուամենայնիվ նշանավոր ժամանակ էր, թեև մի զույգ կոշիկը հարյուր հիսուն ֆրանկ արժեր, բայց մի բաժակ լիմոնադին տասը շիլինգ էին վճարում։ Առաջին ժամանողները միշտ հաջողության էին գտնում։ Վոսկին ամեն տեղ առատ էր։ Բնական կտորներն ուղղակի ընկած էին գետնի յերեսին։ Գետերը հոսում էին մետաղյա հունով։ Վոսկին նույնիսկ Մելբուռնի փողոցներում էր թափված. քիչ էր մնացել ճանապարհները խճուղեյին նրանով։ 1852 թվականի հունվարի 26-ից մինչև փետրվարի 24-ը Ալեքսանդրի սարից պետական հսկողությամբ Մելբուռն են տեղափոխել ութ միլիոն յերկու հարյուր յերեսունութ հազար յոթ հարյուր հիսուն ֆրանկ։

Դա հարյուր վաթսուն չորս հազար յոթ հարյուր քսանհինգ ֆրանկ միլլին տարեկան հասույթ է կազմում։

— Արդյոք, հայտնի՞ չեն հանքափորների հարստանալու դեպքեր,—հարցրեց Ցելենան։

— Այո, լսել եմ։

— Պատմեցեք, Պագանել։

— Խնդրեմ։ 1852 թվականին Բալլարատում ընկած մի կտոր գտնվեց, վոր հինգ հարյուր յոթանասուն յերեք ունցիա յեր կշռում։ Գիփսլենդում մի ուրիշը գտնվեց— յոթ հարյուր ութսուն յերկու ունցիա քաշով։ Հենց այնտեղ, 1861 թվականին մի ընկած կտոր գտնվեց՝ ութ հարյուր յերեսուն չորս ունցիանոց։ Վերջապես, դարձյալ նույն Բալլարատում, մի հանքափոր մի ընկած կտոր գտավ, վոր վաթսուն հինգ կիլոգրամ եր կշռում, այսինքն՝ յերկու հարյուր քսան յերեք հազար ութ հարյուր վաթսուն ֆրանկ արժեցող մի ամբողջ կարողություն։

— Չգիտե՞ք, արդյոք, թե վորքով համաշխարհային հանույթը, ավստրալիական՝ վոսկեբերի հանքավայրերի հայտնաբերությունից հետո, վորքան է աճել,—հարցրեց Ջոն Մանգլը։

— Այս հարյուրամյակի ընթացքում հանույթը անհավատալի չափերով է աճել։ Դարի սկզբում աշխարհի բոլոր յերկրները միասին տարեկան քառասուն յոթ միլիոն ֆրանկ վոսկի եյին հանում։ Հիմա մոտ ինը հարյուր միլիոն է։ Համարյա մի միլիարդ։

— Նշանակում է, պարոն Պագանել,— ասաց Թորնբոլը,— հնարավո՞ր է, վոր հենց այս տեղում, ուր մենք գտնվում ենք այս րոպեյիս, հողի մեջ շատ վոսկի կա։

— Այո, տղաս։ Այստեղ ամբողջ միլիոններ են ընկած։ Մենք նրանց տրորում ենք։ Բայց յեթե մենք չենք կռանում, վոր վերցնենք այն, այդ միայն նրա համար, վոր մենք արհամարհում ենք վոսկին։

— Ավստրալիան, յերևում է, յերջանիկ յերկիր է,— ասաց Թորնբոլը։

— Վո՛չ, Թորնբոլ, պատասխանեց աշխարհագրագետը։— Վոսկով հարուստ յերկրները բնավ յերջանիկ չեն լինում։ Նրանց բնակչությունը կազմված է անբաններից և դատարկապորտներից։ Հիշիր Մեքսիկան, Բրազիլիան, Կալիֆոր-

նիան։ Ի՞նչ որն ընկան այդ յերկիրները տասնյօթներորդ դարում՝ Յերջանիկ յերկիրները, տղաս, վոչ թե նրանք են, վոր վաղուց են հարուստ, այլ նրանք, վորոնք հարուստ են յերկաթով։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

## «ԱՎՍՏՐԱԼԻԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԶԵԼԱՆԴԱԿԱՆ ԹՌԻՉՔ»

Հունվարի 2-ին, լուսաբացին, ճանապարհորդներն անցան վոսկեբեր շրջանների և Տալբոտ մարզի սահմանը։ Այժմ ֆուրգոնը գլորվում եր Դալհաուզ մարզի փոշոտ հողի վրայով։ Կեսօրին նրանք ծանծաղուտով անցան Կոլիբանը և Կեմպբելյոն-Թրիվերը, 144° 35' և 144° 4' յերկայնության տակ։ Արշավախումբը ճանապարհի կեսն արդեն անցել եր։ Այսպես եւս մի տասնհինգ որ հաջող ճանապարհորդություն, և փոքրիկ ջոկատը կհասնի Տուֆոլդյա ծովախորշի ափերը։

Արշավախմբի բոլոր մասնակիցներն ել միանգամայն առողջ եյին։ Պագանելի խոստումները, առողջ կլիմայի վերաբերյալ,— արդարանում եյին։ Վոչ մի խոնավություն, կատարելապես տանելի շոգ։ Ձիերն ու յեզներն ել եյին հրաշալի դրության մեջ։

Կեմպբելն-Թրիվերից սկսած կարավանի արշավանքային շարքը մի քիչ փոխվեց։ Նրանից հետո, յերբ Այրտոնն իմացավ գնացքի խորտակման պատճառները, նա պնդեց, վոր պետք է նախազգուշական մի քանի միջոցներ ձեռք առնել, վորոնք մինչև այդ ժամանակ ավելորդ եյին։

Հեծվորները վոչ մի դեպքում ֆուրգոնն աչքից չպետք է կորցնեյին։ Ամեն առավոտ և իրիկուն զենքը վերալցվում եր։ Կասկած չկար, վոր դավաճանում գործում եր ավազակների մի խումբ, և, թեև կարավանին անմիջական վտանգ չեր սպառնում, պետք եր պատրաստ լինել ամեն տեսակ անակնկալների։

Ավելորդ է ասել, վոր նախազգուշական բոլոր այդ միջոցները ձեռք եյին առնված առանց Յելենայի և Մերի Գրանտի գիտության, վորոնց Գլենարվանը չեր ուզում վախեցնել։

Ճանապարհորդներն, իհարկե, միանգամայն իրավացի վարվեցին, այդպիսով պատրաստվելով ամեն տեսակ պատահականությունների։ Անզգուշությունը և անփութությունը շատ թանկ կարող եր նստել։ Բայց ավազակախմբի յերևալու կապակցությամբ առաջացած դրությունը միմիայն Գլենարվանինը չեր, վոր



Յուրգանց մօտով Վելլինգտոնիաների անտառը։

անհանդուրժողություն էր պատճառում։ Մեկուսացած գյուղերում, կայարաններում, խաչմերուկներում ու բնակիչները նույնպես միջոցներ էին ձեռք առնում հանկարծակի հարձակումից պաշտպանվելու համար։ Տներն ամուր փակում էին և շներին արձակում շղթայից։ Գիշերվա համար անասունների հոտերը ցանկապատ քշող հովիվները բոլորն էլ զինված էին կարաբիններով։ Կենդրին–Բրիջի տակ կատարված վոճրագործության լուրը շատ գաղթականների՝ վորոնք մինչև այդ ժամանակ քնում էին լայն բաց արած պատուհաններով և դռներով, ստիպեց մութն ընկնելիս խնամքով ստուգել բոլոր փականքները։

Նույնիսկ գաղութական իշխանություններն իրար անցան։ Տեղական ժանդարմերիայի ջոկատներ ուղարկվեցին շրջանները։ Հետադիրն իր ամբողջ տարածության վրա պահպանվում էր զորամասերով։ Մինչև այդ ժամանակ փոստատար կառքերը գնում էին ամայի ճանապարհներով, առանց վորևէ պահպանության։ Բայց այդ օրը, յերբ Գլենարվանի ջոկատը կտրում էր Կիլմորից Հեթկոտ տանող խճուղին, մոտից, փոշու ամպերի մեջ սլացավ փոստի կառքը և նրա մեջ Գլենարվանը նկատեց կարաբիններով զինված վոստիկանների։ Կարելի յեր կարծել, վոր վերադարձել են այն սոսկալի ժամանակները, յերբ վոսկու առաջին հանքերի բացումը մագնիսի պես դեպի Ավստրալիա քաշեց յեվրոպական հասարակության ամբողջ տականքն ու թափթփուկները։

Կիլմորյան խճուղուց մի մղոն տարածության վրա ֆուրգոնը մտավ հսկայական ծառերի անտառի հովանու տակ։ Բերնուիլլի հրվանդանից սկսած, ճանապարհորդության ամբողջ ժամանակ Գլենարվանի ջոկատն առաջին անգամ անցավ ավստրալիական անտառներից այն մեկի քողտերքանը, վորոնք շատ աստիճաններ բռնող տարածություն են ծածկում։

Եվկալիպտներ տեսնելիս, վորոնք յերկու հարյուր վոտնաչափ բարձրության էին հասնում, հինգ դյույմ հաստությամբ չորթնաձև կեղևով, բոլորի կրծքից հիացմունքի բացականչություն դուրս թռավ։ Նրանց քսան վոտնաչափ շրջագիծն ունեցող հաստ բները հարյուր հիսուն վոտնաչափ դեպի վեր էին բարձրանում, բնի վրա, վոչ մի վոստ և վոչ մի ճյուղ չլինելը չէյին խանգարում նրա իդեալական ուղղությունը։ Նրանք ավելի

հարթ չէին դառնա, եթե նրանց հղկեին, ճախարակային դազ-գյահի վրա։ Էվկալիպտների անտառը մարդու աչքին երևում էր վորպես միատարր սյուների մի անվերջ շարք, վորոնք գնում եյին դեպի հեռուն։ Ահագին բարձրության վրա այդ սյուները պըսակվում եյին ճյուղերի խոյակով, վորոնց վրա տերևներ եյին աճում։ Տերևների հիմքերում անդ-անդ յերևում եյին միայնակ ծաղիկներ, վորոնք իրենց ձևով շատ ավելի ատաղձներ եյին հիշեցնում։

Քամին աղոտ զըրնգում էր այդ միապաղաղ կամարի տակ։ Ոչ մի անընդհատ հոսանքները չէին թաղվում, վոր հողի մեջ խոնավություն հավաքվի։ Ջրերը, լճերի հատակը, առվները աղոտ կարող եյին անց ու դարձ անել միմյանցից բավական հեռու գտնված ծառերի արանքով։ Այստեղ չկային վոչ անանցանելի թավուտներ, վոչ կուսական անտառներ, թավալած քներով և խիտ հյուսվածքով ստղացող բույսեր, վորոնց միջով միայն կրակը կամ յերկաթը կարող են ուղի բանալ ճանապարհորդի համար։ Ծառերի ստորոտների կանաչ գորգը, վերևի կանաչ ծածկոցը, բարձր, ուղիղ բների յերկար հեռանկարը, ստվերի և զովության համարյա կատարյալ բացակայությունը, տարօրինակ լուսավորությունը, կարծես թե լույսի ճառագայթները անցնում եյին նուրբ գործվածքի միջով,— այս ամբողջը միասին վերցրած արտասովոր տեսք էր տալիս այդ անտառին, վորը վոչնչով նման չի Հին և Նոր աշխարհի անտառներին։ Էվկալիպտը, հսկաբուն, ինչպես բնագետներն են ասում, մրտենիների ընտանիքին է պատկանում։ Էվկալիպտների խիտ ճյուղերի տակ ստվերի բացակայությունը բացատրվում է տերևների դասավորության տարօրինակ անկանոնությամբ։ Նրանք իրենց մակերևով չեն դարձած դեպի արևը, այլ կողքով։ Աչքն այդ տարօրինակ տերևակալության միայն պրոֆիլն է տեսնում։ Հենց դրա համար էլ արևային ճառագայթները տերևների միջով այնպես են ներս թափանցում, ինչպես բարձրացրած շերտավարագույրների ցանցի միջով։

Բոլոր ճանապարհորդներն ուշադրություն դարձրին անտառի այդ առանձնահատկության վրա և շատ զարմացան, չիմանալով, թե ինչով բացատրեն այդ անսովոր յերևույթը։ Բնական է, վոր այդ հարցն առաջարկվեց ուրիշ վոչ վոքի, այլ Պագանելին։ Գիտնականն ամենևին չվրդովվեց և պատրաստակամությամբ պատասխանեց.

— Ինձ այստեղ զարմացնում է վոչ թե այդ,— ասաց նա,— վոչ թե բնության տարորինակությունները։ Բնությունը գիտի, թե ինչն ինչ է անում և ինչի համար, այն ժամանակ, յերբ բնագետները հաճախ իրենք էլ չեն հասկանում, թե ինչ են անում։ Բնությունը չի սխալվել այդ տերևներին այսպիսի տարորինակ դիրքավորում տալով, բայց մարդիկ, անկասկած, սխալվել են, այդ ծառերն «եվկալիպտ» անվանելով։

— Իսկ ի՞նչ է նշանակում այդ բառը,— հարցրեց Մերի Գրանտը։

— Հունարեն նա նշանակում է. «յես լավ եմ ծածկվում»։ Բնագետները փորձեցին թաքցնել իրենց սխալը հունարեն բառի հետևում, վորովհետև նա աչքի չի ընկնում, բայց այնուամենայնիվ փաստը մնում է վորպես փաստ — եվկալիպտը, անկասկած, նշանակում է «վատ եմ ծածկվում»։

— Համաձայն եմ ձեզ հետ, թանկագին Պաղանել,— ասաց Գլենարվանը, բայց և այնպես ասացեք, թե ի՞նչու համար տերևներն ուղղահայաց են կանգնում դեպի արեգակը։

— Շատ հասարակ պատճառով,— պատասխանեց Պաղանելը,— և դուք, բարեկամներս, հեշտ կհասկանաք այն։ Այս յերկրում, ուր ոդը չոր է, ուր անձրևները հազվադյուտ են, ուր հողը չորացել է, ծառերը կարիք չունեն վոչ արեգակի ուղիղ ճառագայթների, վոչ էլ քամու։ Խոնավության պակասով ծառերն աղքատ են հյութերով։ Դրա համար էլ տերևները, ավելորդ գոլորշիացումից պաշտպանվելով, իրենց մակերևույթի կողերն են դարձնում դեպի արեգակի ճառագայթները։ Այդ տերևները շատ խելոք են պահում իրենց։

— Բայց միևնույն ժամանակ նաև շատ յեսասեր,— առարկեց մայորը։— Նրանք միայն իրենց մասին են մտածում և բոլորովին չեն հոգում ճանապարհորդների մասին։

Բոլորն էլ իրենց հոգու խորքում համաձայնեցին մայորի կարծիքի հետ, բացի Պաղանելից, վորը սրբելով իր ճակատի առատ քրտինքը, այնուամենայնիվ շնորհավորեց իրեն նրանով, վոր անսովոր ծառեր տեսավ։ Բայց տերևների նման դասավորությունը կատարյալ դժբախտություն է ճանապարհորդների համար։ Եվկալիպտի անտառներն ահագին տարածություններ են ձգվում, և նրանց մեջ վոչինչ չի պաշտպանում խանձող տոթից։ Ամբողջ որվա ընթացքում Փուրգոնը գլորվում էր եվկալիպտների



Ճանապարհորդները դադար առան էվկալիպտի անտառում:

անվերջ շարքերի տակ։ Այդ օրը կարավանը վոչ մի կենդանի շունչի, նույնիսկ մի հատ շրջառուն չհանդիպեց։ Միայն թութակներ էին պտտահում ծառերի գագաթներին, բայց ամենից բարձրության վրա նրանց հազիվ կարելի յեր նշմարել, և նրանց ճռվողյունը հազիվ լսելի շշուկով հասնում եր ծառերի ստորոտին։ Ծառը հազվադյուտ դեպքերում հեռու քների արանքով թռչում եր թութակների յերամը, փայլելով բազմագույն փետրավորությամբ։ Այդ դալար տաճարում ամբողջ խորին լռությունը խախտվում եր միայն կարավանի անիվների ճռճռոցով, ձիերի սմբակների դոփյունով, ճանապարհորդների միմյանց ուղղած հազվադյուտ խոսքերով, մեկ էլ իր ծույլ լծկանեքը քշող Այրտոնի գոռոցով։

Գիշերվա վրա հասնելով, ճանապարհորդները դադար առան եվկալիպտի ստորոտում, վորանից գետնի վրա հայտնի կերպով դեռևս պահպանվել էին մոտերս վառած խարույկի հետքերը։ Ծառը նման եր գործարանի ծխնելույզի, վորովհետև կրակն ամբողջ բունը, վարից մինչ վեր, այրել եր։ Սակայն, չնայած նրան, վոր կրակից միայն կեղևն եր վողջ մնացել, ծառը չեր մեռնում։

Պագանելի խորհրդով Այրտոնը խարույկը վառեց այդպիսի արհեստական փչակներից մեկում։ Օդահանությունն անթերի լավ եր, և ամբողջ ծուխը դեպի գագաթն եր տանում, վորտեղից նա կորչում եր տերևների խավար կամարում։ Գիշերվա համար, ճանապարհորդները իրար մեջ բաժանեցին հերթապահությունը, և Այրտոնը, Մյուլրեդին, Վիլսոնն ու Ջոն Մանգլսը, միմյանց փոխարինելով, մինչև լուսաբաց պահպանում կանգնեցին ճամբարին։

Հետևյալ ամբողջ օրը, հունվարի 3-ին, կարավանը շարունակեց գնալ ծառերի համաչափ շարքերի յերկարությամբ։ Թվում եր, վոր անտառը յերբեք վերջ չի ունենա։ Սակայն յերեկոյան դեմ ծառերը նոսրացան, և առջևում, մի քանի մղոն հեռավորությամբ, փոքրիկ հարթության մեջտեղում, ուղիղ շարքերով դասավորված շենքերի մի խումբ յերևաց։

— Սեյմուրը,— ասաց Պագանելը։— Սա Վիկտորիա գավառի վերջին քաղաքն է, վորի միջով մենք կանցնենք։

— Դա մե՞ծ քաղաք է,— հարցրեց Հելենան։

— Վոչ, դա հասարակ գյուղ է, բայց նա շուտով խոշոր քաղաք կդառնա։

— Ինչպե՞ս եք կարծում, տղայոք, մենք այնտեղ հյուրանոց կգտնե՞նք,— հարցրեց Գլենարվանը։

— Հույս ունեմ,— պատասխանեց աշխարհագրագետը։

— Այդ գեղջում, չուստ անենք, գնանք այնտեղ։ Մեր համբերատար ուղեկցուհիները, հավանաբար ընդդեմ չեն լինի թեկուզ մի գիշեր անցկացնել իսկական անկողիններում։

— Մերին և յես, ինհարկե, վոչինչ դեմ չունենք, յեթե միայն Սեյմուր մտնելը հոգսեր և ձգձգումներ չի առաջացնի։

— Վոչ մի գեղջում,— պատասխանեց Գլենարվանը։— Յեզները ընկած տեղը հոգնել են, ձիերն էլ հանգստանալու կարիք ունեն։ Մեկ էլ, վոր մենք այնտեղից վաղը լուսաբացին կհեռանանք։

Յերեկոյան ժամը մոտ ինն էր։ Լուսինն արդեն թեքվել էր դեպի հորիզոնը։ Դրա թեք ճառագայթները չէյին կարողանում վիճել վրա հասնող մթության հետ, յերբ կառավանը մտավ Սեյմուրի լայն փողոցները։ Պագանելը գնում էր ջոկատի առաջից, այն մարդու համոզված անուքով, վորն ամեն ինչ հրաշալի գիտի, թեև կյանքում առաջին անգամն էր Սեյմուրում գտնվում։ Բայց, յերեւում էր, վոր նրան հավատարիմ բնազդն էր ղեկավարում, վորովհետև նա կառավանը բերեց ուղղակի «Հյուսիսային Բրիտանական հյուրանոցի» դարպասների մոտ։

Ցուրդանն հարուստ արձակվելից ընդվածքից, ձիերն ու յեզները գոմը տարվեցին, իսկ ճանապարհորդները բավական բարեկեցիկ սենյակներում տեղավորվեցին։ Յերեկոյան ժամը տասին բոլորը նստեցին Օլբինետի ցուցմունքով պատրաստված ընթրիքի առաջ։ Պագանելն ու Ռոբերտը ամենից վերջը յեկան ընթրիքի մոտ— նրանք վերադառնում էյին քաղաքում կատարած զբոսանքից։ Սովորականի հակառակ գիտնականը ժլատ էր ներտպավորությունների նկատմամբ։ Բայց դա շատ պարզ կերպով էր բացատրվում։ Նա մթության մեջ վոչինչ չէր տեսել։

Այնինչ, քիչ ուշադիր ցրված գիտունը, անկասկած, կնկատեր արդյունքում ուշ ժամանակի համար արտասովոր շարժումը Սեյմուրի փողոցներում։ Ամեն տեղ հավաքվում էյին բնակիչների փոքրիկ խմբեր, տների դռները բաց էյին մնում և տերերը խոսում էյին նրանց շեմքերից։ Մարդիկ ինչ վոր մի բանի մասին աղաղակով հարցնում էյին իրար, բարձրաձայն կարդում էյին առավոտյան թերթերը և մանրամասն մեկնաբանում ընթերցածը։ Ի-

հարկն, այդ ամբողջն անպայման իր վրա կգրավեր ավելի գիտող մարդու ուշադրությունը, քան Պագանելն էր։

Մայորը, հյուրանոցի ընկերից դուրս չգալով, դիտեց, վոր փոքրիկ քաղաքի բնակիչները լրջորեն հուզված են մի ինչ վոր բանով։ Գերճախսա Մեռդ-դ'ոռնել Դիկսոնի հետ սառը բողկի խոսակցությունը բավական էր, ամբողջ կատարվածը հասկանալու համար։

Բայց մայորն այդ մասին վոչինչ չասաց ընթրիքի ժամանակ։ Միայն նրանից հետո, յերբ ճանապարհորդուհիները, Հելենան և Մերի Գրանտը, թողին սեղանատունը և քաշվեցին իրենց սենյակները, մայորը կանչեց իր ընկերներին և ասաց նրանց.

— Սենդհըրստի յերկաթուղու հանցագործները գտնվել են։

— Նրանք ձերբակալվա՞ծ են,— արագ հարցրեց Այրտոնը։

— Վո՛չ,— պատասխանեց մայորը, իբրև թե չնկատելով այն հապճեպությունը, վորով նախկին բոցմանը տվեց այդ հարցը։ Սակայն այդ հապճեպությունը հանգամանքները միանգամայն արդարացրին։

— Ափսո՜ս,— ասաց Այրտոնը։

— Ո՞վ է հանցավորը,— հարցրեց Գլենարվանը։

— Կարդացեք,— ասաց մայորը, մեկնելով Գլենարվանին «Ավստրալիական և Նորզելանդական Թերթի» համարը,— և դուք կտեսնեք, վոր վոստիկանական պետը չի խաբվել իր յենթադրությունների մեջ։

Գլենարվանը բարձրաձայն կարդաց հետևյալ գիտողությունը.

«Սիդնեյ, 2 հունվարի 1866 թվի։ Հունվարին, գուցե բոլորն էլ հիշում են այն դժբախտ դեպքի մասին, վոր տեղի յե ունեցել անցյալ տարվա դեկտեմբերի 29-ից լույս 30-ի գիշերը, Մելբուռն-Սենդհըրստ յերկաթուղու գծի վրա։ Ժամի տասնմեկին հեղընթացը, վոր սլանում էր ամբողջ թափով, ընկավ Լյուտտոն գետի մեջ, վորովհետև գետի վրայի կամուրջն անջատված էր։

Այդ պատահարից հետո կատարված ուղևորների կողոպուտը, Կեմդեն-Բրիջից կես մղոն հեռավորության վրա գտնված պահակի դիակի գյուտը — այս ամբողջը վկայում է, վոր աղետը չար դիտավորության հետևանք է։

Յեվ իսկապես, դատական քննիչը հաստատեց, վոր վոճրա-

գործունեությունը կատարել է տաժանակիրների ավազակախումբը, վորը որանից մոտ վեց ամիս առաջ է փախել Պերտի բանտից, Հարավային Ավստրալիայում։

Ավազակախումբը բաղկացած է 29 հոգուց։ Նրանց առաջնորդը Բեն-Ջոյսն է — մի կատաղի վոճրագործ, վոր մոտերս է յերևացել Ավստրալիայում։

Իշխանությունները դեռ չեն հաջողվել բռնել այդ խմբակը։ Դրա համար քաղաքային բանկիրներին, գործարանատեր-արդյունաբերողներին և խաղատներերին առաջարկվում է զգուշության համապատասխան միջոցներ ձեռք առնել և Մելբուռնի վոստիկանական վարչությանը հաղորդել այն տեղեկությունները, վորոնք կարող են ծառայել փնտրումի հաջողությանը։

Դ. Գ. ՄԻՏՉԵԼ։

Յերբ Գլենարվանն ընթերցանությունը վերջացրեց, Մակ-Նաբսը զարմացած գլխի արտահայտությամբ և ասաց.

— Տեսնո՞ւմ եք ահա, Պագանել, բանից դուրս է գալիս, վոր Ավստրալիայում էլ տաժանակիրներ կան։

— Այո՛, բայց չէ վոր դրանք փախածներ են,— պատասխանեց Պագանելը։— Իսկ յես աքսորվածների մասին եյի ասում։ Նրանց այստեղ մնալը կառավարությամբ արգելված է։

— Կարևորն այն չէ, թե նրանք փախստական են, կամ աքսորական,— նկատեց Գլենարվանը,— այլ կարևորն այն է, վոր նրանք կան։ Սակայն, իմ կարծիքով, այդ ցավալի փաստը վոչ մի կերպ չպիտի անդրադառնա մեր ճանապարհորդության վրա։ Այս մասին ի՞նչ կարծիք ունեք դուք, Ջոն։

Յերիտասարդ նավապետն իսկույն չպատասխանեց։ Մի կողմից նա տատանվում էր, վախենալով վշտացնել նավապետ Գրանտի վորդիներին, նրանց հոր վորոնումները ժամանակավորապես ընդհատելու առաջարկությամբ, մյուս կողմից էլ արշավախմբին լուրջ վտանգի յենթարկելու յերկյուղից։

— Յեթե տիկին Գլենարվանը և որիորդ Գրանտը մեզ հետ չլինեյին,— ասաց նա վերջապես,— ինձ քիչ կանհանգստացներ այդ անզգամների յերևալը։

Գլենարվանը հասկացավ յերիտասարդ մարդուն և ավելացրեց.

— Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր խոսք անգամ չի

դամանքներ մեզ առիթին չեն տալիս գնալու Մելբուրն, չասա ցա-
վալի կլինի, յեթե մենք «Դունկանին» այնտեղ չգտնենք։ Բայց
դրանից զրասանալը, հավանաբար, դեռ վերանորոգման մեջ է։
Այս բոլոր նկատառումներով չես անծանոթ եմ համարում
այցելել կարգադրություն անել։

— Լավ,— պատասխանեց Այրտոնը, ժպտալով։

Հետևյալ առավոտյան փոքրիկ ջոկատը, պատասխանատու պա-
կասները լրացնելով և ամեն անհրաժեշտ անակնկալություններին պատ-
րաստ, ճանապարհ ընկավ։ Կես ժամ նրանից հետո, յերբ անտա-
ռությունից անհետացան Սեյմուրի վերջին տները, ջոկատը նորից
հեղկալեցի անտառ մտավ, որը ձգվում էր գետի արևելք։

Ճիշտն ասած, Գլենարվանը կգերադասեր, վորպեսզի ճանա-
պարհը մեկի հարթությամբ գնար։ Հարթության վրա զորան
առաջելն ավելի դժվար է, քան թե անտառում։ Բայց ուրիշ
ընտրություն չկար, և Փուլդանին ամբողջ օրն առաջ էր գնում
միապաղաղ քարքար բների արանքով։ Յերեկոյան դեմ, անցնելով
Ենդլեդի կոմսության սահմանի յերկարությամբ, կարավանը կը-
րից հարյուր քառասուն վեցերորդ միջօրեականը և գիշերը
համար կանգ առավ Մյուրրեյ մարզի սահմանում։

### ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

## ՎՈՐԻ ՄԵՋ ՌՈԲԵՐՏԸ ԿԱՊԻԿՆԵՐԻ ՆՈՐ ՑԵՂ Ե ԳՏՆՈՒՄ

Հետևյալ որը, հունվարի 5-ին, ճանապարհորդները մտան
Մյուրրեյի մարզի ընդարձակ տերիտորիան։ Այդ անմարդ, անկա-
վարելի մարզը ձգվում է ուղիղ մինչև Ավստրալիական Ալպերի
ամենաբարձր փակոցը։ Քաղաքակրթությունը դեռ չէր հաջողել
կոմսության բաժանել այն, ասում գծագրված սահմաններով։ Դա
գավառի ամենաքիչ և հազվադյուտ այցելվող մասն է։ Մի որ
նրան ծածկող խիտ անտառները կընկնեն փայտահատի կացնի
տակ, իսկ մարգագետինները կլցվեն յեղջյուրավոր անասուննե-
րի, մաքիների և խոզերի բազմաթիվ հոտերով։ Բայց դեռևս,
մարզի հողը նույնքան կուսական էր, վորքան այն որը, յերբ
ցամաքի այդ մասը առաջին անգամ բարձրացավ Հնդկական օվ-
կիանոսի մակերևույթից։ Դա անապատ էր։

Այդ հողերի ամբողջությունն անգլիական քարտեզների վրա
նշվում էր հետևյալ բնորոշ բառերով. «Reserve for the Blacks»

— «Արգելանոց սև մարդկանց համար»: Գաղութականները կոշտ ու կոպիտ ձևով այստեղ էին քշում տեղացիներին: Նրանց մի քանի հողամասեր էին հատկացնում հեռավոր տափաստաններում, անանցանելի անտառների մեջ, վորտեղ կամաց կամաց պիտի մեռնեին ավստրալիական ցեղը: Ամեն մի սպիտակամորթ, գաղութական լինի թե վտարանդի, փայտահատ թե անասնապահ, կարող է անցնել այդ արգելանոցի սահմանները: Բայց և ազգաբնակչությունն իրավունք չունի մի քայլ հեռանալ նրա գծից:

Պաշտոնեն այդ նյութի վերաբերյալ պատում էր վրդովվելով և ձեռքերը ուժգին թափահարելով: Նրա կարծիքով, բրիտանական գաղութային քաղաքականությունը տեղական ցեղերին աստիճանաբար մեռնելու չի դատապարտել, չխոսելով արդեն նրանց հիմնովին դուրս վռնդելու մասին այն տեղերից, վորտեղ նրանց նախնիներն էին ապրում: Բրիտանական գաղութականների այդ գործունեությունը լինում է անգլիական բոլոր գաղութներում, իսկ առանձնապես ցայտուն կերպով արտահայտվում է Ավստրալիայում:

Աշխարհի այդ մասի գաղութացման առաջին ժամանակում արշավականները և հենց գաղութականներն էլ տեղացիների վրրա նայում էին ինչպես վայրենի գազանների: Նրանք վորսում, չարչարում էին նրանց, վոչնչացնում էին նրանց գյուղերը: Գաղութի իշխանությունները ձգտում էին ապացուցել, վոր ավստրալիական տեղացիները մարդիկ չեն, և դրա համար էլ նրանց սպանելը հանցագործություն չէ: Սիդնեյի թերթերը Դուաներ լճի շուրջը ապրող ցեղերից ազատվելու արմատական միջոց էին քարոզում, թունավորել այդ լճի ջրերը:

Ինչպես երևում է, անգլիացիները տեղացիների մասսայական սպանությունը գաղութացման ամենաառաջ միջոցն էին համարում: Նրանք հրեշային դաժանություն էին ցուցաբերում: Նրանք Ավստրալիայում էլ իրենց այնպես էին պահում, ինչպես Հնդկաստանում, վոր հենց միլիոն կյանք վճարեց բրիտանական գաղութ դառնալու պատվին արժանանալու համար, ինչպես Կապի գաղութում, վորտեղ հոտենտոտյան միլիոնանոց բնակչությունից այժմ հարյուր հազարից պակաս է մնացել: Դրա համար էլ գոյության իրավունքը կորցրած Ավստրալիայի տեղական բնակչությունը, իր դիակներով սփռում է

ճանապարհը «քաղաքակրթության» հաղթական յերթի համար և կանգնում և կատարելապես վոչնչանալու ուղիի վրա։ Ճիշտ է, առանձին նահանգապետներ հրամաններ հրատարակեցին գաղութականների ագահության դեմ. նրանք նույնիսկ մասերի մի քանի հարվածներով պատժեցին այն ապերասաններին, վորոնք կտրել էյին սևերի գլխերը կամ ականջները կամ պոկել էյին նրանց եղունգները, վորպեսզի իրենց համար ծխամորճ լցնելու թիակներ ունենան։ Բայց ի՞նչ նշանակություն ունեին այդ թույլ, առանձնակի ձայները։ Սպանությունների ալիքն այնպես լայն ծավալվեց, վոր ամբողջ ցեղեր անհետացան յերկրի յերեսից։ Բավական է թեկուզ հիշել միայն Վան-Դիմենի յերկիրը, վորի տեղացի բնակչությունը դարի սկզբում բաղկացած էր հինգ հազար հոգուց, իսկ 1863 թվականին... յոթ մարդուց։ Բավական է կարդալ «Մերկուրիալի» համարներից մեկում նշումը Գորգտոուն յեկող վերջին տասմանուհու մասին։

Վո՞չ Գլենարվանը, վո՞չ մայորը, վո՞չ Ջոն Մանգլսը չառարկեցին Պագանելին։ Յեթե նույնիսկ անգլիացի լինեին նրանք, դարձյալ պաշտպան չէին կանգնի իրենց հայրենակիցներին — գիտնականի բերած փաստերը չափազանց պարզ և անհերքելի էյին։

— Սրանից հիսուն տարի առաջ, — շարունակեց Պագանելը, — մենք մեր ճանապարհի վրա տեղական շատ ցեղերի կհանդիպեյինք։ Սակայն մինչև այժմ մենք տեղացիներ դեռ չենք տեսել։ Հարյուր տարի հետո ավստրալիական մայր ցամաքի վրա տեղական ցեղի մի հատիկ ներկայացուցիչ էլ չի մնա։

Յեվ իսկապես, արշավախումբը բոլորովին անմարդաբնակ էր թվում։ Վոչ մի տեղ կայանների կամ խրճիթների վոչ մի հետք չկար։ Ամայի հարթությունները փոխանակվում էյին կուսական անտառներով։

Կամաց-կամաց միօրինակայքի տեսքն ավելի վայրենի յեր դառնում։ Ճանապարհորդները պատրաստ էյին մտածել, վոր վոչ մի կենդանի եյակ, վոչ մարդ, վոչ կենդանի, յերբեք չեն այցելում այդ լքված հողամասերը, յերբ հանկարծ Ռոբերտը կանգնելով եվկալիպտների խմբի առաջ, բացականչեց.

— Նայեցե՛ք, կապիկը։

Յեվ նա ցույց ավեց մի մեծ սև արարած, վորն անհավատալի ճարպկությամբ ցատկոտում էր ճյուղից ճյուղ և ծա-

ուց ծառ։ Կարելի չէր կարծել, վոր նա Թևեր ունի։ Մի՞թե այս զարմանալի յերկրում, վորտեղ ամեն ինչ այնպես անսովոր և նոր է, բնությունը Թևեր է պարգևել կապիկներին։

Ծուրդանը կանգ առավ, և բոլորն հետևեցին արագությամբ դեպի անտառի Թավուտը հեռացող կենդանուն։ Շուտով նա ցած իջավ և կայծակի արագությամբ մի քանի մետր գետնի վրա վազելով, կորանալով և կծկվելով իր յերկար ձեռքերով ամուր բռնեց խեժոտ ծառի բոլորովին հարթ և հաստ բնից։ Ճանապարհորդները չէին պատկերացնում, Թե նա ինչպես է վերև բարձրանում այդ սահուն բնի վրայով, վորը չէր կարելի նույնիսկ ձեռքերով գրկել, յերբ հանկարծ կապիկը կացնի նման ինչ վոր մի բան դուրս հանեց և բնի վրա փոքրիկ կտրվածքներ անելով, նրանցով արագ մագլցեց հենց մինչև ծառի գագաթը։

— Այ քեզ որիգինալ կապիկ, — բացականչեց Մայորը։ — Ի՞նչպես է կոչվում նա։

— Այս կապիկին ազնվացեղ ավստրալիացի յե կոչվում, — պատասխանեց Պագանելը։

Աշխարհագրագետի ուղեկիցները չէին հաջողել նույնիսկ աչքերը Թարթել այդ անմիտ բառերի ժամանակ, յերբ հանկարծ, ինչ վոր անտեսից կոկորդային աղմուկներ լսվեցին, վորոնք մեր հնչյունների հետևյալ նմանությամբ միայն կարելի յե տալ. Կոռ-ևիս։ Կոռ-ևիս, գոռում էյին ինչ վոր մի մոտիկ տեղում։ Այրտոնը զվարճանալով քշեց իր լծկանքին և հարյուր քայլ անցնելով, ճանապարհորդներն անսպասելի կերպով ընկան տեղացիների կայանը։

Ինչ տխուր տեսարան էր։ Ծառի կեղևի չերտերից կարած տասը հատ վրաններ կանգնած էյին մերկ հողի վրա։ Նրանք իրենց բնակիչներին պաշտպանում էյին միայն մի կողմից։

Հուսահատական կարիքի մեջ ընկած տեղացիների տեսքը վանողական էր։ Այնտեղ յերեսուն տղամարդ, կանայք և յերեխաներ կային, վոր կենգուրույի մորթուց ցնցոտիներ էյին հագած։ Ծուրդանը տեսնելուն պես, նրանց առաջին շարժումն էր՝ վեր Թռչել ու փախչել։ Բայց ինչ վոր բարբառով Այրտոնի արտասանած մի քանի բառերը հանգստացրին նրանց։ Նրանք խմբվեցին Ծուրդանի շուրջը, կիսավստահ, կիսավախ, ինչպես ընտանի կենդանիներ, վորոնց հրապուրում են քաղցր պատառով։

Հինգ վոտնաչափ չորս դյույմից մինչև հինգ վոտնաչափ յոԹ



Հանդիպում տեղացիների հետ։

գյուղի հատակով առվակներն ամենքին վոչ թե սև գույնի կաչի, այլ հին մուրի նմանությունը հիշեցնող մի բան, խճուճ մազեր, յերկար ձեռքեր և դուրս ցցված փորեր։ Նրանց մարմինները զարդարված եյին մարմնաքանդակներով և ավխացած կըտրվածքներով, վոր արել եյին հուղարկավորական ծիսակատարությունների ժամանակ։ Ցեղագրական հայեցակետով ավելի տգեղ դեմքեր դժվար է պատկերացնել։ Ահագին բերան, տափակ քիթ, ներս ընկած աչքեր և բութ՝ գլխի առաջ դուրս պրծած ատամներն ծնոտ, ավխոտակ, բայց այլանդակությունը առավել ցցված ատամներով։ Թվում է, վոր մարդկային վոչ մի արարած այնքան մոտիկ չի կանգնած կենդանիներին, վորքան այս ակղացիները։

— Թողեքայդ չխոսվեք, — ասաց մայրը, — դրանք կապիկներ են։ Աղավաղեք, յեթե կուզեք, բայց և այնպես կապիկներ։

— Մակ-Նարա, մի՞թե դուք նրանց եք պաշտպանում, ովքեր հալածում են այս մարդկանց, ինչպես վայրենի կենդանիների, — հանդիմանորեն հարցրեց Ցելենան։ — Չէ՞ վոր սրանք մարդ են։ Դժբախտ են, բայց և այնպես մարդ են։

— Մարդի՞կ, — բացականչեց Մակ-Նարան։ — Հավանորեն ներկայացնում դա անցման աստիճանն է որանգուտանից դեպի մարդը։ Ցես կարծում եմ, վոր յեթե չափենք նրանց գանգի անկյունը, նա մի քիչ բանով կտարբերվի կապիկի գանգի անկյունից։

Մակ-Նարան իրավացի յեր, վոր այդպես եր ասում։ Ավստրալիացիների գանգի անկյունը շատ սուր է և, համարյա, հավասար է որանգուտանի գանգի անկյունին, և հենց այդպես-վաթսուն և վաթսուն յերկու աստիճան*։ Հենց դրա համար էլ Դե-Ռիենցին առանց հիմքի չէր, վոր առաջարկում եր այդ դժբախտներին մարդանման կապիկների մի առանձին ցեղ համարել։ Բայց Ցելենան ավելի իրավացի յեր, քան Մակ-Նարան, ընդունելով նրանց վորպես մարդիկ, վորոնք զարգացման միայն

---

* Ժամանակակից գիտությունը հերքում է ռասայաբանամոլությանը վերագրած այդ մեթոդը գանգի անկյանի չափ թե քիչ սրության հիման վրա։ Ավստրալիացիների գանգի անկյան սրությունը, կախված է ցեղերի ձևից և ընդհանրապես չափում չի յենթարկվում։ Ծ. ա. Բ.

վերջին աստիճանի վրա յեն կանգնած։ Հավանական է, վոր մի անգամ, անանցանելի անդունդ բաժանում է ավստրալիացիներին կղզիներից։

Հելենան և Մերի Գրանտը դուրս յեկան ֆուրգոնից և մոտեցան տեղացիներին։ Նրանք փայփայում էին յերեխաներին և ուտելիք էին մեկնում քաղցած տղամարդկանց և կանանց, վորոնք ագահությամբ կլանում էին այն։ Ճանապարհորդուհիների խղճահարությունն առանձնապես տեղացի կանայք առաջացրին։ Աշխարհում ավստրալուհու վիճակից ավելի ծանր վիճակ չկա։ Խորթ մայր բնությունը զրկել է նրան գրավչության ամենափոքրիկ մասից։ Դա ստրկուհի յե, վորին ապագա ամուսինն ուժով հալից գցում և հարսանյաց նվերի փոխարեն նա իր նոր տիրոջից փայտի հարվածներ է ստանում միայն։ Քոչվորական կյանքի գլխավոր ծանրությունն ընկնում է նրա վրա։ Նա ամեն օր իր հետևից քարշ է տալիս յերեխաներին, փաթաթելով նրանց յեղեգնե խսիրի մեջ. Նա մի տեղից մի ուրիշ տեղ է փոխադրում վորսորդական և ձկնորսական պիտույքները և phormium tenax բույսի պաշարները, վորից նա ուռկաններ է գործում. Նա պիտի կերակրի ամբողջ ընտանիքը. Նա մողեսների, պարկամկների և օձերի վորսն է անում։ Նա չորուկներ է հավաքում խարույկի համար. Նա կեղև է կլպում հյուղի համար. Նա խեղճ, բեռնակիր անասուն է, վոր յերբեք հանգստություն չունի։ Նա ուտում է իր տիրակալից հետո, վերջացնելով մնացորդը, վորից ամուսինը զզվում է։ Զարմանալի չէ, վոր այդ ահավոր կյանքում անժամանակ, տառապալից ծերությունն ավստրալուհու վրա յե հասնում ամուսնության հենց առաջին տարիներում։

Այդ րոպեյին, այդ դժբախտներից մի քանիսը, ըստ յերեվույթին, վաղուց արդեն կերակրված, փորձում էին թռչուններ բռնել, հրապուրելով նրանց հատիկներով։ Նրանք պառկած էին չորացած հողի վրա, ամբողջ ժամերով սպասելով, մինչև վոր նրանց անշարժությամբ խաբված թռչունն ինքը նստեր նրանց ձեռքի վրա։ Թռչուններ բռնելու ուրիշ միջոցներ նրանք չգիտեյին, և պետք էր ավստրալիական փետրավոր լինել, այդպիսի հասարակ թակարդի մեջ ընկնելու համար։

Մինչ այդ, ճանապարհորդների խաղաղ և բարյացակամ վերաբերմունքից հանգստացած ավստրալիացիներն ամեն կողմից

շրջապատեցին ֆուրգոնը և այժմ ճանապարհորդներն առիպված էին պաշտպանել այն թալանելուց։ Նրանց խոսակցությունը լինում էր չլսված հնչյուններով և լեզվի չըխկոցով և ավելի շատ նման էր կենդանիների գռռոցների, քան թե մարդկային լեզվի։ Սակայն յերբեմն ձայնի առոգանությունները հաճելի և նույնիսկ քնքույշ էին դառնում։ «Նոկի, նոկի» բառն ավելի հաճախակի յեր լսվում և այնպիսի արտահայտիչ շարժումներով ուղեկցվում, վոր ճանապարհորդները վերջապես հասկացան նրա նշանակությունը. «տուր, տուր»։ Այդ «տուր, տուր», բառացի ամեն բանի էլ վերաբերում էր, ինչ վոր խեղճերի աչքովն էր ընկնում։ Պարոն Օլբինեթն առիպված էր ամբողջ ժամանակ զգույշ լինել, վորպեսզի պահպանի ծածկոցը և ճանապարհի պարենի պաշարները։

Հելենայի խնդրով, Գլենարվանը հրամայեց Օլբինեթին մի քիչ կերակուր բաժանել տեղացիներին։ Նրանք, ըստ յերևույթին հասկացան նրա հրամանի իմաստը, և նրանց շնորհակալությունն այնչափ մեծ էր, վոր կզգաստացներ ամենաանտարբեր մարդուն։

Պարոն Օլբինեթը, դաստիարակված մարդ լինելով, ցանկացավ առաջ կերակրել կանանց։ Բայց այդ դժբախտ արարածները չհամարձակվեցին իրենց կատաղի ամուսիններից կշտանալուց առաջ դիպչել կերակրին։ Այս վերջինները հարձակվեցին պաքսիմատի և չորացրած մսի վրա, ինչպես գազանները ավարի վրա։

Մերի Գրանտը մտածեց, վոր իր հայրը գուցե գերի յե նույնպիսի վայրենի տեղացիների մոտ, և նրա աչքերն արցունքակալեցին։ Նա խեղճ պատկերացրեց այն տառապանքները, վորոնք պիտի կրեր այնպիսի մի մարդ, ինչպիսին Հարրի Գրանտն է, գտնվելով վաչկատուն ցեղի ստրուկ, նրա տանջանքները քաղցից, աղքատությունից, վատ վերաբերմունքից։

Աչքը նրա վրայից չհեռացնող Ջոն Մանգլսը գուշակում էր նրա մտքերը և ընդառաջելով աղջկա չարտահայտած ցանկություններին, դարձավ դեպի «Բրիտանիայի» նախկին բոցմանին.

— Այրտոն, դո՞ւք էլ այդպիսի վայրենիների մոտ եղել եք գերի։

— Այո՛, նավապետ,— պատասխանեց նա,— ներքին Ավստրալիայի բոլոր այդ ցեղերը նման են իրար։ Միայն թե դուք ձեր առաջ տեսնում եք վոչնչություն ներկայացնող մարդկանց մի

խումբ, մինչդեռ Դուգլինգի ափերին բազմամարդ ցեղեր են գտնըվում, վորոնց առաջնորդում են հզոր և ուժեղ առաջնորդներ։

— Բայց ի՞նչ կարող է անել եվրոպացին այդպիսի վայրենիների մոտ,—հարցրեց Ջոն Մանգլըը։—Նա նրանց ինչի՞ն է հարկավոր։

— Եվրոպացին վորս է անում և կարթով ձուկ է բռնում վայրենիների հետ միասին, ինչպես յես եյի անում այդ,—պատասխանեց Այրտոնը,—մասնակցում է ճակատամարտերին։ Յես ձեզ արդեն ասացի, վոր նրանց հետ վերաբերվելը կախված է ցեղերին մատուցած իրենց ծառայություններից, և յեթե դա քաջ և խելոք մարդ է, նա մեծ հեղինակություն է ձեռք բերում տեղացիների մեջ։

— Բայց մնո՞ւմ է վորպես գերի,—ասաց Մերի Գրանտը։

— Այո՛։ Յեվ նույնիսկ ավելին։ Նրան զգոնությամբ հսկում են, աչք չհեռացնելով վոչ ցերեկը և վոչ էլ գիշերը,—պատասխանեց Այրտոնը։

— Սակայն, ձեզ խոմ հաջողվեց փախչել,—Այրտոն,—խոսակցությանը խառնվեց Մակ-Նաբսը։

— Միայն շնորհիվ նրա, վոր ինձ գերի վերցնող ցեղը ճակատամարտով եր զբաղված հարևան ցեղի հետ։ Փախուստը հաջողվեց ինձ։ Ճիշտ է։ Յեվ յես չեմ զղջում, վոր փախա։ Բայց յեթե ինձ առաջարկեյին կրկնել այդ քայլը, ուղիղն եմ ասում, յես, թվում է, վոր հավիտենական ստրկությունը կգերադասեյի այն տանջանքներից, վորոնք յես կրել եմ, թափառելով ներքին Ավստրալիայի անապատներում։ Ամբողջ հոգով հույս ունեմ, վոր նավապետ Գրանտը չի վճռի այդ անհույս անմիտ քայլն անել։

— Դուք ինքներդ տեսնում եք, օրիորդ Մերի,—ասաց նավապետը,— վոր մենք պետք է ցանկանանք նավապետ Գրանտի գերությունը։ Դրա վրա ավելացրեք և այն, վոր այդ դեպքում մենք հեշտությամբ կգտնենք նրա հետքերը, քան յեթե նա փախած լիներ և թափառեր մայր ցամաքի անապատներում։

— Դուք դեռ հույս ունե՞ք, վոր մենք կգտնենք նրան,— հարցրեց յերիտասարդ աղջիկը։

— Յես հույս ունեմ, օրիորդ Մերի, վոր շուտով կգա այն օրը, յերբ յես ձեզ յերջանիկ կտեսնեմ։

Մերիի թաց աչքերը յերախտագիտության հայացք նետեցին յերիտասարդ նավապետին։

Մինչ այդ տեղացիներին ինչ վոր անհասկանալի հուզմունք էր բռնել։ Նրանք բարձր աղաղակներ էին արձակում, փախչում էին զանազան կողմեր, զենքերն էին վերցնում, և, թվում էր, վոր կատաղել էին։

Գլենարվանն ամենևին չէր հասկանում թե ինչ է կատարվում նրանց հետ։ Տեղացիների սարսափելի վարմունքով նույնպես հետաքրքրվող մայորը դիմեց Այրտոնին.

— Դուք այնքան ժամանակ եք անցկացրել ավստրալիացիների մեջ, գուցե դուք կարողանաք մեզ բացատրել, այդ ի՞նչ ճանճ է կծել նրանց։

— Յես նրանց լեզուն չգիտեմ, վորովհետև այստեղ այնքան բարբառներ կան, վորքան և ցեղեր, բայց և այնպես կփորձեմ։

Տեղացիներից մեկին նշանով մոտ կանչելով, Այրտոնը խոսակցության մեջ մտավ նրա հետ։ Հետո դառնալով ճանապարհորդներին, նա ասաց.

— Յեթե չեմ սխալվում, նրանք ուզում են ցուցադրել ձեր առաջ որինակելի մարտ, վորպես շնորհակալության կերակրի համար։

Յեվ իսկապես։ Այրտոնը ճիշտ էր հասկացել վայրենիների ցանկությունը։ Տեղացիները միմյանց վրա հարձակվեցին կատաղության հրաշալի խաղով և յեթե Այրտոնը չնախազգուշացներ, ճանապարհորդները կկարծեյին, վոր ներկա յեն իսկական ճակատամարտի։ Ընդհանրապես, շատ ճանապարհորդների վկայությամբ, ավստրալիացիները բնածին դերասաններ են, և այս փոքրիկ ներկայացումը ավելի քան լավ հաստատեց այդ մտքի ճշմարտությունը։

Նրանց հարձակման և պաշտպանության գործիքները հաստ մահակներ էին, վորոնք կարող ձեռքերում կարող են փշրել ամենաամուր գանգը, և տոմագավկը—յերկճյուղ փայտ, վորի յեղանի արանքում, բուսական սոսինձի ոգնությամբ մի սուր քար է ամրացրած։ Այդ նախապատմական տեգի փայտը ինը վոտնաչափ յերկարություն ուներ։ Դա սարսափելի զենք է պատերազմում և միևնույն ժամանակ ոգտակար գործիք կենցաղում։ Նա միաժամանակ հաջողությամբ է ճյուղեր և թշնամիների գլուխներ կտրում, ճեղքում է մարմիններ և ծառերի բներ։

Մարտնչողները թռչում էին իրար վրա, վայրենի աղաղակներով զենքը թափահարելով։ Մեկն ընկավ գետին, մեռած ձևա-



Մարտնչողները թռչում էին իրար վրա:

նալով, մյուսները հաղթողների սուր ճիչեր արձակեցին։ Կանայք, առավելապես պառավները, խրախուսում էին մարտիկներին, հարձակվում էին կարճեցյալ դիակների վրա և ցույց էին տալիս, վոր կարող են նրանց կատաղությամբ, վորն ավելի սարսափելի տպավորություն չէր գործի, նույնիսկ յեթե նա կատարվեր։

Ցեցենան ամբողջ ժամանակ վախենում էր, չլինի թե ներկայացումը Հանկարծ իսկական մարտի փոխվի, մանավանդ վոր, ներկայացման մասնակցող յերիտասարդները այնքան ծեծում էին միմյանց վոչ չինծու ատաքությամբ, և ամենևին վոչ անքննույթ։ Դրա հետ առանձնապես աղջիկներն էին կռվով տարվում։

Որինակելի մարտն այդպես տևեց բավական ժամանակ, յերբ Հանկարծ հարձակվողները ու պաշտպանվողները կանգ առան։ Զենքը ցած ընկավ նրանց ձեռքերից։ Բազմաձայն աղմուկին խորը լռություն փոխարինեց։ Տեղացիները մնացին այն դիրքում, վորի մեջ նրանք կանգ առան, ինչպես իսկական կենդանի պատկերներ։ Կարելի յեր կարծել, վոր նրանք քարացել են։

Ի՞նչն էր Հանկարծակի դիմաշրջության պատճառը։ Ինչո՞ւ մարտիկները արձանների փոխվեցին։ Ճանապարհորդները շուտով տեսան այդ Հարցերի պատասխանը։

Կեմարպեր ծառերի գագաթներին տեղավորվել էր կակադուների (թութակների) յերամը։ Նրանք օդը լցրել էին իրենց ճռվողյունով և իրենց բազմագույն փետրավորությամբ ծիածանն էին հիշեցնում։ Հենց այդ խայտաբղետ թռչունների յերևալը տեղացիներին ստիպեց դադարեցնել «մարտը»։

Ավստրալիական հանաք պատերազմից հետո ճանապարհորդները տեսան ավստրալիական իսկական վորսը։

Տեղացիներից մեկը վերցրեց կարմիր գույնով ներկած մի ինչ վոր տարօրինակ ձևի գործիք և ստվերի նման իր անշարժ ընկերների խմբից բաժանվելով, գնաց դեպի այն ծառը, վորի վրա նստած էր յերամը։ Նա առաջ էր շարժվում անձայն, ինչպես ստվեր։ Նրա ճանապարհի վրա վոչ մի փոքրիկ քար չշարժվեց, վոչ մի չոր ճյուղ չճռճռաց։

Ծառին մոտենալով, վայրենին կարմիր առարկան ուղղակի առաջ շպրտեց։ Տարօրինակ գործիքը հորիզոնական դիրքով թռավ քառասուն վոտնաչափ, հետո հանկարծ, գետնին չկպչելով, վեր ուղղված ուղիղ անկյունով, հարյուր վոտնաչափ բարձ-



[illegible]

բռնցով և մաս մի գլուխին Թռչում կատարելով, կորագին գծեց և ընկավ վորսորդի վոտների մոտ։

Գլենարվանն ու իր ուղեկիցները զարմացել եյին։ Նրանք չեյին հավատում իրենց աչքերին։

— Դա բումերանգ է,— ասաց Այրտոնը։

— Բումերանգ,— գոչեց Պագանելը։— Ավստրալիական բումերանգ։

Յեվ, յերեխայի պես, նա նետվեց դեպի զարմանալի զենքը, վորպեսզի տեսնի, թե ինչ կա նրա ներսում։

Յեվ իսկապես, կարելի յեր կարծել, վոր բումերանգի ներսում ինչ վոր մեխանիզմ կամ զսպանակ է թաքնված, վորի հանկարծակի ուղղվելը ստիպում է ամբողջ գործիքին փոխել շարժման ուղղությունը։ Բայց նման վոչ մի բան չկար։

Բումերանգը կազմված եր մի ամբողջական, ամուր փայտի կտորից, յերեսուն-քառասուն դյույմ յերկարությամբ, մի ծայրն ել ծռած։ Նրա հաստությունը մեջտեղում յերեք դյույմի յեր հավասար, իսկ ծայրերը սրված եյին։ Մի կողմից կես դյույմի չափ ծռված, նա դուրս ցցված կողմում յերկու կող ուներ։ Զենքն ամբողջությամբ նույնքան պարզ եր, վորքան և անըմբռնելի յեր նրա գործողությունը։

— Ահա թե ինչպիսին է, այս հայտնի բումերանգը,— ասաց Պագանելը զննելով տարօրինակ զենքը։— Փայտի մի հասարակ կտոր և ուրիշ վոչինչ։ Բայց ինչո՞ւ հորիզոնականությամբ Թըռչելով, նա վորոշ մոմենտում վերև է սլանում և ապա ընկնում է տիրոջ վոտքերի առաջ։— Վոչ գիտնականները, վոչ ել ճանապարհորդները վոչ մի կերպ չկարողացան բացատրել այդ։

— Արդյոք, դա նման չե՞ վորոշ ձեվով շպրտած շրջանակի անդրադարձ շարժմանը,— հարցրեց Ջոն Մանգլը։

— Կամ, ավելի շուտ,— ավելացրեց Գլենարվանը,— բիլիարդի գնդի՞ անդրադարձ շարժմանը, վորը հետ է գլորվում, յեթե խփես նրա վորոշ կետին։

— Վոչ, դա այն չե,— պատասխանեց Պագանելը։— Յերկու դեպքում ել, վորոնց մասին դուք խոսում եք, մի հենակետ կա, վորը և պայմանավորում է անդրադարձ շարժումը։ Դա հողն է շրջանակի համար և բիլիարդի մահուդը գնդի համար։ Բայց բումերանգը վոչ մի հենակետ չունի։ Նա հողին չի կպչում և այնուամենայնիվ, ահագին բարձրության է հասնում։

— Այդ գեղջկուհու ինչո՞վ էք բացատրում դուք այս զարմանալի յերևույթը պարոն Պագանել,—հարցրեց Մերին։

— Յես չեմ փորձում բացատրություններ տալ, յես սահմանափակվում եմ փաստի հաստատումով։ Ըստ յերևույթին այստեղ ամբողջ գործը բումերանգի ձևի մեջ է և նետմանում, թե ինչպես են շպրտում այն։ Բայց թե ձևը և թե մյուսը—ավստրալիացիների գաղտնիքն է։

— Ինչպես էլ վոր լինի, բայց դա բավական խորհրդավորություն է հետաքրքրածը... կոլեկցիաների համար,—նկատեց Հելենան, աչքի տակով նայելով մայորին, վորը դեմքն էր պատռում իբրև մի մարդ, վորին չհամոզեցին հակառակորդի փաստարկումները։

Այնինչ ժամանակն անցավ, և Գլենարվանն արդեն սկսել մտածել ճանապարհվելու մասին, վորովհետև այդ դադարը բավականին չէր նախատեսված։ Նա հենց նոր ուզեց առաջարկել ճանապարհորդներին գրավել իրենց տեղերը թամբերում և ֆուրգոնում, յերբ հանկարծ, մի հեծյալ վայրենի բացառ գուլզ վազեց և հուզված՝ ինչ վոր մի բան գոռաց։

— Ահա,—ասաց Այրտոնը,—նա գտել է ջայլամների (կազուարի) հետքը։

— Նշանակում է, պարզապես վորսորդություն կլինի՞,—հարցրեց Գլենարվանը։

— Անհրաժեշտ է մնալ և տեսնել,—բացականչեց Պագանելը։

— Կարող է պատահել, վոր նրանք նորից արձակեն բումերանգը։ Դա առավելապես հետաքրքիր է։

— Ի՞նչպես է ձեր կարծիքը, Այրտոն,—հարցրեց Գլենարվանը։

— Դա յերկար չի պահի ձեզ,—պատասխանեց նախկին բոցմանը։

Տեղացիները վոչ մի վայրկյան չկորցրին։ Ջայլամների վորսը—շատ կարևոր գործ է նրանց համար։ Սպանված թռչունը մի քանի որով ապահովում է ամբողջ տոհմի կերակուրը։ Այդ պատճառով վորսորդները բոլոր ջանքերը գործադրում են, վորպեսզի կենդանի բաց չթողնեն այդպիսի հրաշալի ավարը։ Բայց ինչպե՞ս կարող են նրանք առանց հրացանների և շների հասնել և սպանել արագավազ և ճարպիկ փետրավորը։ Հարցի այդ կողմն ամենից շատ էր հետաքրքրում Պագանելյին։

Եմու, կամ կազուար, վորին տեղացիները «մուրրեկ» են ա—

ռում, առարկաների միջև ամենից սակավ և պատահում ավստրա-լիական հարթություններում։ Դա մի խոշոր թռչուն է, յերկու և կես վոտնաչափ բարձրությամբ, ազնիվ, համեղ մսով, վոր հնդկահավի միսն է հիշեցնում։ Նրա գլուխը ծածկված է յեղ-ջյուրի թեփիկներով. Նրա աչքերը բաց դարչնագույն են, կտուցը սև և վերևից ներքև ծռված, թաթերը զինված են սուր ճանկե-րով։ Նրա վզի և կրծքի փետրավորությունը ամենից մուգ է. թե-վերը կարճ են, նա չի թռչում։ Բայց յեթե նա չի կարողանում թռչել, դրա փոխարեն ամեն մի ձիուց արագ է վազում։ Այս-պիսով, նրան միայն խորամանկությամբ կարելի յե բռնել, և այն էլ շատ խորամանկ պիտի լինել։

Մոտ վաղող վայրենու նշանով, նրա ընկերներից տասը մարդ շղթայի պես ցրվեցին, վորպես հրացանաձիգների դասակ։ Կազու-արները յերևացին հրաշալի հարթության վրա, վոր ինդիգոնու հախուռն ծաղկումից կապտել եր։ Թոշարերանի ծառերի հետև վում թաղնվելով, ճանապարհորդները մեծագույն հետաքրքրու-թյամբ հետևում եյին վորսին։

Վորսորդների մոտենալով վեց հատ կազուարներ պոկվեցին տեղերից և մոտավորապես մի մղոն հեռու փախան։ Այդ վորսի ղեկավարը, առճի քչողը, նշանով հրամայեց իր ընկերներին կանգ առնել։ Բոլորն իսկույն ևեթ գետին փռվեցին։ Քչողը գոր-ծովի ցանցից հանեց կազուարների չերկու հատ շատ լավ կարած մորթիներ և արագ զգեստավորվեց նրանցով։ Մորթու վերը ցցված աջ ձեռքը քչողը բարձրացրեց գլխի վերևը և հաջողությամբ սկսեց նմանվել կերակուր փնտրող եմուի քայլվածքին։ Կեղծ կազուարը դանդաղ մոտենում եր հոտին։ Նա հանկարծակի կանգ եր առնում, ձևացնելով, վոր հատիկներ է հավաքում գետնի վրա. կամ ճան-կերով սկսելով հողը քանդատել, իր շուրջ կողմը փոշու մի ամբողջ ամպ եր բարձրացնում։ Վայրենին այնքան ճիշտ եր ընդօրինա-կում բնական կազուարների սովորությունները, վոր կազուար-ները անկարելի թույլ տվին նրան մոտենալ։ Շուտով վորսորդը գտնվեց վոչինչ չկասկածող կենդանիների հոտի մեջ։ Այն ժամա-նակ նա Մորթու տակից դուրս քաշեց մահակը, և վեց կազուար-ներից հինգը մեռած ընկան գետնի վրա։

Վորսը վերջացավ։

Գլենարվանը, ճանապարհորդուհիները և ամբողջ փոքրիկ ջո-կատը հրաժեշտ տվեց տեղացիներին։ Ցերեկում եր, վոր անջա-

տունը ջերմ էր վերադարձնում նրանց,—ըստ յերևույթին կազմակերպիչնե-րի հաշվարկ՝ վորոշ գումար վանելից նրանց հիշողությունից այն դա-խանճույքը, վորով նրանց կերակրեց յեվրոպացիների ձեռքը:

— Կատակասեր եք, Մակ-Նաբս,—ասաց Պագանելը մայորին,— ճանապարհին,—այժմ դուք ավստրալիացիներին այլևս կապիկներ չե՞ք համարում:

— Ինչո՞ւ համար,—առարկեց մայորը:—Չնայած նրանք հաջողակ են ընդօրինակում ուրիշ կենդանիների սովորությունները ու ձայնը: Բայց չէ վոր դա հաստատում է միայն իմ կար-ծիքը: Դրա համար էլ նրանք կապիկներ են:

— Վոչ, մայոր, յես թույլ չեմ տա, վոր դուք համառորեն պնդեք,—ասաց Պագանելը,—յես պահանջում եմ, վոր դուք ըն-դունեք ձեր սխալը:

— Դե վոր դուք այդպես պնդում եք, թանկագին [illegible], յես համաձայնվում եմ: Ավստրալիացիները—կապիկներ չեն. ընդ-հակառակը—կապիկները ավստրալիացիներ են:

— Այդ ի՞նչ նորություն է:

— Հապա հիշեցեք, թե նեգրերն ինչ են ասում որանգուտանների մասին...

— Չեմ հիշում,—ասաց Պագանելը:

— Նրանք ասում են, վոր այդ կապիկները նույնպես մարդ են, ինչպես նեգրերը, բայց ավելի խորամանկ են: «Նա չի խոսում, վորպեսզի նրան չստիպեն աշխատելու», ասել է մի նախանձոտ նեգր իր տիրոջ որանգուտանի մասին:

ԴԺՈՒԼ ՏԱՌՆՑՈՐԹԵՐՈՐԴ

## ԱՆԱՍՆԱԳԱՀ ՄԻԼԻՈՆԱՏԵՐԵՐ

Գիշերը հանգիստ անցկացնելուց հետո, ճանապարհորդներն առավոտյան նորից ճանապարհ ընկան: Նրանք ամբողջ ժամանակ գնում էին դեպի արևելք և նրանց անցումի հետքերը հարթու-թյան վրա ձգվում էին խղճալական ուղիղ գծով: Այդ օրվա ըն-թացքում նրանք յերկու անգամ կտրեցին հոտերի գնած այն ա-րահետները, վորոնց անասնատերերը քշում էին հարավից դեպի հյուսիս: Ջոկատի թողած հետքերը կխառնվեին այդ հետքերի հետ, յեթե Գլենարվանի ձիու պայտը փոշոտ ճանապարհի

վրա չթողներ Բլեկ-Գոյնաի կայանի կենտրոնը—յերկու կողքի յերեքնուկներ:

Հովտի վրայով, անդ-անդ, թափառում եյին ամպիկների դալարուն հոտանքները: Այդ ամպիկները ծնունդ եյին առնում Բու-ֆալո-Թինդալի լանջերին, վոր յերևում եյին հորիզոնի վրա: Նրանց ստվերը ծածկված եյին թփերով:

Ճանապարհորդները վորոշեցին յերեկոյան դեմ անպայման հասնել մինչև այդ լեռնաշղթայի ստորոտը: Այրտոնն անընդհատ քշում էր յեզներին, և այդ օրը ջոկատը յերեսուն հինգ մղոն կտրեց: Բոլորն էլ հոգնած յեկան գիշերօթի տեղը: Մի մեծ ծառի տակ վրան խփեցին, և, շտապ ընթրելով, այդպիսի դժվար անցումից հետո, նրանք ավելի շուտ ուզում եյին քնել, քան թե ուտել, և բոլորն էլ պառկեցին քնելու:

Միայն Պագանելը չէր քնում, վորովհետև առաջին հերթին նա պահակություն պիտի աներ: Կարաբինն ուսը ձգելով, գիտնականը քայլում էր ճամբարի չորս կողմը, վորպեսզի ավելի լավ դիմադրի քնին:

Չնայած նրան, վոր անլուսին գիշեր էր, չորս կողմում, համարյա, լույս էր—այնպես պայծառ եյին փայլում հարավային համաստեղության լուսատուները: Գիտնականը հափշտակությամբ էր դիտում բնության իր առաջ բաց արած գիրքը, վորը միշտ էլ հետաքրքրությամբ լիքն է նրանց համար, ովքեր կարողանում են կարդալ այն: Գիշերվա խորին լռությունը խանգարվում էր միայն ձիերի վոտքերին դրած յերկաթե կապերի զնգոցով:

Պագանելն ամբողջովին անձնատուր յեղավ իր աստղաբաշխական անուրջներին, ի սեր յերկնքի մոռանալով յերկրի մասին, յերբ հանկարծ հեռվից լսվող ինչ վոր հնչյուններ գրավեցին նրա ուշադրությունը: Գիտնականն սթափվեց: Մեծ զարմանքով նա ճանաչեց դաշնամուրի նվագի հնչյունները: Ինչ վոր մեկի համարձակ և ուժեղ ձեռքը ստեղներից հնչեղ ներդաշնակություններ էր դուրս կորզում: Սխալ չէր կարող լինել:

— Անապատում դաշնամուր,— ասաց ինքն իրեն Պագանելը:— Դրան չի կարելի հավատալ:

Յեվ իսկապես դա այնքան անհավատալի էր, վոր գիտնականը պատրաստ էր կարծել, վոր մի ինչ վոր անհայտ թռչուն նույն-



Թալկավը պահակ էր կանգնել։

պես հաջողությամբ նմանեցնում է Էրարի և Պլեյելի* հնչյուն-ները, ինչպես ավտոմոբիլական մյուս թռչունները նմանեցնում են ժամացույցի ակտեղցին կամ փոստատար կառքի կառապանի խարազանի շրխկոցին։

Բայց այդ բոլորի յերաժշտությունը միացյալ յերկերգողու-թյամբ։ Ինչ վոր մեկի զուրբեկան ձայնը պիանինոյի նվագակ-ցությամբ կատարում եր մի արիա «Դոն-Ժուանից»։ Գիտնականը տարվել եր ունկնդրությամբ, իրեն հաշիվ չտալով նրանում, վոր նա մեքենայորեն է չափ տալիս ձեռքով։

— Սատանան տանի,—հանկարծ գոչաց նա։—Վորքան էլ ար-տասովոր լինեն ավտոմոբիլական թռչունները, վորքան էլ ներ-դաշնակ լինեն թութակները, իսկապես նրանք չեն կարող իմա-նալ Մոցարտի յերգը։

Յեվ նա նորից լռեց, վորովհետև մինչև վերջը լսի հանճարեղ ներշնչումով ծնված մեղեդին։ Դժվար է հաղորդել այդ յերգե-ցողության տպավորությունը ավտոմոբիլական գիշերվա անդոր-րության մեջ։

Պագանելը յերկար կանգնեց, կախարդվածի պես, բայց, ա-ռանց վերջացնելով, ձայնը կտրվեց, և նորից լռություն տիրեց։

Յերբ Վիլսոնը յեկավ Պագանելին փոխարինելու, նա գիտնա-կանին գտավ խորը մտածմունքի մեջ ընկղմված։ Պագանելը վո-չինչ չասաց նավաստուն։ Վորոշելով առավոտյան հայտնել այդ տարօրինակ յերաժշտության մասին Գլենարվանին, նա վրան մտավ և վայրկյանապես քնեց։

Հետևյալ առավոտյան ջոկատն արթնացավ շների բարձր հա-չոցից։ Գլենարվանն իսկույն ևեթ վրանի վրա թռավ։ Անգլիա-կան ազնվացեղ շների հրաշալի նմուշներ, յերկու ահագին պոյնտեր, չարաճճիում եյին անտառի քոլաքերանում։ Ճանապար-հորդների մոտենալը նրանց ստիպեց անտառ նահանջել և կրրկ-նակի ուժով հաչել։

— Ըստ յերևույթին մի ինչ վոր մոտակա տեղում անասնաբու-ծական կայան կա,—ասաց Գլենարվանը։—Այստեղ անասնապահում վորսորդներ են ապրում, վորովհետև պոյնտերները—վորսորդա-կան շներ են։

---

* Էրար և Պլեյել—դաշնամուրների ֆրանսիական հայտնի գործարա-նատերեր։

Գաղանիկն հազիվ բերանը բացեց, վորովհետև պատմի յերեկ գիշերվա համերգի մասին, յերբ հանկարծ անտառից յերկու հեծյալ յերիտասարդ մարդիկ դուրս յեկան, զարմանալի գեղեցիկ ձիերի—անգլիական ազնվացեղ գուռնաներների վրա:

Վորսորդական անթերի կոստյումներ հագած յերիտասարդ մարդիկ, կանգնեցրին ձիերը, փոքրիկ ջոկատը տեսնելիս: Թվում էր, թե նրանք իրենց հարցրին, ինչ է հարկավոր այստեղ այդ զինված մարդկանց:

Բայց, նկատելով Փուրգոնից դուրս յեկող ճանապարհորդուհիներին, նրանք խսկույն ևեթ իջան ձիերից և, գլխարկները հանելով, ուղղվեցին դեպի յերիտասարդ կանայք:

Գլենարվանն էլ իր հերթին հանեց գլխարկը և վորպես ոտարերկրացի, առաջինն ինքը ներկայացավ յերիտասարդ մարդկանց:

Նրանք Գլենարվանին քաղաքավարի բարևեցին և մեկն ասաց.

— Ձե՞ք համաձայնի, արդյոք, դուք և ձեր ուղեկիցները, սըր, հանգստանալ մեր տանը:

— Ո՞ւմ հետ պատիվ ունեմ,—հարցրեց Գլենարվանը:

— Մայկել և Սենդի Պատերսոն, Հոտտմակի կայանի տերերը,—իրենց հերթին ներկայացան յերիտասարդները:—Դուք արդեն գտնվում եք կայանի տերիտորիայի վրա, և մինչև մեր տունը քառորդ մղոնից ավել չէ:

— Յես չեմ ուզում ի չարը գործ դնել ձեր սիրալիրությունը...—ասաց Գլենարվանը:

— Ներեցեք, դուք անսահման կպարտավորեցնեք խեղճ տարագիրներին, յեթե համաձայնեք այցելել մեզ այս անապատում:

Գլենարվանը վողջունեց, վորպես շնորհակալության նշան:

— Արդյոք, անհամեստություն չի լինի, յեթե յես հարցնեմ ձեզ...—ասաց Պագանելը, դիմելով Մայկել Պատերսոնին:

— Խնդրեմ,—նախազգուշությամբ պատասխանեց յերիտասարդը:

— Արդյոք դո՞ւք էյիք յերգում յերեկ Մոցարտի այդ սքանչելի մեղեդին:

— Այո՛, պարոն, յես էյի յերգում, իսկ իմ քեռու տղա Սենդին նվագակցում էր ինձ:

— Այդ դեպքում թույլ տվեք գեղեցիկ յերաժշտության սիրողին արտահայտել իմ հիացմունքը:

Ցեմ Գաղանիկը մեկնեց յերիտասարդին իր ձեռքը, վորը նա սրտանց սեղմեց։ Ալդա Մաքլեյ Գրատերանն առաջարկեց ճանապարհորդներին իջնել ձիերից և ձիերը թողնել Այրտոնի և նավաստիների հսկողությանը։ Բոլորը հետևեցին նրա հրավերին և, յերկու յերիտասարդների ուղեկցությամբ, վոտքով ուղևորվեցին դեպի Գոամեմեկի կայանի բնակելի տունը։

Կայանը արտաքինից վիճակում եր պահպանվում և ավելի շուտ հիշեցնում եր անգլիական պուրակ, քան թե արդյունաբերական ձեռնարկ։

Ցանկապատով շրջապատված կանաչ դաշտերը ձգվում եյին ամեն կողմ, ինչքան հեռու աչքը տեսնում եր։ Այնտեղ հազարավոր գլուխ յեղջյուրավոր անասուններ և միլիոնավոր վոչխարներ եյին արածում։ Բազմաթիվ հովիվներ և առհասարակ քանակությամբ շներ պահպանում եյին այդ աղմկալի չորքոտանիների բանակը։ Անասունների բառաչյունն և մայունը միանում եյին շների հաչոցը և հովիվների խարազանների շաչյունը։ Այս ամբողջն անլսելի դղրդոցով լցնում եր օդը։

Արևելքում հորիզոնը ծածկվում եր խիտ-արևոր ծառերի անտառի քողարկերանը, վորի հետևում յոթ հազար հինգ հարյուր վոտնաչափ բարձրանում եր Գոտեր լեռան հսկայական պրոֆիլը։ Կողքերին մշտադալար ծառեր ունեցած ճեմուղիները ձգվում եյին ամեն կողմ։ Տեղ-տեղ յերևում եյին տասը վոտնաչափ բարձրությամբ գրասարիի գնտառբուսակերը, վոր շատ են նման գաճաճ արմավենիներին, բայց խիտ, յերկար և նեղ տերևներով։ Ոդն արբեցած եր դափնիների և անանուխի բույրով։

Տեղական բույսերի աչք գրավող խմբերին հաջորդում եյին յեվրոպական յերկրներից բերված ծառերը։ Այստեղ կային դեղձի և տանձի ծառեր, խնձորենիներ, թուզի, նարինջի, կիտրոնի ծառեր և նույնիսկ կաղնիներ, վորոնց դիմավորեցին ճանապարհորդների հիացմունքի «ուռաա» աղաղակները։ Ուրախանալով իրենց հայրենիքի ծառերի արձակած թարմ ստվերով, նրանք մինչև ժամանակ չեյին զարմանում ապշանալ նաև թռչուններով։ Նրանց առանձնապես զարմացրեց մենուրայի—քնարավորի գեղեցկությունը, վորն առաջին անգամն եյին տեսնում նրանք։ Այդ նազելի թռչունի պոչի փետրավորությունը զարմանալի կերպով նման է Որֆեյի քաղցրաձայն գոր-



Քնարահաւ։

ծիչքին*։ Ցերը այդ թռչունները փախչում էին թփերի արանքով, իրենց քնարով դիպչելով ճյուղերին, թվում էր, թե վորտեղ վոր և կհնչեն ներդաշնակ ակկորդները։

Պառակերպան լեռնայրների տունը գտնվում էր լեռնի ճեմուղու ծայրին։ Դա մի վորսորդական կախարդիչ անկյուն էր, առաջին հարկը քարից, երկրորդը փայտից, վոր կանգնած էր զարմանալի գեղեցիկ ծաղկանոցի մեջ։

Տունն ամեն կողմից շրջապատված էր հովանոցով, վորի առաստաղից չինական լապտերներ էին կախված։ Նրա լուսամուտները արեգակից պաշտպանված էին գույնզգույն արևակալներով, վորոնք հեռվից, թվում էր, թե ծաղիկների ցանկապատ են։ Դժվար է պատկերացնել անհնար ավելի հաճելի և միևնույն ժամանակ ավելի բարեկեցիկ և գողտրիկ բնակարան։ Ծաղկանոցի թմբերի վրա և տունը շրջապատող ծառերի թավուտում գեղեցիկ լապտերներով պսակված քրոնզե սյուներ էին կանգնած։ Մութն ընկնելուն պես այդ լապտերներում վառվում էին թավուտում ծածկված փոքրիկ գործարանում մշակվող լուսատու գազի ալխոտ լեզուները։ Կանաչի մեջ կրակները զարմանալի առասպելություն էին թողնում։

Բոլոր սպասարկու անձերը—գոմերը, ամբարները, շտեմարանները—տեղավորված էին գլխավոր անից քառորդ մղոն տարածության վրա։ Դա մի ամբողջ բնակավայր էր, բաղկացած քսան շենքից։ Ելեկտրական հեռագիծը տունը միացնում էր սպասարկու անձերի հետ, ապահովելով հրամանների վայրկյանական հանձնումը։ Դրա շնորհիվ, կալվածքի յերկխառտորդ անձերի բնակարանը մեկուսացած էր ամեն մի աղմուկից և թվում էր, թե կորած է արևադարձային բույսերի թավուտում։

Ճանապարհորդները հասան մինչև ճեմուղու ծայրը և կանգնեցին քրքջացող առվակի վրա ձգված մի հրաշալի կամրջակի առաջ, վոր տանում էր դեպի անտառակի պուրակը։ Կամուրջի մյուս կողմում նրանց դիմավորեց Պառակերպան լեռնայրների վարձկալած կառավարիչը, և լայն բաց արեց նրանց առաջ այդ արտաքուստ համեստ անակի դռները։

Սենյակների կահավորության առաջին տպավորությունը շշմեցուցիչ էր։ Հարստության ավան ճոխությունը զուգորդում

* Որֆեյի քաղցրաձայն գործից—քնար։



Գտնուած եղբայրների տունը։

էր այստեղ միայն նուրբ, արտիստական ճաշակին մատչելի նըր-բագեղության հետ։ Վորսորդական հաղթանշաններով և զենքե-րով զարդարված նախամուտքը տանում էր հինգ պատուհան ունեցող մի մեծ դահլիճ։ Այստեղ կանգնած էր հին և նոր պար-տիտուրաներով ծանրաբեռնված դաշնամուրը, դեռևս չավար-տած պատկերների նկարչատախտակներ, մարմարյա արձաննե-րով զարդասեղաններ։ Ֆլամանդական վարպետների վրձինին պատկանող մի քանի նկարներ կախված էին պատերից, վորոնք պատած էին դիցաբանական նյութերով գեղեցկացնող գորգա-նկարներով։ Պարսկական հրաշալի գորգերը ծածկում էին հատակը, բոլորովին խլացնելով քայլերի ձայները։ Հին ջահը կախված էր առաստաղից. Թանկագին ճենապակի, բազմաթիվ նրբագեղ աննշան բաներ, վորոնք մեծագույն ճաշակով էին ընտրված, ցրված էին ամբողջ դահլիճում։ Այդ սենյակի կա-հավորությունը վկայում էր տան տիրոջ հրաշալի ճաշակի և արտիստական հակումների մասին։ Դժվար էր պատկերացնել, վոր գտնվում ես վոչ թե վորևէ իշխանական պալատում՝ Ֆրան-սիայում կամ Անգլիայում, այլ ավստրալիական խուլ անապատի սրտում։

Վարագույրներով ծածկված հինգ լուսամուտները փափուկ կիսալույս էին թողնում դեպի սենյակ։ Լուսամուտներին մոտեցող Յելենան բոլորովին կախարդվել էր իր առաջ բացված տեսա-րանով։

Լուսամուտները բացվում էին դեպի հարթավայրը, վորը ձգվում էր մինչև արևելքի սարերի ստորոտները։ Հորիզոնի վրա բլուրների գեղանոց, ալիքավոր գծով փակվող դաշտերի և անտառների փոխարինումը, այդ տեսարանին աննկարագրելի հրապույր էր տալիս։ Յերկրագնդի վոչ մի անկյուն գեղեցկու-թյամբ չէր կարող համեմատվել այդ հովտի հետ, նույնիսկ Տելեմարկի հռչակավոր Յեդեմական հովիտը Նորվեգիայում։ Դահլիճի լուսամուտների առաջ սփռված բնության հեքիաթական տեսարանը ամեն ժամ փոխում էր իր տեսքը, այն չափով, ինչ չափով վոր արեգակի դեպի զենիթ բարձրանալը շարունակ փո-խում էր լուսաստվերի տեղաշարժությունը դաշտի վրա։ Կախարդ-ված հայացքը չէր կարող անջատվել աննկարագրելի այդ գե-ղեցկությունից։

Մինչ այդ, Սենդի Պատտերսոնի հրամանով մեկը դ'ռանը

նախաճաշ պատրաստելուց և քառորդ ժամից հետո ճանապարհորդ-ներն արդեն նստած էին Հիմալայի պատրաստած սեղանի առաջ, Թորոսիկների և գինիների վորակն ամեն տեսակ գովասանքներից բարձր եր։

Յերեկոյան տանտերերը, իմանալով Գլենարվանի արշավի նպատակները, յեռանդով մասնակցություն ցույց տվին նրա պլանների քննարկումներին և նոր հույս ներշնչեցին նավապետ Գրանտի վորդիներին։

— Պարզ է, վոր Հարրի Գրանտը գերի յե ընկել տեղացիների մոտ,— ասաց Մայքել Պատերսոնը,— այլ կերպ նա անպայման կհասներ ծովափի վորևե բնակավայրի։ Դատելով ջուրը նետած փաստաթղթով, նա շատ լավ գիտեր իր գտնվելու տեղը, և յեթե նա այդ պայմաններում անգլիական մոտակա գաղութներում ապաստան չի գտել, այդ նշանակում է, վոր հենց ցամաք իջնելու առաջին ժամերին նրան տեղացիները գերի յեն վերցրել։

— Ճիշտ նույնպիսի մի պատմություն է պատահել նրա բոցմանի, Այրտոնի հետ,— ասաց Ջոն Մանգլսը։

— Ի դեպ, պարոն Պատերսոն, արդյոք դուք չե՞ք լսել «Բրիտանիայի» աղետի մասին,— հարցրեց Յելենան։

— Վոչինչ չեմ լսել,— պատասխանեց Սենդին։

— Իսկ ձեր կարծիքով, ի՞նչ է սպասում նավապետ Գրանտին գերության մեջ, ավստրալիացիների մոտ։

— Ավստրալիացիները դաժան ժողովուրդ չեն,— պատասխանեց յերիտասարդը։— Որինակ, Գրանտն այդ մասին կարող է բոլորովին հանգիստ լինել։ Մենք բազմաթիվ վկայություններ գիտենք նրանց հեզ բնավորության վերաբերյալ։ Նրանց մեջ յերկար ապրող շատ յեվրոպացիներ, հաստատում են, թե չի պատահել, վոր իրենք տառապեն վատ վերաբերմունքից։

— Մասնավորապես Կինգն էլ էր այդ ասում, Բյորկի արշավախմբի միակ կենդանի մնացած մասնակիցը,— ասաց Պագանելը։

— Յեվ վոչ միայն այդ համարձակ հետախույզը,— պատասխանեց Սենդիի Պատերսոնը,— այլև անգլիացի զինվոր Բուկլեյը, վորը դասալքեց Ֆիլիպ նավահանգստում 1803 թվականին և յերեսուն յերեք տարի անցկացրեց տեղացիների մեջ։

— «Ավստրալիայի» վերջին համարը,— ավելացրեց Մայքել Պատերսոնը,— հենց խոսակցը պատմում է մի ինչ վոր Մորիլի

մասին, որ հայրենիք է վերադարձել տասնվեցամյա գերությու-
նից հետո։ Նավապետ Գրանտի վիճակը զարմանալիորեն հիշեցնում է նրա վիճակը։ Մորիսը գերի յե վերցվել ափին, հենց այն տեղում, վորտեղ նրա «Գերուսլխանուհին» նավը խորտակվեց 1846 թվականին։ Տեղացիներն իսկույն ևեթ քաշեցին նրան յերկրի խորքը և պահում էին այնտեղ խիստ հսկողության տակ։ Ցես համոզված եմ, վոր դուք իրավունք ունեք հույս դնել արշավի բարեհաջող յելքի վրա։

Ցերիտասարդ սկվատերների այս խոսքերն անսահմանորեն ուրախացրին ճանապարհորդներին, վորովհետև միանգամայն համընկնում էին Այրտոնի և Պագանելի պնդումների հետ։ Նախաճաշից հետո, յերբ կանայք հեռացան սեղանից, խոսակցությունն անցավ տնտեսական խնդիրներին։ Սկվատերները կարդացել էին Կեմդենբրիջյան վոճրագործության մասին, բայց ավազակախմբերի յերևալը բոլորովին չվրդովեց նրանց։ Սակայն դժվար էր և սպասել, վոր չարագործները մի չնչին խմբակ կհամարձակվի հարձակվել կայանի վրա, վորի անձնակազմը հարյուր հոգուց էր բաղկացած։ Բացի դրանից, քիչ հավանություն կար, վոր նրանք կմտնեն այդ խուլ անապատը, վորտեղ, ճիշտն ասած, ապրուստ չկա, կամ կուղևորվեն Նոր Հարավային Ուելսի կողմը, վորի ճանապարհներն զգուշությամբ պահպանվում են զինվորական ուժով։ Համենայն դեպս, այդպես էր Այրտոնի կարծիքը։

Գլենարվանը, զիջելով ավստրալիր տանտերերի խնդիրներին, համաձայնեց այդ ամբողջ օրն անցկացնել կայանում։ Ուշացման այդ տասներկու ժամերը պետք է դառնային հանգստի տասներկու ժամ, և վոչ միայն ճանապարհորդների համար, այլև ձիերի և յեզների համար, վորոնք հրաշալի կերպով տեղավորվել էին կայանի ընդարձակ գոմերում։

Գլենարվանի համաձայնությունն առնելով, յերիտասարդները իրենց հյուրերի ուշադրության հանձնեցին ուրախ ժամանցների մի ամբողջ ծրագիր, վորը խանդավառությամբ ընդունվեց։

Կեսօրին յոթ աշխույժ ձիեր արդեն սպասում էին ճանապարհորդներին տան մուտքի առաջ։ Կանանց համար մի շքեղ կառք էր նախատեսվել։ Վորսորդական հրաշալի հրացաններով զինված հեծվորներն արշավում էին կառքի դռնակների առաջ այն ժամանակ, յերբ շղթայից արձակված պոյնտերների վոհմակը սլանում էր կողքից, ցնծագին հաչոցով խլացնելով ոդը։



Կենգուրույի ձագը։

Չորս ժամվա ընթացքում Գլենարվանի հեծելաշարքը քառատրոփում էր կայանի ճեմուղիներով և դաշտերով, վորոնք իր չափերով գերազանցում էր գերմանական մի շարք իշխանությունների տարածությունը։ Եթե նրա մեջ ավելի քիչ բնակիչներ կային, քան գերմանական իշխանություններում, համենայն դեպս վոչխարներն ավելի շատ էին։ Ինչ վերաբերում է վորսի թռչուններին, քշողների մի ամբողջ բանակ Եվրոպայում չէր կարող այն քանակությամբ քշել նրանց, վորն այստեղ վորսորդների աչքին էր ընկնում։ Դրա համար էլ զարմանալի չէ, վոր հրացանի կրակոցները չէին դադարում անտառների և հարթավայրերի խաղաղ, չորքոտանի բնակիչների ամենամեծ տագնապում։

Մակ-Նաբսի կողքին ձիավարող Ռոբերտը հրաշքներ էր գործում։ Համարձակ տղան, հակառակ քրոջ խնդիրներին, ամբողջ ժամանակ գտնվում էր ամենից առաջ և միշտ առաջինն էր կրակում։ Բայց Ջոն Մանգլսը խոստացավ հետևել նրան, և Մերի Գրանտը հանգստացավ։

Շուրջկալքի ժամանակ վորսորդները խփեցին այդտեղ միայն գտնվող մի քանի կենդանիներ, վորոնց նույնիսկ Պագանելը միայն անունով գիտեր։ Ուրիշների թվում սպանվել եյին մի ումբատ և մի բանդիկուտ։

Ումբատը—խոտաճարակ կենդանի յե, վոր բներ է փորում ճագարների նման, մի վոչխարի (մաքի) չափ է և շատ համեղ միս ունի։

Բանդիկուտը—պարկավոր կենդանի յե։ Դա հավնոցների յերդվյալ թշնամին է, և նա յեվրոպական աղվեսներից հարյուր անգամ ճարպիկ է հավնոցների վրա ավերածական հարձակումների հմտության մեջ։

Մեկ ու կես վոտնաչափ յերկարությամբ արտաքուստ այդ բավական զզվելի կենդանուն Պագանելն սպանեց։ Վորսորդական սնափառությունը գիտնականին ստիպեց գեղեցիկ հռչակել այդ այլանդակին։

— Սա կախարդական գազան է,—կրկնում էր նա։

Իր ուրիշ հաղթանակների թվում Ռոբերտը կարող էր պարծենալ աղվեսի նմանող դազյուրայով, վոր սև թավ մորթի ուներ, սպիտակ աղխատակ խայտերով։ Բացի դրանից, նա սպանեց մի զույգ պարկամուկ, վոր թաքնվել էին մեծ ծառի խիտ տերևներում։

Սակայն ամենից հետաքրքրականը կենդանաբանական վորսն էր։ Կեսորվա ժամի մոտ չորսին շները վախեցրին այդ հետաքրքիր պարկավոր կենդանիների հոտը։ Ձագերն իսկույն մտան իրենց մայրերի պարկերի մեջ և ամբողջ հոտը շղթայաձև ձգվելով, հեռուացավ վորսորդներից։ Ավելի յերևելի բան չկար, քան ահագին թռիչքներով առաջացող այդ կենդանիների վազքը։

Հոտի առաջից վազում էր արուն, հինգ վոտնաչափ հասակով։ Դա հսկայական նմուշ էր macropus giganteus-ի—«ծերունի»-ի, ինչպես տեղացիներն են ասում։

Հետապնդումը շարունակվեց չորս-հինգ մղոն տարածությամբ։ Կենդանիները հոգնածության վոչ մի նշան չէին ցույց տալիս, իսկ շները, վոր առանց հիմունքի, վախենալով նրանց սուր ճանկերով զինված թաթերից, չէին համարձակվում հարձակվել նրանց վրա։ Բայց վերջին վերջո ուժասպառ կենդանիները կանգնեցին, և «ծերունին» թիկունքը ծառի բնին հենելով, պատրաստվեց պաշտպանվելու։ Պոյնտերներից մեկը վազքի ժամանակ ընկավ նրա վրա։ Մի վայրկյանից հետո խեղճ շունը գլխիկոնծի տվեց ոդի մեջ և պատառոտված փորով գետին ընկավ։ Պարզ էր, վոր նույնիսկ շների ամբողջ վոհմակը այդ ուժեղ պարկավոր կենդանիների հախից չի կարող գալ։ Գնդակները միայն կարող էին սպանել ահագին գազաններին։

Այդ րոպեյին Ռոբերտը հազիվ-հազ սեփական անզգուշության զոհ չդարձավ։ Ցանկանալով ավելի լավ նշան բռնել, նա այնքան մոտեցավ «ծերունուն», վոր կատաղած կենդանին մի թռիչքով թռավ նրա վրա և գետին գլորեց։ Մերի Գրանտը սարսափելի ճիչ արձակեց և հուսահատությամբ ձեռքերը մեկնեց յեղբոր օգնության։ Վորսորդներից վոչ վոք չհամարձակվեց խփել կենդանուն, վախենալով, վոր տղային կդիպչեն։

Ջոն Մանգլսը դանակը գոտուց դուրս քաշելով, հարձակվեց կենդանու վրա, վտանգի յենթարկելով սեփական կյանքը, և նրա սրտին տարաբախտի հարված հասցրեց։ Կենդանին ընկավ անշարժ։ Ռոբերտը վոտքի կանգնեց առանց մի քերծվածքի։ Մի վայրկյանից հետո նա արդեն գտնվում էր իր քրոջ գրկում։

— Շնորհակալություն, Ջոն։ Շնորհակալություն,—բացականչեց Մերի Գրանտը, ձեռքը յերիտասարդ նավապետին մեկնելով։

— Յես յերաշխավորել եմ ձեր առաջ նրա համար,—պատաս-

խանեց Ջոն Մանգլը, անցնելով Մհերի Դրանի դողդոջուն ձեռքը։

Այս պատահարը վորսը վերջացնելու աղդանշան ծառայեց։ Պարկավոր կենդանիների հոտը ցրվեց ամեն կողմ, իր առաջնորդի կորստից հետո, վորի միսը քլողները տարան խոհանոց։

Այդպէս յերեկոյան մոտ ժամի վեցն եր։ Վորսորդներին հիանալի ճաշ եր սպասում։ Ուրիշ խորտիկների թվում անդամի վրա մատուցվեց ավանդական ձևով պատրաստած կենգուրուի պոչի բուլյոնը։ Բոլորն եվ այդ խորտիկն ընդունեցին վորպես համով ամենադելիկատեսը։

Վորպես աղանդեր մատուցված պաղպաղակից և շարբաթից հետո բոլորն եվ անցան դահլիճ։ Ցերեկոն նվիրվեց յերաժշտության։ Սքանչելի դաշնակահարուհի Ցելենան յերախտապարտ ունկնդիրներին առաջարկեց նվագակցել։ Մայկըլը և Ոննդին մեծ զգացմունքով մի շարք հատվածներ կատարեցին Գունոյից, Վիկտոր Մասսեյից, Ֆելիսիեն Դավիթից և նույնիսկ Ռիխարդ Վագների անհասկանալի հանճարի համակարգ յերգերից։

Ժամի տասնմեկին թեյ մատուցեցին։ Նրա սպասքը և պատրաստելը աչքի եյին ընկնում անգլիական այն հատուկ վորակով, վորը չես գտնի վոչ մի ժողովրդի մոտ։ Բայց Պագանելը ավստրալիական թեյ ցանկացավ, և նրան մատուցեցին թանաքի պես սև մի խմիչք—մի լիտր ջուր, վորի մեջ չորս ժամ կես ֆունտ թեյ եր յեփվել։ Պագանելը զզվանքի ծամածռությունը զսպելով, հայտարարեց, վոր այդ խմիչքը հրաշալի յե։

Կեսգիշերին հյուրերը ցրվեցին իրենց հատկացրած սենյակները և, խունջիկ-մունջիկ անելով թարմ սպիտակեղենի վրա, հիշում եյին այդ օրվա բավականությունների մասին։

Հետեվյալ օրվա առավոտյան շատ վաղանց հրաժեշտ տվին յերկու յերիտասարդ սկվայրներին, նրանցից խոստում վերցնելով անպայման այցելել Մալկոլմ-Կասլ, դեպի Յեվրոպա իրենց հենց առաջին այցելությանը։

Ֆուրգոնը ճանապարհ ընկավ, շրջելով Հոտամ լեռան ստորոտը, և շուտով գողտրիկ տունը, վորպես վաղանցիկ անուրջ, ծածկվեց աչքերից։ Բայց կալվածքի կառուցվածքները ձգվում եյին դեռևս հինգ մղոն, և միայն առավոտյան ժամի իննին ճանապարհորդները դուրս յեկան վերջին ցանկապատից և մտան Վիկտորիայի համարյա չհետազոտված դաշտավայրի մարզում։

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

# ԱՎՍՏՐԱԼԻԱԿԱՆ ԱԼՊԵՐ

Մի ահագին արգելակ փակում էր ճանապարհը դեպի հարավ-արևելք։ Դա Ավստրալիական Ալպերի շղթան էր, վոր հազար հինգ հարյուր մղոն ձգվում էր հյուսիսից դեպի հարավ, վորի գագաթները չորս հազար վոտնաչափ բարձրության վրա կանգնեցնում են ամպերի շարժումը։

Ամպամած յերկինքը չափավորում էր ամառային օրվա տապը։ Այսպիսով յեղանակը նպաստում էր ճանապարհորդությանը։ Սակայն ճանապարհը դժվարին էր, շնորհիվ տեղի քմահաճ ռելիեֆի, վոր ակոսված էր խեժաբեր ծառերով ծածկված բլուրներով։ Քանի արևելք էին գնում, տեղագրությունն այնքան ավելի յեր կտրտված դառնում, մինչև վոր բլուրները ձուլվեցան Ավստրալիական Ալպերի նախալեռների համատարած փակեցում։ Այստեղից ճանապարհը շարունակ դեպի սար էր գնում։ Այդ կարելի յեր նկատել՝ ձիերի ջանքերից, վորոնք տնքալով և չարչարվելով քաշում էին ծանր ֆուրգոնը։ Հասարակ մեծ սայլը ճըռճռում և դղրդում էր անտառային փոսերի և ցնցումների ժամանակ, վորոնցից Ալլանը չէր կարող խուսափել, ընթացքի իր ամբողջ տևողությանը։ Բայց ճանապարհորդուհիները չէին գանգատվում անհարմարություններից և ուրախ էին վերապրելով իրենց չարքաշությանը։

Ջոն Մանգլսը և յերկու նավաստի մի քանի հարյուր մետր առջևից էին գնում, ճանապարհ փնտրելով։ Նրանք զննում էին այդ բլուրների միջի անցքերը, յեթե չասենք ճեղքերը, վորոնց միջով խնամքով առաջանում էր ֆուրգոնը։ Այդ ճանապարհորդությունը հիշեցնում էր ալեկոծված ծովի վրայով լողալուն։

Ճանապարհը դժվարին էր մարդկանց և կենդանիների համար, իսկ տեղ-տեղ ուղղակի նաև վտանգավոր։ Վիլսոնը և Մյուլրեդին շատ անգամ ստիպված էին կացիններով արահետ բացել թփուտ թավ դեռատունկերի մեջ։ Վոտքերը սայթաքում էին խոնավ կավահողի վրա։ Ահագին գրանիտե կույտերի, ձորակների, կասկածելի ճահիճների անհամար արգելքների շրջանցումները յերկարացնում էին ճանապարհը։ Դրա համար էլ զարմանալի չէր, վոր մի ամբողջ օրվա ճանապարհորդության ընթացքում արշավախումբը կես մղոն էլ չանցավ։

Կարավանը գիշերօթից Ալպերի գլխավոր լեռնաշղթայի ստորոտում, Կորոնդրա վտակի ափին, փոքրիկ թփերի անտառի շրջակայքում, վորոնց բարձրությունը հազիվ չորս վոտնաչափ էր։ Այդ թփերի կարմիր տերևները մարդու աչքն էր ուրախացնում։

— Հեշտ չի լինի այս սարերն անցնելը,—ասաց Գլենարվանը, նայելով արդեն խավարով պատած լեռնաշղթային։—Հեշտ է ասել—Ալպեր։ Անունը միայն հարգանք է ներշնչում և ստիպում է մտածմունքի մեջ ընկնել։

— Իզուր մի վրդովվեք, Թանկագին բարեկամ,—ասաց Պագանելը,—և խնդրեմ մի կարծեք, վոր Ավստրալիական Ալպերը նույնն են, ինչ վոր Զվեյցարիականը։ Ավստրալիայում կան՝ Պիրենյան, Ալպյան, Կապույտ լեռներ, ինչպես Եվրոպայում և Ամերիկայում, բայց փոքր չափով։ Այդ միայն վկայում է աշխարհագրագետների յերևակայության խեղճության կամ հատուկ անունների մեր բառարանի աղքատության մասին։

— Նշանակում է, այս Ավստրալիական Ալպերը..—ասաց Ելենան։

— Վոչ ավելի, քան խաղալիքային սարեր են,—պատասխանեց Պագանելը։—Մենք կանցնենք նրանց վրայով նույնիսկ չնկատելով այդ։

— Խոսեցեք միայն ձեր մասին՛, Պագանել,—ասաց մայորը։—Մարդ շատ ցրված պետք է լինի, վորպեսզի անցնի լեռնաշղթայի վրայով և նույնիսկ չնկատի այդ։

— Այդ յե՞ս եմ ցրված,—գոչեց Պագանելը։—Ամենևին, յես արդեն վաղուց դադարել եմ ցրված լինելուց։ Մեր ուղեկցուհիները կարող են հաստատել, վոր այն ժամանակվանից, յերբ յես վոտք դրի այս մայր ցամաքի վրա, յես վոչ մի մեղք չեմ գործել։ Ինչո՞ւմ կարող եք մեղադրել դուք ինձ։ Ասացեք։

— Վոչինչ, պարոն Պագանել,—ասաց Մերի Գրանտը։—Դուք վերջին ժամանակվա ընթացքում կատարելություն եք դարձել։

— Եվ նույնիսկ գտնում եմ, վոր դուք չափից դուրս կատարյալ եք,—ծիծաղելով ասաց Ելենան,—ցրվածությունը շատ էր սազում ձեր դեմքին։

— Ճիշտ չէ՞, այդպես,—վրա բերեց Պագանելը։—Յեթե յես վոչ մի արատ չունենամ, անհամ մարդ կդառնամ։ Հուսով եմ, վոր մոտիկ ժամանակում յես մի վորևէ սխալ կգործեմ, վորի

վրա զույգ լծելով կզվարճանանք։ Գիտեք, յերբ յես փոշու մեջ չեմ սուրում, ինձ սկսում է թվալ, վոր յես դավաճանում եմ իմ կոչումին։

Հետևյալ օրը, հունվարի 9-ին, հակառակ պարզամիտ աշխարհագրագետի սպառնալիքների, ջոկատը քիչ դժվարություններ կրեց, սայլերը բարձրանալով։ Վոչ մի ճանապարհ չկար, ստիպված էին գնալ հաջողության հույսով, խորանալով նեղ ձորերի մեջ, վորոնք կարող էին փակուղի տանել։

Այրտոնը, ամենայն հավանականությամբ, չափազանց կդժվարանար ուղեցույցի իր դերով այդ լեռնաշղթայի վրա, յեթե վոր ճանապարհի մի պտույտի հետևում ճանապարհորդները աչքի առաջ հանկարծ, արտասովոր աղքատիկ տեսքով, մի հասարակ ճաշարան կամ իջևանատուն չհանդիպեին։

— Սատանան տանի, — բացականչեց Պագանելը։ — Այս ձեռնարկության տերը դժվար թե յերբևիցե հարստանա այս տեղում։ Ո՞ւմ է պետք այստեղ այդ հասարակ ճաշարանը։

— Մեզ, — պատասխանեց Գլենարվանը։ — Այստեղ մենք ցուցմունքներ կստանանք հետագա ճանապարհի վերաբերյալ։ Մտնենք։

Յեվ նա մտավ ճաշարանի դռնով, Այրտոնի ուղեկցությամբ։ Ճաշարանի տերը մի անդուրեկան արտաքինով էր, վանողական դիմատեսքով։

Նրա կարմիր քիթը վկայում էր այն մասին, վոր նա ինքն էր իր սեփական գինեվաճառանոցի ջինու, բրենդիի և վիսկիի* գլխավոր սպառողը։ Նրա մշտական հաճախորդները ճանապարհորդող սկվատերները կամ անասուն քշողներն էին։

Նա չար դժկամակությամբ էր պատասխանում իրեն տված հարցերին։ Անուամենայնիվ, Այրտոնը ամեն բան տեղեկացավ, ինչ վոր իրեն պետք էր, հետագա ճանապարհի վերաբերյալ։

Գլենարվանը շնորհակալության հայտնեց ճաշարանի տիրոջը ցուցմունքների համար մի քիչ փող տալով, և արդեն պատրաստվում էր թողնել անհյուրընկալ տունը, յերբ հանկարծ նրա ուշադրությունը գրավեց պատին խփած մի պլակատ։

Այդ գաղութային վոստիկանության հայտարարությունն

* Վոգելից խմիչքներ։

էր։ Նրա մեջ առված էր Գերասի բանակից փախած մի քանի տաժանակիրների փախուստի մասին և Հարյուր Փունտ ստերլինգ էր առաջարկվում ամեն մեկին, ով վտարականության վարչությանը ներկայացնի Բեն Ջոյսին։

— Ըստ յերևույթին, դա կատաղի վճռապարտ է,—ասաց Գլենարվանն Այրտոնին,—և նա կախաղանի յե արժանի։

— Դրա համար հարկավոր է առաջ բռնել նրան,—պատասխանեց Այրտոնը։—Հարյուր Փունտ ստերլինգ։ Ձե վոր դա մի ամբողջ կարողություն է։ Նա այդքան փող չարժե։

— Ինձ թվում է, վոր ճաշարանի տերը, թեև նա կախել է վտարականության ազդարարը, ինքը վոչ մի վստահության արժանի չէ,—ասաց Գլենարվանը։

— Ցես էլ եմ այդ կարծիքին,—պատասխանեց Այրտոնը։

Այդ խոսքերով Գլենարվանն ու Նավելին բողմանը վերադարձան փուրգոնի մոտ։ Կարավանը ճանապարհ ընկավ Լյուկնոուսյան լեռնադաշտի ուղղությամբ։ Այնտեղ, գետի գաղաթը տանող մի նեղ ճանապարհ էր գալարվում։

Կարավանն սկսեց դանդաղ բարձրանալ դեպի սարը։ Վերելքը շատ էր դժվար։ Ճանապարհորդները և ճանապարհորդուհիներն ստիպված յեղան մի քանի անգամ իջնել ձիերից և դուրս գալ փուրգոնից։ Մերթ հարկավոր էր լինում ոգնության հասնել յեզներին, ուսով հրելով ծանր սայլը, վոր սպառնում էր գլորվել, մերթ պետք էր լինում պահել այն, վորպեսզի նա անդունդի մեջ չգլորվի, մերթ վերջապես ստիպված էին լինում արձակել յեզներին և ձիերը լծել նրանց տեղ զառիթափ վոլորաններում, վորտեղ յեզները, յերկար սայլի պատճառով չէյին կարողանում քաշել փուրգոնը։ Այրտոնը մի քանի անգամ պահանջեց, վորպեսզի յեզների լծվածքին լծեյին նաև բոլոր ձիերին, թեև նրանք առանց այդ էլ հոգնել եյին վերելքից։

Արդյո՞ք, դա զգուշավորությա՞ն, թե մի ուրիշ պատճառի հետևանք էր, բայց այդ օրվա ընթացքում ձիերից մեկը սատկեց։ Վոչինչ չէր թույլատրում նախատեսել այդ դեպքը։ Մինչդեռ բոլոր ձիերի վարքը միանգամայն նորմալ էր, յերբ հանկարծ, անսպասելի կերպով Մյուլրեդիի ձին ընկավ կողքի վրա։ Նավապետն ուզեց ոգնել նրան վոտքի կանգնելու, բայց ապարդյուն, վոր նա շունչը փչեց։

Այրտոնը մոտեցավ դիակի վրա պառկած կենդանուն, ուշա-

դրությամբ զննեց նրան, բայց վոչ մի բան չկարողացավ ասել նրա մահվան պատճառների մասին։

— Գնաց և կարծել, վոր նրա մի վորևէ անոթը պայթել է,— ասաց Գլենարվանը։

— Հավանորեն,— պատասխանեց Այրտոնը։

— Վերցրեք իմ ձին, Մյուլրեդի,— ասաց Գլենարվանը։— Ես կնստեմ ֆուրգոնում կնոջս մոտ։

Մյուլրեդին հնազանդվեց, և փոքրիկ ջոկատը, առանց ձին թողնելով ցիններին իբրև կեր, շարունակեց հոգնեցուցիչ և դըժվար վերելքը սարնիվեր։

Ավստրալիական Ալպերի շղթան բավական նեղ հիմք ունի, վորի լայնությունը լեռնաշղթայի ստորոտում ութ մղոնից ավել չէ։ Հետևաբար, յեթե Այրտոնի ընտրած ուղին ճանապարհ թերում էր դեպի արևելյան լանջը, ամենաշատը կարելի յեր հասնել, վոր քառասուն ութ ժամում կհասնեն լեռների մյուս կողմում գտնված հարթավայրը։ Իսկ այնտեղ արդեն ուղին մինչև ովկիանոսի ափը հարթ ճանապարհ էր ձգվում։

Հունվարի 11-ին, ցերեկը, ճանապարհորդները հասան լեռնանցքի ամենաբարձր կետին, վոր ծովի մակերևույթից յերկու հազար վոտնաչափ բարձր էր գտնվում։ Դա մի հարթ հրապարակ էր, վորի վրայից հեռավոր տեսարան էր բացվում։ Հյուսիսում փայլում էր Ոմեո լճի խաղաղ ջրերի հայելու վողորկությունը, վորի վրայով սլանում եյին ջրային թռչունների ամպերը։ Հարավում տարածվում էր Գիպսլենդյան մարգագետինների կանաչ տափաստը, վոսկեբեր վայրերը, թավ անտառներ։ Դրանք կուսական մարգեր եյին, վորտեղ համարյա թե մարդ չէր վոտք դրել։ Այնտեղ միակ և անբաժանելի իշխողը բնությունն էր, և մարդը դեռևս իր ձեռքը չէր դրել նրա ստեղծագործությունների, գետերի հոսանքների, նրա անտառների թավուտների վրա։ Թվում էր, վոր լեռների շղթան յերկիրը բաժանում էր յերկու մասի, վորոնցից մեկը դեռ պահպանում էր հնադարյան ամբողջ վայրենությունը։

Արեգակը մոտենում էր մայրամուտին, և նրա շեղակի ճառագայթները կարմրավուն արտացոլումներ եյին շպրտում Մյորրեյի հովտի վրա։ Ընդհակառակը, լեռների եկրանով պաշտպանված Գիպսլենդն արդեն պարուրված էր կիսախավարով։

Դադարը, հենց այստեղ, հրապարակի վրա սարքեցին, և

Հեռանալով տառապանքի վայրերից սկսվեց սարից։ Նա բալկանյան արագ էր գնում։ Ճանապարհի կեսին ճանապարհորդները կարկուտի տակ ընկան։ Աղավնու մեծության կարկուտները ստիպեցին նրանց պատսպարան փնտրել ժայռերի տակ։ Ճիշտն ասած դրանք կարկտահատիկներ չէին, այլ սառույցի ամբողջ կտորներ, մի լավ բռունցքի չափ, որոնք թափվում էին մութ ամպից։ Մինչև անգամ պատսպարանը չէր շղդրում նրանց այդպիսի ուժով, և մի քանի հիմնական ուսուցիչներ արագ հարցանք ներչնչեցին Պագանելին և Մյուլրեդիին դեմքի նրանց և ժայռերի ծածկոցի տակից դուրս գալու սերը փախցրին։ Ձուրդոնի տանիքը շատ անդեղում էր ծակվել։ Դրանում զարմանալու ոչինչ չկար։ Թաղաքի ամեն մի, նույնիսկ յերկաթապատ տանիք չէր կարող դիմանալ այս սուր կարկտահատիկների առաջ, որոնցից մի քանիսը խորը թաղվել էին ծառերի բների մեջ։ Կարծես թե ակամա, ճանապարհորդներն ստիպված յեղան ժայռի տակ սպասել, մինչև որ կարկտահարությունը վերջանա։ Դա մոտ մի ժամ խլեց, և հետո ջոկատը նորից սկսեց ցած սողալ ժայռերի վրայով, որոնք սայթաքուն էին դարձել հալված կարկտահատիկներից։

Երեկոյան դեմ խոնավված, ճանճացող, բայց դեռևս իր անիվների փայլուն սկավառակների վրա ամուր մնացած Փուրգոնը հաղթահարեց վերջին վայրէջքն Ալպերից, բարձր, միայնակ սոճիների միջով և դուրս յեկավ Ջենո-Լենդի հովիտը։ Ալպերը մնացին հետևում։

Հունվարի տասներկուսին, արշալույսին, ճանապարհորդներն անմար յեռանդով նորից ճանապարհ ընկան։ Բոլորն էլ անհամբերությամբ ավելի շուտ էին ուզում հասնել նպատակին — ծովափնյա այն կետին, որտեղ «Բրիտանիան» ջարդվել էր ժայռերի վրա։ Միայն այնտեղ կարելի յեր հուսալ՝ ընկնել նավաբեկությունից ազատվածների հետքի վրա, բայց ոչ մի դեպքում այս ամայի հովտում։ Դրա համար էլ Այրտոնը համոզում էր Գլենարվանին անհապաղ հրաման ուղարկել «Դունկանին», խարսխման տեղը ժամանելու համար, որպեսզի միանգամից հետախուզության կատարեն ցամաքի վրա նաև ծովից։ Նա ասում էր, որ Մելբուռն սուրհանդակ ուղարկելու համար ավելի և պատշգործել Լյուսիտոունյան ճանապարհի ժամկետությունը և վարչան



Ճանապարհորդները կարկուտի տակ ընկած:

ավելի հեռու գնան գետի յեզրը, այնքան ավելի դժվար կլինի հասնել մինչև Մելբուրն։

Նախկին բոցմանի խորհուրդները խելացի էին, և Պագանելը պնդում էր, վոր սպասեն և հեռանալ նրանից։ Գիտնականը Գլենարվանին ասաց, վոր զգուշավոր ներկայությունն պետք է շարունակ կթեթևացնի վտանգները և բացի դրանից հաղորդակցությունը Մելբուրնի հետ հեշտավոր է միայն Լյուկնոուայան ճանապարհով։

Գլենարվանը տատանվում էր և, համաձայնորեն, գործելով հրաման կուղարկեր Մելբուրն, վորի վրա այնքան պնդում էր Պագանելը, յեթե վոր դրան ամբողջ աշխարհայնությամբ չհակառակեր մայորը։ Նա ապացուցում էր, վոր Այրտոնը պետք է մնա ջոկատում, վոր նա լավ գիտի մերձակայքի տեղերը, վոր, յեթե գետը ձգի արշավախմբին Հարրի Գրանտի հետքերի վրա, Այրտոնն ավելի, քան ուրիշ վորևէ մեկը, ընդունակ է տանել իրենց այդ հետքերով, և, վերջապես, վոր միայն նա կարող է բերել արշավախմբին հենց ուղիղ «Բրիտանիայի» խորտակման տեղը։

Յելնելով այս բոլոր նկատառումներից, Մակ-Նաբսը պնդում էր այն բանի վրա, վորպեսզի ճամփորդները շարունակեն ճանապարհը, վոչինչ չփոխելով սկզբնական պլանում։ Ջոն Մանգլսը պաշտպանում էր մայորի կարծիքը և ջերմորեն պաշտպանում էր նրան։ Յերիտասարդ նավապետը գտնում էր նույնպես, վոր գնալ շարունակել ավելի հեշտ է ու հարմարավետ ուղարկել Տուֆոլդյան ծովախորշից, քան թե այստեղից, վորտեղ նա ստիպված կլիներ բոլորովին ամայի և վայրենի տեղով յերթալ։ Հարյուր մղոնից ավելի գնալ։ Մայորն ու նավապետը հաղթեցին։ Վորոշված էր վոչինչ չձեռնարկել Տուֆոլդյան ծովախորշը գալուց առաջ։ Մայորը հետևում էր Այրտոնին, այդ ընթացքում ժամանակ, և նա մի ինչ վոր բանով հիասթափված յերևաց մայորին։ Բայց, իր սովորականի համաձայն, նա վոչ վոքի չասաց այդ մասին, իր դիտողությունները իր համար պահելով։

Ավստրալիական Ալպերի ստորոտում ընկած հարթավայրը թեթև թեքվածք ուներ դեպի արևելք։ Նրա անտառների միապատկությունը տեղ-տեղ խախտվում էր խոժոռ ծառերի, եվկալիպտների և պատահականների gastrolobium grandiflorum-ների թավուտներով, վորոնք բաց կարմիր ծաղիկներով ծածկված ամբողջ դեղնավուն էին կազմում։ Մի քանի անգամ ճանապարհը կտրեցին փոքրիկ գետակներ, վորոնց ափերը խիտ ծածկված



Դարդիտարի մեջ։

էյին խալաթներով։ Ճանապարհորդներն անցնում էյին այն ծանծաղուտով։ Նրանց մոտիկանալը խրտնեցրեց կարապների և արագիլների ամբողջ յերամներ։ Հեռվում կարելի յեր տեսնել տափաստանում ցանկապատներով իրար առաջ կարող կենդանուրանե-րի հոտեր, ինչպես զարդանկարվոր խեղկատակներ։ Բայց ճանապարհորդները չէյին մտածում վորսորդության մասին, պահպանելով իրենց ձիերն ավելորդ հոգնածությունից։

Դրա հետ միասին դեռ կանգնած էր հեղձուցիչ շոգը։ Մթնոլորտը հագեցած էր էլեկտրականությամբ։ Մարդիկ և կենդանիները սուր կերպով էյին զգում այդ իրենց վրա։ Նրանք լուռ առաջ էյին շարժվում, և հարթավայրի վրա թագավորող լռությունը խախտվում էր անիվների ճռճռոցով, մեկ էլ հոգնած յեզներին քշող Այրտոնի հու-հերով։

Կեսօրվա մոտ ժամի յերկուսին նրանք մտան ձարխոտի հետաքրքիր գետաբույսերի մեջ, վորոնց տեսքը կհիացներ նրանց, յեթե վոր արդյոք ուժասպառ չլինեյին իրենք։ Ծաղկման շրջանում գտնված այդ ծառանման բույսերը հասնում էյին յերեսուն և ավելի վոտնաչափի բարձրության։ Ձիերն ու հեծվորներն ազատ անցնում էյին, չխանգարելով գլուխները նրանց հզոր ճյուղավորության տակ։ Նրանց հովանոցների ստվերում զուրեկան զովություն էր տիրում, և ճամփորդները թեթևացած շունչ էյին քաշում։

Լուռ սովորականի անհամբեր Պագանելը այնպես քուռն կերպով արտահայտեց իր բավականությունը, վոր վախեցրեց թութակների մի ամբողջ յերամ, վորոնք խլացուցիչ ճռճռոց բարձրացրին։ Աշխարհագրագետը շարունակում էր հիացմունքով աղաղակել, յերբ հանկարծ նրա ուղեկիցները տեսան, վոր նա օրորվեց և ձիու հետ միասին գետին շրջվեց, ինչպես տոպրակ։ Միթե՞ նա ուշաթափվեց շոգից կամ, դրանից էլ վատ, արևահարությունից։ Բոլորը սլացան դեպի նա։

— Պագանել, ի՞նչ է պատահել ձեզ, — գոչեց Գլենարվանը։

— Այն է պատահել, թանկագին ընկեր, վոր յես զրկվեցի ձիուց, — պատասխանեց գիտնականը, վոտներն ասպանդակներից ազատելով։

— Ինչպես, ձեր ձին էլ...

— Սատկեց նույնպես կայծակնահար, ինչպես Մյուլրեդիի ձին։

Գլենարվանը, Ջոն Մանգլսը և Վիլսոնը մոտ վազեցին անշարժ կենդանուն: Գազանիկը չէր շարժվում: Նրա ձին հանկարծակի սատկեց:

— Որքան տարօրինակ է այդ, — ասաց Ջոն Մանգլսը:

— Շատ, շատ է տարօրինակ, — շշնջաց մայորը:

Գլենարվանը չափազանց մտահոգված էր այդ անհասկանալի պատահարով: Իսկապես, այդ անապատում արշավախմբի ձիակազմը լրացնելու տեղ չկար, և, եթե բոլոր ձիերը սատկեին անհայտ համաճարակից, շատ դժվար կլինի շարունակել ճանապարհը:

Այնինչ, դեռ մինչև երեկո համաճարակի ընթացքությունը վիճակված էր համոզվածության դառնալ: Երրորդ ձին — Վիլսոնի ձին — նույնպես հանկարծակի սատկեց, և վոր ավելի վատն է, սատկեց եզներից մեկը: Այսպիսով այդ օրվա երեկոյան արշավախմբի երթևեկության միջոցները մնացին հինգ եզ և չորս ձի:

Դրությունն սպառնալից էր դառնում: Ճիշտ է, ձիազուրկ հեծվորները վստահ հաջողությամբ կարող էին շարունակել ճանապարհը: Շատ սկվատերներ միայն այդ ձևով են ճանապարհորդում հարթավայրերով: Բայց ի՞նչ կլինի ճանապարհորդուհիների վիճակը, եթե բոլոր եզները սատկեն և ստիպված լինեն թողնել ֆուրգոնը: Արդյոք, նրանք ուժ կունենա՞ն վոտքով գնալ այն հարյուր քսան մղոն տարածությունը, վորն անջատում է արշավախմբին Տուֆոլդյա ծովախորշից:

Անհանգստացած Ջոն Մանգլսն ու Գլենարվանը զննեցին վողջ մնացած ձիերին: Բայց ամենախնամքոտ դիտումը հիվանդության վոչ մի նշան չհայտնաբերեց նրանց մոտ: Ձիերը բոլորովին առողջ էին և շատ լավ էին կրում ճանապարհորդության զըրկանքները:

Գլենարվանը հույս հայտնեց, վոր տարօրինակ համաճարակը խնայել է այդ կենդանիներին:

Այդպես էր հենց և Այրտոնի կարծիքը, վորը վոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ չորս կենդանիների հանկարծակի սատկելու պատճառները:

Ֆուրգոնը նորից ճանապարհ ընկավ: Հետևակները հերթով հանգստանում էին ֆուրգոնում: Մի օրում հազիվ տասը մղոն անցնելով, ֆուրգոնը գիշերօթեց քարքար ծառախմբերի հովանու տակ:

Գիշերն առանց պատահարների անցավ, և նրա անդորրությունը խանգարում էր միայն ահագին չղջիկների թռիչքը, վորոնց իրա-վացիորեն թռչող աղվեսներ են ասում։

Հետևյալ օրը, հունվարի 13-ը խոստանում էր գողեկան լինել։ Երեկվա նման դժբախտ դեպքեր չկրկնվեցին։ Ձիերն ու լծկանները առույգ կատարում էին իրենց պարտականությունները։ Ելենայի և Մերիի տրամադրությունը միշտ լավ-ուրախ էր, շնորհիվ հյուրերի խոսուն բազմությանը։ Պարոն Օլբինեթն անընդհատ զբաղված էր զովացնող խմիչքներ պատրաստելով, վորովհետև յերեսուն աստիճանի շոգը խիստ բարձրացրել էր նրանց պահանջը։ Կես տակառ էլյան արդեն խմված էր, միևնույն վիճակն էր սպառնում նաև յերկրորդ կեսին։ Ճանապարհորդները միմիայն ընդունեցին, վոր գարեջրագործներ Բարկլեյ և ընկերության անգլիական գործարաններից մեծագույնն են և վոր յեթե նրանք ար-յոփի համեղ գարեջուր չպատրաստեին, Վելինգտոնը* նրանց պիտի գինի էր տալիս պատերազմի վրա։ Ժակ Պագանելը շատ էր խը-մում, բայց ավելի շատ խոսում էր։

Հաջող սկսված օրը խոստանում էր նույնպես հաջող էլ վեր-ջանալ։ Ջոկատը մի օրում անցավ տասնհինգ մղոն՝ խորդ ու փորթ մակերեսով, վոր կարմրագույն յերանգավորություն ու-ներ, և քոլորն էլ սկսեցին հուսալ, թե քան մութը վրա տալը հասնել մինչև Սնոուի գետափերը, վոր Թոմսոն ակնկալու-նում և թափվում Վիկտորիայի գավառի հարավում։ Շուտով ֆուր-գոնի անիվները գլորվեցին խիտ խոտով և gastrolobium-ի դե-ղատուփյուրով ծածկված տափաստանով, բերրի հողի վրայով։ Արևի մայր մտնելուց առաջ մառախուղի չերտը պարզորոշ ցույց տվեց գետի տեղը։ Ճանապարհորդները լարեցին քոլոր ուժերը և մի քանի մղոն էլ գնացին։ Բարձր ծառերի անտառն անսպասելի կերպով բուսնեց հանապարհի վրայով հեռավոր, յերբ կարավա-նը չըջանցեց մի քարեքի բլուր։ Այրթոնը ճարպկորեն անցկաց-րեց ֆուրգոնը ծառերի արանքով և բարեհաջող կերպով հասավ անտառի քոլորակերպը, գետից կես մղոն հեռու, յերբ հանկարծ ֆուրգոնը մինչև առանցքները թաղվեց հողի մեջ։

— Զգուշացեք,—գոչեց նա, յետևից յեկող ձիավորներին։

— Ի՞նչ է պատահել,—հարցրեց Գլենարվանը։

* Անգլիացի զորավար, վոր հաղթեց Նապոլեոնին Վաթերլոյի մոտ



Ճանապարհորդները ճամբար խփեցին խրխած
փարքանի տակ։

— Մենք խրվել ենք,— պատասխանեց Այրտոնը։

Նա գոռոցներով և գավազանի քաշելով փորձում էր ստիպել յեզներին տեղից շարժվել, բայց խեղճ կենդանիները, վոր մինչև ծնկները խրվել եյին ճահճային հողի մեջ, չկարողացան մի քայլ առաջ անել։

— Երեկոյանում է, այստեղ պետք է գիշերենք,— ասաց Ջոն Մանգըլը։

— Ուրիշ վոչինչ չի մնում,— պատասխանեց Այրտոնը։— Գիշերը մենք այս ճահճուտից չենք կարող դուրս գալ։ Սպասենք մինչև առավոտ։

— Կանգնիր,— հրամայեց Գլենարվանը։

Գիշերը հանկարծակի վրա հասավ, համարյա առանց աղջամուղջի։ Բայց շոգը մթնելու հետ չպակասեց։ Օդը ներծծված էր հեղձուցիչ գոլորշիացումներով։ Հեռավոր ամպրոպի արտացոլումներ— փայլակները շլացնում եյին յերկինքը։ Ճանապարհորդները ճամբար խփեցին խրված ֆուրգոնի մոտ։ Նրանք վրանը զարկեցին մի անտառի ծառի մութ կամարի տակ։ Գիշերը խոստանում էր հանգիստ լինել, եթե միայն անձրև չգար։ Այրտոնը դժվարությամբ ազատեց էր յեզներին ճահճուտից, վորտեղ նրանք խրվել եյին արդեն մինչև փորը։ Նավաստին բաղմանը քշեց նրանց և ձիերին դեպի արոտավայր, վորն ինքը խնամքով ընտրեց։ Առհասարակ, կենդանիների խնամի ընտրությունը միշտ նրա վրա յեր ընկած։ Բայց այս գիշեր նա այդ բանն արեց առանձին հոգատարությամբ, վոր Գլենարվանը ջերմորեն շնորհակալություն հայտնեց նրան։ Իսկապես, չէ վոր ամբողջ արշավի բարեհաջողությունը կախված էր այժմ կենդանիների առողջության դրությունից։

Այդ ժամանակ ճանապարհորդները համեստ ընթրում եյին։ Հոգնածությունը և անտանելի տոթը վոչնչացնում եյին ախորժակը, և բոլորն էլ վոչ այնքան կերակուրի, վորքան հանգստի կարիք ունեյին։

Ելենան և Մերին, բարի գիշեր ասելով իրենց ուղեկիցներին, հեռացան իրենց քառանկյունը, ֆուրգոնում։ Տղամարդիկն էլ պառկեցին՝ մի մասը վրանում, մի մասն էլ ուղղակի թավ խոտի վրա՝ ծառերի հովանու տակ։ Ավստրալիայի չոր կլիմայում դա վոչ մի վտանգ չէր ներկայացնում առողջության համար։

Կամաց կամաց բոլորն էլ քնեցին ծանր քնով։ Անլուսին գի-



Ժակ-Նօրըն պառկեց գետնի վրա և սկսեց անբարբ ձայնել:

չերևա մթությունն ուժեղացավ նրանով, վոր և թուխպերը թանձր կերպով պաշարեցին լեռներին։ Ոչ քոլորովին անշարժ էր— փոքրիկ հողմի շունչ եւ չկար։ Անդորրությունը խախտում էր միայն այստեղ յավրոպական կկուին փոխարինող մորդուկի ճվճվոցը։

Ցերեկվա ժամի մոտ տասնմեկին մայորը զարթնեց ծանր քնից։ Նրան արթնացրեց ծառերի մեջ առկայծող մի ինչ վոր անորոշ լույս։ Դա հրացոլքի նման ինչ վոր մի բան էր, և Մաք-Նազարը ամենից առաջ կարծեց, վոր մի ինչ վոր մոտիկ տեղ անտառն այրվում է։

Նա շտապ վռազի կանգնեց և հեռացավ ճամբարից։ Ի մեծ զարմանս իր, նա տեսավ, վոր «հրացոլքի» աղբյուրը վոչ թե հրդեհն էր, այլ ահագին ռունկացողական ֆոսֆորացումը.— Այդ գաղտնառական բույսերի լուսատու սնկամնիկները քամական պայծառ լույս էին արձակում*։

Մայորը լռասեր չլինելով, ուզում էր գնալ Գաղանենքի հետևից, վորպեսզի դիտանականն էլ հրճվի այդ հազվադեպյուտ լուսությամբ, յերբ հանկարծ նա կանգ առավ մեխիկանի պես։

Ֆոսֆորացնող սունկերը լուսավորեցին անտառը, մոտավորապես, կես մղոնի վրա, և այդ աղոտ լույսի ժամանակ Մաք-Նազարն ինչ վոր ստվերներ նկատեց, վորոնք արագ փախչում էին անտառի քոլափերքանով։ Նա աչքերը տրորեց։ Մի՞թե նա սխալվեց։ Գո՞ւցե նա զառանցում էր։

Մաք-Նազարը պառկեց գետնի վրա և սկսեց անթարթ նայել։ Շուտով նա պարզ կերպով նշմարեց մի քանի մարդ, վորոնք մերթ կռանալով, մերթ նորից ուղղվելով, կարծես թե հողի վրա հետքեր էին փնտրում։

Մայորը վորոշեց իմանալ, թե ինչ էին ուզում գտնել այդ մարդիկ։

Ցերկար շմտածելով և իր ուղեկիցներին չզարթնեցնելով, նա սողաց գետնի վրայով, ինչպես վայրենի, և արագ անհետացավ թավ խոտի մեջ։

---

* Դրումմոնդը գտել է սունկերի մեջ այդ լույսությունը Ավստրալիայում, վորոնց ցում լույսությունն պատկանում են adaricos alearicus-ի ընտանիքին Ե. Հ.

## ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Գիշերն խոնավոտ աշնանային էր։ Կես գիշերվա ժամի մերկուսից մինչև առավոտ չհանդարտող հեղեղ յեկավ։ Վրանը չբավականացավ վորպես ծածկոց։ Գլենարվանը և իր ուղեկիցները թաքնվեցին ֆուրգոնում։

Վոչ վոք չկարողացավ քնել։ Խոսակցությունը մի նյութից մի ուրիշ նյութի յեր փոխվում։ Միայն մայորն էր, վորի կարճատև բացակայությունը վոչ վոք չնկատեց, վոր լռում էր և լսում։ Հեղեղը չէր դադարում և ճանապարհորդները վախենում էյին, չլինի թե Սնոուի գետը դուրս գա ափերից։ Այդ դեպքում, անիվներից ցեխում թաղված ֆուրգոնի դրությունը ճգնաժամային կդառնար։ Այդ պատճառով Ջոն Մանգլսը, Մյուլրեդին և Այրտոնը բազմիցս մի անգամ դուրս էյին վազում դեպի գետը, վորպեսզի ստուգեն նրա մակերևույթը, և վոտից գլուխ թրջված վերադառնում էյին ֆուրգոն։ Վերջապես օրը բացվեց։ Անձրևը հանդարտեց, բայց արևագալի ճառագայթները չէյին կարողանում ծակել ամպերի թանձր վարագույրը։ Հողը ծածկված էր կեղտոտ ջրի մեծ լճակներով։ Այդ լճակների տակ գոլորշիացումները հագեցնում էյին մթնոլորտը վտանգավոր խոնավությամբ։

Գլենարվանն ամենից առաջ զբաղվեց ֆուրգոնով,— դա ամենաշտապ գործն էր։ Նա խորը թաղվել էր դեղին կպչուն ճահիճում։ Առաջին մասը, համարյա թե, ամբողջապես գնացել էր հողի մեջ, մինչև կառապանի նստելու տեղը։ Պարզ էր, վոր այդ ծանր վիթխարուն գուցե միայն բոլոր կենդանիների և մարդկանց միացյալ ուժերով հաջողվի դուրս քաշել։

— Ինչ էլ վոր լինի,— նկատեց Ջոն Մանգլսը,— պետք է շտապել։ Յերբ կավը չորանա, ֆուրգոնի հանելն ավելի դժվար կլինի։

— Դուք իրավացի յեք,— ասաց Այրտոնը,— պետք է առանց հետաձգելու անել։

Գլենարվանը, յերկու նավաստին, Ջոն Մանգլսը և Այրտոնը գնացին անտառի բացատը, ուր կենդանիներն անց էյին կացրել գիշերը։ Անտառը կազմված էր մռայլ տեսքով խեժատերև ծառերից։ Այստեղ միայն մեռած ծառեր կային, բոլորից հեռու կանգնած, պոկված կեղևով։ Գետնի յերեսից յերկու հարյուր վոտ-

նույնչափ բարձրությամբ ցցված էին նրանց հյուծված, մերկացած ճյուղերը։ Վոչ մի թռչուն բույն չէր դնում այդ փայտյա կմախքների վրա։ Վոչ մի տերև չէր շարժվում չոր ճյուղերի վրա, վորոնք թվում էին ինչպես մի կույտ վոսկորներ, փոքրինչ քամու ամենաչնչին շնչի ժամանակ։ Ինչն է պատճառավորում Ավստրալիայում այդ բավական հաճախ պատահող յերևույթը, յերբ ամբողջ անտառներ համաճարակից վոչնչանում են։ Դա անհայտ է։ Վոչ տեղացի ծերերը, վոչ նրանց նախորդները յերբեք այդ անտառները կանաչ չեն տեսել։ Դարեր շարունակ կանգնում են այդ փայտյա գերեզմանոցները։

Անտառով գնալով, Գլենարվանը հաճախ բարձրացնում էր աչքերը ամպերով պաշարված յերկինքին, վորի ֆոնի վրա սուր կերպով պատկերվում էին ծառերի չոր ճյուղերը։ Այրտոնը զարմացավ, չգտնելով ձիերին և լծկաններին այն տեղում, վորտեղ նա նախորդ յերեկո թողել էր նրանց։ Բայց յերեք վոտքից կապված կենդանիները հեռու փախչել չէին կարող և ճանապարհորդներն սկսեցին ամեն տեղ փնտրել նրանց։

Այրտոնը ժամանակ առ ժամանակ գղրդացնում էր օդը յեզներին լավ հայտնի ճիչով։ Բայց վոչ վոք և վոչինչ չէր պատասխանում նրան։ Նախկին բոցմանը շատ էր անհանգիստ յերևում։ Նրա ուղեկիցները տագնապով իրար էին նայեցին։ Զուր վորոնումները արդեն մոտ մի ժամ էր շարունակվում էին և Գլենարվանն ուզում էր ֆուրգոնի մոտ վերադառնալ, յերբ հանկարծ, ինչ վոր հեռու տեղից ձիու խրխնջոց լսվեց։ Համարյա թե անմիջապես նրանից հետո լսվեց նաև բառաչ։

— Նրանք այնտեղ են,— բացականչեց Ջոն Մանգլսը և նետվեց gastrolobium -ի թավուտը, վորոնց բարձր պատի հետևում մի ամբողջ հոտ կարող էր թաքնվել։

Գլենարվանը, Մյուլրեդին և Այրտոնը վազեցին նրանց հետևից։ Ի՞նչ տեսան նրանք։

Զույգ յեզ և յերեք ձի պառկած էին գետնի վրա, միևնույն համաճարակով խոցված։ Նրանց դիակներն արդեն սառել էին, և ցինները կտցահարում էին նրանց աչքերը։

Գլենարվանն ու իր ուղեկիցներն իրար նայեցին։ Մյուլրեդին չկարողացավ զսպել նավաստու թունդ անեծքը։

— Դա մեզ չի ոգնի, Մյուլրեդի,— ասաց Գլենարվանը, դժվարությամբ իրեն հանգիստ պահելով։

— Այրտոն,— ավելացրեց նա,— վաղը մնացած յուղն ու ձկն համբար տարեք: Մնում է, վոր նրանք մյուսների փոխարեն աշխատեն:

— Եթե ֆուրգոնը չխրվեր,— ասաց Ջոն Մանգլսը,— այս ուղին ճանապարհորդները կամաց կամաց, կարճ անցումներ անելով կարող էին անցնել այն մինչև ծովափ: Ինչ գնով էլ վոր լինի պետք է և դուրս գալ այդ ճահճային տեղը:

— Կփորձենք անել այդ, Ջոն,— պատասխանեց Գլենարվանը.— Շուտ գնանք ճամբար: Այնտեղ, հավանորեն, արդեն անհանգստանում են մեր յերկար բացակայության պատճառով:

Այրտոնը հանեց յեզի վզից լուծը, Մյուլրեդին էլ ձիունը, և բոլորն էլ, գետի յերկարությամբ գնացին ճամբար:

Կես ժամից հետո Պագանելը, Մակ-Նաբսը և յերկու ճանապարհորդուհիներն արդեն գիտեին բանի էությունը:

— Հեչա խոսք,— նկատեց մայորը,— ցավալի է, վոր գուցե չհամարձակվեցինք ընկեր-սպանության այդ դաշտերին նայել բոլոր յեզները և ձիերը:

— Ինչու՞ համար, պարոն մայոր,— հարցրեց Այրտոնը:

— Վորովհետև մեր բոլոր ձիերից վողջ է մնացել միայն այն, վորին նայեց ձեր դարբինը:

— Ճիշտ է,— ասաց Ջոն Մանգլսը:— Վորքան տարօրինակ է:

— Դա վոչ այլ ինչ է, քան պատահականություն,— պատասխանեց նախկին բոցմանը, անթարթ նայելով մայորին:

Մակ-Նաբսը շրթունքները սեղմեց, կարծես թե զսպելով լեզվից պոկվելու պատրաստ բառերը: Գլենարվանը, Ջոն Մանգլսը, Ելենան սպասում էյին, վոր նա կշարունակի իր միտքը, բայց մայորը վոչինչ չասելով, Այրտոնի հետևից մոտեցավ ֆուրգոնին:

— Ի՞նչ էր ուզում ասել նա,— հարցրեց Գլենարվանը յերիտասարդ նավապետին:

— Չգիտեմ,— պատասխանեց նա:— Միայն թե մայորը առանց հիմունքների չէր սկսի այդպես խոսել:

— Ուղիղ է, Ջոն,— ասաց Ելենան:— Ըստ յերևույթին Մակ-Նաբսը մի վորևէ բանում կասկածում է Այրտոնին:

— Ինչու՞մ,— ասաց Պագանելը, ուսերը թոթվելով:

— Ինչու՞մ,— կրկնեց Գլենարվանը:— Մի՞թե նա հանցավոր է համարում Այրտոնին յեզների և ձիերի կորստյան մեջ: Բայց նա ի՞նչ նպատակով կաներ այդ:

— Դուք իրավացի չեք, թանկագին Եդվարդ,— ասաց Յելենան։— Յես կավելացնեմ, վոր ճանապարհորդության հենց սկզբից Այրտոնը շատ անգամ ե ապացուցել մեզ իր հավատարմությունը։

— Ճիշտ ե,— պատասխանեց Ջոն Մանգլսը,— բայց, այդ գնդցում ի՞նչ եր ուզում ասել մայորը։ Յես չեմ հանգստանա, մինչև չպարզվի այդ։

— Մի՞թե նա տաժանակիրների մասնակից ե համարում նըրան,— անզգուշաբար վրա տվեց Պագանելը։

— Ի՞նչ տաժանակիրներ,— հարցրեց Մերի Գրանտը։

— Պագանելը սխալվեց,— խոսքը առավ Ջոն Մանգլսը։— Նա շատ լավ գիտե, վոր Վիկտորիա գավառում վոչ մի տաժանակիր չկա։

— Ճիշտ ե, ճիշտ ե,— ասաց Պագանելը, աշխատելով հարթել իր սխալը։— Վո՞րտեղ եր իմ գլուխը։ Տաժանակիրներ— հա-հա-հա։ Բայց չե վոր նրանց մասին վոչ վոք չի լսել Ավստրալիայում։ Բացի դրանից, հազիվ ափ իջնելով, նրանք արդեն կարգին մարդիկ են դառնում— ազդում ե առողջարար կլիման։ Հիշում եմ, սիրելի Մերի, յես ձեզ ասացի այդ մասին։

Խեղճ գիտնականը, փորձելով ուղղել իր սխալը, ֆուրգոնի պես եր վազվզում,— նա շարունակ ավելի խորն եր թաղվում։ Յելենան աչքը նրանից չեր հեռացնում և այդ բանը վերջնականապես զրկեց նրան սառնարյունությունից։ Չցանկանալով զոռով խոստովանություններ դուրս կորզել, Յելենան թևանցուկ արեց Մերիին և տարավ նրան դեպի վրանը, վորտեղ պարոն Ոլբինեթը նախաճաշի սեղանն եր պատրաստում արվեստի բոլոր կանոններով։

— Սատանան տանի ինձ։ Թվում ե, վոր յես ինքս եմ տաժանակիր աքսորի արժանի,— վշտացած փնթփնթաց Պագանելը։

— Դուք իրավացի չեք,— չոր-չոր պատասխանեց Գլենարվանը։

Յեվ վոչնչացնող հայացք ձգելով խեղճ գիտնականին, նա Ջոն Մանգլսի հետ գնաց ֆուրգոնի մոտ։

Այրտոնը և յերկու նավաստին այդ ժամանակ աշխատում եյին դուրս քաշել այն ճահճուտից։ Ձին և յեզը, կողք-կողքի լծված, բոլոր ուժերը լարելով ձգում եյին ֆուրգոնը փոսից։ Նըրանց մկանները այնպես եյին ուռել, վոր թվում եր, թե վորտեղ



Յովազանը խրուեց ցեխի մէջ։

վոր է, հիմի կողայթեն։ Վիլսոնը և Մյուլրեդին հրում էին անիվներն այն ժամանակ, յերբ Այրտոնը ձայնով և գավազանով քշում էր կենդանիներին։ Բայց ծանր ֆուրգոնը չէր շարժվում տեղից։ Արդեն չորացած կավը նրան ցեմենտից էլ պինդ էր ամրացնում։

Ջոն Մանգլը պատավլիքից ջուր ածել կավի վրա, փորձելով նա կակղել։ Բայց դա էլ վոչ մի բանի չհանգեց։ Ֆուրգոնն առաջվա նման տեղից չէր շարժվում։ Յերկար և անդադար ջանքերից հետո մարդիկ և կենդանիները դադարեցրին իրենց աշխատանքը։ Պետք էր կամ քանդել ֆուրգոնը մաս-մաս, կամ հրաժարվել այն հանելու մտքից։ Բայց նրան քանդելու համար գործիքներ եյին հարկավոր, վորոնք չկային։

Մինչ այդ՝ Այրտոնը ցանկանալով, ինչ էլ ուզում է լինի, հաղթություն տանել, նոր փորձ էր ուզում ձեռնարկել, բայց Գլենարվանը զսպեց նրան։

— Բավական է, Այրտոն, բավական է։ Պետք է պահպանել յեզին և ձիուն։ Նրանք դեռ մեզ պետք կգան, յերբ ճանապարհ ընկնենք։ Յեզը ծանրոցը կտանի, իսկ ձին— կանանց։

— Լսում եմ, սըր,— պատասխանեց նախկին բոցմանը և սկսեց լծից արձակել հոգնած կենդանիներին։

— Իսկ այժմ, բարեկամներ,— ասաց Գլենարվանը,— վերադառնանք ճամբար, քննարկենք մեր դրությունը, տեսնենք, ինչն է լավ նրա մեջ, ինչը— վատ, և ապագա գործողությունների պլան հաստատենք։

Պինդ նախաճաշով ուժերը կազդուրելով, ճանապարհորդները սկսեցին խորհրդակցել։ Գլենարվանը բոլորին առաջարկեց իրենց կարծիքները արտահայտել։

Ամենից առաջ պետք էր բոլորովին ստույգ վորոշել ճամբարի գտնվելու տեղը։ Այդ հանձնարարվեց Պագանելին, վորը շուտով զեկուցեց խորհրդակցությանը վորոշումների յեզրակացությունները։ Արշավախումբը նրա ասելով գտնվում էր 37° լայնության 147° 53' յերկայնության վրա, Սնոու-Ռիվերի ափի մոտ։

— Վո՞ր աստիճանի տակ է գտնվում Տուֆոլդյա ծովախորշը,— հարցրեց Գլենարվանը։

— Հարյուր հիսուններորդ,— պատասխանեց Պագանելը։

— Նշանակում է, յերկու աստիճան յոթ րոպե, կամ...

— Կամ յոթանասուն հինգ մղոնի վրա այստեղից...

— Իսկ Մեյսո՞նը։

— Անտվաղն յերկու հարյուր մղոնի վրա։

— Լավ։ Մենք գիտենք, թե վորտեղ ենք գտնվում,— ասաց Գլենարվանը,— այժմ մնում է վորոշել, թե ուր ենք ուղևորվում մենք։

Պատասխանը միաձայն եր, անհապաղ, գնալ օվկիանոսի ափը։ Յելենան և Մերին հայտարարեցին, վոր առանց դժվարության որական հինգական մղոն կարող են անել։ Համարձակ կանանց չեր վախեցնում նույնիսկ Սնոուի-Ռիվերը Տուֆոլդա ծոցից անջատող տարածության վոտքով գնալու հեռանկարը։

— Բայց, արդյոք, ծովափին կգտնե՞նք այն ամենը, ինչի կարիք ունենք,— հարցրեց Գլենարվանը։

— Անկասկած,— պատասխանեց Պագանելը։— Եդեմը մի փոքրիկ քաղաք է, վոր արդեն շատ տարիներ է ինչ գոյություն ունի։ Նրա նավահանգիստը կանոնավոր յերթևեկությամբ կապված պիտի լինի Մելբուռնի հետ։ Յես նույնիսկ կարծում եմ, վոր այստեղից յերեսուն հինգ մղոնի վրա գտնված Դելեգեյտ փոքրիկ քաղաքում, Նոր Հարավային Ուելսի սահմաններում՝ մենք կկարողանանք ձիեր ճարել։

— Իսկ «Դունկանի» հետ վո՞նց վարվել, սեր,— հարցրեց Այրտոնը։— Արդյոք, դուք չե՞ք գտնում, վոր ժամանակն է Տուֆոլդա կանչել նրան։

— Ի՞նչ կասեք այդ մասին, Ջոն,— հարցրեց Գլենարվանը։

— Յես կարծում եմ, վոր դրա համար շտապելու կարիք չկա,— պատասխանեց յերիտասարդ նավապետը կարճ, խորհելուց հետո։— Յերբեք ուշ չի լինի հրաման ուղարկել Թոմ Աուստինին այնտեղ ժամանել։

— Պարզ է,— ավելացրեց Պագանելը։

— Ի նկատի ունեցեք,— ավելացրեց Ջոն Մանգլսը,— վոր չորս-հինգ որից հետո մենք արդեն Եդեմում կլինենք։

— Չորս-հինգ որից հետո՞, նավապետ,— ասաց Այրտոնը, գլուխը պտտելով։— Ավելի լավ է ասեք տասնհինգ-քսան որից հետո, յեթե դուք չեք ուզում հետագայում զղջալ սխալ հաշվում։

— Տասն որ, յոթանասուն հինգ մղոնի համար,— բացականչեց Գլենարվանը։

— Վոչ պակաս, սեր։ Այժմ մենք ստիպված ենք գնալ Վիկ-

տարբեր գավառի ամենախուլ անկյուններ մասով, անապատով, ճանապարհ հարթելով թփուտի խիտ գետաբույսերում, վորոնք չէին կարողացել հաստատվել նույնիսկ ժուժկալ ակվաներները։ Ամեն մի քայլ պետք է կռվով խլել թփուտներից, կացինը ձեռքին։ Հավատացեք ինձ, այդ պայմաններում, արագ չես գնա։

Այրտոնը խոսում էր համոզված ձայնով։ Պագանելը, վորին ընականաբար զարմանում բոլոր հայացքները, գլխով արեց, պնդելով նրա խոսքերը։

— Ընդունում եմ, վոր դուք իրավացի եք,— ասաց Ջոն Մանգլսը։— Այդ դեպքում ինչ կա վոր, սըր, դուք եք ողնականին հրամանը վոչ թե հինգ, այլ տասնհինգ որից հետո կուղարկեք։

— Յես դեռ ուզում եմ ասել,— ավելացրեց Այրտոնը,— գլխավոր արգելքը վոչ թե ճանապարհի դըրության մեջ է, այլ գետի։ Մենք ստիպված ենք սպասել այստեղ, մինչև վոր Սնոուի-Ռիվերի ջուրը իջնի, վորպեսզի կարողանանք մյուս ափն անցնել։

— Սպասե՞նք իջնելուն,— բացականչեց նավապետ Մանգլըսը։— Իսկ ինչո՞ւ ծանծաղուտով չանցնենք։

— Վորովհետև այժմ ծանծաղուտ չկա։ Առավոտյան ես արգեն փնտրեցի այն, բայց անհաջող։ Այստեղ հազվադյուտ գետքում տարվա այս ժամանակին կարելի յե այնպիսի լեքը ջրով գետ հանդիպել, բայց վոր արդեն հանդիպել ենք,—վոչինչ չես կարող անել։

— Իսկ գետը լա՞յն է,— հարցրեց Յելենան։

— Յեվ լայն է և խոր,— պատասխանեց նախկին բոցմանը։— Լայնությունը մոտ մի մղոն է և գրա հետ միասին ուժեղ հոսանքով։ Նույնիսկ լավ լողորդը դժվարությամբ կլողա նրա վրայով։

— Ինչ կա վոր,— բացականչեց Ռոբերտը,— մենք նավակ կշինենք։ Մի ծառ կկտրենք, կփորենք այն— և նավակը պատրաստ է։ Ահա և բոլորը։

— Ահա սա, իսկական ծովապետի վորդի յե,— ասաց Պագանելը։

— Տղան իրավացի յե,— պատասխանեց Ջոն Մանգլսը։— Մենք դրանից չենք խուսափի։ Առաջարկում եմ ժամանակ չըվատնել դատարկ վեճերի վրա և սկսել նավակ շինել։

— Ձեր կարծիքը, Այրտո՞ն,— հարցրեց Գլենարվանը։

— Ես կարծում եմ, սեր, վոր յեթե մի վորեւե տեղից օգնություն չգա,— պատասխանեց Այրտոնը,— այն դեպքում մենք մի ամսից հետո էլ դեռ Սնոուի այս կողմում կլինենք։

Ջոն Մանգլը համբերությունը կորցրեց։

— Դուք՝ ավելի լավ պլան ունե՞ք,— գոռաց նա։— Յեթե ունեք, ասացեք։

— Ունեմ։ Թող «Դունկանը» գա Տուֆոլդյա ծովախորշը։

— Դարձյալ «Դունկանը»։ Իսկ նրա ծովախորշ գալն ինչո՞վ կօգնի մեզ։

Նախքան պատասխանելը, Այրտոնը մի քանի վայրկյան մտածեց, և վերջապես խուսափողական ձևով արտասանեց.

— Ես չեմ պնդում իմ կարծիքը։ Այն, ինչ վոր յես առաջարկեցի։ Ես պատրաստ եմ ճանապարհ ընկնել, հենց վոր դուք հրամայեք, սեր։

Յեվ նա հանդիսավոր կերպով ձեռքերը խաչեց կրծքին։

— Դա պատասխան չէ,— ասաց Գլենարվանը։— Հայտնեցեք մեզ ձեր պլանները, և մենք կքննարկենք նրանց։ Ի՞նչ եք առաջարկում դուք։

Յեվ Այրտոնը վստահ ձայնով պարզեց իր միտքը։

— Ես առաջարկում եմ չձեռնարկել դժվարին և վտանգավոր գետանցը Սնոուի վրայով՝ այն անորոշական դրությամբ, վորի մեջ գտնվում ենք մենք այժմ։ Հենց այստեղ, այս տեղի վրա մենք պիտի օգնության սպասենք, իսկ այդ օգնությունը «Դունկանից» միայն կարող է գալ։ Ճամբար խփենք այստեղ, ուր ապրելու բոլոր անհրաժեշտ պաշարները կան, և մեզանից մեկը թող հրաման հանձնի Թոմ Աուստինին, վոր նա խարիսխ ձգի Տուֆոլդյա ծովախորշում։

Բոլորն էլ չափազանց զարմացան այդ անսպասելի առաջարկի վրա, իսկ Ջոն Մանգլը չկարողացավ թաքցնել իր անբավականությունը։

— Այդ ժամանակվա ընթացքում,— շարունակեց Այրտոնը,— Սնոուի ջրերը կիջնեն, մենք հեշտությամբ մի հարմար ծանծաղուտ կգտնենք, կամ նավակով կանցնենք գետը։ Մենք բավական ժամանակ կունենանք կառուցելու այն։ Ահա պլանը, սեր, վորը յես առաջարկում եմ ձեզ ի քննություն։

— Շատ լավ է, Այրտոն,— ասաց Գլենարվանը,— ձեր առա-

չարչարությունն արժանի չէ նրան, վորպեսզի լուրջ վերաբերվեն նրա հետ, բայց բոլոր կողմերից պետք է քննարկել այն։ Նրա գլխավոր պակասությունը դանդաղեցնելու մեջ է, բայց դրա փոխարեն մենք կխուսափենք խոլոր ուժասպառությունից և շատ վտանգներից։ Ի՞նչ եք մտածում դուք այդ մասին, բարեկամներ։

— Դուք ասացիք, սիրելի Մակ-Նայր,— ասաց Յելենան,— խոսակցության սկզբից դուք վոչ մի բառ չարտասանեցիք։ Այդքան ժլատ մի լինիք խոսքերով։

— Դուք ի՞մ կարծիքն եք հարցնում,— պատասխանեց մայորը։— Յես սիրով կասեմ այն։ Իմ կարծիքով, Այրտոնը շատ խելացի չէ գտնում։ Յես ամբողջապես միանում եմ նրա առաջարկի հետ։

Վոչ վոք նման պատասխան չէր սպասում, վորովհետև մայորը սովորաբար ժխտում էր Այրտոնի բոլոր առաջարկները։ Այրտոնն ինքը, ըստ յերևույթին, զարմացել էր․ նա զարմացած արագ հայացք նետեց մայորի վրա։ Պագանելը, Յելենան և նավաստիները շատ էին տրամադրված նախկին քաղմանի առաջարկն ընդունելու համար։ Վերջին տատանումները չքացան Մակ-Նայրի խոսքերից հետո։

Գլենարվանը հայտարարեց, վոր նա սկզբունքով ընդունում է Այրտոնի պլանը։

— Դուք պետք է համաձայնեք, Ջոն,— ավելացրեց նա, դիմելով նավապետին,— վոր զգուշությունը և թելադրում մեզ գործողության այդ միջոցը և վոր անմտածելացի բանը կլիներ մնալ ճամբարում, դեռ ավելին, սպասելով մինչև վոր հորդացումն իջնի։

— Այո՛,— պատասխանեց Ջոն Մանգլը,— յեթե մեր ուղարկած մարդը կանի այն, ինչ վոր մենք ինքներս չենք կարողանում անել,— կանցնի Սնոուի վրայով։

Յեվ նա նայեց նախկին քաղմանին, վորը չկարողացավ զսպել հաղթանակող ժպիտը։

— Մեր առաջնորդները կարիք չունի գետն անցնելու,— ասաց Այրտոնը։

Ջոն Մանգլը զարմացկոտությամբ հոնքերը բարձրացրեց։

— Նա ճանապարհով կգնա Լյուկնոու, վորը ուղիղ դեպի Մելբուռն է տանում։

— Ցերեկը հարյուր հիսուն մղոն վազքով,— ավելից յերկրորդ նավապետը։

— Վո՛չ, ձիով,— պատասխանեց Այրտոնը։— Նա ձիով կը գնա, և ամբողջ ճանապարհը չորս օրից ավելի չի զբաղեցնի։ Դրա վրա ավելացրեք յերկու օր նրա համար, վորպեսզի «Դունկանը» բերեն Տուֆոլդյա ծովախորշը, և քսան չորս ժամ ել ճամբար վերադառնալու համար։ Մի խոսքով, ընդամենը մի շաբաթ ե հարկավոր, վորպեսզի ուղարկված մարդը վերադառնա այստեղ, օգնությամբ։

Մայորը գլխով եր անում, կարծես թե համաձայնություն տալով խոսողի ամեն մի բառին։

Այդ՝ չափազանց զարմացնում եր Ջոն Մանգլսին։ Բայց Այրտոնի առաջարկը դիմավորվեց ընդհանուր հավանությամբ։ Ուրիշ վոչինչ չեր մնում, քան համաձայնել այդ խելացի հրաշալի մտածված պլանի հետ։

— Այժմ, բարեկամներս,— շարունակեց Գլենարվանը,— մընում ե ընտրել մեր համբավաբերին։ Նրա առաջ ծանր և վտանգավոր ճանապարհորդություն ե դրված, յես չեմ ուզում թաքցնել այդ։ Ո՞վ ե պատրաստ վտանգի յենթարկվել, վորպեսզի մեր հրահանգները հանձնի Մելբուռնում։

Վիլսոնը, Մյուլրեդին, Ջոն Մանգլսը, Պագանելը, Ռոբերտը միանգամից առաջարկեցին իրենց ծառայությունները։ Ջոն Մանգլսն առանձնապես պնդում եր, վորպեսզի այդ հանձնարարությունները իրեն տան։ Բայց այստեղ, մինչև այդ րոպեն լռությունը պահպանող Այրտոնն ընդհատեց նրանց։

— Յեթե ձեզ ցանկալի յե, սեր,— դիմեց նա Գլենարվանին,— այս դեպքում յես ինձ վրա կվերցնեմ այդ գործը։ Յես շատ անգամ եմ ավելի դժվար անցումներ կատարել։ Յես դուրս կպրծնեմ այնպիսի տեղից, վորտեղ մի ուրիշն անպայման կկորչի։ Յես առաջարկում եմ Մելբուռնի այդ ճանապարհորդությունը միայն ինձ հանձնարարել։ Հավատացեք, սեր, վոր յես ընդհանուրի շահերի համար եմ այդպես վարվում։ Լիազորեցեք ինձ հանձնելու մեր օգնականին այն, ինչ վոր դուք կարևոր եք համարում, և վեց օրից հետո «Դունկանը» խարիսխ կձգի Տուֆոլդյա ծովախորշում։

— Հրաշալի յե ասված,— հավանություն տվեց նրա խոսքերին Գլենարվանը։ — Դուք հնարագետ և համարձակ մարդ

եք, Այրտոն։ Ցես համոզված եմ, վոր ձեր յերթը հաջողու-թյամբ կպսակվի։

Միանգամայն պարզ էր, վոր նախկին քոցմանն ավելի, քան ուրիշ մեկը, ընդունակ է կատարել այդ դժվարին առաքելությունը։ Ամեն մեկն էլ հասկանում էր այդ, և չէր պնդում իր թեկնածությունը։ Ջոն Մանգլսը վերջին առարկությունն արեց, մատնանշելով, վոր Այրտոնի ներկայությունն այստեղ անհրաժեշտ է, վորպեսզի փնտրեն «Բրիտանիայի» և նավապետ Գրանտի հետքերը։ Բայց մայորն առարկեց, վոր արշավախմբի ճանապարհները կմնան Մնոուի ափին մինչև վոր Այրտոնը վերադառնա և վոր խոսք անգամ չի կարող լինել այն մասին, վորպեսզի առանց նրան սկսեն արշավանքի պատասխա-նատու վորոնումներ։ Այսպիսով Այրտոնի ժամանակավոր բա-ցակայությունն ամենափոքրիկ վնասն էլ չի հասցնի նավապետ Գրանտի շահերին։

— Այդ դեպքում, ճանապարհ ընկեք, Այրտոն։ Մի ձգձգեք, և շուտով վերադարձեք մեզ մոտ, — յեզրափակեց Գլենարվանը։

Նախկին քոցմանի աչքերում հաղթանակ էր փայլում։ Նա իսկույն ևեթ կախեց աչքերը, բայց վորքան էլ վայրկենական էր աչքերի այդ հաղթական փայլը, այնուամենայնիվ նա չը-խուսափեց Ջոն Մանգլսի հայացքից։ Դա առիթ տվեց այն ան-վստահությանը, վորը Ջոնը բնազդորեն տածում էր դեպի «Բրիտանիայի» նախկին քոցմանը։

Այրտոնն շտապով սկսեց մեկնելու պատրաստությունն տես-նել։ Նավաստիներից մեկն զբաղվեց ձին թամբավորելով, մյու-սը — պարենային պաշարներով։ Այդ ժամանակ Գլենարվանը վերջացնում էր նամակը Թոմ Աուստինին։

Նամակի մեջ նա հրամայում էր նավապետի ոգնականին անհապաղ գնալ Տուֆոլդյա ծովախորշը։ Նա Այրտոնին ներկա-յացնում էր նրան, ինչպես մի մարդու, վորին լիովին կարելի յե վստահել։ Թոմ Աուստինը, ափը հասնելուն պես, Այրտոնի լրիվ կարգադրության տակ պիտի դներ նավաստիների ջոկա-տը։

Գլենարվանը հասավ մինչև նամակում այդ տեղը, յերբ դրան աչքերով հետևող մայորը, թե ինչ է գրում նա, հան-կարծ ընդհատեց նրան, հարցնելով մի ինչ վոր առանձնահա-



Այրտոնն յելաւ տնակի ներսից:

տուկ յեղանակով, — ինչպե՞ս է նա գրում «Այրտոն» անունը:

— Այնպես, ինչպես նա արտասանվում է, — զարմացկոտու- թյամբ պատասխանեց Գլենարվանը:

— Դա սխալ է, — հանդիսավոր ասաց նրան մայորը, — նա «Այրտոն» է արտասանվում, բայց գրվում է «Բեն Ջոյս»:

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

## ԼԱՆԴԻԱ, ԼԱՆԴԻԱ, ԶԵԼԱՆԴԻԱ

Այդ խոսքերն ազդեցին Այրտոնի վրա, ինչպես հրացանի կրակոց: Նա շեշտակի վեր թռավ, նրա ձեռքը մեկնվեց ատըր- ճանակին: Կրակոց լսվեց: Գլենարվանն ընկավ, գնդակից խոց- ված: Դրսից նույնպես կրակոցներ լսվեցին:

Առաջին վայրկյանի անակնկալությունից շփոթված, Ջոն Մանգլսը և նավաստիները, հարձակվեցին Բեն Ջոյսի վրա: Բայց համարձակ վոճրագործը դուրս պրծավ նրանց ձեռքից և փախավ խեժարեր անտառի քոլարերանում իրեն սպասող ավա- զակախմբի մոտ:

Վրանը բավականաչափ պաշտպանություն չէր ներկայաց- նում գնդակներից: Մտադրված եյին նահանջել: Թեթև վիրա- վորված Գլենարվանը բարձրացավ գետնից:

— Ֆուրգոնի մոտ, ֆուրգոնի մոտ, — գոռում էր Ջոն Մանգլսը, իր հետևից տանելով Յելենային և Մերիին, և մի քանի վայրկյանից հետո, նրանք յերկուսն էլ արդեն գտնվում եյին ամուր փեղկերի պաշտպանության տակ, կատարյալ ան- վտանգության մեջ:

Ջոնը, մայորը, Պագանելը և նավաստիները վերցրին իրենց կարաբինները և պատրաստվեցին յետ մղել ավազակների հար- ձակումը: Գլենարվանը և Ռոբերտը միացան ճանապարհորդ- ներին, իսկ Օլբինետը, հրացանը վերցնելով, նույնպես կանգ- նեց պաշտպանողների շարքում:

Այս բոլորը կատարվեց մի քանի վայրկյանում: Ջոն Ման- գլսը մանրակրկիտ հետախուզեց անտառի քոլարերանը: Կրակոցը նույնպես հանկարծակի դադարեց, ինչպես և սկսվեց: Հրացանների կրակոցների ճարճատյունին կատարյալ խաղա- ղություն փոխարինեց: Թեթև ծխիկը դեռ պտտվում էր ոդի մեջ, բարձրանալով դեպի խեժարեր ծառերի գագաթները:



Հրացան լսվեց և Գլենարվանն ընկաւ։

Gastrolobium-ի գնտաբուլյաները նորից անշարժացան։ Հարձակվողներն անհետ կորան։ Մայորն ու Ջոն Մանգլսը հետախուզեցին անտառի թավուտը, բայց այնտեղ վորևէ մեկի ներկայության ամենափոքրիկ նշաններն անգամ չգտան։ Գետնի վրա տեսնվում էյին վոտքերի հետքեր և տեղ-տեղ ընկած էյին դեռ ծխացող փամփուշտներ։ Զգույշ մայորը հանգցրեց դրանց։ Նա համոզված էր, վոր բավական է մի կայծ, վորպեսզի սարսափելի հրդեհ բռնկի այդ անտառում, չոր ծառերից։

— Տասմանացիներն անհետացան, — ասաց Ջոն Մանգլսը։

— Այո՛, — պատասխանեց մայորը, — և հենց այդ անհայտանալն է, վոր անհանգստացնում է ինձ։ Ես կգերադասեյի հանդիպել նրանց հետ յերես առ յերես։ Վագրն անտառում ավելի քիչ է վտանգավոր, քան ոձը խոտի մեջ։ Պետք է կտրել Ֆուրգոնի չորս կողմի թփուտները։

Մայորը և Ջոնը, ամբողջ շրջակայքը խուզարկեցին, բայց անտառի քոլաբերանից մինչև Սնոուի ափերը նրանք վոչ մի տասմանացի չհանդիպեցին։ Բեն Ջոյսի ավազակախումբը, թըվում էր թե, թռել է, ինչպես գիշատիչ թռչունների յերամ։

Այդ անհայտանալը չափազանց տարօրինակ էր, վորպեսզի անվտանգ չզգային իրենց։ Այդ պատճառով վորոշվեց զգույշ մնալ։ Ֆուրգոնը մի իսկական փոքրիկ բերդի վերածեցին։ Նրա չորս կողմում ճամբար խփեցին, և նրա մոտ յերկու մարդ պահակ կանգնեցին։

Յեղենայի և Մերիի առաջին հոգսը յեղավ՝ կապել Գլենարվանի վերքը։ Գնդակը գլորվելով ուսի փափկամասին, վոչ մի լուրջ վնաս չէր պատճառել։ Վոչ վոսկորը, վոչ մկանները, չէյին շոշափված։ Վերքն ուժեղ արնահոսում էր, բայց Գլենարվանն արդեն շարժում էր նախաբազկի հոդերը և հավաստիացնում էր իր բարեկամներին, վոր կրակոցը նրան մի փոքրիկ վնաս էլ չի պատճառել։ Նրա վերքը կապեցին, և նա խնդրեց այլևս չանհանգստանալ իր մասին և անցնել ամբողջ պատահածի քննարկությանը։ Պահակ կանգնած Մյուլրեդիի և Վիլսոնի բացառությամբ, ճանապարհորդները տեղավորվեցին Ֆուրգոնի շենքում։ Մայորին խնդրեցին պատմությունն սկսել։ Բայց նախ քան այդ օրը պատահած դեպքերի բացատրության անցնելը, մայորը պատմեց Յեղենային այն բոլորը, վոր նա չգիտեր, Պերտի բանտից փախած մի խումբ տասմանացիների,

Վիկտորիա գավառում նրանց լինելու, և նրանց սարքած երկաթուղային աղետի մասին: Նա Գլենարվանին ցույց տվեց «Ավստրալիական և Զելանդական Թերթի» Սեյմուրում գնված համարը, և ավելացրեց, որ ոստիկանությունը մրցանակ է նշանակել հրոսակախմբի ղեկավար Բեն Ջոյսի գլխի պատճառով, որ տասնութ ամսվա մեջ հաջողել է մռայլ համբավ վաստակել իր համար:

Բայց Մակ-Նաբսն ի՞նչպես իմացավ, որ բոցման Այրտոնը Բեն Ջոյսն է: Դա մի հանելուկ էր, որ զբաղեցնում էր բոլորին, և մայորը բացատրեց, թե ինչի վրա էին հիմնվում իր կասկածները:

Ծանոթության առաջին օրից Մակ-Նաբսը բնազդորեն չէր վստահում Այրտոնին: Երկու-երեք հապճեպ հայացք, որ փոխանակեցին Այրտոնը և դարբինը Վիմերրայի ափին, Այրտոնի մշտական դժկամությունը քաղաքներ և գյուղեր չմտնելու համար, նրա համառ ցանկությունը կանչել «Դունկանին» Մելբուրնից, նրա հոգատարությանը հանձնարարված կենդանիների հանելուկային մահը, վերջապես մի ինչ որ կեղծություն նրա բոլոր խոսքերի և վարմունքների մեջ — այս բոլորը միասին վերցրած հարուցում էր մայորի անվստահությունը: Բայց և այնպես նա չէր կարող ոչ մի վարույական մեղադրանք հարուցել նրան: Իսկ անցյալ գիշեր հետևյալ դեպքերն են կատարվել:

Ճամբարից կես մղոն հեռավորության վրա, ճեղքելով թփուտի գեռապատյանները, Մակ-Նաբսն ինչ որ տարօրինակ ըստվերներ նկատեց, որոնք միանգամից հարուցին նրա կասկածանքը: Ֆոսֆորացող սունկերը թույլ կերպով լուսավորում էին մթության մեջ: Երեք մարդ նայում էին գետնի վրայի հետքերը — քայլերի բոլորովին թարմ դրոշմներ: Նրանց մեջ Մակ-Նաբսը ճանաչեց Բլեկ-Փոյնտի դարբնին: «Այս նրանք են», ասաց մեկը: «Այո՛, այս հետքը պայտի և հենց Վիմերրայի մոտից», պատասխանեց երկրորդը: «Բոլոր ձիերը սատկել են, Թույնի հետևից հեռու չենք գնա: Թույնը հերիք է արջառի, մի ամբողջ հեծյալ ջոկատ հետիոտն դարձնելու համար, — նկատեց երրորդը: — Ի՜նչ օգտակար բույս է այս gastrolobium-ը»:

Ձայները լռեցին, և քայլերն սկսեցին հեռանալ: Մակ-Նաբսը դեռ վայրկյան չհապաղելով, գնաց նրանց հետևից: Շուտով

խոստակցությունը վերականգնվեց։ «Ճարպիկ մարդ է այդ Բեն Ջոյը», — ասաց գարբինը, — անվանի բոցման դուրս յեկավ նրանից։ Հապա նրա հնարովի նավախորտակումը։ Ցեթե նրա պլանը հաջողվի, այ թե հաջողություն կլինի, հա՛։ Ղոչաղ Այրտոն, — Բեն Ջոյս ասա նրան։ Նա միանգամայն արժանի յե իր անունին։

— Սրանք են իմ լսած վերջին խոսքերը, — վերջացրեց մայորը։ — Տաժանակիրները դուրս յեկան անտառից և անհայտացան։ Այսպիսով յես իմացա ամբողջը, ինչ վոր ուզում եյի իմանալ, և ճամբար վերադարձա այն համոզմունքով, վոր Ավստրալիայում տաժանակիրներն այնքան էլ հեշտ չեն ուղիղ ճանապարհի վրա կանգնում, ինչպես թվում է այդ Պագանելին։

Մայորը լռեց։ Նրա ընկերները, նույնպես լուռ, մտածում եյին։

— Ցեվ այդպես, — արտասանեց վերջապես Գլենարվանը, և նրա դեմքը բարկությունից գունատվեց, — Այրտոնը քարշ է տվել մեզ այստեղ, վորպեսզի թալանի և սպանի։

— Այո՛, — պատասխանեց մայորը։

— Ցեվ, Վիմերրայից սկսած, այդ ամբողջ բանդան հետևում է մեր գարշապարներին, սպասելով հարձակման հարմար մոմենտի։

— Բայց նշանակում է, վոր այդ անզգամը նավաստի չի՞ յեղել «Բրիտանիայի» վրա։ Նշանակում է, վոր նա Այրտոն անունը յուրացրե՞լ է, գողանալով նավաստու գրքույկը։

Բոլոր հայացքները դեպի Մակ-Նաբսը դարձան, վոր ինքն էլ նման հարց պիտի տար իրեն։

— Իմ կարծիքով, այս ամբողջ մութ պատմության մեջ հետևյալն է ստույգը, — ասաց նա իր սովորական, հանդիստ ձայնով։ — Այդ մարդու անունն իսկապես Այրտոն է։ Բեն Ջոյս — այդ նրա ավազակային մականունն է։ Վոչ մի կասկած չկա, վոր նա գիտեր Հարրի Գրանտին և վոր նա բոցման է յեղել «Բրիտանիայի» նավերում։ Այս փաստերն ապացուցված են այն մանրամասնություններով, վորոնք պատմեց մեզ Այրտոնը Հարրի Գրանտի հետ ունեցած իր ծանոթության մասին, և նրանք բոլորը լիովին հաստատվում են տաժանակիրների խոսակցությամբ, վոր յես լսեցի։ Զարժե տարվել կասկածների յենթա—

դրությունները։ Բավականանանք գիտենալով այն, վոր Այրտոն և Բեն Ջոյս — միևնույն դեմքն է, և վոր մի ժամանակ «Բրիտանիայի» վրա վորպես նավաստի ծառայող այդ մարդը, դարձել է ատամնակիրների ավազակախմբի գլխավորը։

Մակ-Նաբսի բացատրությունները ընդունվեցին առանց առարկության։

— Այժմ, — ասաց Գլենարվանը, — բացատրեք ինձ, թե ի՞նչպես նավապետ Գրանտի նախկին բոցմանը հայտնվեց Ավստրալիայում։

— Յես այդ չգիտեմ, — պատասխանեց Մակ-Նաբսը։ Յեվ հենց վոստիկանությունն էլ իմ գիտեցածից ավելի տեղյակ չե այդ գործում։ Ինչո՞ւ։ Յես չեմ կարող բացատրել այդ։ Դա մի հանելուկ է, վոր ապագան կարող է պարզաբանել։

— Վոստիկանությունը նույնիսկ չի կասկածում այդ անունների նույնության վրա. Բեն Ջոյսի և Այրտոնի, — ասաց Ջոն Մանգլսը։

— Դուք իրավացի յեք, Ջոն, — պատասխանեց մայորը, — այնինչ դա զգալի չափով կթեթևացներ նրանց վորոնումները։

— Նշանակում է, — ասաց Յելենան, — այդ թշվառականն Օ'Մուրի ֆերման եր խցկվել մի ինչ վոր վոճրագործ դիտավորությա՞մբ։

— Դա կասկածի չի յենթարկվում, — պատասխանեց Մակ-Նաբսը։ — Նա ինչ վոր մահափորձ եր պատրաստում իռլանդացու դեմ։ Բայց այստեղ նրան ավելի ձեռնտու գործ պատահեց։ Պատահականությունը նրան հանեց մեր ճանապարհի վրա։ Նա լսել եր Գլենարվանի պատմությունը, նավաբեկման պատմությունը, և համարձակ ու հնարագետ մարդ լինելով, հենց այստեղ էլ վորոշեց ոգտվել պատահած դեպքով։ Մենք կարթի յենք ընկել — արշավն Ավստրալիայի խորքերը՝ վորոշված եր։ Վիմերրայի մոտ Այրտոնը համաձայնության մեջ մտավ իր հրոսակախմբի հետ, իր ընկերոջը բերեց բլեկ-պոյնտյան դարբնի անվան տակ։ Նա Գլենարվանի ձին յերեքնուկի նալով նալեց, այնպես վոր հրոսակախումբը շատ հեշտությամբ կարող եր գալ մեր հետքերով։ Նա մեկը մյուսի հետևից կերակրեց յեզներին և ձիերին gastrolobium թունավոր բույսով։ Ապա, յերբ հարմար րոպեն յեկավ, նա մեզ տարավ Սնոուի ճահիճը և այնտեղ մատնեց իր հրոսակախմբին։

Մայրը գլխի ընկնելով վերականգնեց Բեն Ջոյի ամբողջ պատմությունը, և արշավախմբի կառապանի համեստ և հավատարիմ դեմքի տակ բոլորը տեսան կատաղի, գյուտարար և համարձակ վաճառականերին։ Նրա դիտավորությունների մերկացումը մեծ զգուշություն էր պարտավորեցնում Գլենարվանի արշավախմբին։ Բարեբախտաբար, դիմակավորած ավազակն ավելի քիչ էր վտանգավոր, քան գաղտնի մատնիչը։

Սակայն մայորի հաղորդածից մի կարևոր յեզրակացություն էլ էր բխում, վորի մասին մինչև այժմ վոչ վոք չէր մտածել։ Միայն Մերի Գրանտը, չխառնվելով անցյալի վեճի մեջ, մտածում էր ապագայի մասին։ Ջոն Մանգլսը հանկարծ նկատեց, թե ինչպես գունատվեց նրա դեմքը և աչքերը լցվեցին արցունքով։ Միայն այն ժամանակ նա հասկացավ, թե ինչ է կատարվում աղջկա ուղեղում։

— Լաց մի լինեք, օրիորդ Մերի, — բացականչեց նա։ — Լաց մի լինեք։

— Դուք լաց եք լինո՞ւմ, սիրելի աղջիկս։ Ինչո՞ւ համար, — հարցրեց Յելենան։

— Իմ հայրը։ Իմ հայրը, — շշնջաց յերիտասարդ աղջիկը, խեղդելով հեկեկանքը։

Նա այլևս վոչ մի բառ չկարողացավ արտասանել։ Բայց այդ էլ էր բավական, վորպեսզի ճշմարտությունը կայծակի պես փայլեր յուրաքանչյուրի ուղեղում։ Բոլորի համար էլ հասկանալի յեղան թե՛ Մերիի արցունքները և թե՛ նրանց հարուցող պատճառը։

Այրտոնի մատնության մերկացումն ապանում էր ամեն մի հույս։ Տաժանակիրը նավաբեկությունը հորինեց, վորպեսզի հրապուրի Գլենարվանին, — այդ մասին բոլորովին պարզ ասացին նրա հրոսակախմբի անդամները, վորոնց խոսակցությունը լսեց Մակ-Նաբսը։ «Բրիտանիան» յերբեք չի խորտակվել Տուֆոլդայի խութերի վրա։ Հարրի Գրանտը վոտք չի դրել ավստրալիական մայր ցամաքի վրա։

Փաստաթղթերի բովանդակության քմահաճ մեկնաբանությունն աղետաբեր արշավախմբին կեղծ ճանապարհի վրա ձգեց։ Ստեղծված դրության մեջ իրենց հաշիվ տալով և տեսնելով նավապետ Գրանտի վորդիների վիշտը, բոլորը լռեցին։ Նրանց համար վոչ վոքի մոտ մխիթարական խոսքեր չգտնվեցին։ Ռո—

բերդը և Մերին գրկախառնված հեկեկում էին։ Պողանեյը ցըր-վածի պես ֆնթֆնթում էր։

— Ո՛, չարաբաստիկ փառասիրություն։ Դու նորից խաբեցիր մեզ։ Դու ազնիվ և համարձակ մարդկանց կյանքը նորից վտանգի ենթարկեցիր։

Ցեյ արժանավոր աշխարհագրագետը, ինքն իր վրա զայրանալով, այնպես կատաղի կերպով ծեծում էր բռունցքով իր ճակատը, կարծես թե ուզում էր փշրել գանգը։

Մինչ այդ, Գլենարվանը դուրս եկավ ֆուրգոնից և միացավ պահակ կանգնած Մյուլրեդիին և Վիլսոնին։ Սարին լռություն էր տիրում գետի և անտառի քոլաբերանի մեջ փակված այդ հովտում։ Մութ, թանձր ամպերը ցածր կախվել էին գետի վրա։ Այդ կաշկանդված բնության մեջ ամենաչնչին ձայնը լսելի կլիներ մեծ տարածության վրա։ Բայց չորս կողմում մեռյալ անդորրություն էր թագավորում։ Ըստ երևույթին Բեն Ջոյսը և նրա բանդան նահանջել էին պատկառելի տարածությամբ։ Դա անուղղակի կերպով հաստատվում էր նաև ծառերի ստորին ճյուղերի վրայով ճախրող թռչունների վարմունքով։ Ցեթե մոտերքում մարդիկ թաղնվեին, նրանք իրենց ուրիշ կերպ կպահեին։

— Ի՞նչ է պատահել ձեր պահակ կանգնած ժամվա ընթացքում, — հարցրեց Գլենարվանը նավաստիներին։

— Մենք կասկածելի ոչինչ չենք նկատել, — պատասխանեց Վիլսոնը։ — Ըստ երևույթին, մոտերքում ավազակներ չկան։

— Հավանորեն դեռ. ամբողջ հրոսակախումբը չի հավաքվել, և նրանք չեն համարձակվում հարձակվել մեզ վրա,—ավելացրեց Մյուլրեդին։ — Բայց կարող է պատահել, որ Բեն Ջոյսը վորոշել է իր հրոսակախմբում նոր տարրերներ հավաքագրել, վորոնք թափառում են Ալպերի ստորոտում։

— Հնարավոր է, Մյուլրեդի, — պատասխանեց Գլենարվանը։ — Անզգամները միշտ վախկոտ են։ Իսկ նրանք գիտեն, որ մենք զինված ենք և վատ չենք զինված։ Բայց, կարո՞ղ է պատահել, որ նրանք սպասում են գիշերվան, որպեսզի կրկնեն գրոհը։ Պետք է կրկնապատկել զգոնությունն արևը մայր մտնելուց հետո։ Ա՛խ, եթե մենք կարողանայինք այս ճահիճից ա-խտատան դուրս գալ։ Բայց, ավա՜ղ, գետի ջրի բարձրանալը պա-

հում է մեզ։ Ի՞նչ ասես, վոր չեն շինի սրա այն խաղի համար, վորով կարելի կլիներ գետի մյուս ափը տեղափոխվել։

— Ինչո՞ւ չեք մեզ հրամայում կառուցել այդ լաստը, — հարցրեց Վիլսոնը։ — Չէ՞ վոր փայտի պակասություն չկա այստեղ։

— Վոչ, Վիլսոն։ Վոչինչ չի դուրս գա։ Սնաուին հանգիստ գետ չի, այլ չեչտակի հոսանք է։

Այդ րոպեյին Ջոն Մանգլըը, աշխարհագրագետը և մայորը մոտեցան Գլենարվանին։ Նրանք հենց նոր եյին վերադարձել Սնաուի ափից։ Նրա ջրի մակերևույթն եյլ մի վոտնաչափ բարձրացել եր գիշերը, և հոսանքն այնպիսի արագությամբ եր սլանում, վոր մտածելու կարիք չկար նրա վրայով շտապ կերպով շինված լաստով հաջողակ անցնելու մասին։

— Այս րոպեյիս անդրափոխվելն անհնարին է, — ասաց Ջոն Մանգլըը։ — Սակայն չպետք է նստել այստեղ, ձեռքերը ծալած։ Այն, ինչ վոր մենք վորոշել եյինք Այրտոնի դավաճանության մերկացումից առաջ, այժմ պետք է կատարել, առանց հետաձգելու։

— Այդ ինչի՞ մասին եք խոսում, դուք, Ջոն, — Հարցրեց Գլենարվանը։

— Ես ասում եմ այն մասին, վոր մենք ոգնության կարիք ունենք և յեթե մենք չենք կարող ընկնել Տուֆոլդյա ծովախորշի մոտ, ուրեմն ավելի լավ հիմունքներ ունենք շուտով հասնել Մելբուռն։ Մեզ մոտ մի ձի յե մնացել։ Տվեք ինձ այդ ձին, սըր, և յես կգնամ Մելբուռն

— Վոչ, Ջոն, դա վտանգավոր ձեռնարկություն է, — առարկեց Գլենարվանը։ — Չխոսելով արդեն այն մասին, վոր ինքն ըստ ինքյան յերկու հարյուր մղոնանոց ճանապարհորդությունը վայրենի յերկրով — դժվար խնդիր է, Այրտոնի հրոսակախումբը հավանորեն, պահպանում է բոլոր արահետները, վորպեսզի խանգարի մեզ այդ փորձում։

— Ես էլ եմ այդպես կարծում, սըր։ Բայց այդպիսի դրության մեջ մնալն անկարելի յե։ Այրտոնը հանձն առավ յոթ որում «Դունկանից» Սնաուի ափը բերել մեր ընկերներին։ Ես պարտավորվում եմ անել նույնը վեց որում։ Եվ այսպես, սըր, մնում է միայն ձեր համաձայնությունը։

Նախ քան Գլենարվանը կասեր իր խոսքը, — մեջ մտավ Պագանելը — Ես պիտի մի դիտողություն անեմ։ Մելբուռն գնալ պետք է, բայց միայն վոչ Ջոն Մանգլսը։ Նա—«Դունկա-նի» նավապետն է, իրավունք էլ չունի վտանգի յենթարկել իրեն։ Ես կգնամ նրա փոխարեն։

— Ճիշտ է, Պագանել,—ասաց մայորը—Բայց ինչո՞ւ դուք։

— Հապա մենք ինչի՞ համար ենք, — բացականչեցին Վիլ-սոնը և Մյուլրեդին։

— Մի՞թե դուք կարծում եք, վոր ինձ կարող է վրդովեց-նել ձիով յերկու հարյուր մղոն գնալու հեռանկարը, — հարցրեց մայորը։

— Լավ, բարեկամներս, — ասաց Գլենարվանը, — դե, վոր մի անգամ վորոշել ենք, վոր անհրաժեշտ է գնալ Մելբուռն, թող վիճակը վորոշի, թե ով պիտի գնա։ Պագանել, գրեցեք մեր ա-նունները։

— Միայն վոչ ձերը, սեր, — բացականչեց Ջոն Մանգլսը։

— Ինչո՞ւ համար, — հարցրեց Գլենարվանը։

— Դուք չեք կարող թողնել ձեր ամուսնուն, — այս մեկ. ձեր վերքը դեռ չի ապաքինվել, — այդ էլ յերկու։

— Գլենարվան, — վրա բերեց Պագանելը, — դուք իրա-վունք չունեք թողնել արշավախումբը։

— Այո՛, Էդվարդ, — ավելացրեց մայորը, — ձեր տեղն այստեղ է։

— Ես համաձայն չեմ ձեզ հետ, բարեկամներս։ Սա զվար-ճալի ճանապարհորդություն չէ։ Գնացողը մեծ վտանգի յե յեն-թարկվում և յես իմ տեղը վոչ վոքի չեմ զիջի։ Գրեցեք նաև իմ անունը և թող վիճակը վորոշի։

Ստիպված եյին հնազանդվել նրա պահանջին։ Գլենարվանի անունը գրված եր մյուս բոլոր անունների հետ։ Թղթիկները խառնեցին մի կուժի մեջ, և առաջինը դուրս հանվեց Մյուլրե-դիի անունով։ Կորովի նավաստի Մյուլրեդին ուրախությունից նույնիսկ վեր ցատկեց տեղից։

— Ես պատրաստ եմ, սեր, — ասաց նա։

Գլենարվանն ամուր սեղմեց նրա ձեռքը։ Հետո նա վերա-դարձավ ֆուրգոնի մոտ, պահակ թողնելով Ջոն Մանգլսին և մայորին։

Հելենան, իմանալով ընդունված վորոշման մասին, հավանություն տվեց նրան։ Նա դիմեց Մյուլրեդիին մի քանի խոսքով, վորոնք մինչև հոգու խորքը հուզեցին համարձակ ծովագնացին։ Պետք է խոստովանել, վոր վիճակն իսկապես հաջողակ սուրհանդակ ընտրեց։ Մյուլրեդին քաջ եր, ուժեղ, խելոք, ճարպիկ և անխոնջ։ Նրա մեկնումը նշանակվեց յերեկոյան ժամի ութին։ Այդ ժամանակ արդեն մութն եր։ Վիլսոնն իր վրա վերցրեց ձին պատրաստելը։ Նրա գլխում մի հաջողակ միտք ծագեց, մասնիկ յերեվցնելով նալը փոխարինել սատկած ձիերից մեկի սովորական նալով։ Այդպիսով ատամանակիրները չեն կարող ճանաչել վոչ Մյուլրեդիի հետքերը, վոչ էլ հետապնդել նրան, վորովհետև նրանք ձիեր չունեյին։

Այն ժամանակ, յերբ Վիլսոնն զբաղված եր ձին վերապատրաստելով, Գլենարվանը վորոշեց հրաման տալ Թոմ Աուստինին, և Պագանելից խնդրեց իր թելադրությամբ մի նամակ գրել, վորովհետև վերավոր ձեռքը նրան չեր թողնում, վոր ինքը գրել տանի։

Գիտնականը, ինչ վոր գաղափարով կլանված, չորս կողմում կատարվող բաներից վոչինչ չեր նկատում։ Պետք է ասել, վոր այդ որվա բոլոր անդուրեկան պատահարները Պագանելը մոռացել եր և գիտնականի մտքերն ամբողջովին զբաղված եյին չարաբաստիկ փաստաթղթի նոր վերլուծությամբ։ Նա ամեն կերպ կրկնում եր մտքում նրա բառերը, աշխատելով նոր իմաստ կորզել նրանցից։

Այդ պատճառով նա մտահոգությունից չհասկացավ Գլենարվանի խնդիրը, և վերջինս ստիպված եր կրկնել այն։

— Ըհը, ըհը․․․ — վերջապես պատասխանեց գիտնականը։

— Յես պատրաստ եմ։

Յեվ նա մեքենայորեն տրորում եր ձեռքերում իր նոթագրական գրքույկը։ Հետո, նրա միջից մի սպիտակ թուղթ պոկելով և մատիտով զինվելով, նա պատրաստվեց գրելու։

Գլենարվանն սկսեց թելադրել․

— «Առաջարկում եմ Թոմ Աուստինին անհապաղ դուրս գալ ծով և «Դունկանը» տանել․․․

Գրելով այդ բառը, Պագանելը պատահաբար նայեց «Ավստրալիական և նորզելանդական թերթի» համարին, վորն ընկած

էր զեմնին։ Թերթն այնպես էր ծալած, վոր յերևում էր միայն հետևյալ բառը․ «զելանդական»։ Պագանելի մատիտը կախվեց ոդում, և ինքը՝ գիտնականը կարծես թե մոռացավ և՛ Գլենարվանի մասին, և՛ նամակի մասին և ամբողջ շրջապատի մասին։

— Ինչո՞ւմն է բանը, Պագանել, — անհամբերությամբ հարցրեց Գլենարվանը։

— Ա՛խ, — հանկարծ գոռաց աշխարհագրագետը։

— Ի՞նչ պատահեց ձեզ, — հարցրեց մայորը։

— Վոչինչ, վոչինչ, — պատասխանեց գիտնականը։ Յեվ նա շշնջաց․

— Զելանդ... Լանդ... լանդիա, լանդիա։

Նա վոտքի վրա թռավ, վերցրեց թերթը, տրորեց այն ձեռքում, համառորեն, դժվարությամբ զսպելով բառերի հոսանքը։

Յելենան, Մերին, Ռոբերտը, Գլենարվանը նրան եյին նայում խորին զարմանքով, չհասկանալով նրա հուզմունքի պատճառները։

Թվում էր, վոր Պագանելը բռնվել է անմտության հանկարծակի ուշաթափությամբ։ Բայց նրա հուզմունքն արագ անցկացավ։ Նրա աչքերում փայլող ուրախությունն աղոտացավ, և, նորից իր տեղում նստելով, նա հանգիստ ձայնով ասաց․

— Շարունակեցեք Գլենարվան, յես պատրաստ եմ գրելու։

Գլենարվանը վերանորոգեց թելադրությունը․

— «... և «Դունկանը» տանել Ավստրալիայի արևելյան յեզրը...»

— Ավստրալիայի՞, — վերահարցրեց Պագանելը։ Յեվ հենց ինքն էլ իրեն պատասխանեց — Դե, իհարկե, Ավստրալիայի։

— «Լայնության յերեսունյոթերորդ աստիճանի մոտ», — շարունակեց Գլենարվանը։

Պագանելը նամակը գրեց պրծավ և տվեց այն Գլենարվանին ստորագրելու։ Այս վերջինը, ցավից կծկվելով, մի կերպ ստորագրեց։ Պագանելը ծալեց նամակը, ծածկեց ծրարում, կնքեց այն և, հուզմունքից դողդողացող ձեռքով, գրեց հասցեն․

Թոմ Աուստինին

«Դունկան» զբոսանավի ավագ ոգնականին

Մելբուրն

Հետո նա դուրս թռավ ֆուրգոնից, ձեռքերը թափահարելով և փնթփնթալով հետևյալ անհասկանալի բառերը․

— Լանդիա... Լանդիա... Զելանդիա...

# ՉՈՐՍ ՍԱՐՍԱՓԵԼԻ ՕՐ

Օրվա վճռորոշն առանց պատահարների անցավ։ Մյուլլերդին վերջացրեց ճանապարհի պատրաստությունները։ Հողի տղան ուրախ էր Գլենարվանին իր հավատարմությունն ապացուցելու համար։

Պաղանկը նորից հանդստացավ։ Նրա տեսքից, ճիշտ է, կարելի չէր հասկանալ, վոր նա անընդհատ մի ինչ վոր բանի մասին է մտածում, բայց նա վորոշել թաքցնել իր հոգսը։ Պետք է յենթադրել, վոր նա լուրջ հիմունքներ ուներ այդպես վարվելու, վորովհետև մայորը լսեց թե ինչպես է նա փնթփնթում քթի տակ.

— Վո՛չ, վո՛չ։ Միևնույն է, նրանք ինձ չեն հավատա։ Մեկ էլ, վոր գա վոչ մի բանի չի հասցնի։ Չափազանց ուշ է։

Յեվ, գլուխը թափ տալով, ինչպես ինքն իր վրա հաղթություն տարած մարդ, նա սկսեց հրահանգներ տալ Մյուլլերդիին, ճանապարհի վերաբերյալ։ Նա քարտեզի վրա ուղեցույց գծեց մինչև Մելբուռն և իր մոտից բաց չթողեց նավաստուն մինչև վոր չհամոզվեց, վոր վերջինս յուրացրեց այն։ Տափաստանում բոլոր արահետները դուրս եյին գալիս Լյուկնոուայան ճանապարհի վրա։ Այդ ճանապարհը գնում էր դեպի հարավ, ծովի ափը և այնտեղ զառիթափ շրջվում էր դեպի Մելբուռն։ Պաղանկը պահանջում էր Մյուլլերդիից, վոր նա ամբողջ ժամանակ դուրս չգա Լյուկնոուայան ճանապարհից և չաշխատի ժամանակ տնտեսել, գնալով անծանոթ, ամայի կարճ ուղիով։ Այսպիսով, այդ ուղեցույցից ավելի պարզ բան չէր կարող լինել, և Մյուլլերդին չէր մոլորվի։

Ինչ վերաբերում է վտանգներին, նրանք ուղարկվածին սպառնում եյին միայն ճամբարի անմիջապես մոտերքում—Այրտոնի հրոսակախումբը, հավանորեն, պահպանում էր բոլոր արահետները։ Բայց հաջողությամբ անցնելով այդ ուղեկալը, Մյուլլերդին կարող էր արդեն վոչնչից չվախենալ։

Ժամի վեցին ճանապարհորդները ճաշեցին։ Նորից հորդ անձրև թափվեց։ Վրանը կաթեց, այդ պատճառով բոլորն էլ կուտակվեցին ֆուրգոնում, վորտեղ ավելի անվտանգ էր։ Կառքն ամուր պահում էր նրան անդուլ և նա փոքրիկ ամրոցի էր նմանվում։ Զինապահեստը կազմված էր յոթ կարաբինից և յոթ



Մյուլլերին անհայտացավ մթության մէջ։

ատրճանակից։ Արդյունքում հանկարծաստեղծ ամբոխը կարող էր դիմանալ նույնիսկ յերկար պաշարումի, վորովհետև վոչ վառոդի, վոչ գնդակների և վոչ էլ ուտելու պաշարների պակասություն չկար։ Այնինչ, վոչ ուշ, քան վեց օր հետո «Դունկանը» կարող էր ժամանել Տուֆոլդյա ծովախորշը, և մի օրից հետո «Դունկանի» անձնակազմը պետք է յերևար Սնոուի մյուս ափին։ Նույնիսկ յեթե հնար չլիներ միանգամից անցնել բարձրացած գետի վրայով, Բեն Ջոյսի, հրամանատարությունը միևնույն է, ստիպված էր նահանջել ուժի առաջ։ Բայց այդ բոլորի համար անհրաժեշտ էր, վորպեսզի Մյուլրեդին հաջողությամբ ավարտեր իր դժվար միսիան։

Ժամի ութին գիշերն արդեն անթափանցելի մութն էր։ Մեկնումի ժամանակը յեկավ։ Վիլսոնը բերեց ձին իր ընկերոջ համար։ Ձիու սմբակները փաթաթել էին հնոտիներով, վորպեսզի խլացնեն թրխկոցը։ Կենդանին հոգնած էր յերևում, այնինչ ամբողջ արշավախմբի վիճակը նրա վոտքերի ամրությունից էր կախված։ Մայորը խորհուրդ տվեց Մյուլրեդիին՝ խնայել նրա ուժերը, հենց վոր նա կանցնի ավազակների համար հասանելիության սահմաններից դուրս։ Ավելի լավ է մի քիչ ուշանալ, բայց դրա փոխարեն առանց արկածների տեղ հասնել։

Ջոն Մանգլսը ծովագնացին հանձնեց ատրճանակը, վորը նա լցրեց մեծագույն խնամքով։ Ամուր ձեռքի մեջ դա վտանգավոր զենք էր. միմյանց հետևող վեց կրակոցներ կարող էին մաքրել ճանապարհը, վորքան էլ լինեին հարձակվողների թիվը։

Մյուլրեդին թառավ թամբին։

— Այս նամակը հանձնեք Թոմ Աուստինին,— ասաց նրան Գլենարվանը։— Թող նա, առանց մի րոպե կորցնելու, գնա Տուֆոլդյա ծովախորշը և, յեթե մեզ այնտեղ չգտնի, թող ինքը դուրս գա մեզ դիմավորելու։ Իսկ այժմ ճանապարհ ընկեք, բարեկամս։ Հաջողություն եմ ցանկանում։

Գլենարվանը և բոլոր մյուս ճանապարհորդները հերթով ամուր սեղմեցին Մյուլրեդիի ձեռքը։ Նավաստուց ավելի պակաս քաջարի մարդու սիրտը կընկճվեր այդ ահռելի գիշերվա ճանապարհ ընկնելու անհրաժեշտ մտքից, այն մտքից, վոր մահը կարող է դարանել նրան ամեն մի ծառի հետևում, սպասեր ամեն մի գալարում։ Բայց Մյուլրեդին բոլորովին հանգիստ էր։

— Ցտեսություն,—ուղղակի ասաց նա և անհայտացավ, ձուլվելով մթության մեջ, ամպերի պես անաղմուկ։

Այդ բոլորին մրրիկը մռնչում էր կրկնակի ուժով։ Մթության մեջ եվկալիպտաների չոր ճյուղերը թափվում էին ինչպես կմախքի վոսկորներ։ Լսվում էր քամու կտրած ճյուղերի ճռթկոցը և նրանց անկումի աղմուկը։ Մինչև այժմ կայուն կանգնած հսկայական լուռ ծառեր գետին տապալվեցին կատաղած քամուց։ Մրրիկն այնպիսի ուժով էր վոռնում, վոր խլացնում էր և ծառերի ճռճռոցը և կատաղած գետի մռնչյոցը։ Դեպի արևելք սլացող թուխպերը կախվում էին հենց գետնի վրա և, քսվելով ծառերի գագաթներին, կտորների էին բաժանվում։ Անթափանց խավարն էլ ավելի սարսափելի յեր դարձնում այդ գիշերը։

Մյուլրեդիի մեկնումից հետո բոլոր ճանապարհորդները մտան ֆուրգոնի մեջ։ Յելենան, Մերի Գրանտը, Գլենարվանը տեղավորվեցին կառանց այինդ փակված բաժանմունքում։ Յերկրորդում, ծանրոցային բաժանմունքում, գտնվում էին Ոլբինետը, Ռոբերտը և Վիլսոնը։ Մայորը և Ջոն Մանգլը պահակ էին կանգնած դրսում—դա զգուշության անհրաժեշտ միջոց էր, վորովհետև րոպե առ րոպե կարելի յեր սպասել տաժանակիրների հարձակումին։

Յերկու հավատարիմ պահակները զգուշությամբ պահպանում էին ճամբարը և փիլիսոփայական համբերությամբ տանում էին քամու զարկած հարձակումները և հեղեղի ջրցանումը։ Հույս չունենալով մի վորևէ բան լսել մրրիկի աղմուկի, քամու վոռնոցի, ճյուղերի ճռճռոցի, տապալվող ծառերի դղրդյունի, կատաղի հոսանքի (գետի) մռնչոցի մեջ, նրանք աշխատում էին հայացքով թափանցել գիշերային խավարը, վորի մեջ սպառնալիք էր թաքնված։

Այնուամենայնիվ, ձայների այդ քաոսի մեջ խաղաղության կարճ վայրկյաններ էին պատահում։ Քամին կարճատև քնում էր, կարծես թե ուժերը հավաքելով և միայն գետն էր անընդհատ աղմկում, ահագին ալիքներ թավալելով մեռած, խեժաբեր ծառերի ջրավանդակի հետևում։ Խաղաղության այդ վայրկյաններին անդորրությունն առանձնապես խորին էր թվում։ Մայորը և Ջոն Մանգլն օգտվում էին դրանցով, վորպեսզի ականջ դնեն։

Այդպիսի վայրկյաններից մեկում նրանք մի սուր սուլոց լսեցին։

Ջոն Մանգլյան արագ մոտեցավ մայորին։

— Լսեցի՞ք,— հարցրեց նա։

— Այո՛,— պատասխանեց մայորը։— Այդ մա՞րդ է, թե կենդանի։

— Մարդ է,— ասաց նավապետը։

Յեվ նրանք նորից սկսեցին ականջ դնել։ Անհասկանալի սուլոցը հանկարծ կրկնվեց և նրան ձայնակցեց կրակոցի նման մի ինչ վոր խուլ ձայն։ Բայց համոզվածություն չկար դրանում, վորովհետև այդ վայրկյանին մրրիկը նոր կատաղությամբ մռընչաց։

Մակ֊Նաբսը և Ջոն Մանգլը յետ վերադարձան ֆուրգոնի մոտ։ Կաշվե վարագույրը բացվեց, և Գլենարվանը դուրս յեկավ նրանց մոտ։ Նրանց նման, նա էլ լսել էր այդ չարագուշակ սուլոցը և կրակոցի նման ինչ վոր մի բան։

— Վո՞րտեղից էր գալիս այդ,— հարցրեց նա։

— Այնտեղից,— պատասխանեց Ջոն Մանգլը, մատով ցույց տալով Մյուլրեդիի վերցրած ուղղությունը։

— Ի՞նչ տարածությունից էր։

— Քամին այնտեղից էր փչում։ Հավանորեն, այստեղից յերեք մղոնի վրա,— պատասխանեց մայորը։

— Գնանք,— ասաց Գլենարվանը, կարաբինն ուսը գցելով։

— Մնանք,— պատասխանեց մայորը,— դա թակարդ է։ Մեզ ուզում են հեռացնել ֆուրգոնից։

— Իսկ յեթե Մյուլրեդիին սպանե՞լ են այդ անզգամները,— բացականչեց Գլենարվանը։

— Մենք վաղը կիմանանք այդ,— սառը պատասխանեց մայորը, վոր հաստատ վորոշել էր խանգարել Գլենարվանին անխոհուն գործ անել։

— Վո՛չ, յես այդ այս րոպեյին պիտի իմանամ,— ասաց Գլենարվանը։— Մնացեք, յես կգնամ հետախուզության։

— Դուք իրավունք չունեք ճամբարը թողնել, սեր,— ասաց Ջոնը։— Յես կգնամ։

— Վոչ մի դեպքում,— յեռանդագին բողոքեց մայորը։— Դուք ուզո՞ւմ եք, վորպեսզի մեզ կենդանի-կենդանի գնդակահարեն։ Մասնատել մեր ուժերը և հանձնել այդ անզգամների վողորմու-

թյունը։ Եթե նրանք սպանել են Մյուլրեդիին, դա դժբախտություն է, բայց ամոթ չէ նրա համար, վորպեսզի յերկրորդ զոհը տանք տաժանակիրներին։ Մյուլրեդին ընտրված եր վիճակով։ Եթե նրա փոխարեն վիճակն ինձ ընկներ, յես չեյի սպասի և վոչ վոքից ոգնություն չեյի խնդրի։

Մայորն անպայման իրավացի յեր, զսպելով Գլենարվանին և Ջոն Մանգլսին։ Ուղղակի անմտություն կլիներ արշավախմբի մութ գիշերին գնալ փնտրելու Մյուլրեդիին այն ճանապարհների վրա, վորոնք տանում են ուղիղ տաժանակիրների վորջը։ Գլենարվանի փոքրիկ ջոկատն այդպես անկշիռ չպիտի վտանգի յենթարկեր իր մարտիկների կյանքը։

Սակայն Գլենարվանը չեր ուզում ընդունել մայորի պատճառաբանությունների արդարացիությունը։ Նա հուզված, քայլում եր ֆուրգոնի չորս կողմը, ականջ դնելով ամեն մի ձայնի և աշխատելով հայացքով ներթափանցել չարագուշակ խավարի մեջ։ Նրան այրում և տանջում եր այն միտքը, վոր, կարող է պատահել, իր ուղեկիցներից մեկն ընկած է այնտեղ, սպանված կամ վիրավորված դավաճան գնդակով, ոգնության կարիք ունի, ի զուր անեղն է կանչում նրանց, վորոնց համար նա զոհաբերեց իր կյանքը։ Մակ-Նաբսը հավատը կորցրեց, վոր իրեն կհաջողվի զսպել Գլենարվանին, և վախենում եր, թե մի գուցե նա մեծահոգությամբ տարված նետվեր Բեն Ջոյսի հրոսակախմբի հարվածների տակ։

— Եդվարդ,— ասաց նա,— հանգստացեք։ Ինձ լսեցեք։ Մտածեցեք Ելենայի մասին, Մերի Գրանտի մասին, բոլորի մասին, ովքեր մնացել են։ Ուր եք ուզում գնալ դուք։ Ինչպես կգտնեք դուք Մյուլրեդիին այս դժոխային խավարում։ Նրա վրա հարձակվել են գուցե յերկու-յերեք մղոն այստեղից հեռու, իսկ մենք նույնիսկ չգիտենք, թե վոր արահետով է գնացել նա։

Այդ րոպեյին, կարծես թե մայորին պատասխանելով, մոտերքում մի խղճալի ճիչ լսվեց։

Գոռում եյին հենց այն ուղղությամբ, վորտեղից կրակոցն եր լսվում, բայց քառորդ մղոն տարածությունից վոչ հեռու։

— Լսեցե՛ք,— բացականչեց Գլենարվանը։

Եվ, հրելով Մակ-Նաբսին, նա վճռականորեն խորացավ անտառի մեջ։ Երբ նա ֆուրգոնից յերեք հարյուր քայլ հեռացավ, նորից մի ձայն լսվեց.

— Օգնեցե՛ք, օգնեցե՛ք։

Ձայնի մեջ լսվում եյին ցավ և հուսահատություն։ Այժմ արդեն թե Ջոն Մանգլը և թե մայորը, առանց տատանվելու առաջ նետվեցին։

Կարճ վորոնումներից հետո նրանք արահետի վրա մի մարդ նկատեցին, վոր գետնի երեսին եր տողում և ամեն մի շարժման հետ տնքում եր։

Դա Մուլրեդին եր։ Նա վիրավորված եր։ Նրան գետնից բարձրացնելով, նրանք զգացին, վոր իրենց ձեռքերը թաց են արյունից։

Անձրևը թափվում եր անդադրում ուժով։ Քամին վոռնում եր նախկին կատաղությամբ։ Ալեկոծված տարերքների վոռնոցի նվագակցությամբ մայորը, Ջոն Մանգլը և Գլենարվանը փուրգոնի մոտ տարան գիտակցությունը կորցրած իրենց ընկերոջը։

Պագանելը, Վիլսոնը, Ռոբերտը և Օլբինետը դուրս յեկան փուրգոնից, իսկ Հելենան իր սենյակը զիջեց խեղճ Մուլրեդին։

Մակ-Նաբսը կապեց նրա վերքը։ Նա դեռևս վոչինչ չկարողացավ ասել, արդյոք, գնդակը կյանքի համար կարևոր վորևե որգանի դիպել ե։ Վերքից շատ արյուն եր հոսել, իսկ Մուլրեդիի գունատությունը և ուժաթափ դրությունը խոսում եյին այն մասին, վոր նա լուրջ ե վիրավորվել։ Մայորը թարմ ջրով լվաց վերքի մուտքի անցքը, ծածկեց այն ծվենի արյունառուդելով և բինտով կապեց։ Աշխատելով հաջողվեց արյունահոսության առաջն առնել։ Մուլրեդիին շուռ տվին աջ կողքի վրա և Հելենան ջուր խմացրեց նրան։

Վիրակապության ժամանակ գիտակցությունը կորցրած վիրավորը տասն և հինգ րոպեյից հետո ձեռքով մի շարժում արեց և աչքերը բացեց։ Նրա շրթունքները շարժվեցին, ջանալով արտասանել ինչ-վոր բառեր։ Մայորն ականջը մոտեցնելով ուղիղ նրա շրթունքներին, լսեց, թե ինչպես նա կրկնում ե.

— Նամակ... նամակ... Բեն Ջոյս...

Մայորը բարձրաձայն կրկնեց այդ բառերը և նայեց իր ուղեկիցներին։ Ի՞նչ եր ուզում ասել նավաստին։ Բեն Ջոյսը հարձակվել ե նրա վրա, այդ պարզ եր։ Բայց ինչո՞ւ համար։ Միթե նրա միակ նպատակն այն չեր, վոր արգելք հանդիսանա «Դունկ-



Վիրավորին շալակած տարան։

կանխի հետ համագործակցության, վորպեսզի արևելքից օգնու-թյուն չգա Գլենարվանի արշավախմբին։ Կամ...

Գլենարվանը նետվեց դեպի Մուլրեդիի շորերը և խուզար-կեց նրա գրպանները։ Թոմ Աուստինին հասցեագրած նամակը գտավ այնտեղ։

Գիշերը տագնապալից անցավ։ Ճանապարհորդներն ամբողջ ժամանակ վախենում եյին Մուլրեդիի կյանքի համար։ Նա սաս-տիկ տաքություն ուներ։ Յելենան և Մերի Գրանտն անդադար հերթափոխում եյին նրա անկողնու մոտ։ Դեռ յերբեք հիվան-դապահ կանայք այդպես հոգ չեյին տարել հիվանդի մասին։

Լույսը բացվեց։ Անձրևը դադարեց հորդելուց, բայց մութ թուխպերը դեռ սլանում եյին յերկնքում։ Ջարդված ճյուղերով ծածկված կավե հողը կակղեց։ Ֆուրգոնը ելի մի քանի սանտի-մետր գնաց հողի մեջ, և նրան մոտենալը դժվարացավ։

Ոգտվելով լույսի հենց առաջին ճառագայթներից, Ջոն Ման-գլսը, Պագանելը և Գլենարվանը հետախուզության գնացին ֆուրգոնի չորս կողմը։ Նրանք գնացին դեպի Մուլրեդիի արյունը պահող արահետով։ Չնկատելով Բեն Ջոյսի և իր հրոսակախմբի մասնակցության վոչ մի հետք, նրանք հասան մինչև այնտեղ, վոր-տեղ ավազակները հարձակվել եյին Մուլրեդիի վրա։ Այն-տեղ յերկու դիակ կար ընկած։ Դրանք Մուլրեդիի խփած ավա-զակների դիակներն եյին։ Հանձին նրանցից մեկի, ճանապար-հորդները ճանաչեցին բլեկ-պոյնտյան դարբնին։ Նրա դեմքի մահվան արտահայտությունը սարսափելի եր ազդում։

Գլենարվանն առաջարկեց հեռու չգնալ։ Զգուշությունը կարգելեր յերկար ժամանակ առանց պաշտպանության թողնել ֆուրգոնը։ Ճանապարհորդները գլխիկոր վերադարձան ճամբար, մտահոգված իրենց ծանր մտքերով։

— Այլևս կարիք չկա մտածելու յերկրորդ սուրհանդակին ուղարկել Մելբուրն,— ասաց Գլենարվանը։

— Սակայն այդ անհրաժեշտ ե անել, սըր,— առարկեց Ջոն Մանգլսը։— Յես կփորձեմ հաջողություն ձեռք բերել այնտեղ, ուր իմ նավաստին անհաջողություն կրեց։

— Վո՛չ, Ջոն։ Դուք չեք գնա։ Դուք մոռանում եք, վոր մեզ մոտ ձի չի մնացել, այդ յերկու հարյուր մղոնը գնալու համար։

Իսկապես, Մուլրեդիի ձին, վոր միակն եր ազատվել հա-

ժամանակից, անհայտացավ։ Դուրս, հենվելով կոճղներին, նա մոլորվել է այս անտառում կամ, կարող է պատահել, նրան ավազակներն են սպանել։

— Ինչպես էլ վոր լինի, բայց մենք չպիտի բաժանվենք։ Մենք պիտի սպասենք, մինչև Սնոուրին մտնի իր ափերի մեջ, ինչքան էլ վոր ստիպված լինենք ժամանակ վատնել դրա վրա։ Այն ժամանակ մենք կանցնենք մյուս ափը, մի քանի կարճ անցումով կհասնենք մինչև Տուֆոլդայի ծովախորշը և արդեն այնտեղից հրաման կուղարկենք «Դունկանին», վոր գա մեզ հետևից։

— Այո, մեզ ուրիշ վոչինչ չի մնում անել,— ասաց Պագանելը։

— Ցավ այսպես, բարեկամներս, վորոշված է։ Մենք չպիտի վատնենք մեր ուժերը։ Չափազանց վտանգավոր կլիներ մենակ մի մարդու համար, վտանգով ճեղքել անտառը, ուր անկարգու-թյուններ են անում ավազակները։

Գլենարվանը կրկնակի իրավացի էր, առաջարկելով հրաժարվել Մելբուրն սուրհանդակ ուղարկելու նոր փորձերից։ Արշավախմբությունը հազիվ յոթանասունհինգ մղոնի վրա էր գտնվում Նոր Հարավային Ուելսի առաջին սահմանագլխային Դելեգետ քաղաքից։ Այնտեղ կարելի էր Տուֆոլդա ծովախորշ գնալու փոխադրության միջոցներ գտնել և, դրանից ավելին, մի հրաման հեռագրել Մելբուրն, «Դունկանին» դուրս գալու մասին։

Դրանք խելացի, բայց ուշացած միջոցառումներ եղան։ Յեթե Գլենարվանը Մյուլրեդիին Լյուքնոուի ճանապարհը չուղարկեր, արշավախմբությունը շատ փորձանքներից կխուսափեր, չխոսելով արդեն այն մասին, վոր նավաստին վերքեր չեր ստանա։

Ճամբար վերադառնալով, հետախույզներն իրենց ընկերներին ավելի պակաս ընկճված գտան։ Թվում էր, վոր նրանց հույսը վերածնվում էր։

— Նա լավ է զգում, նա լավ է զգում,— ասաց Ռոբերտը, նետվելով Գլենարվանի դեմ։

— Մյուլրեդի՞ն։

— Այո՛, Էդվարդ,— ասաց Հելենան։— Նրա տագնապն անցավ։ Մայորն ասում է, վոր նա շուտ կսկսի կազդուրվել։

— Ո՞ւր է Մակ-Նաբսը,— հարցրեց Գլենարվանը։

— Նրա անկողնու մոտ է։ Մյուլլերդին ինչ-որ մի բան էր ուզում ասել նրան։ Չպետք է անհանգստացնել նրան։

Իսկապես, ահա արդեն մի ժամ է, որ հիվանդը ուշքի չի եկել մոռացությունից։ Նրա ջերմությունն իջել է։ Հենց որ Մյուլլերդիի ուշքը գլուխը եկավ, նա կանչեց Գլենարվանին։ Իմանալով, որ վերջինս բացակա է, նա մայորին իր մոտ պահանջեց։ Տեսնելով նրա թուլությունը, Մակ-Նաբսը կամեցավ արգելել նրան խոսելու, բայց Մյուլլերդին այնպես յեռանդուն բողոքարկեց, որ մայորն ստիպված էր զիջել։

Նրանց զրույցն արդեն մի քանի րոպե էր տևել, յերբ Գլենարվանը յեկավ։ Մնում էր միայն սպասել մայորի զեկուցումին։

Շուտով Փուրդանի կաշվե վարագույրը բացվեց, և մայորը դուրս յեկավ նրա միջից։ Նա մոտեցավ իր բարեկամներին, վորոնք նստած էին վրանի կողքի խեժաբեր ծառի ստվերում։ Նրա սովորական հանդիսավոր դեմքն այս անգամ ծանր մտածմունք էր արտացոլում։ Յերբ նրա աչքերը կանգ առան Ելենայի և Մերի Գրանտի վրա, նրանք թախծալի արտահայտություն ընդունեցին։

Գլենարվանն սկսեց հարց ու փորձ անել, և ահա թե ինչ պատասխանեց մայորը։

— Ճամբարը թողնելով, Մյուլլերդին գնաց Պագանելի ցույց տված արահետով։ Նա ձիավարում էր ամբողջ արագությամբ, վորքան թույլ էր տալիս մութ գիշերը և պղտոր յեղանակը։ Իր հաշվով, նա յերկու մղոնից պակաս չէր անցել, յերբ մի քանի մարդ—կարծես թե հինգ հոգի—հանկարծ նրա ճանապարհը կտրեցին։ Ձին ծառս յեղավ։ Մյուլլերդին ատրճանակը հանեց և սկսեց կրակել։ Նրան թվաց, վոր հարձակվողներից յերկուսն ընկան։ Կրակոցների բոցավառության ժամանակ նա ճանաչեց Բեն Ջոյսին, բայց չհաջողացավ մինչև վերջը դատարկել ատրճանակը։ Կողքի ուժեղ հարվածը նրան թամբից տապալեց։

Նա գիտակցությունը չկորցրեց, թեև մարդասպանները նրան մեռած էին համարում։ Նա զգաց, վոր նրանք քրքրում են իր գրպանները և լսեց ասածներից մեկի ձայնը. «Ահա նամակը»։—«Տուր այստեղ,—պատասխանեց նրան Բեն Ջոյսը։—Այժմ «Դունկանը» մեր ձեռքում է գտնվում»։



Մի քանի մարդ նրա ճանապարհը կտրեցին։

Մակ-Նաբսի պատմության այդ տեղում Գլենարվանը չկարողացավ բացականչությունը զսպել։

Մակ-Նաբսը շարունակեց.

— «Դունկ հիմա,—ասաց Բեն Ջոյսը,—ձին բանեք։ Երեկու օրից հետո յես կլինեմ «Դունկանի» նավախցում, իսկ մի չորս օրից՝ Տուֆոլդս ծովախորշում։ Տեղեկությունն անցն այնտեղ է։ Գլենարվանի ջոկատը դեռ ու դեն կընկնի Սնոուի ճահիճներում։ Անցեք Կեմպլլերյան կամուրջով և շտապեցեք դեպի օվկիանոս։ Տեղ հասնելուն պես սպասեցեք զբոսանավի գալուն։ Իսկ յես արդեն մի կերպ միջոց կգտնեմ նավակը տանելու ձեզ։ Իսկ տիրելով այդպիսի յերկաթի քաջընթացի, ինչպիսին «Դունկանն» է, մենք Հնդկական օվկիանոսի միակ տերը կդառնանք»։ «Ուռա Բեն Ջոյսին»։ Ցնծալի ուռա—գոռացին մասնակիցները։ Նրանցից մեկը բերեց Մյուլրեդիի ձին, և Բեն Ջոյսը սլացավ դեպի Լյուքնոուի ճանապարհը, իսկ նրա հրոսակախումբը շարժվեց դեպի հարավ-արևելք, Սնոուի գետի մոտ։ Չնայած ծանր վերքերին, Մյուլրեդին սողաց հավաքած, ժամանակ առ ժամանակ ոգնություն կանչելով մեզ, մինչև վոր Փուրբարնից յերեք հարյուր քայլ հեռավորության վրա մենք գտանք նրան։ Ահա,—վերջացրեց Մակ-Նաբսը,—Մյուլրեդիի ամբողջ պատմությունը։ Այժմ դուք հասկանում եք, թե ինչու ՝քաջարի նավաստին պահանջում եր ինձ հետ խոսել։

Մյուլրեդիի հաղորդագրությունը Գլենարվանին և նրա ուղեկիցներին՝ սարսափի մեջ ձգեց։

— Սրիկաներ, ծովահեններ,—բացականչեց Գլենարվանը։—Նրանք կկոտորեն իմ ամբողջ նավակազմը։ Նրանք կգրավեն «Դունկանը»։

— Այո՛,—ասաց մայորը,—Բեն Ջոյսի հրոսակախումբը «Դունկանի» նավակազմին կբռնի հանկարծ և այն ժամանակ՝...

— Այդ դեպքում, մենք, ինչ էլ վոր ուզում է լինի, պիտի Տուֆոլդս ծովախորշը հասնենք ավելի շուտ, քան թե այդ անզգամները։

— Բայց ի՞նչպես անցնել Սնոուին,—հարցրեց Վիլսոնը։

— Նույն ճանապարհով, վորով և ավազակները,—պատասխանեց Գլենարվանը։—Նրանք անցան Կեմպլլերի կամուրջով, նշանակում է, մենք էլ կանցնենք այդ կամուրջով։



— Իսկ ի՞նչպես վարվենք Մյուլրեդիի հետ,—հարցրեց Հելենան։

— Մենք նրան պատգարակով կտանենք։ Ես խոսք չեմ կարող թույլ տալ, վոր տաժանակիրները մորթեն իմ ամբողջ նավակազմը։

Կեմպլպիերյան կամուրջով անցնելու միտքն իրականացնելու բան էր, բայց վտանգավոր էր։ Տաժանակիրները կարող էին պահպանել կամուրջը, իսկ նրանք առնվազն յերեսուն հոգի էին յոթի դեմ։ Սակայն րոպեներ են լինում, յերբ պետք է առաջ գնալ, դես ու դեն չնայելով և չմտածելով վտանգի մասին։

— Սըր,—ասաց Ջոն Մանգլսը,—իմ կարծիքով, նախքան կամուրջով անցնելու վտանգին յենթարկվելը, պետք է լավ դիտել այն։ Մենք չափազանց շատ բան ենք դնում խաղաթղթի վրա, վորպեսզի ջարդենք գլուխները։ Ձեր թույլտվությամբ յես հետախուզության կգնամ։

— Ես կգնամ ձեզ հետ, Ջոն,—ասաց Պագանելը։

Այդ առաջարկն ընդունվեց, և Ջոն Մանգլսը Պագանելի հետ վորոշեցին անհապաղ գնալ։ Նրանք պետք է գնային գետի հոսանքի յերկարությամբ, մինչև վոր հասնեյին կամուրջին, վորի մասին ասաց Բեն Ջոյսը։ Տաժանակիրներին հանդիպելիս, նրանք պիտի անհապաղ յետ վերադառնային։

Կարաբինները վերցնելով, անվեհեր հետախույզները ճանապարհ ընկան և շուտով անհայտացան գետի ափի գետաբույսերի թավուտում։

Ամբողջ որվա ընթացքում մնացած ճանապարհորդներն անհամբեր նրանց էյին սպասում։ Մթնեց, բայց նրանք դեռ չէյին վերադառնում։ Այն ժամանակ բոլորն էլ սկսեցին լուրջ անհանգստանալ։

Վերջապես ժամի տասնմեկին մոտ, պահակ կանգնած Վիլսոնը հայտնեց նրանց վերադարձի մասին։

Պագանելը և Ջոն Մանգլսը հոգնածությունից ուժասպառ էյին յեղել, տասը մղոնից ավելի անցնելով։

— Ի՞նչպես է կամուրջը,—գոչեց Գլենարվանը, ընդառաջ նետվելով նրանց։—Արդյոք, նա գոյություն ունի՞։

— Այո՛, դա լաստենիներից շինած կամուրջ է,—պատասխանեց Ջոն Մանգլսը։— Տաժանակիրներն անցել էին նրա վրայով, բայց…

— Բա՞յց...— կրկնեց Գլենարվանը, նոր փորձանք նախազգալով։

— Բայց նրանք իրենց հետևից այրել են այն,— պատասխանեց Պագանելը։

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

## ԵԴԵՆ

Հուսահատվելու ժամանակը չէր։ Պետք էր գործել։ Կեմպբելյան կամուրջն արդեն գոյություն չուներ, պետք էր ուրիշ միջոց գտնել Սնոուի վրայով անցնելու համար, բայց անցնել, ինչ էլ վոր լինի, և տաժանակիրների հրոսակախմբից առաջ հասնել, մինչև Տուֆոլդյա ծոցախորշը։ Այդ պատճառով, հենց վոր հետևյալ որվա լույսը բացվեց, Ջոն Մանգլսը և Գլենարվանը, ժամանակ չկորցնելով, ուղևորվեցին դեպի գետի ափը, վորպեսզի անձամբ վորոշեն, թե ինչպես կազմակերպեն գետի վրայով անցնելը։

Անձրևներից բարձրացած գետը շարունակում էր մռնչալ, թավալելով մեծ, պղտոր ալիքներ։ Ավելորդ էր մտածել նրա վրայով անցնելու մասին։ Դա նշանակում էր հաստատապես գնալ գետի մահ։ Գլենարվանը ձեռքերը խաչելով և գլուխը կախելով, անշարժ կանգնած էր գետի ափին։

— Ուզո՞ւմ եք, լես լողալով անցնեմ մյուս ափը,— առաջարկեց Ջոն Մանգլսը։

— Վո՛չ, Ջոն,— պատասխանեց Գլենարվանը, զսպելով քաջ, յերիտասարդ մարդուն։— Սպասենք։

Յեվ նրանք վերադարձան ճամբար։ Որն անցավ ձանձրալի պասսիվության մեջ։ Գլենարվանը տասն անգամից վոչ պակաս ափը վերադարձավ, իր գլուխը կոտրելով անցումի ամեն տեսակ միջոցների վրա։ Բայց իզուր։ Յեթե գետի փոխարեն այստեղով շիկացած լավայի գետակ հոսեր, նա ավելի անանցանելի չէր լինի։

Ղեկավարվելով մայորի ցուցմունքներով, Յելենան այդ ժամանակ անդադար հսկում էր Մյուլրեդիի անկողնու մոտ, շրջապատելով նրան մեծագույն հոգատարությամբ։ Նավաստին զգում էր, թե վորքան արագ է վերադառնում կյանքը։ Մակնաբսը համոզված էր, վոր գնդակը չի շոշափել կենսական, կա-

ընար վող մի գործարան և վոր վիրավորի թուլությունը պարմանավորվում եր միայն շատ արյուն կորցնելով։ Բայց այժմ, յերբ արյունահոսությունը դադարեցված եր և վերքը կապված, Մյուլրեդիի կատարյալ առողջացումը ժամանակի հարց եր միայն։

Հելենան պնդում եր, վոր վիրավորը մնա իր բաժանմունքում, Փուրգոնում։ Մյուլրեդին չափազանց անհարմար եր զգում իրեն։ Նրան ամենից շատ անհանգստացնում եր այն, վոր իր վերքը կարող է հետաձգել արշավախմբին։ Ստիպված յեղան խոստանալ նրան, վոր այն դեպքում, յերբ Սնոուի վրայով անցնելը հնարավոր դառնա, նրան կթողնեն ճամբարում Վիլսոնի հսկողության տակ և արշավախումբն առանց նրան կշարունակի իր ճանապարհը։

Դժբախտաբար վոչ այդ և վոչ էլ հետևյալ որը անցնելու մասին մտածելու կարիք չկար։ Գլենարվանը հուսահատության մեջ ընկավ այդ ձգձգումից։ Հելենան և մայոր Մակ-Նաբսը իզուր եյին համոզում նրան հանդարտանալ և համբերությամբ զինվել։ Հեշտ է ասել—հանդարտանալ, յերբ, կարող է պատահել հենց այդ րոպեյին Բեն Ջոյսն զբաղված է մանում, յերբ «Դունկանը» խարիսխը բարձրացնելով ամբողջ թափով սլանում է դեպի Տուֆոլդյան ծովախորշը, ուր նրան կորուստ է սպասում։

Ջոն Մանգլսը Գլենարվանի հետ միասին ծանր ժամեր եր ապրում։ Ցանկանալով ինչ էլ վոր նստում է լինի հաղթահարել արգելքը, նա դիմեց ավստրալիական նավակի կառուցմանը։ Լիաններով կապելով ծառի լայն կեղևները, նա հագցրեց այն անտառային հիմնակմախքին։ Սարքվեց մի փխրուն նավակ։

Սակայն նավապետ Մանգլսը և Վիլսոնը չկամեցան փորձել այդ նավակը։ Հունվարի 18-ին նրանք ջուրն իջեցրին այն։ Այն, ինչ վոր կարող եյին անել քաջությունը, ճարպկությունը, ուժը և հմտությունը, արված եր։ Բայց հենց վոր նրանք հեռացան ափից, հոսանքն ընդգրկեց նավակը, և նրանք հազիվ հազ կյանքը չվճարեցին համարձակության համար։ Նավակը մի ակնթարթում հատակը գնաց, ամբողջ կես մղոն լայնությամբ տարածված գետի արագ հոսանքով տարը ամեն անգամ չլողալով։

Հունվարի 19 և 20 որերն անցան միևնույն տանջալի անգործության մեջ։ Մայորն ու Գլենարվանը հետազոտեցին Սնոուի

ափը հինգ մղոն գետի վերև և ներքև հոսանքի հետ, բայց ծանծաղուտ չկար։ Ամեն տեղ էլ գետը միատեսակ խոր և կատաղի էր։ Ավստրալիական Ալպերի ամբողջ հարավային լանջի ջուրը թափվում էր միայն այս գետի հունը։

Ստիպված էյին հրաժարվել «Դունկանին» ազատելու հույսից։ Բեն Ջոյսի մեկնումի որից հինգ որ էր անցել արդեն։ Զբոսանավը պիտի Տուֆոլդա նավախորշը գար և, գուցե արդեն ընկել է ավազակների ձեռքը։

Բայց այդպիսի դրություն չէր կարող անվերջ տևել։ Գետերի պատահական վարարումները սովորաբար արագ իջնում են, և այնքան արագ, վորքան հորդում և ուժեղ։ Յեվ իսկապես, հունվարի 21-ի առավոտյան Պագանելը նկատեց, վոր մի գիշերվա ընթացքում ջրի մակերևույթը բավականաչափ իջել է։ Նա Գլենարվանին հաղորդեց իր դիտողությունների յեզրակացությունը։

— Դրանից ի՞նչ դուրս կգա,— պատասխանեց վերջինս։— Այժմ արդեն ուշ է։

— Դա պատճառաբանություն չէ, վորպեսզի անվերջ ընկճվենք այստեղ,— առարկեց մայորը։

— Ճիշտ է,— ասաց Ջոն Մանգլսը։— Գուցե վաղն արդեն հաջողվի գետի վրայով անցնել։

— Բայց այդ ի՞նչով կարող է ոգնել իմ դժբախտ նավակազմին,— գոչեց Գլենարվանը։

— Ինձ լսեցեք, սեր,— ասաց Ջոն Մանգլսը։— Ես ճանաչում եմ Թոմ Աուստինին։ Նա հնազանդվելով ձեր հրամանին, իսկույն պիտի դուրս գա Մելբուռնից, յերբ վոր այդ հնարավոր դառնա։ Բայց մենք վո՞րտեղից գիտենք, վոր «Դունկանը» դուրս գալու պատրաստ էր հենց այն ժամանակ, յերբ Այրտոնը Մելբուռն ժամանեց։ Գո՞ւցե նրա վերանորոգությունը պահանջում է դեռ մի յերկու որ էլ մնալ նավահանգստում։

— Դուք իրավացի յեք, Ջոն,— պատասխանեց Գլենարվանը։— Պետք է շտապով հասնել Տուֆոլդա նավախորշը։ Չէ վոր մենք ընդամենը յերեսուն հինգ մղոնի վրա յենք գտնվում Դելեգետից։

— Ճիշտ է,— հաստատեց Պագանելը,— և այդ քաղաքում մենք անհրաժեշտ փոխադրական միջոցներ կգտնենք։ Ով գիտի, գուցե

մեջ հաջողվում է ժամանակին հասնել և կանխել դժբախտու-
թյունը։

— Ճանապարհ ընկնենք,— բացականչեց Գլենարվանը։

Նույն րոպեյին Ջոն Մանգլը և Վիլսոնն սկսեցին լաստ կա-
ռուցել։ Փորձը ցույց տվեց, որ փեղկերից շինած նավակը չդի-
մացավ հեղեղի կատաղի հարձակմանը։ Դրա համար էլ ծովա-
գնացները մի քանի թարմ ծառեր կտրեցին և նրանցից մի կո-
պիտ, բայց ամուր լաստ կապեցին։ Աշխատանքը բավական դան-
դաղ էր առաջ գնում և երեկոյան դեռևս չէր ավարտված։ Հե-
տևյալ օրը միայն լաստը պատրաստ էր։

Մի գիշերվա մեջ Սնոուի ջրի մակերևույթը ավելի էր
ցածրացել։ Մրրընթաց հեղեղը նորից հոսանք դարձավ, ճիշտ է,
բավական արագ։ Այնուամենայնիվ Ջոն Մանգլը չէր կասկա-
ծում անցումի հաջողության մեջ։

Առաջին ժամի սկզբում ճանապարհորդները լաստի վրա
բարձեցին երկու օրվա գնալու պարեն, մնացած ամբողջ պա-
շարները թաքցրին և վրանի հետ միասին թողնելով գետի այս
կողմում։ Մյուլրեդին այնքան լավ էր զգում իրեն, որ նրան
բոլորովին հանգիստ կարելի էր տանել պատգարակով։ Նա ա-
րագ կազդուրվում էր։

Կեսօրվա ժամի մեկին բոլորն էլ տեղ բռնեցին լաստի վրա,
որը պարանով կապված էր ափից։ Ջոն Մանգլը նավախելի
վրա ղեկավար թիակի նման ինչ որ մի բան հարմարեց և Վիլ-
սոնին վստահեց այն։ Այդ ղեկի օգնությամբ կարելի էր ուղ-
ղությունը տալ լաստին և թույլ չտալ, որ հոսանքը քշի նրան։
Ինքը, Ջոն Մանգլը կանգնեց քթին և զինվեց ձողով։ Օլ-
բինետը, Մերին և Մյուլրեդին տեղավորվեցին լաստի կենտրո-
նում։ Գլենարվանը, մայորը, Ռոբերտը և Պագանելը շրջապա-
տեցին նրանց, օգնության հասնելու պատրաստ, եթե կարիք
լինի։

— Ամեն ինչ պատրա՞ստ է, Վիլսոն,— հարցրեց Ջոն Ման-
գլը։

— Ամեն ինչ, նավապետ,— պատասխանեց նավաստին, ուժեղ
ձեռքը թիակի վրա դնելով։

— Ուշադրություն։ Հոսանքի դեմ պահիր։ Գնում ենք։

Ջոն Մանգլն արձակեց լաստը և ուժեղ հարվածով հրեց
նրան ափից։ Առաջին մի քանի տասնյակ սաժենների վրա ամեն



Կառքը լողաց ջրի ընթացքով:

ինչ բարեհաջող էր գնում։ Բայց շուտով ալիքներն սկսեցին կլա-նել լաստերն և պտտեցին նրան իր սեփական առանցքի շուրջը, այնպես որ վոչ թիավարով և վոչ էլ ձողով չէր հաջողվում պահել նրան։ Չնայած Ջոն Մանգլսի և Վիլսոնի բոլոր ջանքերին, լաստը հեռանի մասով առաջ շրջվեց, այնպես որ չէր կարելի ող-ղորդել ղեկավարելի թիակով։

Սախալված էլին հնազանդվել։ Վոչինչով չէր կարելի կանգ-նեցնել լաստի պտտվելու շարժումը։ Նա պտտվում էր անհայտ ուղղությամբ, մինչև այն ժամանակ սպառելով հոսանքի հետ գնալ ցանը։ Ջոն Մանգլսը սեղմեց ատամները, նայելով ալեկոծված հեղեղին։

Մինչ այդ հոսանքը գետի մեջտեղը տարավ լաստը։ Նա այ-ժմ մեկնումի տեղից կես մղոն առաջացության վրա յեր գտնը-վում։ Այստեղ պտտվելը դադարեց և լաստը նորից վերում կա-յունություն ձեռք բերեց։

Ջոն Մանգլսը և Վիլսոնը նորից վերցրին — մեկը ձողը, մյուսը թիակը և լաստը շեղակի ուղղեցին դեպի դիմացի ափը։ Լաստը հեռացավ վերադարձից և արագ մոտեցավ ձախ ափին։ Բայց զարմացեք հիասցած սաժեն հեռու Վիլսոնի թիակը հան-կարծ մեջտեղից կոտրվեց։ Վոչինչով չպահելով, լաստը նորից սլացավ հոսանքի ուղղությամբ։

Ջոն Մանգլսը փորձում էր պահել նրան, կոտրելու վտանգի ենթարկելով ձողը։ Վիլսոնն արյունոտված ձեռքերով ողնության եկավ ընկերոջ։ Յերկար և անհաջող ջանքերից հետո նրանց միայն հաջողվեց կանգնեցնել լաստը և տանել նրան ափի մոտ։ Լաստն այնքան ուժեղ դիպավ գետանին, վոր գերանները կապող թոկերը կտրվեցին և լաստը մասերի բաժանվեց։ Ճանապարհորդները հազիվ հազ կարողացան բռնել առաջինյա Փեների ճյուղերից այն ժամանակ, յերբ ջուրը վողողեց լաստը։ Ամենից առաջ նրանք ջրից դուրս քաշեցին Մյուլրեդիին և կանանց։ Բո-լորն էլ ազատվեցին, բայց պարենի պաշարի մասը և բոլոր զեն-քերը, բացի մայորի կարաբինից, հոսանքը տարավ լաստի բե-կորների հետ։ Այնուամենայնիվ անցումը հաջողվեց։ Նա կես ժա-մից ավելի ժամանակ չխլեց։

Փոքրիկ ջոկատը գտնվեց գետի մյուս ափին, հարավ ար-ևմտյան վորմեն մեծ ջուրերի, առանց ամենափոքր ճանապարհ յերևում հենց մղնի վրա, անհամապատասխան խուլ անապատի մեջտեղում։

Հուսալու վոչինչ չկար, վոր կարելի յե այստեղ հանդիպել ակվատորի կամ գաղութականի, վորովհետև այդ տեղն անմարդաբնակ եր։

Վորոշեցին խուսյն հետ ճանապարհ ընկնել։ Մյուլրեդին հասկացավ, վոր ինքն արգելք կլինի։ Նա առաջարկեց, վորպեսզի իրեն թողնեն անտառում և Դելեգեյթից մեկին ուղարկեն իր հետեից։

Բայց Գլենարվանը չեր ուզում լսել այդ մասին։ Մինչև Դելեգեյթ արշավախումբը կարող եր հասնել յերեք որում, մինչև ովկիանոսի ափը հինգ որից վոչ շուտ, այսինքն հունվարի 26, այնինչ «Դունկանը» հրաման ստացավ դուրս գալ Մելբուռնից հունվարի 16-ին։ Ի՞նչ նշանակություն ունեյին հիմա ուշացումի մի քանի ավելորդ ժամերը։

— Վոչ, բարեկամս,— պատասխանեց նա։— Մենք վոչ վոքի չենք թողնի այստեղ։ Պատգարակ կշինենք և հերթով կտանենք քեզ։

Պատգարակը շինեցին եվկալիպտների ճյուղերից և ծածկեցին մի քանի խոտխ կանաչ խոտով։ Կամա թե ակամա Մյուլրեդին ստիպված եր տեղ բռնել պատգարակում։ Գլենարվանն ուզեց առաջինն ինքը տանել։ Նա կանգնեց առջևում, Վիլսոնը հետևում, և նրանք տարան Մյուլրեդիին։

Ճամփորդների թախծալի տեսարան եր ներկայացնում այդ ջոկատը, վորը ճանապարհ եր ընկել այնքան բարեհաջող պայմաններում։ Ճանապարհի նպատակն այլևս Հարրի Գրանտի վորոնումները չեյին։ Այդ մայր ցամաքը, վորտեղ նա չկար, վորտեղ նա յերբեք վոտք չեր դրել, սպառնում եր կորստյան վայր դառնալ նրանց համար, ովքեր իրենց նվիրեցին նրա վորոնումներին։ Յեվ յերբ անվեհեր ճանապարհորդներին հաջողվի հասնել մինչև ովկիանոսի ափը, այնտեղ նրանք նույնիսկ իրենց նավը չեն գտնի...

Ճանապարհի առաջին որը թախծալի լռության մեջ անցավ, Դժվարին ճանապարհ եր։ Յուրաքանչյուր տասը րոպեն մի անգամ պատգարակակիրները փոխվում եյին։ Բայց նավաստու ընկերներից վոչ մեկը հոգնածությունից չեր գանգատվում, թեև անտանելի տոթը նրանց քայլարշավությունն ավելի յեր դժվարացնում։

Մի որվա ընթացքում հինգ մղոն անցնելով, նրանք մութն

ընկնելուն պես, գիշերոթի համար կանգ առան խիճաքար ծառերի անտառի քոլարերանում։ Լաստի խորտակումից ազատված պարենի մնացորդները ընթրիքին կերան։ Նրանք այլևս պաշար չունեյին։ Ամբողջ հույսը մայորի կարաբինի վրա յեր։

Սարսափելի գիշեր եր։ Ամբողջ ժամանակ հեղեղի պես անձրև եր գալիս։ Թվում եր, վոր յերկինքը սրբը չի բացվի։ Լույսը բացվելուն պես նրանք նորից ճանապարհ ընկան, առանց նախաճաշելու, վորովհետև մայորին չհաջողվեց վոչինչ սպանել։ Դա անսպասելի չեր, այլ դարերից անծնված ինչ վոր մի անդ, վորից նույնիսկ կենդանիներն ել եյին խուսափում։

Բարեբախտաբար Թորերոը աղոտների բույն գտավ և նրա մեջ մի դյուժին ձու։ Ոլբինեանը խորովեց այն մոխրում։ Այդ ձվերը մի քանի կաղնու պտուղների հետ կազմեցին արշավի ցերեկվա ամբողջ սնունդը։

Ժամ առ ժամ ճանապարհն ավելի յեր դժվարանում։ Անվաղոս հարթավայրը ափոխված եր ապինիֆինիսի գետաբուսերով, մի ծակոտող խոտ, վոր քերքրում եր շորն ու վառանամանը։ Բայց քաջարի ճանապարհորդուհիները, ուշադրություն չդարձնելով արյունոտված վոտքերին, առաջ եյին գնում, որինակ առնելով առաջնորդներից և իրենց մեջ գտնելու բավական ուժ եյին գտնում, վորպեսզի ժամանակ առ ժամանակ անգամ մեկին մի փաղաքշական և կատակերգական խոսք ասեն։

Ցերեկվա դեմ ջոկատը կանգ առավ Բուլլա–Բուլլա լեռան ստորոտում, Ցունդալա վտակի ափին։ Ընթրիքը պատրաստ կլիներ, յեթե Մակ–Նաբսին հաջողվեր մի մեծ հողամայրին մուկ սպանել, վոր հայտնի յե իր համեղ մսով։ Ոլբինեանը տապակեց խարույկի վրա, և ճանապարհորդները ցավում եյին միայն նրա մասին, վոր այդ մեծ մկները չեն հասնում վոչխարի մեծության։ Համեստ ապագանը մի քանի վայրկյանում վոչնչացվեց։

Հունվարի 24-ի առավոտյան՝ հոգնած, բայց հոգու կայտառությունը չկորցրած ճանապարհորդները նորից ճանապարհ ընկան։ Շրջանցելով լեռան ստորոտը, նրանք դուրս յեկան մի ընդարձակ հարթավայր, վորի խոտը կետի բեխի նման եր։ Դաշտն իրենից հիշեցնում եր սուր ծայրով վերև անկված ասեղների գերեզմանոց, և ստիպված եյին բացել ճանապարհը կացինով կամ մաքրել կրակով։

Առավոտյան՝ ճանապարհորդները չհուսահատվեցին։ Դժվար էր պատկերացնել մի ավելի անպատեհ անկյուն, քան կվարցի բեկորներով ծածկված այս հարթավայրը։ Մարդիկ տառապում էին վոչ միայն քաղցից, այլև ծարավից։ Խանձող արեգակն այդ տանջանքներն անտանելի յեր դարձնում։

Ջոկատն ամբողջ լարվածությամբ մի ժամում կարող էր գնալ կես մղոնից վոչ ավել։

Բարեբախտաբար, Պագանելը ցեֆալոտի թուփեր գտավ, վորի անոթաձև ծաղիկները համով, զուրբեկան և զովացնող հյութ էին պարունակում։ Բոլորն էլ ագահությամբ հարձակվեցին նրանց վրա և զգացին, վոր յուրաքանչյուր ումպի հետ իրենց կյանքը վերադառնում է։

Ինչ վերաբերում է կենդանիներին, նրանք բավականանում էին նրանով, վորն ստանում էին ակացիաներին մոտից, յերբ չէին կարողանում վոչ վորս, վոչ մրջյուններ՝ վոչ ոձեր բռնել։ Նույն Պագանելը մի ինչ վոր ցամաքած առվակի հունում մի բույս գտավ, վորի հրաշալի սննդարար հատկությունների մասին շատ անգամ էին ասել նրան Աշխարհագրական ընկերության իր կոլեգաները։

Դա նարդուն էր, գաղտնաբեր մի բույս, հենց այն, վորը սովամահությունից ազատեց Բյորկին և Կինգին՝ ներքին Ավստրալիայի անապատում։ Ցերեկնուկի տերևների նմանությամբ ունեցող նրա տերևների տակ, դուրս էին ցցել սիսեռի մեծությամբ ընդմեջիկներ (սպոր)։ Ցեխոտ հարթ․ քարերի արանքում աղացված այդ ընդմեջիկները ալյուրի նման մի բան են տալիս։ Նարդուի ալյուրից Ոլբինետը բլիթներ թխեց, վորոնք մի քիչ հագեցրին քաղցը։ Նարդուն առատությամբ աճել էր այդ տեղում։ Ճանապարհորդները մեծ պաշար արին նրանից և այդպիսով, անկախ կողմից, շատ օրեր ապահովվեցին իրենց։

Հետևյալ օրը, հունվարի 25-ին, Մյուլրեդին ճանապարհի մի մասը վոտքով գնաց։ Նրա վերքը բոլորովին առողջացել էր։ Մինչև Դելեգետյան քաղաքը մնացել էր տասը մղոնից վոչ ավել, և յերեկոյան դեմ ճանապարհորդները մնացին գիշերոթևելու Նոր Հարավային Ուելսի հենց սահմանի վրա, 149° յերկայնության տակ։

Մանր, ներթափանց անձրևը թափվում էր յերկար ժամեր անընդհատ։ Ճանապարհորդները ապաստան կգտնեին, յեթե,

բարեբախտաբար, Ջոն Մանգլսը գտնեց փայտահատների խրճիթը, վոր տերերն էյին թողել։ Ճյուղերից և յեղեգնից շինած այդ վողորմելի հյուղակը բոլորին այնպես ուրախացրեց, կարծես թե դա իշխանական ապարանք էր։

Վիլսոնն ուզեց խարույկ վառել, վորպեսզի նարդուի ալյուրից բլիթներ թխի և գնաց չորուկ հավաքելու, վոր առատությամբ թափված էր գետնին։ Բայց նրան չհաջողվեց խարույկ վառել։ Այդ փայտի մեջ յեղած խեժային նյութերի զգալի քանակը չէր թողնում այրել։ Դրանք հենց նույն «չայրվող փայտերն» էյին, վորոնց մասին ասաց Պագանելը, թվելով ավստրալիական մայր ցամաքի առանձնահատկությունները։

Այսպիսով ճանապարհորդներն ստիպված էյին հրաժարվել կրակից և հետևաբար նաև հացից, ու պառկել քնելու թաց հագուստով։

Ծիծաղկոտ թռչունները, վորոնք թաքնվել էյին խրճիթը շրջապատող ծառերի տերևներում, թվում էր, թե ծաղրում էյին նրանց չարքաշությունը։

Սակայն Գլենարվանի արշավախմբի տառապանքները մոտենում էյին վախճանին։ Յել ժամանակն էր։ Յերկու կանայք հերոսական ջանքեր էյին թափում, բայց նրանց ուժերն սպառվել էյին։ Ամեն մի ժամ նրանք ավելի շատ էյին թուլանում։ Նրանք արդեն չէյին գանգատվում, այլ հազիվ հազ սողոսկում էյին։

Հետևյալ օրը, արշավախումբը դուրս յեկավ լուսաբացին։ Առավոտյան ժամի տասնմեկին հեռվում յերևաց Դելեգեյտը, Ուելսյան կոմսության գլխավոր քաղաքը, վոր Տուֆոլդա նավահանգստից հիսուն մղոն հեռու յե գտնվում։

Արշավախումբն այնտեղ արագ գտավ փոխադրական միջոցներ։ Ովկիանոսի ափին մոտենալու հետ Գլենարվանի հոգում հույսը վերադառնում էր։ Կարո՞ղ է պատահել, վոր «Դունկանը» յետ է ընկել Մելբուռնում, և նրանք նավից առաջ կգան Տուֆոլդա նավահանգիստը։ Քսանչորս ժամից հետո նրանք տեղում կլինեն և ամեն ինչ կիմանան։

Կես օրին, կուշտ ուտելուց հետո, ճանապարհորդները թողին Դելեգեյտը փոստատար կառքով, վոր քաշում էյին հինգ ուժեղ ձիեր։

Առատ վարձատրության ակնկալությամբ, փոստատարները, քշում էյին ձիերին ամբողջ թափով հրաշալի ճանապարհով և



Ճանապարհորդուհիները հոգնածութիւնից հազիվ էին
շարժվում։

կայծակի արագությամբ փոխում էին ձիերը կայաններում, վո-րոնք գտնվում էին յուրաքանչյուր տասը մղոնի վրա։ Կարելի էր կարծել, վոր Գլենարվանն իրեն այրող անհամբերությամբ նրանց էլ է վարակել։

Ամբողջ ցերեկը և ամբողջ գիշերը շարունակվեց այդ կատա-ղի արշավը։

Հետևյալ առավոտյան, լուսաբացին խուլ դղրդյունը հաղոր-դեց ճանապարհորդներին Հնդկական օվկիանոսի մոտիկության մասին։ Ստիպված էին գնալ ծովախորշի յերկարությամբ, վոր-պեսզի հասնեն յերեսունյոթերորդ զուգահեռին, այսինքն այն տեղին, վորտեղ Թոմ Աուստինը պիտի հանդիպեր նրանց։

Երբ ճանապարհի վոլորանից օվկիանոսը յերևաց, բոլոր հայացքները դեպի նա դարձան։ Գուցե, հրաշքով ազատված «Դունկանը» հածում է ափից վոչ հեռու, ինչպես նրանից մի ա-միս առաջ — Կորրիենտես հրվանդանի մոտ, արգենտինյան ծո-վեզրին։

Բայց ծովը ամայի էր։ Վոչ մի առագաստ չէր աշխուժաց-նում նրան։ Ջուրն ու յերկինքը միաձուլվում էին հորիզոնում։

Մի հույս էլ էր մնում դեռ։ Գուցե Թոմ Աուստինը վորոշել է խարիսխ գցել Տուֆոլդա ծովախորշում, վորովհետև այդպիսի վատ յեղանակին այդ ափերը վտանգավոր էին նավե-րի համար։

— Դեպի Իդեն, — հրամայեց Գլենարվանը։

Նույն րոպեյին փոստատար կառքը ուղղվեց ծովափի յերկա-րությամբ ձգված ճանապարհով, դեպի փոքրիկ Իդեն քաղաքը, վոր այդ տեղից հինգ մղոն հեռավորության վրա էր գտնվում։

Գլենարվանը կառքը կանգնեցրեց, հենց վոր Իդեն նավա-հանգստի փարոսը յերևաց։ Այնտեղ խարսխի վրա մի քանի նա-վեր էին կանգնած, բայց նրանցից վոչ մեկի վրա Մալկոլմի դրոշակը չէր ծածանվում։

Գլենարվանը, Ջոն Մանգլսը և Պագանելը վազեցին նավա-հանգստային վարչություն, վորտեղ նայեցին վերջին որերում յեկող և գնացող նավերի ցուցակը և հարց ու փորձ արին սպա-սարկուներին։ Պարզվեց, վոր անցած տաս որվա ընթացքում վոչ մի նավ չի հեռացել նավահանգստից։

— Գուցե, Աուստինը դեռ դուրս չի յեկել Մելբուռնից, —

բացականչեց Գլենարվանը, հեշտությամբ հուսահատությունից հույ-սի անցնելով,— Գնանք, մենք նրանից առաջ ենք լինել:

Ջոն Մանգլսը գլուխը պտտեց: Նա ճանաչում էր Թոմ Աուստինին: Նրա օգնականը չէր կարող այնքան ուշացնել հրամանի կատարումը:

— Ես ուզում եմ համոզված լինել դրանում, — ասաց Գլենարվանը, — ճշմարտությունը, նույնիսկ ամենադաժան ճշմարտությունը, անհամոզվածությունից լավ է:

Քառորդ ժամ հետո Մելբուռնի նավահանգստի պետին մի հեռագիր ուղարկեց:

Հետո ճանապարհորդները ուղևորվեցին դեպի «Վիկտորիա» հյուրանոցը:

Կես օրվա ժամի երկուսին ցրիչը պատասխան հեռագիր բերեց Գլենարվանին: Ահա նրա բովանդակությունը.

«Պարոն Էդվարդ Գլենարվանին:

Էդեն, ծովախորշ Տուֆոլդա:

«Դունկանը» մեկնել է սույն ամսի 18-ին, անհայտ ուղղությամբ:

Էնդրյուս»:

Հեռագիրը Գլենարվանի ձեռքից ընկավ:

Կասկածի տեղիք չկար: Շոտլանդական ազնիվ զբոսանավն ընկել է Բեն Ջոյսի ավազակախմբի ձեռքը և դարձել է ծովահենային նավ:

Այսպես վերջացավ ավստրալիական մայր ցամաքի վրայով այն անցումը, վոր այնքան բարեհաջող պայմաններում էր սկսվել: Նավապետ Գրանտի և նրա ուղեկիցների հետքերը կորսված էին անվերադարձ: Արշավախմբի անհաջողությունն արժեցավ «Դունկանի» ամբողջ նավակազմի կյանքը: Գլենարվանը պարտվել էր պայքարում, համարձակ հետազոտողին, վորին չկարողացավ կանգնեցնել կատաղի տարերքների դավադրությունը արգենտինյան պամպաներում, մի մարդու մատնությունը գլխովին ջարդեց ավստրալիական մայր ցամաքում:

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Եջ

Գլուխ առաջին — *Վերադարձ դեպի նավը* . . . . . 5

» յերկրորդ — *Տրիստան դ'Ակունիա* . . . . . 18

» յերրորդ — *Ամստերդամյան կղզիներ* . . . . . 29

» չորրորդ — *Ժակ Պագանելի և մայոր Մակ-Նաբսի գրազը* . . . . . 39

» հինգերորդ — *Հնդկական օվկիանոսն ալեկոծվում է* . 56

» վեցերորդ — *Բերնուլիի հրվանդանը* . . . . . 69

» յոթերորդ — *Այրտոն* . . . . . 82

» ութերորդ — *Մեկնում* . . . . . 98

» իններորդ — *Վիկտորիա գավառ* . . . . . 109

» տասներորդ — *Վիմերրա գետը* . . . . . 121

» տասնմեկերորդ — *Բըրկ և Ստյուարտ* . . . . . 133

» տասներկուերորդ — *Յերկաթուղի Մելբուռնից Սենդհերստ* . . . . . 145

» տասներեքերորդ — *Առաջին մրցանակ աշխարհագրությունից* . . . . . 157

» տասնչորսերորդ — *Ալեքսանդրի լեռան հանքերը* . . 170

» տասնհինգերորդ — *«Ավստրալիական և Նորզելանդական թերթ»* . . . . . 184

» տասնվեցերորդ — *Որի մեջ մայորը կապիկների նոր ցեղ է գտնում* . . . . . 195

» տասնյոթերորդ — *Անասնապահ միլիոնատերեր* . . 211

» տասնութերորդ — *Ավստրալիական Ալպեր* . . . 227

» տասնիններորդ — *Թատերական տպավորություն* . 243

» քսաներորդ — *Լանդիա, Լանդիա, Զելանդիա* . . 256

» քսանմեկերորդ — *Չորս տառապանքի օր* . . . . . 268

» քսաներկուերորդ — *Եդեմ* . . . . . 283


---


*[illegible]* II *[illegible]* 4

*Գլավլիտի լիազոր* 302· *Պատվեր* 46·

*Հրատ.* 3560· *Տիրաժ* 4000·

*Հանձնված է արտադրության* 10 *դեկտեմբերի* 1935 *թ., ստորագրված է տպագրության* 2 *մարտի* 1936 *թ.*

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220049978

A II
49978